347(47·925)
2-25

1929

347
Հ-Ա

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

MAR

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀՍԽՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

Հ. Ս. Խ. Հ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

(մինչև 1929 թ. փետրվարի 27-ը մտցված փոփոխություններով ու լրացումներով)

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1 9 2 9

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ․

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

347(47.925)
Հ-25

Հ. Ս. Խ. Հ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

(Մինչև 1929թ. փետրվարի 27-ը մտցված
փոփոխություններով ու լրացումներով)

ՅԵՐԵՎԱՆ
1929

09 SEP 2013

37.560

ԳՐԱՌԵՏԳԼԽՎԱՐ 2006 (Բ) ՊԱՏ. № 4554
ՏԻՐԱԺ — 1000
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 1 ՏՊԱՐԱՆ

10424-57

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔԸ ԿԻՐԱՌԿՈՒԹՅԱՆ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Քաղաքացիական Որենսգիրքը կիրարկության է դրվում 1923 թ. ապրիլի 10-ից:

2. Հանրապետության դատական և այլ հիմնարկությունները չեն ընդունում քննելու՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից առաջ քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերմամբ ծագած և վոչ մի վեճ:

3. Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ այն վեճերը, վորոնք ծագել են 1920 թ. նոյեմբերի 29-ից հետո մինչև ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսգրքի կիրարկությունը, կարգավորվում են այն որենքներով, վորոնք գործում եյին նրանց ծագման պահին:

4. Այն իրավահարաբերությունների նկատմամբ, վորոնք թույլ եյին տրվում նրանց ծագման պահին գործող որենքներով, յեթե նրանք հիշյալ որենքներով լիովին չեն կարգավորվում, կիրարկվում են ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսգրքի վորոշումները:

ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսգրքի տարածական մեկնությունը թույլատրելի յե այն դեպքում միայն, յերբ այդ պահանջում է Բանվորա-Գյուղացիական Պետության և աշխատավոր մասսաների շահերի պաշտպանությունը:

6. Արգելվում է Որենսգրքի վորոշումները մեկնաբանել տապալված կառավարությունների որենքների և հեղափոխությունից առաջ յեղած դատարանների գործունեության հիման վրա:

7. Քաղաքացիական հայցերի ընդհանուր յեռամյա վաղեմությունը տարածվում է նաև նախքան ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսգրքի կիրարկությունը առաջ յեկած իրավահարաբերությունների վրա:

8. Ոտար պետությունների քաղաքացիների իրավունքները կարգավորվում են հատուկ համաձայնություններով: Յեթե տերերկրացիների իրավունքները նախատեսված չեն համապա-

տասխան կազմակերպությունների հետ կնքված համաձայնություններով և հատուկ օրենքներով, տարերկրացիների՝ ՀՍԽՀ տերրիտորիայի վրա ազատ տեղափոխության, զբաղմունք ընտրելու, առևտրա-արդյունաբերական ձեռնարկություններ բանալու ու ձեռք բերելու, շենքերի և հողամասերի գույքային իրավունքներ վայելելու իրավունքները կարող են սահմանափակվել ՀՍԽՀ կառավարության համապատասխան կենտրոնական մարմինների վորոշումներով, Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի համաձայնությամբ:

Ծանոթություն 1.—Օտարերկրյա բաժնետիրական և այլ ընկերությունները ՀՍԽ Հանրապետության մեջ իրավական անձի իրավունք են ձեռք բերում ՀՍԽՀ կառավարության հատուկ թույլտվությամբ:

Ծանոթություն 2.—Օտարերկրյա իրավական անձինք, վորոնք Խ. Ս. Հանրապետությունների Միության սահմաններում գործունեություններ կատարելու թույլտվություն չունեն, ՀՍԽ Հանրապետության մեջ դատական պաշտպանության իրավունք են վայելում այն պահանջների նկատմամբ, վորոնք առաջ են գալիս ԽՍՀ Միության սահմաններից դուրս և վերաբերում են նրա սահմաններում ապրող դատակիցներին, միմիայն փոխադարձության հիմունքներով:

9. Քաղաքացիական Օրենսգրքի ներգործությունը տարածվում է ՀՍԽ ամբողջ Հանրապետության վրա:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահի տեղակալ՝ Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

Արդարադատության Ժողովրդական
Կոմիսար՝ [redacted]

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

1923 թ. փետրվարի 13-ին.
Երևան.

ՀՍԽՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Քաղաքացիական իրավունքները պաշտպանվում են օրենքով բացի այն դեպքերից, յերբ նրանց գործադրությունը հակասում է իրենց սոցիալ-տնտեսական նպատակին:

2. Քաղաքացիական իրավունքի վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով: Դատարանին դիմելու իրավունքից հրաժարվելն անվավեր է:

Ծանոթություն.—Պետական մարմինների միջև ծագած գույքային վեճերը լուծվում են առանձին վորոշմամբ սահմանված կարգով:

3. Հողային հարաբերությունները, ինչպես և բանվորական ույժ վարձելու վերաբերյալ և ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են առանձին օրենքներով:

II. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ (ԱՆՁԵՐ)

4. Յերկրի արտադրողական ույժերի զարգացման նպատակով ՀՍԽ Հանրապետությունը քաղաքացիական իրավունակություն (քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակություն) է տալիս բոլոր այն քաղաքացիներին, վորոնց իրավունքները սահմանափակված չեն դատարանով: Սեռը, ազգությունը, կրոնական դավանանքը, ծագումը վոչ մի ազդեցություն չունեն քաղաքացիական իրավունակության վրա:

5. Դրա համեմատ ՀՍԽ Հանրապետության և դաշնակից խորհրդային հանրապետությունների յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ազատորեն յերթևեկելու ՀՍԽՀ սահմաններում, ընտրելու օրենքով չարգելված զբաղմունքներ և արհեստներ, ձեռք բերելու և օտարելու գույքեր, օրենքով սահմանված սահմանափակումներով, գործարքներ կատարելու և պարտավորություններ հանձն առնելու, կազմակերպելու արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններ՝ համաձայն արդյունաբերական և առևտրական գործունեությունը կարգավորող և աշխատանքի կիրառությունը պաշտպանող վորոշումների:

6. Վոչ վոքի չի կարելի զրկել քաղաքացիական իրավունքներից և վոչ ել սահմանափակել վորևէ մեկի իրավունքներն այլ կերպ՝ բայց յեթե որենքով վորոշված դեպքերում և կարգով:

7. Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և քաղաքացիական պարտականություններ հանձն առնելու ունակությունը (գործունակություն)՝ յուրաքանչյուր վոք լրիվ ձեռք է բերում միայն չափահաս դառնալուց հետո:

Չափահաս համարվում են 18 տարին լրացրածները:

8. Ձեռնհաս հիմնարկությունները կարող են անգործունակ հայտարարել չափահաս անձանց—1) յեթե նրանք հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով անընդունակ են խելացի կերպով վարելու իրենց գործերը. 2) յեթե նրանք իրենց ծայրահեղ շռայլությամբ քանդում են իրենց տրամադրության տակ յեղած գույքը:

9. 14 տարին լրացրած անչափահասները և վորպես վատնիչներ խնամակալության տակ առնված անձինք գործարքներ կարող են կատարել իրենց օրինական ներկայացուցիչների (ծնողների, վորդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) համաձայնությամբ: Նրանք իրավունք ունեն ինքնուրույն տնօրինելու իրենց ստացած աշխատավարձը և պատասխանատու յեն իրենց գործողություններով ուրիշներին հասցրած վնասների համար:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

10. Անվավեր են այն բոլոր գործարքները, վորոնց նպատակն է սահմանափակել իրավունակությունը կամ գործունակությունը:

11. Բնակավայր է համարվում այն տեղը, վորտեղ մեկը իր ծառայության, մշտական զբաղմունքների կամ իր գույքի գտնվելու հետևանքով մշտապես կամ առավելապես ապրում է:

Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվողների բնակավայրը համարվում է նրանց օրինական ներկայացուցիչների (ծնողների, վորդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) բնակավայրը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

12. Անհայտ բացակայող անձը կարող է մեռած հայտարարվել, յեթե նրան բացակա ճանաչելու մասին արված հայտարարությունից անցել է ամբողջ հինգ տարի: Այսպիսի անձը քաղաքացիական ակտերի մեջ վորպես մեռած ամարագրվում է դատական վճռի հիման վրա, և մահվան թվականը համարվում է դատավճիռը ույժի մեջ մտնելու որը:

Ծանոթություն.—Մեկին բացակա կամ մեռած ճանաչելու վերաբերյալ կանոնները սահմանված են հատուկ որենքով (հավելված 1):

13. Իրավական անձ համարվում են այն անձանց միությունները, հաստատությունները կամ կազմակերպությունները, վորոնք վորպես այդպիսին՝ կարող են ձեռք բերել գույքի վերաբերյալ իրավունք, հանձն առնել պարտավորություններ, հանդես գալ դատարանում վորպես հայցվոր և պատասխանող:

14. Իրավական անձը պետք է ունենա իշխանության լիազորված մարմնի կողմից հաստատված, իսկ հարկ յեղած դեպքերում՝ ամարագրված կանոնադրություն: Որենքով վորոշված այն ընկերությունների տեսակները, վորոնք առևտրական նպատակներ ունեն, կանոնադրության փոխարեն կարող են ունենալ սահմանված կարգով ամարագրված ընկերության պայմանագիր:

Իրավական անձի իրավունակությունը ծագում է կանոնադրությունը հաստատելու, իսկ այն դեպքերում, յերբ որենքը պահանջում է իրավական անձի ամարագրություն,—այդ ամարագրության որից:

15. Իրավական անձի իրավունքներ ունեցող մասնավոր հիմնարկությունները, այն է՝ հիվանդանոցները, թանգարանները, գիտական հաստատությունները, հանրային գրադարանները և այլն, կարող են հիմնվել իշխանության պատշաճ մարմինների թույլտվությամբ:

16. Իրավական անձինք քաղաքացիական գործառնություններին մասնակցում և գործարքներ են կատարում իրենց մարմինների կամ ներկայացուցիչների միջոցով:

Ծանոթություն.—Պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների մասնակցությունը քաղաքացիական շրջանառության մեջ վորոշվում է առանձին կանոններով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

17. ՀՍԽ Հանրապետության սահմաններում գտնվող իրավական թե ֆիզիքական անձինք արտաքին առևտրին մասնակցում են միայն պետության միջոցով, հանձինս Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի: Արտաքին շուկայում ինքնուրույն կերպով հանդես գալը թույլ է տրվում միայն որենքով հատկապես մատնանշված դեպքերում և միայն Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի վերահսկողությամբ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

18. Պետական իշխանության համապատասխան մարմինը կարող է վերջ տալ իրավական անձի գոյությանը, յեթե նա շեղվում է կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված նպատակից, և կամ յեթե նրա մարմինների (ընդհանուր ժողով, վարչություն) գործունեությունն ուղղված է ի վնաս պետության շահերի:

19. Այն պետական ձեռնարկությունները և նրանց միությունները, վորոնք անցած են տնտեսավարական հաշվի և նախահաշվի կարգով պետությունից դրամական միջոցներ չեն ստանում, քաղաքացիական գործառնությունների մեջ հանդես են գալիս վորպես ինքնուրույն և պետական գանձարանի հետ չկապված իրավական անձինք: Նրանց պարտքերի դիմաց պատասխանատու յե միայն նրանց ազատ տնորինության տակ գտնվող գույքը, այսինքն այն գույքը, վոր համաձայն 21 և 22-րդ հոդվածների շրջանառությունից հանված չէ:

Այս կանոնի բացառությունները հատկապես մատնանշվում են որենքով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

19-ա. Ֆիրմայի ոգտագործման կարգը և իրավական ու ֆիզիկական անձանց պատկանող ձեռնարկությունների ֆիրմային անվան բովանդակությունը վորոշվում են առանձին կանոններով (հավելված 2):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

III. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԲՅԵԿՏՆԵՐ (ԳՈՒՅՔԵՐ)

20. Քաղաքացիական շրջանառությունից հանված գույքերը քաղաքացիական իրավունքի ոբյեկտ կարող են լինել այն սահմաններում միայն, վորոնք դրականապես մատնանշված են որենքով:

21. Հողը պետության սեփականություն է և չի կարող մասնավոր շրջանառության ոբյեկտ լինել: Հողատիրությունը թույլ է տրվում միայն ոգտատիրության իրավունքով:

Ծանոթություն.—Հողի մասնավոր սեփականության վերացմամբ վերացվում է գույքը շարժականի և անշարժի բաժանելը:

22. Ստորև հիշատակված պետական գույքերը, վորոնք գտնվում են կենտրոնական և տեղական հիմնարկությունների ու ձեռնարկությունների տնորինության տակ, յենթակա չեն ոտարման ի սեփականություն մասնավոր, ֆիզիկական և իրավական անձերի և հասարակական ու կոոպերատիվ կազմակերպությունների, չեն կարող գրավի առարկա լինել, ինչպես և չեն կարող գործադրվել պարտատերերին գանձման կարգով բավարարելու համար.

ա) արդյունաբերական, փոխադրական և այլ ձեռնարկությունների ամբողջությամբ.

բ) արդյունաբերական ձեռնարկությունները, գործարանները, հանքերը և այլն.

գ) արդյունաբերական ձեռնարկությունների սարք ու կարգը.

դ) յերկաթուղիների շարժական կազմը, նավահանգիստները, ծովային և գետային նավերը.

ե) յերկաթուղային, ջրային և ոդային փոխադրության, ժողովրդական կապի (հեռագրական, հեռախոսային և ընդհանուր ոգտագործման ռադիոկայաններ), հիդրոէլեկտրիկական և ապրանքաշրջանառության պետքերի համար հատկացված շենքերը (ելեվատորները, պաղիչ մեքենաներ և այլն), ինչպես և ընդհանուր ոգտագործման ելեքտրոկայանները.

զ) կոմունալ կառուցվածքները–

է) քաղաքայնացրած և ազգայնացրած շենքերը:

Ծանոթություն.—Այս հոդվածում հիշատակված պետական գույքերի ոտարման պայմանները և կարգը վորոշվում են առանձին կանոններով (հավելված 3):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1927 թ. ապրիլի 20-ի վորոշման խմբագրությամբ).

22-ա. Այս Որենսգրքի 22 հոդ. հիշված գույքը մի պետական մարմնից մյուսին փոխանցելու կարգը, ինչպես նաև հիշված գույքը պետական մարմինների կողմից խառը բաժնետիրական ընկերություններին և պետական կապիտալի բացառիկ մասնակցությամբ գործող բաժնետիրական (փայատիրական) ընկերություններին՝ ակցիաների արժեքի դիմաց հանձնելու կարգն ու պայմանները վորոշվում են հատուկ որենքներով և այդ ընկերությունների կանոնադրություններով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1927 թ. ապրիլի 20-ի վորոշման խմբագրությամբ).

23. Զենքը, պայթուցիկ նյութերը, զինվորական հանդերձանքը, սավառնակները, հեռագրի և ռադիո-հեռագրի գույքը, վոչնչացրած արժեթղթերը, պլատինն և պլատինու խմբի մետաղ—ռադիումը, հելիումը, որենքով սահմանվածից ավելի թունդ

վոգելից խմիչքները և խիստ ներգործող թույները մասնավոր շրջանառությունից հանված են:

Ծանոթություն.—Վորսորդության զենք և հրանյութեր, այլև դեղատնային հում նյութեր և կլասիֆիկատ-ներ ձեռք բերելը կարգավորվում է առանձին կանոններով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

24. Վոսկի և արծաթի դրամը և տարբերկրյա վալյուտան հանված են ազատ շրջանառությունից և կարող են գործարքի առարկա լինել միայն հատուկ օրենքներով մատնանշված կարգով և սահմաններում:

25. Պատկանյալ մաս համարվում է այն իրը, վորը կոչված է ծառայելու գլխավոր առարկային և վոր կապված է վերջինի հետ ընդհանուր տնտեսական նպատակով:

Պատկանյալ մասն ունի գլխավոր առարկայի վիճակը, յեթե պայմանագրի կամ օրենքի մեջ հակառակ իմաստով առանձին հիշատակություն չկա:

IV. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

26. Գործարքները, այսինքն այն գործողությունները, վորոնց նպատակն է քաղաքացիական իրավահարաբերություններ սահմանելը, փոփոխելը կամ դադարեցնելը, կարող են լինել միակողմ և փոխադարձ (պայմանագրեր):

27. Գործարքները կարող են կատարվել բերանացի կամ գրավոր: Գրավոր գործարքները լինում են 1) հասարակ, 2) վավերացրած, 3) նոտարական, այսինքն նոտարիուսում կատարված և նոտարական ակտերի մատյանի մեջ մուծված:

28. Գրավոր ձևով կատարված գործարքը պիտի ստորագրված լինի գործարքը կատարողի կամ նրա ներկայացուցչի կողմից:

Այն անձը, վոր անգրագիտության, ֆիզիքական պակասության կամ հիվանդության պատճառով չի կարող անձամբ ստորագրել, կարող է ուրիշին հանձնարարել իր փոխարեն ստորագրել գործարքը: Վերջինի ստորագրությունը պետք է վավերացվի պատշաճ կարգով և ցույց արվի այն պատճառը, վորի հետևանքով գործարքը կատարողը չի կարողացել անձամբ ստորագրել:

29. Յեթե օրենքով պահանջվող ձևը պահպանված չէ, գործարքը անվավեր է այն դեպքում միայն, յերբ օրենքում ուղղակի մատնանշված է ձևը չպահպանելու այդ հետևանքը:

30. Անվավեր է այն գործարքը, վոր կատարված է օրենքի հակառակ նպատակով կամ օրենքից խուսափելով, նաև այն գործարքը, վորն ակնհայտնի կերպով ուղղված է ի վնաս պետության:

31. Անվավեր է այնպիսի անձի ձեռքով կատարված գործարքը, վոր միանգամայն զուրկ է գործունակությունից կամ ժամանակավորապես գտնվում է այնպիսի վիճակի մեջ, վոր չի կարող ըմբռնել իր արարքի նշանակությունը:

32. Այն անձը, վորը գործարքը կատարել է խաբեության, սպառնալիքի, բռնության ազդեցության տակ կամ իբր հետևանք այն չարամիտ համաձայնության, վոր նրա ներկայացուցիչը կնքել է պայմանագիր կողմի հետ, և կամ էական նշանակություն ունեցող մոլորության մեջ գտնվելով, կարող է դատարանով պահանջել, վորպեսզի գործարքն անվավեր համարվի ամբողջությամբ կամ մասամբ:

33. Յեթե մեկը ծայրահեղ կարիքից ստիպված իր համար ակնհայտնի վոչ-ձեռնտու գործարք է կատարել, դատարանը տուժող կողմի կամ պատշաճ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների պահանջմամբ կարող է կամ գործարքը անվավեր համարել կամ դադարեցնել նրա ուժը ապագայի վերաբերմամբ:

Ծանոթություն.—Պաշտոնատար անձինք պարտավոր են հայց սկսելու այն ակնհայտնի վոչ ձեռնտու (ստրկացուցիչ) գործարքներն անվավեր ճանաչելու մասին, վոր կնքել են կարմիր բանակի և նավատորմի պարտադիր զինվորական ծառայության կանչված անձանց ընտանիքները:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

35. Յեթե կեղծ գործարքը կատարված է մի այլ գործարք քողարկելու նպատակով, այդ դեպքում կիրարկվում են իսկապես նկատի ունեցած գործարքի հիմունքները:

36. Անվավեր համարված գործարքն անվավեր է իր կատարման օրից:

37. Գործարքի անվավեր մասերը չեն շոշափում նրա մնացած մասերը, վորչափով կարելի յե յենթադրել, թե գործարքը կատարված կլիներ և առանց այդ անվավեր մասերի:

38. Գործունակ անձերը կարող են գործարքներ կատարել նաև իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով բացի այն դեպքերից, յերբ այդ արգելված է օրենքով:

39. Լիազորության սահմաններում փոխանորդի անունից՝ ներկայացուցչի կատարած գործարքները պարտադիր ուժ ունեն փոխանորդի համար և նրա համար անմիջականորեն առաջանում են իրավունքներ ու պարտականություններ:

40. Ներկայացուցիչն իր փոխանորդի անունից չի կարող գործարքներ կատարել վոչ իր (ներկայացուցչի) և վոչ մի յերկրորդ անձի վերաբերմամբ, վորի ներկայացուցիչն է ինքը միաժամանակ:

41. Գործարքը համարվում է առկախ պայմանով կատարված, յերբ վորոշված իրավունքներն ու պարտականությունները պիտի իրագործվեն, յեթե այն պայմանն իրականանա:

Յետձգիչ պայմանով կատարված է համարվում այն գործարքը, վորով վորոշված իրավունքներն ու պարտականությունները պիտի դադարեն այն պայմանն իրականանալու ժամանակից:

42. Պայմանաբար պարտավորվածը չպետք է իր գործողություններով առեղծի իրերի այնպիսի դրություն, վոր վատթարանի կամ վոչնչացնի պայմանից կախում ունեցող իրավունքը. հակառակ պարագայում պայմանը իրականացնելուց հետո նա պարտավոր է հատուցանել իր պատճառած վնասները:

43. Յեթե պայմանի իրականացմանն անբարեխղճորեն արգելք է հանդիսանում այն կողմը, վորի համար պայմանը չիրականանալը ձեռնտու յե, պայմանը համարվում է իրականացած:

Յերբ պայմանի իրականացմանն անբարեխղճորեն նպաստում է այն կողմը, վորի համար պայմանի իրականացումը ձեռնտու յե, պայմանը համարվում է չիրականացած:

V. ՀԱՅՑԻ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ

44. Հայց հարուցելու իրավունքը կորչում է յերեք տարի լրանալուց հետո (քաղաքացիական հայցի վաղեմություն), յեթե օրենքով վաղեմության այլ պայմանաժամ չի սահմանված:

45. Հայցի վաղեմության պայմանաժամը սկսվում է հայց հարուցելու իրավունքի ծագման օրից:

Այն պարտավորությունների նկատմամբ, վորոնք պիտի կատարվեն պարտատիրոջ պահանջմամբ, վաղեմության պայմանաժամը սկսվում է պարտավորությունը ծագելու օրից:

46. Յեթե գլխավոր պահանջի վերաբերմամբ հայցը վոչնչանում է վաղեմության հետևանքով, վոչնչանում են նաև հարակից պահանջների վերաբերյալ հայցերը:

47. Յեթե պարտապանը իր պարտավորությունը կատարում է վաղեմության պայմանաժամը լրանալուց հետո, նա իրավունք չունի հետ պահանջելու իր վճարածը, նույնիսկ յեթե վճարելու պահին նա չի իմացել վաղեմության պայմանաժամը լրացած լինելու մասին:

48. Հայցի վաղեմության պայմանաժամի ընթացքը կանգ է առնում՝

1) յեթե հայցվորն անհաղթահարելի պատճառներով զրկված է հայց սկսելու հնարավորությունից, յեթե միայն այդ արգելքներն առաջ են յեկած վաղեմության պայմանաժամի վերջին կիսամյակի ընթացքում.

2) պարտավորությունների վերաբերմամբ հայտարարված մորատորիումի հետևանքով.

3) Կարմիր բանակի և նավատորմի կազմի համար՝ նրանց պատերազմական դրության մեջ գտնված ժամանակի ընթացքում:

Ծանոթություն.—Վաղեմության պայմանաժամի ընթացքը կասեցնող հանգամանքները վերջանալու օրից պայմանաժամի ընթացքը շարունակվում է և, յեթե մնացած ժամանակը վեց ամսից պակաս է, այդ ժամանակը լրացվում է մինչև վեց ամիս:

49. Դատարանը կարող է ամեն անգամ յերկարացնել վաղեմության պայմանաժամը, յեթե հիմնավոր համարի այն պատճառները, վորոնց հետևանքով այդ պայմանաժամը բաց է թողնված:

50. Հայցի վաղեմությունն ընդհատվում է հայցն սկսելով, այլև՝ յերբ պարտապանը կատարում է այնպիսի գործողություններ, վորոնք վկայում են, թե նա ընդունում է իր պարտքը:

51. Ընդհատումից հետո հայցի վաղեմությունը վերսկսվում է, բայց դրանից առաջ անցած ժամանակը չի հաշվվում նոր պայմանաժամի մեջ:

ԸՆՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

I. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

52. Սեփականությունը լինում է՝ ա) պետական (ազգայնացված և քաղաքայնացված), բ) կոոպերատիվ, գ) մասնավոր:

53. Հողը, յերկրի ընդերքը, անտառները, ջրերը, ընդհանուր օգտագործության յերկաթուղիները, նրանց շարժական կազմը և սավառնակները կարող են լինել բացառապես պետության սեփականություն:

54. Մասնավոր սեփականության առարկա կարող են լինել քաղաքայնացման չենթարկված շենքերը, առևտրական ձեռնարկությունները, առանձին օրենքներով սահմանված քանակից վոչ ավելի վարձու բանվորներ ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները, արտադրության գործիքները և միջոցները, դրամն ու արժեթղթերը և այլ արժեքներ, վորոնց թվում վոսկի և արծաթե դրամ և արտասահմանյան վալյուտա, տնային և անձնական գործածության ու տնտեսության առարկաները, այն ապրանքները, վորոնց վաճառքն օրենքով արգելված չէ, և այլ գույքեր, վորոնք չեն հանված մասնավոր շրջանառությունից:

55. Այն ձեռնարկությունները, վորոնց վարձու բանվորների թիվը օրենքով սահմանվածից ավելի չէ, հեռագիրը և ռադիոհեռագիրը, նաև պետական նշանակություն ունեցող այլ կառուցվածքները, կարող են մասնավոր սեփականության առարկա լինել միայն կառավարությունից ստացված կոնցեսիայի հիման վրա:

Ծանոթություն. Կոնցեսիոները կոնցեսիայի առարկան կարող է յերրորդ անձի փոխանցել ամբողջովին կամ մասամբ՝ միայն այն պայմանով, յեթե անպայման պահպանվի տվյալ կոնցեսիան առաջին անգամ տալու համար սահմանված կարգը: Կոնցեսիայի ինքնագլուխ փոխանցումն անվավեր է և վորևե իրավունք չի տալիս յերրորդ անձին. այդպիսի փոխանցման դեպքում կոնցեսիան դադարեցվում է պայմանաժամից առաջ նույնիսկ կոնցեսիոների համար:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

56. Զենքը և զինվորական հանդերձանքը, պայթուցիկ նյութերը, [illegible] և [illegible] խմբի մեքենաները, նրանց մասերը և խառնվածքները, սպիրտը, հելիումը, վոգելից նյութերը (սահմանված աստիճանից ավելի թունդ) և խիստ ներգործող թույները կարող են լինել մասնավոր տիրապետության առարկա միայն իշխանության պատշաճ մարմինների թույլտվությամբ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

57. Ըստ որենքի գոյություն ունեցող կոոպերատիվ կազմակերպությունները կարող են տիրապետել ամեն տեսակի գույքի մասնավոր անձանց հետ հավասարապես: Այն արդյունաբերական ձեռնարկությունները, վոր ստեղծում և ձեռք են բերում կոոպերատիվ կազմակերպությունները կոոպերացիայի համապատասխան տեսակների վերաբերյալ օրենքներով սահմանված կարգով,

կարող են հիշյալ կազմակերպությունների սեփականությունը լինել, անկախ ձեռնարկության մեջ յեղած բանվորների թվից:

58. Սեփականատիրոջը օրենքով վորոշված սահմաններում պատկանում է գույքի տիրապետության, ոգտագործման և տնօրինության իրավունքը:

Ծանոթություն.—Պետական գույքի տնօրինությունը, վոր իրագործվում է պետական մարմինների, վորոնց թվում նաև տնտեսավարական մարմինների միջոցով, սահմանափակված է այս Օրենսգրքի 22-րդ հոդվածի կանոններով և համապատասխան մարմինների կանոնադրությամբ:

59. Սեփականատերն իրավունք ունի իր գույքը դատարանի միջոցով հետ պահանջելու ուրիշի ապօրինի տիրապետությունից և պահանջելու անբարեխիղճ տիրապետողից վերադարձնել կամ հատուցանել այն բոլոր յեկամուտները, վոր նա ստացել է կամ պիտի ստանար նույն տիրապետության ամբողջ ժամանակամիջոցում, իսկ բարեխիղճ տիրապետողից՝ այն բոլոր յեկամուտները, վոր նա ստացել է և պետք է ստանար այն թվականից սկսած, յերբ նա ստացել է ծանուցագիր՝ սեփականատիրոջ հայց սկսած լինելու մասին, կամ այլ միջոցով իմացել է կամ պարտավոր էր իմանալու, վոր իր տիրապետությունը անիրավ է: Տիրապետողն իր հերթին իրավունք ունի սեփականատիրոջից պահանջելու այն անհրաժեշտ ծախքերը, վոր նա արել է գույքի վրա այն ժամանակից սկսած, յերբ գույքի յեկամուտները սեփականատիրոջն են հասնում:

Սեփականատերն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքի ամեն տեսակի խախտումները, նույնիսկ յեթե այդ խախտումները միացած չլինեն տիրապետությունից զրկելու հետ:

Ծանոթություն 1.—Նախկին սեփականատերերը, վորոնց գույքը գրավված է հեղափոխական իրավունքի հիման վրա, կամ [illegible] անցել է աշխատավորների տիրապետության տակ մինչև 1922 թ. հունիսի 22-ը, իրավունք չունեն պահանջելու, վոր այդ գույքը վերադարձվի:

Ծանոթություն 2.—Կոոպերատիվ միավորությունների՝ նրանց պատկանած ձեռնարկությունները և այլ գույքը պահանջելու իրավունքը կարգավորվում է հատուկ վորոշումներով (ԽՍՀՄ Օր. ժող. 1924 թ. № 3, հոդ. 36):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

60. Սեփականատերն իրավունք ունի հետ պահանջելու իր գույքն այն անձից, վորը բարեխղճորեն ձեռք է բերել վոչ անմիջապես սեփականատիրոջից (հոդ. 59), միայն այն դեպքում, յերբ ինքը (սեփականատերը) կորցրել է այդ գույքը, կամ յեթե այն հափշտակված է յեղել նրանից: Պետական հիմնարկությունները ու ձեռնարկությունները ամեն մի ձեռք բերողից կարող են հետ պահանջել իրենց պատկանող գույքը, վոր վորևէ յեղանակով ապօրինաբար օտարված է:

Ծանոթություն 1.—Ձեռք բերողը բարեխիղճ է համարվում, յեթե նա չգիտեր կամ պարտավոր չեր իմանալու, վոր այն անձը, վորից ինքը վորևէ գույք ձեռք է բերել, իրավունք չուներ այն օտարելու:

Ծանոթություն 2.— Պետական և այլ կրեդիտ (на предъяв.) արժեթղթերը, վորոնց շրջանառությունը թույլ է տրված ԽՍՀ Միության սահմաններում և վորոնք վորպես դրամական գումար վճարելու պարտավորություն են պարունակում, այլ և բանկային տոմսերը, չի կարելի պահանջել բարեխիղճ ձեռք բերողից այն հիման վրա, թե տաշ կորցրած կամ գողացված են յեղել կամ թե պատկանելիս են յեղել պետական հիմնարկության կամ ձեռնարկության և ապօրինաբար օտարվել են վորևէ յեղանակով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

61. Սեփականության իրավունքը կարող է պատկանել յերկու կամ մի քանի անձերի միասին, բաժիններով (ընդհանուր սեփականություն):

62. Ընդհանուր սեփականության տիրապետությունը, օգտագործումն ու տնօրինությունը տեղի պիտի ունենան բոլոր բաժնեկիցների ընդհանուր համաձայնությամբ, իսկ տարաձայնության դեպքում՝ ձայների մեծամասնությամբ:

63. Ընդհանուր սեփականության յուրաքանչյուր բաժնեկից իր բաժնի չափով պարտավոր է մասնակցելու ընդհանուր գույքի վերաբերյալ ամեն տեսակի վճարումների և տուրքերի հատուցմանը, ինչպես նաև ընդհանուր գույքը կառավարելու և պահպանելու ծախքերին:

64. Ընդհանուր սեփականության բաժնեկիցները գնելու նախապատվության իրավունք ունեն, յերբ բաժնեկիցներից վորևէ մեկը վաճառելու լինի իր բաժինը կողմնակի անձի, բացի այն դեպքից, յերբ բաժինը վաճառվում է աճուրդով:

65. Յուրաքանչյուր սեփականատեր իրավունք ունի պահանջելու, վոր իր բաժինն անջատվի ընդհանուր գույքից, յեթե այդ չի հակասում օրենքին կամ պայմանագրին: Յեթե անջատման յեղանակի մասին համաձայնություն չկայանա, գույքը նույնությամբ բաժանվում է դատարանի վորոշմամբ, յեթե այդ հնարավոր է առանց անհամաչափ վնաս հասցնելու գույքի տնտեսական նպատակին. հակառակ պարագային՝ անջատվող սեփականատերը ստանում է դրամական հատուցում:

66. Իրի սեփականության իրավունքը փոխանցվում է օտարողի և ձեռք բերողի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Ձեռք բերողի սեփականության իրավունքը՝ հատկապես վորոշված առարկաների վերաբերմամբ սկսվում է պայմանագիր կնքելու պահից, իսկ տեսականիշներով (թիվ, կշիռ և չափ) վորոշվող առարկաների վերաբերմամբ՝ նրանց հանձնման պահից:

67. Հանձնում համարվում է իրերը ձեռք բերողին տալը, այլև ապրանքների տնօրինական փաստաթղթերը (բեռնագիր, կոնոսամենտ, պահեստագիր և այլն) ձեռք բերողին տալը կամ նրա պատվերով փոստին հանձնելը՝ ուղարկելու համար, յեթե պայմանագրից մի այլ բան չի բղխում, կամ ձեռք բերողի կարգադրությամբ առանց տեղը հասցնելու պարտավորության՝ օտարած իրերը բեռնակրին հանձնելը՝ ուղարկելու համար, կամ ձեռք բերողի պատվերով՝ ուղարկելու համար առարկաները փոստին հանձնելը:

68. Տիրազուրկ գույքը, վորի սեփականատերն անհայտ է, կամ վորը սեփականատեր չունի, դառնում է պետության սեփականություն հատուկ օրենքներով սահմանված կարգով:

Տիրազուրկ գյուղական ծխերի գույքն անցնում է փոխադարձ օգնության համապատասխան գյուղացիական ընկերությունների ի տնօրինություն և օգտագործություն: Այն վայրերում, վորտեղ փոխադարձ օգնության գյուղացիական ընկերություններ չկան, տիրազուրկ գյուղական ծխերի գույքն անցնում է ի տնօրինություն համապատասխան գյուղական խորհուրդների:

Ծանոթություն.—Մոլորված անասունների վերաբերյալ կանոնները սահմանված են ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1924 թ. հոկտեմբերի 15-ի վորոշումով (Որ. ժողով. 1924 թ. № 12, հոդ. 49):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

68-ա.— Կորցրած իր գտնողը պարտավոր է անմիջապես տեղեկացնելու այդ մասին իրը կորցնող անձին կամ հայտնելու գյու-

ափ մասին և հանձնելու գտնված իրը միլիցիային, գավառական գործկոմին կամ գյուղխորհրդին:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

68-բ.—Յեթե վեցամսյա ժամանակամիջոցը լրանալուց առաջ ներկայանա կամ հայտնաբերվի իրը կորցնող անձը, իրը վերադարձվում է նրան, և այդ դեպքում նա պարտավոր է իրը պահողին հատուցելու պահելու ծախքերը և վճարելու իրը գտնող անձին իրի շուկայի արժեքի քսան տոկոսը: Յեթե իրը շուկայի գին չունի, գյուտի համար հատանելիք վարձատրության չափը սահմանում է դատարանը:

Ծանոթություն.—Յեթե գտնված իրը պատկանում է պետությանը, այս հոդվածով նախատեսված վարձատրությունը չի տրվում:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

68-գ.— Առանձին դեպքերում, նայած իրը կորցնողի նյութական վիճակին և այն գտնողի նյութական վիճակին, դատարանին իրավունք է վերապահվում պակասեցնելու 68-բ հոդվածով նախատեսված վարձատրության չափը կամ իսպառ ազատելու կորցնողին գյուտի համար վարձատրություն տալու պարտավորությունից:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

68-դ. Յեթե վեցամսյա ժամանակի ընթացքում իրը կորցնողը չներկայանա կամ չհայտնաբերվի, այդ իրը դառնում է պետության սեփականություն 68 հոդ. հիման վրա: Այդ դեպքում գտնողին վարձատրություն է տրվում ընդհանուր կարգով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1927 թ. ապրիլի 20-ի վորոշման խմբագրությամբ).

68-ե. 68-բ և 68-դ հոդ. մատնանշված վեցամսյա ժամանակը հաշվվում է իրը գտնելու մասին միլիցիային, գավառական գործկոմին կամ գյուղխորհրդին հայտնելու որից:

68-զ. Նախորդ հոդվածների (68-ա—68-ե) կանոնները չեն տարածվում այն իրերի վրա, վորոնք գտնված են հիմնարկություններում, ձեռնարկություններում, ընդհանուր ոգտագործության և յերկաթուղիների շարժական կազմի շենքերում, շոգենավերի վրա և այլն: Այդ դեպքում գտնողին վոչ մի վարձատրություն չի տրվում, իսկ գտնված իրը հանձնվում է համապատասխան հիմնարկության կամ ձեռնարկության վարչությանը այն կար-

գով, վորը սահմանված է համապատասխան դերատեսչությունների և հիմնարկությունների կողմից հրատարակվող հատուկ կանոններով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1927 թ. ապրիլի 20-ի վորոշման խմբագրությամբ).

68-ը. Իրը կորցնողին գյուտի մասին չտեղեկացնելու համար, յեթե կորցնողը հայտնի յե գտնողին, կամ գյուտի մասին 68-ա հոդ. մատնանշված մարմիններին չհայտնելու և իրը նրանց չհանձնելու համար կիրարկվում է Քր. Որ. 199 հոդվածի 2-րդ մասը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

69. Սեփականատերերի գույքը բռնագրավելը թույլ է տրվում միայն մասնավոր անձանց և ընկերությունների գույքը բռնագրավելու և կոնֆիսկացիայի յենթարկելու վերաբերյալ դեկրետով սահմանված կարգով, միայն հատուցանելով սեփականատիրոջը բռնագրավված գույքի արժեքը՝ գրավման ժամանակի շուկայի միջին գներով:

(Հավելված 4).

Ծանոթություն.—Համաճարակ հիվանդությունների վերջ տալու նպատակով սպանված և պատվաստի հետևանքով սատկած կենդանիների, այլ և վոչնչացրած առարկաների համար տերերին վարձատրելու կանոնները զետեղված են ՀՍԽՀ Անասնաբուժական Կանոնագրքի մեջ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

70. Սեփականատերերի գույքը կոնֆիսկացիայի յենթարկելը թույլ է տրվում միայն վորպես պատիժ՝ որենքով սահմանված դեպքերում և կարգով: (Հավելված 4).

II. ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

71. Շենքեր կառուցելու համար քաղաքային հողաբաժիններ հատկացնելու վերաբերյալ պայմանագրերը կնքվում են կոմունալ բաժինները բոլոր կատեգորիաների իրավական և ֆիզիքական անձերի հետ հետևյալ ժամանակամիջոցներով.—քարե (աղյուսե) և յերկաթյա-բետոնե շենքերի համար մինչև 65 տարի, խառը շենքերի համար մինչև 60 տարի, և փայտե շենքերի համար մինչև 50 տարի:

Այն դեպքերում, յերբ հողաբաժինները տրամադրվում են բանվորական բնակարաններ կառուցելու համար, և նոր շենքեր

են կառուցվում, կառուցման իրավունքի պայմանագրերը պետք է կնքվեն վերոհիշյալ առավելագույն ժամանակամիջոցներով: Այն դեպքում, երբ կառուցման իրավունքի պայմանագրերի հիման վրա գոյություն ունեցող շենքերը՝ վերանորոգության, վերակառուցման, ինչպես նաև կից շինությունների ու վերնաշենքերի կառուցման միջոցով հարմարեցվում են բանվորների բնակության համար, կառուցման իրավունքի պայմանագրերը պետք է կնքվեն առավելագույն ժամանակամիջոցների 2/3-ից ոչ պակաս ժամանակով, այսինքն՝ առնվազն 43, 40 և 33 տարով:

Ծանոթություն 1.—Կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագիրը կարող է տարածվել այնպիսի հողաբաժնի վրա, որը թեև հատկապես շենքի կառուցման համար չի հատկացված, սակայն տնտեսապես ծառայում է այդ շենքին:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի որոշման խմբագրությամբ).

Ծանոթություն 2.—Քաղաքացիական Օրենսգրքի 71–84 հոդվածների կանոնները կիրարկվում են նաև քաղաքներից դուրս գտնվող վայրերի հողամասերի համար կնքվող պայմանագրերի վերաբերմամբ: Հիշյալ վայրերում հողամասերի վրա կառուցումներ կատարելու պայմանագրերը կնքում են հողային և տեղական այլ մարմինները, որոնց տնօրինության տակ են գտնվում համապատասխան հողամասերը: Քաղաքացիական Օրենսգրքի 71–84 հոդվածներով կոմունալ բաժինների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները պատշաճ դեպքերում տարածվում են վերոհիշյալ տեղական մարմինների վրա:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի որոշման խմբագրությամբ).

Ծանոթություն 3.—Բանվորական և համաքաղաքացիական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերություններին շենքեր կառուցելու համար հողամասեր տրամադրվում են նրանց ընտրությամբ կամ կառուցման իրավունքի պայմանագրի ժամանակամիջոցներով կամ անժամկետ օգտագործման կարգով. այդ ընկերություններին անժամկետ օգտագործման համար տրամադրված հողամասերի վրա կառուցվող շենքերը պատկանում են նրանց՝ սեփականության իրավունքով:

Հողամասի անժամկետ օգտագործման իրավունքը անբաժան է շենքի սեփականության իրավունքից և դադարում

է շենքի սեփականության իրավունքի դադարման հետ միաժամանակ: Շենքերը ոչնչացնելու դեպքում պահպանվում է հողամասի անժամկետ օգտագործման իրավունքը այն պայմանով, որպեսզի բանվորական կամ համաքաղաքացիական բնակարանային-շինարարական ընկերությունը ոչ ուշ, քան նախկին շենքը ոչնչացնելուց հետո յերեք տարվա ընթացքում նոր շենք կառուցի:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի որոշման խմբագրությամբ).

Ծանոթություն 4.—Խոշոր բնակելի տներ կառուցելու համար հատկացվող հողամասերի վերաբերյալ կառուցման իրավունքի ներգործության առավելագույն ժամանակամիջոցը որոշվում է առանձին օրենքով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի որոշման խմբագրությամբ).

72. Կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագիրը պետք է կնքվի նոտարական կարգով, հակառակ դեպքում անվավեր է:

73. Կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրի մեջ անպայման ցույց է տրվում՝ ա) պայմանագրի կողմերի անունը, բ) պայմանագրի ներգործության ժամանակամիջոցը, գ) կառուցման համար տրվող հողաբաժնի ճիշտ որոշումը, դ) վարձի չափը և վճարման պայմանաժամերը, ե) այն շենքերի բնույթը և ծավալը, որ պարտավոր է կառուցելու պայմանագիր կողմը, զ) կառուցմանը ձեռնարկելու թվականը, է) շենքի ավարտելու պայմանաժամը, թ) շենքերը կանոնավոր վիճակում պահելու պայմանները, ժ) շենքերը ապահովագրելու և այրման դեպքում վերանորոգելու պայմանները, ի) տուժանքը, որ կառուցողը պիտի վճարի ժամանակին և պայմանագրի այլ կետերի վերաբերմամբ պայմանազանց լինելու դեպքում:

Ծանոթություն 1.—Շենքի կառուցմանը ձեռնարկելու պայմանաժամը սահմանվում է պայմանագիրը կնքելու օրից ոչ ավելի քան մի տարի:

Այդ դեպքում, երբ հողամասերը տրամադրվում են բանվորական բնակարաններ կառուցելու համար, կառուցման ձեռնարկելու պայմանաժամը սահմանվում է մինչև 2 տարի, իսկ կառուցումն ավարտելու պայմանաժամը սահմանվում է մինչև 4 տարի, ավելացնելով այդ պայմանաժամը մինչև 8 տարի այն կազմակերպությունների համար,

վորոնք նպատակ են դրել կառուցելու ավաններ կամ շենքերի խմբեր:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

Ծանոթություն 2.—Վարձի հավելումը կարող է սահմանվել պայմանագրով՝ վոչ հաճախ քան հինգ տարին մեկ անգամ և այն—յուրաքանչյուր անգամ պայմանագրով նախատոված չափով:

74. Շենքեր կառուցելիս, ինչպես նաև նրանց օգտագործման ժամանակի ընթացքում, կառուցողը պարտավոր է պահպանել սահմանված շինարարական, այլև սանիտարական և հակահրդեհային նախազգուշական կանոնները:

75. Կառուցողը պարտավոր է հրդեհից ապահովագրել սալ իրեն հանձնված հողաբաժնում գտնվող բոլոր շենքերը, ապահովագրության ամբողջ գումարի չափով:

76. Կառուցման պայմանագրերի հիման վրա կառուցված, վերանորոգված կամ ավարտված (կից կամ վրան կառուցված կամ վերակառուցված), բնակության հատկացված շենքերը, ինչպես նաև բնակարանային-շինարարական (բանվորական և համաքաղաքացիական) կոոպերատիվ ընկերություններին անժամկետ օգտագործման համար տրամադրված հողերում բնակության համար կառուցված կամ վերանորոգված շենքերը նրանց պատկանող հողամասերի հետ բոլորովին կամ մասամբ ազատվում են շենքերից ու հողամասերից գանձվող պետական ու տեղական հարկերից, ինչպես նաև հողային ռենտայից. ԽՍՀՄ, ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ հատուկ օրենքների հիման վրա ու նրանց սահմաններում:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

77. Շենքեր կառուցելու և նրանց տնտեսական կարիքները հոգալու համար կառուցողի հողաբաժնում յեղած շինանյութերից օգտվելու իրավունքը պատկանում է կառուցողին—պայմանագրով մասնանշված սահմաններում, վորի համար կառուցողին իրավունք է վերապահվում հիշյալ նյութերը հանելու աշխատանքներ կատարել:

78. Կառուցողն իրավունք ունի օգտվելու հողաբաժնում յեղած ջրից, այլ և այդ հողաբաժնի սահմաններում ջրհորներ և աղբյուրներ շինելու:

79. Կառուցման իրավունքը կարելի յե օտարել և գրավ դնել: Կառուցման իրավունքը օտարելու և գրավ դնելու վերաբերյալ

պայմանագրերը պետք է կնքվեն նոտարական կարգով և ապա տոմարագրվեն պատշաճ կոմունալ բաժնում, հակառակ պարագայում անվավեր են:

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ կառուցողները (վորոնց թվում նաև բանվորական ու համաքաղաքացիական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերությունները) չեն ձեռնարկել կառուցմանը, կամ թեև ձեռնարկել են, բայց կառուցման պայմանագրով վորոշված ծավալի յերեսուն տոկոսից պակաս են կատարել, կառուցման իրավունքը ամբողջովին կամ մասամբ կարող է օտարվել միայն այն մարմնի համաձայնությամբ, վորը կառուցողին հողամաս է տրամադրել կառուցման համար:

Հիշյալ համաձայնությունն ստանալ չի պահանջվում, յերբ կառուցման իրավունքը օտարվում է հարկադիր կարգով այն պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոոպերատիվ կազմակերպությունների կամ վարկային հիմնարկների պահանջները բավարարելու համար, վորոնք գրավ են ընդունել կառուցման իրավունքը, ինչպես նաև կառուցման իրավունքը հրապարակային աճուրդով ձեռք բերած վերոհիշյալ հիմնարկների կողմից կառուցման իրավունքը հետագայում օտարելու դեպքերում:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

79-ա. Բանվորական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերություններին սեփականության իրավունքով պատկանող՝ կառուցման և շենքի իրավունքը կարող են օտարվել միայն այլ բանվորական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերությունների կամ պետական մարմինների: Համաքաղաքացիական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերություններին սեփականության իրավունքով պատկանող՝ կառուցման և շենքի իրավունքը նրանք կարող են օտարել այլ կոոպերատիվ կազմակերպությունների կամ պետական մարմինների: Նույն կանոնները գործում են նաև այն դեպքում, յերբ հրապարակային աճուրդով օտարվում է վերոհիշյալ ընկերություններին պատկանող կառուցման կամ շենքի իրավունքը (ՀՍԽՀ ԿԳԿ 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

79-բ. Բանվորական և համաքաղաքացիական-շինարարական կոոպերատիվ ընկերություններին սեփականության իրավունքով պատկանող կառուցման և շենքի իրավունքը կարող է նրանց կողմից գրավ դրվել միայն այնպիսի պետական մարմինների, կոոպե-

րատիվ կազմակերպությունների և վարկային հիմնարկների մոտ, վորոնք իրենց կանոնադրությունների համաձայն իրավունք ունեն չենք կամ կառուցման իրավունք գրավ ընդունելու (ՀՍԽՀ ԿԳԿ 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

80. Յեթե կառուցողը չհատուցի պայմանագրով իրենից ավելի քան մի տարվա համար պահանջվող վճարումները, կամ խախտի տուժանքով պայմանավորված այլ պարտավորությունները, կոմունալ բաժինը կարող է դատական կարգով իր պահանջը տարածել հենց կառուցման իրավունքի վրա և գանձումը կատարել կառուցման իրավունքը աճուրդով վաճառել տալով:

81. Իր պահանջը կառուցման իրավունքի վրա դարձնելու դեպքում կոմունալ բաժինը մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունք ունի բավարարություն ստանալու:

81-ա. Մասնավոր անձինք չեն կարող բանվորական կամ համաքաղաքացիական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերությունների պարտավորությունների դիմաց գանձումը դարձնել նույն ընկերություններին պատկանող չենքերի կամ կառուցման իրավունքի վրա (ՀՍԽՀ ԿԳԿ 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

82. Յեթե կառուցման իրավունքի աճուրդով վաճառումը տեղի չունենա, կառուցման իրավունքը անցնում է կոմունալ բաժնին:

83. Յեթե համաձայն 82-րդ հոդվածի կառուցման իրավունքն անցնում է կոմունալ բաժնին, այլ և յերբ պայմանագրի պայմանաժամը լրանալու հետևանքով դադարում է կառուցման իրավունքը, կառուցողը պարտավոր է բոլոր չենքերը բարեկարգ վիճակի մեջ հանձնել կոմունալ բաժնին, վոր կառուցողին վճարում է այդ չենքերը հանձնելու պահին ունեցած արժեքը, գեղչելով կոմունալ բաժնին հասանելիք պարտքերը: Շենքերի արժեքը վորոշում է գնահատող հանձնաժողովը, վորը կազմվում է կոմունալ բաժնի և Բանվորա-Գյուղացիական Տեսչության ներկայացուցիչներից: Կառուցողին իրավունք է վերապահվում հանձնաժողովի գնահատությանը համաձայն չլինելու դեպքում գանգատ տալու ժողովրդական դատարանին:

84. 71–83 հոդվածներում հիշատակված հիմունքներով քաղաքային և արտաքաղաքային հողամասերը չենքերի հետ կարող են տրվել կառուցման պայմանագրով՝

ա) չավարտվածները—ավարտելու համար.

բ) ավերվածները—վերականգնելու համար.

գ) նոր հարկեր շինելու համար.

դ) կից շինությունների, այսինքն՝ գոյություն ունեցող չենքի պատերն օգտագործելով նոր շինություններ կառուցելու համար.

ե) փոքրածավալ և փոքրարժեք չենքերը, յեթե տեղական գործկոմների կոմունալ բաժինները անտեսապես նպատակահարմար կգտնեն վերակառուցել այդ չենքերը և մեծացնել նրանց ծավալը.

զ) բնակելի հողամասի չավարտված զգալի (դատարկ մնացած) մասը, վորը կարող է օգտագործվել՝ գոյություն ունեցող կառուցվածքների հետ մի ընդհանուր բակով, ջրմուղով, կոյուղով ու այլ հարմարություններով տեխնիկապես կապված լրացուցիչ շինություններ կառուցելու միջոցով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

84-ա. Կառուցման իրավունքը 84-րդ հոդվածում թված դեպքերի վրա տարածելու համար անհրաժեշտ է, վորպեսզի պայմանավորված շինարարական աշխատանքի արժեքը գոյություն ունեցող շինությունների սկզբնական արժեքի 30%-ից պակաս չկազմի:

Տեղական գործադիր կոմիտեները իրավունք ունեն կառուցման իրավունքը տարածելու 84-րդ հոդ. թված դեպքերի վրա, յեթե պայմանավորված շինարարական աշխատանքի արժեքը գոյություն ունեցող շինությունների արժեքի 25%-ից պակաս չի կազմում:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

84-բ. Կառուցման իրավունքը տարածվում է բոլոր տնատիրությունների վրա: 84-րդ հոդ. «գ», «դ» և «զ» կետերում թված դեպքերում՝ կառուցման պայմանագիրը կնքելուց առաջ գոյություն ունեցող տներում ապրող վարձողները չեն զրկվում բնակելի չենքերի վարձի վերաբերյալ պայմանագիրն ինքնաբերաբար վերանորոգելու և բնակարանավարձը օրենքով սահմանված կոպարներից վոչ ավելի չափերով մուծելու այն իրավունքից, վորը տրված է նրանց Քաղ. Օր. 156 և 166 հոդվածներով. այս դեպքերում այս Օրենսգրքի 156 հոդ. 2 ծանոթությամբ և 166 հոդվածով նախատեսված այն իրավունքները, վորով կառուցողները բնակարանավարձը գանձում են փոխադարձ համաձայնությամբ և վարձողին կարող են վտարել վարձակալական պայմանագիրը վերջանալուց հետո,—տարածվում են միայն այն անձանց վրա, վորոնք վարձել են կառուցողի կողմից շինված տարածությունը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

84-գ. Քաղ. Որ. 156 հոդ. հիշված և իրենց բնակարանների վերանորոգության պատճառով բնակարաններից վտարվող անձանց (84 հոդ. «ե» կետ) համապատասխան գործադիր կոմիտեն կամ կառուցողը (այն դեպքում, յերբ այդ նախատեսված է կոմունալ բաժնի հետ կնքված պայմանագրով) պարտավոր են տրամադրելու բնակության պիտանի տարածություն սահմանված չափերով, ինչպես նաև լրացուցիչ տարածություն—այն բնակիչներին, վորոնք որենքով լրացուցիչ տարածության իրավունք ունեն և փաստորեն ոգտվում են այդ տարածությունից վտարման պահին:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

III. ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԸ

85. Պարտատերը (գրավառուն) գրավի զորությամբ մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունք ունի բավարարություն ստանալու գրավ դրված գույքի արժեքից, յեթե պարտապանը չկատարի գրավականով ապահովված պահանջը:

86. Գրավատու կարող է լինել թե ինքը պարտապանը և թե մի յերրորդ անձ: Գրավատուն պետք է լինի գրավ դրված գույքի սեփականատերը: Յեթե նա ուրիշի գույքն է գրավ դրել, համապատասխան կերպով կիրարկվում են այս Օրենսգրքի 59 և 60-րդ հոդվածները:

87. Գրավի յենթակա կարող է լինել ամեն մի գույք, վոր շրջանառությունից հանված չէ, վորոնց թվում նաև պարտքի պահանջները և կառուցման իրավունքը:

Ծանոթություն.—Օրենքով մատնանշված դեպքերում գրավի առարկա կարող են լինել վոսկի ու արծաթի դրամը և ոտարերկրյա վալյուտան:

88. Գրավականով ապահովվում է միայն իրական պահանջը:

89. Գրավը կարող է հետևանք լինել կամ պայմանագրի կամ որենքի հատուկ ցուցումի:

90. Գրավի պայմանագիրը պիտի կնքվի գրավոր: Շենքի և կառուցման իրավունքի գրավը պետք է տեղի ունենա նոտարական կարգով և ապա տոմարագրվի համապատասխան կոմունալ բաժնում, հակառակ դեպքում անվավեր է: Տոմարագրությունից հետո գրավառուին տրվում է գրավաթուղթ:

91. Գրավի պայմանագրի և գրավաթղթի մեջ պիտի ցույց տրված լինեն պարտապանի և պարտատիրոջ անունն ու բնակավայրը, գրավ դրված գույքի նկարագրությունը, գնահատությունն ու տեղը, գրավականով ապահովված պահանջի եյությունն ու չափը և կատարման պայմանաժամը. բացի սրանցից կարող են մտցվել նաև որենքով չարգելված այլ պայմաններ:

92. Գրավ դրված գույքը, բացի շենքերից և կառուցման իրավունքից, հանձնվում է գրավառուին: Կողմերի համաձայնությամբ գույքը կարելի յե թողնել պարտապանի մոտ, պարտատիրոջ փականքի և կնիքի տակ, յեթե որենքով կամ վարչական հիմնարկությունների կանոններով այլ կարգ չի սահմանված: Հատկապես վորոշված առարկան կարելի յե թողնել գրավատուի տիրապետության տակ, վրան գրավ դրված լինելը վկայող նշաններ անելով:

93. Գրավի իրավունքը 92-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ տեսակավոր առարկաների վերաբերմամբ սկսվում է հանձնելու կամ կնքելու, իսկ հատկապես վորոշված առարկաների վերաբերմամբ՝ պայմանագիրը կնքելու վարկյանից:

94. Մի գույք կարելի յե իբրև գրավական տալ մի քանի պարտատիրոջ, բայց գրավատուն պարտավոր է ամեն մի նոր գրավառուի տեղեկացնելու գրավ դրվելու նախորդ դեպքերի մասին:

Շենքերի և կառուցման իրավունքի կրկնագրավը տեղի պետք է ունենա 90-րդ հոդվածով մատնանշված կարգով: Այլ գույքերի կրկնագրավը սահմանվում է գրավոր պայմանագրով և նախորդ գրավառուին տրված գրավոր հրամանով այն մասին, վոր նա բավարարվելուց հետո գրավ դրված գույքը հանձնի նոր գրավառուին:

95. Գրավականն ապահովում է պահանջն այն ծավալով, ինչ ծավալով պահանջը գոյություն ունի փաստորեն բավարարվելու պահին, մասնավորապես՝ տոկոսները, բավարարումը հետաձգելու հետևանքով պատճառած վնասների հատուցումը, հարկ յեղած դեպքում—տուժանքը, այլև պահանջը գանձելու առթիվ յեղած ծախքերի հատուցումը:

96. Գրավառուն իրավունք չունի ոգտագործելու գրավ դրված գույքը կամ նրա արդյունքները, յեթե այլ բան չի սահմանված որենքով կամ պայմանագրով:

97. Գրավատուն պարտավոր է գրավ դրված գույքը պահպանել, ինչպես հարկն է, և ապահովագրել այն: Յեթե գույքը հանձնված է գրավառուին, վերջինն է պատասխանատու նրա պահպանության համար. վերջինի պարտականությունն է նաև ապահովագրել տալ գույքը գրավատուի հաշվին:

98. Եթե գրավառուն կորցնի կամ հափշտակել տա գրավի առարկան, իրավունք ունի այն պահանջելու ամեն մի տեր դարձածից, վորոնց թվում նաև սեփականատիրոջից: Եթե գրավ դրված գույքը թողնված է պարտապանի մոտ (հոդ. 92), գրավառուն իրավունք ունի այն պահանջելու ամեն մի անբարեխիղճ ձեռք բերողից, իսկ պետական մարմինը՝ ամեն մի ձեռք բերողից:

Ծանոթություն.—Գրավի նշաններ ունեցող գույք ձեռք բերողը համարվում է անբարեխիղճ:

99. Եթե գրավառուները մի քանի հոգի յեն (հոդ. 94), այդ դեպքում յուրաքանչյուր հաջորդ գրավառու գրավ դրված գույքից բավարարություն է ստանում նախորդի լրիվին բավարարություն ստանալուց հետո միայն (ավագություն):

100. Եթե աճուրդով վաճառելուց գոյացած գումարը բավական չէ պահանջը բավարարելու համար, այդ դեպքում գրավառուն իրավունք ունի պակասող գումարը ստանալու պարտապանի այլ գույքից, յեթե օրենքով կամ պայմանագրով այլ բան չի սահմանված: Այս դեպքում գրավի իրավունքն ինքնստինքյան հիմք չի ծառայում մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության կարգով բավարարվելու:

101. Պարտապանին պատկանող՝ գրավ դրված գույքից գրավառուի պահանջի հանդեպ նախապատվության կարգով բավարարվում են հետևյալ կարգերի գանձումները, յեթե պարտապանի մնացած գույքը բավական չէ այդ գանձումները հատուցելու համար.—

1) առաջին հերթին—պարտապանի՝ բանվորներին ու ծառայողներին հասանելի աշխատավարձի, սոցիալական ապահովագրության տուրքերի և ապրուստի միջոցի պարտքը.

2) յերկրորդ հերթին—գրավ դրված գույքի վրա ընկնող բաժի գանձումները, յեթե այդ գույքը գրավ է դրված յեղել արտադրության վայրում, բազիսային պահեստում կամ մաքսատանը գտնված ժամանակ.

3) յերրորդ հերթին—համապետական և տեղական հարկերի ու տուրքերի ապառիկները, ինչպես նաև վոչ-հարկային բնույթի այն յեկամուտների (համապետական և տեղական) ապառիկները, վորոնց վրա տարածվում են հարկերի գանձման կանոնադրության կանոնները:

Գրավի միջոցով չապահովված այն պահանջները, վորոնք հիմնված են համապետական կամ տեղական բյուջեյից անմիջաբար տրված փոխատվությունների, ինչպես նաև ԽՍՀՄ ֆինանսների

ժողովրդական կոմիսարիատի կամ դաշնակից հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիսարիատների յերաշխավորական նամակներով ապահովված բանկային փոխատվությունների վրա, բավարարման հերթի տեսակետից հավասարեցվում են պետական հարկերի ու տուրքերի ապառիկներին:

Վարկային հիմնարկների գրավի միջոցով ապահովված պահանջները բավարարվում են գրավ դրված գույքի արժեքից հարկերի, տուրքերի և վոչ-հարկային յեկամուտների ապառիկների հանդեպ նախապատվության կարգով:

Ծանոթություն 1.—Խեղումների կամ մահվան դեպքում տուժածներին, նրանց ընտանիքների անդամներին կամ սոցիալական ապահովագրության մարմիններին լիկվիդացիայի յենթարկվող ձեռնարկություններից հակադարձ պահանջի կարգով՝ պարբերական վճարների, ինչպես նաև հատուկ օրենքներով սահմանված կարգով կապիտալիզացիայի յենթարկված գումարների ձևով հասանելիքները բավարարման հերթի տեսակետից հավասարեցվում են աշխատավարձի և սոցիալական ապահովագրության վճարների վերաբերյալ պահանջներին:

Ծանոթություն 2.—Այս վորոշումը չի վերացնում հատուկ օրենքներով (յերկաթուղիների կանոնադրություն և ջրային տրանսպորտի օրենք) յերկաթուղիներին և նավարկության ձեռնարկություններին վերապահված այն իրավունքը, վորի համաձայն փոխադրվող բեռից, մյուս բոլոր պարտատերերի հանդեպ նախապատվության կարգով, բավարարվում են փոխադրության վճարի գանձման և այդ բեռի լրացուցիչ տուրքերի պահանջները, ինչպես նաև ապառիկ ունեցողների գույքը պետական ու տեղական հարկերի ու տուրքերի, մաքսերի և վոչ հարկային յեկամուտների դիմաց հրապարակային աճուրդով վաճառող պետական մարմինների նախապատվության իրավունքը, վորի համաձայն նրանք գույքի վաճառքից գոյացած գումարներից առաջին հերթին գանձում են հիշյալ գույքը արգելելու, պահելու, փոխադրելու և վաճառելու ծախսերը:

Ծանոթություն 3.—Այս հոդվածով նախատեսված հերթերից վորևէ մեկի մեջ մտնող գանձումները բավարարվում են ըստ համաչափության այն դեպքերում, յերբ պարտապանի գույքը բավական չէ այդ գանձումները լրիվին բավարարելու համար:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

Ծանոթություն 4.—Պարտապանի գույքը ներկայացված բոլոր պահանջները լիովին բավարարելու համար բավական չլինելու դեպքում գործարանային կոմիտեների պահպանության համար կատարվող հատկացումների վերաբերյալ՝ արհեստակցական միությունների պահանջները բավարարման հերթի տեսակետից հավասարեցվում են բանվորների ու ծառայողների աշխատավարձի պահանջներին:

Արհեստակցական միությունների մնացած բոլոր պահանջները հավասարեցվում են պետական ձեռնարկությունների պահանջներին:

Ծանոթություն 5.—Գյուտարարների և արդյունաբերական նմուշների հեղինակների ու նրանց ժառանգների՝ (բացի իրավական անձերից) ամրագրված գյուտերից ու արդյունաբերական նմուշներից օգտվելու վարձատրության վերաբերյալ պահանջների այն մասը, վորը 6000 ռուբլուց չի գերազանցում, բավարարման հերթի տեսակետից հավասարեցվում է աշխատավարձի վերաբերյալ պահանջներին:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. նոյեմբերի 5-ի վորոշման խմբագրությամբ).

101-ա. հանվում է:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

102. Յեթե գրավ դրված գույքը վոչնչանա, գրավառուն նախապատվության իրավունք ունի բավարարություն ստանալու ապահովագրական վարձատրությունից:

103. Գրավականով ապահովված պահանջն ուրիշին փոխանցելու դեպքում նոր պարտատիրոջն է անցնում նաև գրավի իրավունքը: Շենքերի և կառուցման իրավունքի գրավով ապահովված պահանջի փոխանցումը կատարվում է գրավականի հանձնումով, փոխանցման մակագրությամբ, վորը վավերացվում է նոտարական կարգով և մուծվում է կոմունալ բաժնի մատյանի մեջ: Մնացած դեպքերում պահանջը փոխանցվում է գրավի պայմանագրի վրա մակագրություն անելով, այլ և գրավ դրված գույքը հանձնելով, յերբ այդ հանձնումն անհրաժեշտ է, վորպեսզի գրավի իրավունքը ծագի (92, 93 հոդ.):

Պարտապանին և գրավատուին պետք է տեղեկություն տրվի գրավի իրավունքը փոխանցվելու մասին:

104. Գրավը դադարում է՝ 1) յերբ դադարում է գրավով ապահովված պահանջը, 2) յերբ գրավ դրված գույքը վաճառվում է աճուրդով:

105. Շենքերի և կառուցման իրավունքի գրավը դադարելու մասին շահագրգռված անձի պահանջով հիշատակություն է արվում գրավի ակտի իսկականի վրա և կոմունալ բաժնի մատյանի մեջ:

Յերբ գրավը դադարում է գրավականով ապահովված պահանջը դադարելու հետևանքով, գրավառուն իր մոտ գրավ դրված գույքը պարտավոր է վերադարձնելու գրավատուին կամ հանձնելու հաջորդ գրավառուին՝ ըստ ավագության (հոդ. 94):

ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

106. Պարտավորությունները բղխում են պայմանագրերից և օրենքով մատնանշված այլ հիմունքներից, մասնավորապես անհիմն շահառության և ուրիշին վնաս հասցնելու հետևանքով:

107. Պարտավորության զորությամբ մեկը (պարտատերը) իրավունք ունի պահանջելու մի ուրիշից (պարտապանից) կատարել վորոշ գործողություն, մասնավորապես իրեր փոխանցել կամ դրամ վճարել և կամ ձեռնպահ մնալ վորևէ գործողությունից:

108. Յեթե պարտավորության առարկան վորոշված է միայն տեսակային հատկանիշներով, և օրենքով կամ պայմանագրով ընտրության իրավունք չէ վերապահված կողմերից մեկին կամ մի յերրորդ անձի, պարտապանը պարտավոր է հայթայթելու միջինից վոչ պակաս հատկություն ունեցող առարկա:

Յեթե պարտավորության առարկան վորոշված է վորպես յերկընտրելի, ընտրության իրավունքը պատկանում է պարտապանին, յեթե օրենքի կամ պայմանագրի մեջ այլ ցուցումներ չկան.

109. Պարտատերն իրավունք ունի մասնակի կատարում չընդունելու, յեթե օրենքով կամ պայմանագրով այլ բան չէ նախատեսված:

110. Յեթե օրենքի կամ պայմանագրի համաձայն պարտքի վրա պետք է բարդվեն տոկոսներ, վորոնց չափը ցույց չի տրված, տոկոսները (օրինական) բարդվում են պարտքի գումարի տարեկան 6%-ի չափով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

111. Կատարումը տեղի պետք է ունենա օրենքով կամ պայմանագրով վորոշված ժամանակամիջոցում: Յեթե կատարելու

պայմանաժամը նշանակված չէ, կամ կախված է պարտատիրոջ պահանջից, այդ դեպքում պարտատերն իրավունք ունի անհապաղ կատարում պահանջելու, իսկ պարտապանը՝ անհապաղ կատարելու: Այս դեպքում պարտատիրոջ կողմից պահանջը ներկայացվելուց հետո պարտապանին 7 օր պայմանաժամ է տրվում, յեթե օրենքով այլ բան չի սահմանված:

112. Պարտապանն իրավունք ունի իր պարտավորությունը կատարելու նաև պայմանաժամից առաջ, յեթե այդ չի հակասում պայմանագրի իմաստին: Սակայն մինչև պայմանաժամը մնացած ժամանակի համար տոկոսներ դուրս գալու (զեղչ) իրավունքը պարտապանին պատկանում է միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

113. Յեթե կատարման վայրը վորոշված չէ օրենքով կամ պայմանագրով և չի յերևում պարտավորության էությունից, այդ դեպքում կատարումը տեղի պիտի ունենա —

ա) այն պարտավորությունների վերաբերմամբ, վորոնց առարկան է շենքերի կամ հողաբաժինների իրավունքի փոխանցումը—այդ շենքերի կամ հողաբաժինների գտնված վայրում.

բ) այն գործարքների նկատմամբ, վորոնք պարտապանի ձեռնարկության գործունեությանն է վերաբերում,—ձեռնարկության գտնված վայրում.

գ) դրամական պարտավորությունների նկատմամբ—այնտեղ, վորտեղ պարտատերը բնակվելիս է յեղել պարտավորությունը ծագելու պահին. բայց յեթե պարտատերը պարտավորության կատարման պահին փոխած լինի իր բնակավայրը և ժամանակին այդ մասին տեղեկություն տված լինի պարտապանին, վերջինը պարտավոր է կատարելու պարտատիրոջ նոր բնակավայրում, իսկ կատարման վայրի փոփոխության հետ կապված բոլոր ծախքերը պարտավոր է հոգալու պարտատերը.

դ) մնացած պարտավորությունների նկատմամբ—պարտավորությունը ծագելու պահին պարտապանի բնակված վայրում:

114. Յեթե պարտատերը բացակա լինի, խուսափի կատարումը ընդունելուց, կամ այլ կերպ բաց թողնի պայմանաժամը, այլ և յեթե նա գործունակ չլինի, կամ բացակա լինի նրա ներկայացուցիչը, վորը լիազորված է համաձայն է ընդունելու կատարումը, այդ դեպքում պարտապանը կարող է իր վճարելիքն իբր ավանդ հանձնել դատարանին, վորի մասին պարտատիրոջը տեղեկություն է տրվում ծանուցագրով կամ հայտարարությամբ:

Ծանոթություն.—Դատարանին ավանդ հանձնելու կարգը վորոշվում է առանձին կանոնագրությամբ:

115. Համապարտ պատասխանատվությունը տեղի յէ ունե-

նում, յեթե այդ նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով:

Համապարտության դեպքում պարտատերն իրավունք ունի թե բոլոր պարտապաններից միասին և թե յուրաքանչյուրից առանձին պահանջելու թե ամբողջ պարտքի և թե նրա մի մասի կատարումը: Յեթե պարտատերը չհաջողի ստանալ մի պարտապանից, նա կարող է չստացածը ամբողջապես պահանջել մնացած պարտապաններից:

Համապարտ պարտավորությունը կատարող պարտապանն իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնելու մնացած պարտապաններին, պարտքի հավասար բաժիններով, յեթե այլ բան չէ սահմանված օրենքով կամ պայմանագրով: Համապարտներից մեկի չվճարածը հավասար բաժիններով ընկնում է բոլոր մնացածների վրա:

116. Յեթե միևնույն պարտավորության մասնակից են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան, այդ դեպքում, յեթե պարտավորության առարկան անբաժանելի յէ, պարտապանները համարվում են համապարտներ, իսկ պարտատերերը՝ համապահանջ պարտատերեր, վորոնցից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջը ներկայացնելու ամբողջովին: Յեթե պարտավորության առարկան բաժանելի յէ, յուրաքանչյուր պարտապան պարտավոր է կատարելու, իսկ յուրաքանչյուր պարտատեր իրավունք ունի պահանջելու, վորպեսզի կատարումը տեղի ունենա հավասար բաժիններով, յեթե այլ բան չէ սահմանված օրենքով կամ պայմանագրով:

117. Յեթե պարտապանը չկատարի իր պարտավորությունը, պարտավոր է պարտատիրոջը հատուցանելու դրանով պատճառած վնասները: Վնաս ասելով հասկացվում է թե գործին իրապես հասցրած վնասը և թե այն օգուտի կորուստը, վոր հնարավոր էր ստանալ շրջանառության սովորական պայմաններում:

118. Պարտապանն ազատվում է իր պարտավորությունը չկատարելու պատասխանատվությունից—վոր չափով այլ բան չէ սահմանված օրենքով կամ պայմանագրով—յեթե ապացուցի, վոր կատարելու անկարելիությունը հետևանք է յեղել մի հանգամանքի, վորի առաջն ինքն առնել չէր կարող, կամ արդյունք է յեղել պարտատիրոջ չար դիտավորության կամ անզգուշության:

119. Համենայն դեպս, կատարման անկարելիությունը պարտապանին չի ազատում պատասխանատվությունից,

ա) յեթե պարտավորության առարկան վորոշված է սեռական հատկանիշներով և նույն կարգի գույքի հայթայթումը օբյեկտիվորեն անհնարին չի դարձել.

բ) յեթե այն անձինք, վորոնց որենքի զորությամբ պարտապանի հանձնարարությամբ հանձնվել է պարտավորության կատարումը, դիտավորյալ կերպով կամ անզգուշությամբ առաջ են բերել կամ չեն կանխել կատարումն անհնարին դարձնող հանգամանքը:

120. Յեթե պարտապանը չկատարի այն պարտավորությունը, վորի առարկան է հանդիսանում ոգտագործության համար հատկապես վորոշված մի իր տալը, այդ դեպքում պարտատերն իրավունք ունի դատարանով պահանջելու, վոր այդ իրն առնվի պարտապանից և հանձնվի իրեն: Այս իրավունքը վերանում է, յեթե իրը հանձնված է նրա նկատմամբ նույնպիսի իրավունք ունեցող մի յերրորդ անձի: Յեթե իրը դեռ չի հանձնված, յերկու պարտատերերից նախապատվության իրավունք ունի նա, հոգուտ վորի ավելի վաղ է առաջ յեկել պարտավորությունը:

121. Յեթե պարտապանը բաց թողնի կատարման պայմանաժամը, պարտավոր է պարտատիրոջը հատուցանելու պայմանաժամը բաց թողնելու հետևանքով նրան պատճառած վնասները և պատասխանատու յե պայմանաժամը բաց թողնելուց հետո պատահաբար առաջ յեկած՝ կատարման անկարելիության համար:

Յեթե ժամանակը բաց թողնելու հետևանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր շահավետությունը, պարտատերը կարող է հրաժարվել կատարումն ընդունելուց և պահանջել իր վնասները, այնպես՝ ինչպես իրավունք պիտի ունենար պահանջելու պարտավորության չկատարելու դեպքում: Դրամական գումարի հատուցման պայմանաժամը բաց թողնող պարտապանը համենայն դեպս պարտավոր է վճարել բաց թողած ժամանակի համար որենական տոկոս, յեթե պայմանագրով տոկոսի ավելի բարձր չափ չէ սահմանված:

Ծանոթություն.—Պարտապանը համարվում է պայմանաժամը բաց թողած, յեթե չի կատարել իր պարտավորությունը սահմանված պայմանաժամին (հոդ. 111): Պայմանաժամը բաց թողած չի համարվում, յեթե կատարումը չի կարող տեղի ունենալ այնպիսի հանգամանքի պատճառով, վորի համար պարտապանը պատասխանատու չէ, մասնավորապես յեթե պարտատերն է պայմանաժամը բաց թողել (122 հոդ.):

122. Յեթե պարտատերը բաց թողնի պայմանագրով իրեն հասանելիքն ընդունելու պայմանաժամը, պարտապանն իրավունք ունի պահանջելու պայմանաժամը բաց թողնելու հետևանքով իրեն պատճառած վնասները և ազատվում է կատարման հետագա ան-

կարելիության պատասխանատվությունից, բացի չար դիտավորության կամ կոպիտ անզգուշության դեպքերից: Պարտապանը պարտավոր չէ վճարելու դրամական տոկոսավոր պարտքի տոկոսները այն ժամանակի համար, վոր բաց է թողել պարտատերը:

Ծանոթություն.— Պարտատերը համարվում է պայմանաժամը բաց թողած, յեթե առանց որինական հիմքի հրաժարվում է կատարումն ընդունելուց, կամ յեթե չի կատարում այն գործողությունները, վորը պարտավոր եր կատարել, և վորոնցից առաջ պարտապանը չի կարող կատարել իր պարտավորությունը:

123. Չկատարելու կամ պայմանաժամը բաց թողնելու համար պարտապանից դատական վճռով պարտատիրոջը հասանելի վարձատրության գանձման կարգը (հետաձգում է մաս-մաս վճարում) վորոշում է դատարանը, նկատի ունենալով պարտապանի նյութական վիճակը:

124. Պարտատերը կարող է իր պահանջը զիջել ուրիշ անձի, յեթե այդ չի հակասում որենքին կամ պայմանագրին, կամ յեթե պահանջը կապված չէ պարտատիրոջ անձնավորության հետ: Պարտապանին պետք է տեղեկություն տրվի պահանջը փոխանցելու մասին, և մինչև այդ տեղեկության ստանալը պարտապանն իրավունք ունի վճարելու նախորդ պարտատիրոջը:

125. Կատարումն ապահովող իրավունքները փոխանցվում են պահանջը ձեռք բերողին:

126. Պարտապանը կարող է իր պարտքը փոխանցել այլ անձի՝ միայն պարտատիրոջ համաձայնությամբ:

127. Պարտավորությունն ապահովելու համար յերրորդ անձի տասնձնած յերաշխավորությունն ու գրավականը դադարում են պարտքի փոխանցումով, յեթե միայն գրավատուն կամ յերաշխավորը համաձայնած չեն պատասխանատու լինելու նաև նոր պարտապանի փոխարեն:

128. Պահանջի զիջումը և պարտքի փոխանցումը պետք է կատարվեն առհասարակ պայմանագրերի համար սահմանված ձևով, յեթե որենքում չկան հատուկ ցուցումներ: Գրավոր կնքված պայմանագրից բխող պահանջի զիջումը կամ պարտքի փոխանցումը նույնպես պետք է գրավոր կատարվի:

129. Պարտավորությունը դադարում է ամբողջովին կամ մասամբ՝ ա) յերբ կատարված է, բ) պայմանաժամը լրացած համանման հակադարձ պահանջի հաշվակցությամբ, գ) յերբ միևնույն անձի մեջ միանում են պարտապանը և պարտատերը, ընդ վորում պարտավորությունը նորից առաջ է գալիս այդ միացումը դադա-

րելու դեպքում, գ) երբ կողմերը համաձայնության են գալիս և, մասնավորապես, երբ կնքվում է նոր պայմանագիր, որը պիտի փոխարինի նախորդը, ե) եթե կատարումն անհնարին է, որի համար պարտապանը պատասխանատու չէ (հոդ. 118):

II. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲՂԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ·

130. Պայմանագիրը կնքված է համարվում, երբ կողմերը համաձայնության են եկել—հարկ եղած դեպքերում օրենքով պահանջված ձևով—պայմանագրի բոլոր էական կետերի նկատմամբ: Էական են համարվում, ամեն պարագայում, պայմանագրի առարկան, գինը, պայմանաժամը, այլ և այն բոլոր կետերը, որոնց նկատմամբ կողմերից մեկի նախապես արած հայտարարության հիման վրա՝ համաձայնություն պետք է կայանա:

Ծանոթություն.— 1. Երբ օրենքով սահմանված է, որ պայմանագիրն անպատճառ պետք է կնքվի կամ վավերացվի նոտարական մարմնի միջոցով, պայմանագիրը, եթե օրենքով այլ բան չէ սահմանված, համարվում է կնքված՝ նոտարական կարգով կնքվելու կամ վավերացվելու ժամանակից:

Ծանոթություն.— 2. Երբ կողմերը նախապես համաձայնության են գալիս, որ պայմանագիրը որոշ ձև ունենա, նույնիսկ եթե այդ ձևը օրենքով չի պահանջվում, պայմանագիրը կնքված է համարվում հիշյալ ձևը ընդունելուց հետո միայն:

131. Պայմանագիր կնքելու առաջարկությունը, որ արված է ներկա եղողին, առանց պատասխանի համար պայմանաժամ որոշելու, առաջարկության անողին կապում է միայն այն դեպքում, երբ մյուս կողմը անհապաղ հայտնում է, թե առաջարկությունն ընդունում է:

Ծանոթություն.— Հեռախոսով եղած առաջարկությունը համարվում է ներկա եղողին արված առաջարկություն:

132. Եթե պայմանագիր կնքելու առաջարկությունն արված է բացակա անձի, առանց պատասխանի համար ժամանակ որոշելու, այդ առաջարկությունը կապում է առաջարկողին այնքան ժամանակ, որքան նորմալ պայմաններում անհրաժեշտ է պատասխան ստանալու համար:

133. Եթե առաջարկությունը պատասխանելու համար որոշ ժամանակ է արված, առաջարկության անող անձը կապված է միայն մինչև այդ պայմանաժամի լրանալը: Եթե առաջարկու-

թյունն ընդունելու մասին եղած հայտարարությունն ուշ ստացվի, բայց նրանից երևա, որ ժամանակին է ուղարկված եղել, ապա հայտարարությունը ուշացած է համարվում միայն այն դեպքում, եթե պատասխան ստացողը այդ մասին անհապաղ տեղեկություն տա մյուս կողմին:

134. Բացակա անձի հետ պայմանագիրը կնքված է համարվում այն պահից, երբ առաջարկության անող անձը պատասխան է ստանում, եթե առաջարկության իմաստից այլ բան չի բխում:

135. Եթե հայտարարվում է, որ առաջարկությունն ընդունվում է առաջարկության պայմաններից տարբեր պայմաններով, այդ համարվում է առաջարկությունից հրաժարվել և միևնույն ժամանակ նոր առաջարկություն:

136. 500 ռուբլուց ավելի գումարի պայմանագիրը պիտի կնքվի գրավոր ձևով, բացի օրենքով հատկապես նախատեսված դեպքերից:

Ծանոթություն.—Այս հոդվածով սահմանված կանոնի խախտումը կողմերին զրկում է վեճ ծագելու դեպքում ի հաստատություն պայմանագրի՝ վկաների ցուցմունքների վրա հիմնվելու իրավունքից, բայց չի զրկում նրանց գրավոր ապացույցներ առաջ բերելու իրավունքից:

137. Պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների թե միմյանց և թե կոոպերատիվ կազմակերպությունների ու արհեստագործական միությունների և մասնավոր անձանց հետ կնքած պայմանագրերն անպատճառ պետք է վավերացվեն նոտարական կարգով, բացի՝

ա) մասնավոր անձանց հետ կնքած պայմանագրերից՝ ոչ ավելի քան հազար ռուբլի գումարի.

բ) պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների միմյանց հետ, այլ և կոոպերատիվ ու արհեստակցական կազմակերպությունների հետ կնքած պայմանագրերից՝ ոչ ավելի քան 20 հազար ռուբլի գումարի.

գ) վարկային հաստատությունների գործարքներից, որոնք վերաբերում են ավանդի, փոխատվության և հանձնակատարության գործառնություններին.

դ) կանխիկ կատարվող առուծախի գործարքներից.

ե) ապահովագրության պայմանագրերից.

զ) ԽՍՀ Միության Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի, ԱՍՖԽՀ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի և ՀՍԽՀ Տնտեսական Խորհրդակցության կարգադրությամբ պլանային կարգով կատարվող գործարքներից, եթե այդ

գործարքների եյական մասերը ճշտորեն վորոշված են ԽՍՀ Միության Աշխատանքի և Պաշտպանության, ԱՍՖԽՀ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի և ՀՍԽՀ Տնտեսական Խորհրդակցության կարգադրություններով.

ը) Ռազմածովային դերատեսչության պայմանագրերից, վորոնք վերաբերում են Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի և նավատորմի սպառազինության ու տեխնիքական հատուկ հանդերձանքի առարկաների մատակարարմանը.

թ) պետական, արհեստակցական և կուսակցական հրատարակչությունների թե միմյանց հետ և թե այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների և մասնավոր անձանց հետ կնքած պայմանագրերից՝ հեղինակի իրավունք և նրանից բխող իրավասություններ փոխանցելու մասին.

ժ) կապալի և առուծախսի (այդ թվում նաև մատակարարման) այն բոլոր պայմանագրերից, վոր կնքում են Ռազմածովային գործերի Ժողովրդական Կոմիսարիատի, Միացյալ Պետական Քաղաքական Վարչության հատուկ բաժինների և զորամասերի, այլ և ԽՍՀ Միության պահակազորի պետական բյուջեյով պահվող մարմինները պետական ձեռնարկությունների, կոոպերատիվ կազմակերպությունների և մասնավոր անձանց հետ. (ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1925 թ. դեկտեմբերի 4-ի վորոշումը).

ի) Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից կնքվող պայմանագրերը, վորոնք վերաբերում են միլիցիային, քրեական հետախուզությանը և կալանավայրերին սպառազինության, հանդերձանքի և տեխնիկական հատուկ հայթայթման առարկաներ մատակարարելուն.

լ) հանձնակատարության պայմանագրից.

Ծանոթություն 1.— Սահմանված կարգով բորսայում արձանագրված բորսային, ինչպես և վոչ բորսային գործարքները նոտարական վավերացման յենթակա չեն:

Ծանոթություն 2.— Անմիջապես բնակչության հետ կնքվող՝ սերմացուի պետական փոխատվության պայմանագրերի նկատմամբ նոտարական վավերացումը փոխարինվում է գավառական գործադիր կոմիտեյում վավերացնելով:

Ծանոթություն 3.— ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1925 թ. դեկտ. 4-ի «Գավառական գործկոմների և գյուղխորհուրդների կողմից գործարքներ, պայմանագրեր և փաստաթղթեր վավերացնելու մասին» վորոշման (Որ. Ժող.

1926 թ. № 1, հոդ. 1) մեջ հիշված գործարքների նոտարական վավերացումը կատարվում է գավառական գործադիր կոմիտեներում և գյուղխորհուրդներում, յեթե գավառական գործկոմների և գյուղխորհուրդների գտնված վայրերում նոտարական գրասենյակներ չկան:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

138. Մեկ հազար ռուբլուց ավելի արժեք ունեցող գույքը ձրիաբար փոխանցելու (նվիրելու) պայմանագրերը պիտի ձեւակերպվեն նոտարական կարգով, հակառակ դեպքում անվավեր են:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

139. Յերկկողմ պայմանագրի մեջ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի մերժելու հակառակ կողմի բավարարումը մինչև փոխադարձաբար բավարարվելը, յեթե որենքից, պայմանագրից կամ իրավահարաբերության եյությունից չի հետևում, վոր մի կողմը պարտավոր է իր պարտավորությունը մյուս կողմից առաջ կատարելու:

Ծանոթություն.—Յերկկողմ է համարվում այն պայմանագիրը, վորով յերկու կողմն էլ փոխադարձաբար պարտավորություններ են հանձն առնում:

140. Հօգուտ յերրորդ անձի կնքված պայմանագրի պարտավորության կատարումը կարող են պահանջել,—յեթե այլ բան չի սահմանված պայմանագրով,—թե պարտապանի վրա պարտավորություն դնող կողմը և թե այն յերրորդ անձը, վորի օգտին կնքված է պայմանագիրը: Յեթե այն անձը, վորի օգտին պայմանագիրը կնքված է, պարտապանին ցանկություն է հայտնել պայմանագրի մեջ իր օգտին մտցրած իրավունքը վայելելու, ապա պայմանադիր կողմերը զրկվում են առանց նրա համաձայնության պայմանագիրը փոփոխելու կամ վերացնելու իրավունքից: Յեթե այն անձը, վորի օգտին կնքած է պայմանագիրը, հրաժարվի պայմանագրով իրեն վերապահված իրավունքից, այդ իրավունքը պայմանագրի մեջ մտցնող կողմը կարող է ինքն օգտվել այդ իրավունքից, յեթե այդ չի հակասում պայմանագրի իմաստին:

141. Տուժանք համարվում է այն դրամական գումարը կամ գույքային արժեքը, վոր պայմանադիրներից մեկը պարտավորվում է հատուցանել պայմանագիրը չկատարելու կամ վոչ-պատշաճ կերպով կատարելու դեպքում:

Յեթե կողմերը պայմանագրի մեջ մտցրել են կամ լրացուցիչ կերպով պայման են կնքել տուժանքի մասին, պարտատերն իր

հայեցողությամբ իրավունք ունի պահանջելու կամ պայմանը չկատարելուց առաջացած վնասների կամ տուժանքի հատուցում: Յեթե տուժանքը սահմանված է կատարումն ուշացնելու կամ պատշաճ կերպով չկատարելու համար, պարտատերն իրավունք ունի միաժամանակ պահանջելու թե պայմանագրի կատարումը և թե տուժանքի կամ հետաձգումից կամ վոչ պատշաճ կերպով կատարելուց առաջացած վնասների հատուցումը:

Ծանոթություն 1.— Վնասները և տուժանքը միաժամանակ պահանջել թույլ է տրվում օրենքով կամ պայմանագրով հատկապես վորոշված դեպքում:

Ծանոթություն 2.—Տուժանքի վերաբերյալ համաձայնությունը պետք է ձևակերպված լինի գրավոր, անկախ տուժանքի գումարից և այն ձևից, վոր ունի հիմնական պայմանագիրը:

142. Յեթե վճարելիք տուժանքը չափազանց մեծ է՝ համեմատած պարտատիրոջ իրական վնասների հետ, դատարանն իրավունք ունի պարտապանի խնդիրքով պակասեցնելու տուժանքը:

Այս դեպքում դատարանը պետք է նկատի առնի՝

1) թե պարտապանը ի՞նչ չափով է կատարել իր պարտականությունը,

2) կողմերի նյութական վիճակը,

3) պարտատիրոջ վոչ միայն նյութական, այլ և ամեն մի հարգելի այլ շահը:

143. Կանխավճար համարվում է այն դրամական գումարը կամ այլ գույքային արժեքը, վոր պայմանադիր կողմերից մեկը տալիս է մյուսին ի հաշիվ պայմանագրի համաձայն վճարելիքների՝ պայմանագիրը հաստատելու և նրա կատարումն ապահովելու համար:

Յեթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու յե կանխավճար տվող անձը, նա կորցնում է այդ կանխավճարը: Յեթե չկատարելու համար պատասխանատու յե կանխավճար ստացող անձը, նա պարտավոր է վերադարձնել կանխավճարի կրկնապատիկը: Բացի սրանից, պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու կողմը պարտական է հատուցանելու հակառակ կողմի վնասները, հաշվակցելով կանխավճարը, յեթե պայմանագրով դրա հակառակը չե սահմանված:

Կանխավճարը համարվում է հրաժարագին (отступное,) յեթե միայն այդ մասին կողմերը պայմանավորվել են:

144. Յեթե յերկկողմ պայմանագրի կատարումն անկարելի յե դառնում կողմերից մեկի համար մի այնպիսի հանգամանքի պատ-

ճառով, վորի համար վոչ նա և վոչ մյուս կողմը պատասխանատու չեն, վերջինը իրավունք չունի մյուսից պայմանագրի համաձայն բավարարություն պահանջելու, յեթե օրենքի կամ պայմանագրի մեջ այլ վորոշումներ չկան: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանադիր կողմից պահանջելու վերադարձնել այն բոլորը, ինչ վոր ինքը կատարել է առանց համապատասխան փոխադարձ բավարարություն ստանալու:

145. Յեթե յերկկողմ պայմանագրի կատարումն անկարելի յե դարձել մեկ կողմի համար այնպիսի հանգամանքի պատճառով, վորի համար ինքն է պատասխանատու, մյուս կողմն իրավունք ունի հրաժարվելու պայմանագրից և պահանջելու չկատարելուց առաջացած վնասները (հոդ. 117), յեթե օրենքի կամ պայմանագրի մեջ այլ վորոշումներ չկան:

146. Յեթե յերկկողմ պայմանագրի կատարումն անկարելի յե դառնում մեկ կողմի համար այնպիսի հանգամանքի պատճառով, վորի համար պատասխանատու յե մյուս կողմը, առաջինն իրավունք ունի ստանալու փոխադարձ բավարարություն, հաշվակցելով այն օգուտները, վոր նա ձեռք է բերում կամ անտեսում է պարտավորությունից ազատվելու հետևանքով:

147. Յեթե պայմանագիրը՝ հակաօրինական կամ պետության շահերի համար ակներև վնասակար լինելու պատճառով (հոդ. 30) անվավեր համարվի, կողմերից վոչ մեկն իրավունք չունի մյուսից պահանջելու, վոր վերադարձնի պայմանագրի համաձայն իր կատարածը:

Անհիմն շահառության արդյունքը գանձվում է հօգուտ պետության (հոդ. 402):

148. Յեթե պայմանագիրն անվավեր համարվի՝ անգործունակ անձի կողմից կնքված լինելու պատճառով (հոդ. 31), ապա կողմերից յուրաքանչյուրը պարտական է վերադարձնելու այն ամենը, ինչ վոր ստացել է պայմանագրի համաձայն: Գործունակ պայմանադիր կողմը պարտական է հատուցանելու անգործունակին այն գույքային իրական վնասը, վոր վերջինը կրել է պայմանագրի հետևանքով:

149. Յեթե պայմանագիրն անվավեր համարվի այն պատճառով, վոր կնքված է խաբեության, բռնության և սպառնալիքի ազդեցության տակ, կամ կողմերից մեկի ներկայացուցչի հակառակ կողմի հետ չարամտությամբ համաձայնության պատճառով (հոդ. 32), այլ և ծայրահեղ կարիքը շահագործելու դիտավորությամբ (հոդ. 33), տուժող կողմն իրավունք ունի պայմանադիր կողմից պահանջելու վերադարձնել այն ամենը, ինչ վոր ինքը կատարել է պայմանագրի համաձայն. մյուս կողմն այս ի-

րավունքը չունի: Տուժած կողմի անհիմն շահատության արդյունքը գանձվում է հօգուտ պետության (հոդ. 402):

150. Յեթե ծայրահեղ կարիքը շահագործելու գիտակցությամբ կնքված պայմանագիրը (հոդ. 33), անվավեր չի համարվել, այլ միայն լուծվել է ապագայի համար, տուժած կողմն իրավունք ունի պայմանադիր կողմից պահանջելու վերադարձնել իր կատարածներից միայն այն, վորի համար նա պայմանագիրը լուծելու պահին փոխադարձ բավարարություն չի ստացել:

Տուժած կողմի անհիմն շահատության արդյունքը գանձվում է հօգուտ պետության (հոդ. (402):

151. Յեթե պայմանագիրն անվավեր համարվի՝ որենքով պահանջված ձևը խախտված (հոդ. 29) կամ մի կողմի մոլորության մեջ յեղած լինելու (հոդ. 32) պատճառով, կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնելու միայն այն ամենը, ինչ վոր ինքը ստացել է պայմանագրի հիման վրա:

Մոլորության տակ բերող հանգամանքի համար պատասխանատու կողմը պարտավոր է հատուցանելու պայմանադիր կողմին պայմանագրի հետևանքով նրա կրած գույքային իրական վնասները:

Այն կողմը, վորի կոպիտ անհոգության հետևանքն է յեղել մոլորությունը, պարտավոր է, վորպես պայմանադրանց, հատուցանելու մյուս կողմի կրած վնասները:

Ծանոթություն.—Մոլորության պատասխանատվությունն ընկած է համարվում մոլորվողի վրա: Մի կողմի կոպիտ անհոգությունը պիտի ապացուցանի հակառակ կողմը:

III. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

152. Գույքի վարձակալության պայմանագրով մի կողմը (վարձատուն) պարտավորվում է մյուս կողմին (վարձակալին) վորոշ վարձատրությամբ տրամադրելու վորևէ գույք ժամանակավոր ոգտագործության համար:

153. Պետական և կոմունալ ձեռնարկությունների վարձակալության պայմանագրերը պիտի կնքվեն նոտարական կարգով, հակառակ դեպքում անվավեր են:

Մի տարուց ավելի ժամանակով ամեն մի գույքի վարձակալության մասին կնքվող պայմանագրերը պիտի լինեն գրավոր, հակառակ դեպքում կառաջանան 136-րդ հոդվածի ծանոթության մեջ մատնանշված հետևանքները:

Պետական և կոմունալ ձեռնարկության վարձակալության պայմանագրին պետք է կցվի վարձով տրվող գույքի մանրամասն նկարագիրը, հակառակ դեպքում պայմանագիրն անվավեր է:

154. Վարձակալության ժամանակամիջոցը 12 տարուց ավելի չպիտի լինի: Ժամանակամիջոցը լրանալուց հետո վարձակալությունը կարելի յե յերկարացնել նոր պայմանագիր կնքելով: Յեթե վարձով վերցրած գույքի ոգտագործումը փաստորեն շարունակվում է վարձատուի լռելյայն համաձայնությամբ, պայմանագիրը համարվում է նորոգված անորոշ ժամանակով (հոդ. 155):

Ծանոթություն.—Պետական մարմինների և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից՝ պետական, վորոնց թվում նաև կոմունալ ձեռնարկություններ ու շենքեր վարձելու ժամանակամիջոցը չպետք է քսան և չորս տարուց ավելի լինի: Վարձակալության ժամանակամիջոցը լրանալուց հետո վարձողների հիշյալ կատեգորիաները վարձակալության պայմանագրով հանձն առած պայմանները ճշտությամբ կատարելու դեպքում նախապատվության իրավունք ունեն պայմանագիրը նոր ժամանակամիջոցով վերանորոգելու:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

155. Յեթե վարձակալության պայմանագիրը կնքված է առանց պայմանաժամ վորոշելու, պայմանագիրը համարվում է անորոշ ժամանակով կնքված, և կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնելու պայմանագրի գործությունն ամեն ժամանակ այն պայմանով, վոր մյուս կողմին տեղեկություն տրվի —ձեռնարկությունների և առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների ու բնակության շենքերի վարձակալության դեպքում՝ յերեք ամիս, իսկ այլ գույքի վարձակալության դեպքում մեկ ամիս առաջ:

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ բնակարան վարձողներն անաշխատ յեկամուտով ապրող անձինք են, այս հոդվածով նախատեսված յեռամսյա պայմանաժամը կրճատվում է մինչև մեկ ամիս:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

156. Այն դեպքերում, յերբ վարձակալ են հանդիսանում պետական հիմնարկություններն ու ձեռնարկությունները, վարձու բանվորներն ու ծառայողները, պետական դպրոցների ուսանողները, կարմիր բանակայինների հաշվին ապրող՝ նրանց ընտանի-

րի անդամները, աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, —բնակարանների վարձակալության պայմանագրերն ինքնաբերաբար նորոգվում են միևնույն պայմաններով անորոշ ժամանակով, անկախ վարձատուի համաձայնությունից: Այս դեպքում պայմանագրի ուժը դադարեցնելու իրավունքը կարող է պահանջել միայն վարձակալը,, բացի 171 և 172-րդ հոդվածներում մատնանշված դեպքերից:

Ծանոթություն 1.—Այս հոդվածում մատնանշված իրավունքը պատկանում է մասնավոր ձեռնարկությունների այն ծառայողներին միայն, վորոնք իրավունք ունեն արհեստակցական միության անդամ լինելու:

Ծանոթություն 2.—Այս հոդվածի ներգործությունը չի տարածվում այն անձանց վրա, վորոնք բնակվում են կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրերի հիման վրա նոր կառուցված, այլ և կիսատն ավարտած ու վերանորոգված տներում:

Յեթե վարձատուն չի կամենում յերկարացնել պայմանագիրը, և վարձակալը հրաժարվում է բնակարանն ազատելուց, վարույթը տեղի յե ունենում ընդհանուր դատական կարգով:

Ծանոթություն 3.—Վարձակալի՝ բնակարանի վարձակալության պայմանագիրն ինքնաբերաբար, առանց վարձատուի համաձայնության նորոգելու իրավունքը, վոր մատնանշված է 156 հոդվածում, չի տարածվում այն շենքերի վարձակալության վրա, վորոնք անմիջապես կապված են հողագործական տնտեսության հետ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

156-ա. Բանվորական կամ համաքաղաքացիական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերությունների անդամները իրավունք ունեն մշտապես օգտվելու այն բնակելի շենքից, վորի տարածությունը կախված է նրանց պատկանող փայաբաժինների քանակից,—տվյալ շենքի նկատմամբ ընկերության ունեցած կառուցման կամ սեփականության իրավունքի գոյության ամբողջ ժամանակի ընթացքում:

Ծանոթություն.—Բանվորական և համաքաղաքացիական բնակարանային-շինարարական կոոպերատիվ ընկերության անդամների՝ այս հոդվածում մատնանշված իրավունքը նրանց մահվան դեպքում անցնում է նրանց ընտանիքների նրանց հետ ապրող անդամներին, կամ փոխանցվում է նրանց ժառանգներին այն դեպքերում ու կար-

գով, վորոնք վորոշվում են ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1924 թ. օգոստոսի 19-ի (Որ. և Կարգ. Ժող.—1924 թ. № 5, հոդ. 60) և 1926 թ. նոյեմբերի 21-ի վորոշումներով (Որ. Ժող. 1927 թ. № 2, հոդ. 14):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

157. Վարձատուն պարտավոր է ժամանակին վարձակալին տրամադրել գույքը՝ պայմանագրին և վարձով տրվող գույքի նպատակին համապատասխանող վիճակի մեջ: Նա պատասխանատու չի այն պակասությունների համար, վորոնք պայմանագիրը կնքելիս հայտնի եյին, կամ հայտնի պիտի լինեյին վարձակալին:

158. Յեթե վարձատուն վարձած գույքը չի տրամադրում վարձակալին օգտագործության համար, վարձակալն իրավունք ունի նրանից պահանջելու կամ գույքը, համաձայն 120-րդ հոդվածի, կամ հրաժարվելու պայմանագրից (հոդ. 171, կետ «ա») և պահանջելու պայմանազանցությունից իր կրած վնասները:

159. Հիմնական նորոգություն կատարելը վարձատուի պարտականությունն է, յեթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ պայմանագրով: Յեթե վարձատուն չկատարի այդ պարտականությունը, վարձակալն իրավունք ունի պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտության հանգեցող հիմնական վերանորոգությունը կատարելու և նրա արժեքը զեղչելու վարձավճարից կամ հրաժարվելու պայմանագրից (հոդ. 171, կետ «բ») և պահանջելու պայմանազանցությունից իր կրած վնասները:

Ծանոթություն.—Ազգայնացված կամ քաղաքայնացված ձեռնարկությունների և շենքերի վարձակալության դեպքում հիմնական նորոգությունը վարձակալի պարտականությունն է, յեթե այլ բան չի նախատեսված պայմանագրով:

160. Վարձակալը պարտավոր է օգտվել վարձով վերցրած գույքից պայմանագրի համաձայն, իսկ յեթե պայմանագրի մեջ ցուցումներ չկան,—համաձայն գույքի նպատակի:

161. Վարձակալը պարտավոր է գույքի ընթացիկ նորոգությունը կատարել իր հաշվով, յեթե այլ բան չի սահմանված օրենքով կամ պայմանագրով:

162. Ազգայնացված կամ քաղաքայնացված արդյունաբերական ձեռնարկության վարձակալը պարտավոր է արդյունաբերությունը վարել պայմանագրով սահմանված նվազագույն նորմայից վոչ պակաս չափով: Արտադրանքի նվազագույն չափը և այն

ժամանակը, վորի ընթացքում այդ պիտի սատկի, պետք է ցույց տրվեն պայմանագրի մեջ, հակառակ դեպքում պայմանագիրն անվավեր է:

163. Վարձած գույքի հետ կապված տուրքերն ու պարհակներն ընկնում են վարձակալի վրա, յեթե այլ բան չի սահմանված օրենքով կամ պայմանագրով:

164. Ազգայնացված կամ քաղաքայնացված ձեռնարկության կամ շենքի, ինչպես և ամեն տեսակ պետական այլ գույքի վարձակալը պարտավոր է ապահովագրելու այն՝ ամբողջ արժեքով, իր հաշվով, հօգուտ պետության կամ տեղական խորհրդի, ըստ պատկանելույն:

Ծանոթություն.—Յերբ վարձատուն տնտեսավարական պետական հիմնարկ կամ ձեռնարկություն է, իսկ վարձակալը պետական մարմին, կոոպերատիվ կամ այլ հասարակական կազմակերպություն է, ապա ազգայնացված կամ քաղաքայնացված գույքի վարձակալության պայմանագրով վորոշվում է, թե ով պետք է գույքն ապահովագրի —վարձատուն, թե՞ վարձակալը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

165. Վարձը կարող է լինել՝ ա) վորոշ պայմանաժամերում կատարվող դրամական կամ նյութական վճարումներ, բ) արտադրության տարկաների, շենքերի պիտանի տարածության կամ դրամական յեկամտի պայմանավորված մասը, գ) վորոշ ծառայություններ, դ) վճարման հիշյալ ձևերի զուգակցումը:

166. Այն դեպքերում, յերբ վարձակալները 156-րդ հոդվածում թված կատեգորիաների անձինք են, բնակարանավարձը չի կարող ավելի լինել քան այն, վորոնք սահմանվում են Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներով, և յուրաքանչյուր ամսի համար պիտի վճարվի վոչ ուշ քան հաջորդ ամսի 10-ին:

Ծանոթություն.—Այս հոդվածի ներգործությունը չի տարածվում կառուցման իրավունքի պայմանագրերի հիման վրա նոր կառուցած, այլ և կիսատ ավարտած ու վերանորոգած տներում ապրողների վրա:

167. Վարձակալն իրավունք ունի պահանջելու վարձի համապատասխան նվազեցումը, յեթե շնորհիվ վորևէ հանգամանքի, վորի համար ինքը պատասխանատու չէ, զգալի չափով նվազել է վարձած գույքն օգտագործելու պայմանագրով նախատեսված հնարավորությունը:

168. Յեթե պայմանագրով այլ բան չի նախատեսված, վարձակալն իրավունք ունի վարձած գույքն ամբողջովին կամ մասամբ վարձով տալու ուրիշի, պայմանագրի համաձայն պատասխանատու մնալով վարձատուի առաջ:

Ծանոթություն.—Ազգայնացման կամ քաղաքայնացման յենթարկված գույքը վարձակալը կարող է ուրիշի վարձով տալ միայն վարձատուի գրավոր թույլտվությամբ:

169. Յեթե գույքի սեփականության իրավունքը վարձատուից անցնում է մի ուրիշ անձի, վարձակալության պայմանագիրն իր ուժը պահում է նոր սեփականատիրոջ համար:

170. Վարձակալը գրավական պաշտպանության իրավունք ունի իր տիրապետությունը խախտող ամեն մի անձի, վորոնց թվում նաև սեփականատիրոջ դեմ:

171. Դատարանը կարող է վաղաժամ վոչնչացնել վարձակալության պայմանագիրը շահագրգռված անձերի և հիմնարկությունների պահանջմամբ—ա) յեթե վարձատուն պայմանավորված գույքը չի տրամադրում վարձակալին օգտագործելու համար, բ) յեթե վարձատուն սահմանված ժամանակին չի կատարել այն նորոգությունը, վորը իր պարտքն է, կամ յեթե գույքը վորևէ հանգամանքով, վորի համար վարձակալը պատասխանատու չէ,—պիտանի չլինի պայմանագրով նախատեսված օգտագործության համար. գ) յեթե վարձակալը դիտավորյալ կերպով կամ անհոգությամբ վատթարացնում է գույքի վիճակը, դ) յեթե վարձակալը գույքը օգտագործում է օրենքի, պայմանագրի կամ գույքի նպատակին անհամապատասխան յեղանակով, ե) յեթե բնակարանի վարձակալն իր վարքով ուրիշ բնակվողների համար անհնարին է դարձնում համակեցությունը նրա հետ մի սենյակում կամ բնակարանում, զ) յեթե պետական ձեռնարկության վարձակալը սահմանված ժամանակին արտադրանքի քանակը չի հասցրել պայմանագրով վորոշված չափին. է) յեթե վարձակալը սահմանված ժամանակին չի կատարել այն նորոգությունը, վոր իր պարտքն է, ը) յեթե բնակարանավարձը չեն վճարում պետական և մասնավոր հիմնարկությունների ու ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները, սոցիալական ապահովություն վայելող աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, զորաժողովի յենթարկվածների ընտանիքները, պետական թոշակ ստացող ուսանողները, սոցիալական ապահովագրության գանձարկղներից նպաստ ստացող գործազուրկները նրանց համար սահմանված վճարաժամից 2 ամիս լրանալուց հետո. յեթե բնակարանավարձը չեն վճարում մյուս քաղաքացիները

—նրանց համար սահմանված վճարումներից յոթ օր լրանալուց հետո: Բնակարանավարձ չվճարելու հավասար է համարվում ջրի, կոյուղու, վառելիքի, լուսավորության վարձ չտալը, յեթե այդ բաները վարձատուն է մատակարարում, և բնակարանի նորոգության ծախքը չվճարելը, յեթե այդ վարձակալի պարտականությունն է,—այդ վարձը պահանջելուց հետո հիշյալ յերկամսյա և յոթնօրյա ժամանակամիջոցները լրանալուց հետո. ժ) յեթե բնակարանի հիմնական նորոգության անհրաժեշտություն կա, այն պայմանով, վոր նորոգությունը վերջանալուց հետո բնակարանը անպայման տրվի նորոգությունից առաջ այնտեղ ապրողներին, յեթե նրանք այդ ցանկանան:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խըմբագրությամբ).

171-ա. Յերբ դադարում է աշխատանքի պայմանագիրը, վորը կնքված է վարձվածին հատուկ կացարան տալու պայմանով (տնային բանվորներ ու ծառայողներ), աշխատանք տվողն իրավունք ունի պահանջելու, վոր կացարանն ազատեն:

Այս պահանջը ներկայացնելուց յերկու շաբաթ հետո աշխատանք տվողը կարող է հայց սկսել այն անձի դեմ, վոր հրաժարվում է կացարանը հոժարակամ ազատելուց:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խըմբագրությամբ).

172. Վարչական կարգով բնակարանից վտարելը թույլ է տրվում միայն օրենքով հատկապես մատնանշված դեպքերում:

Այս դեպքերում նախազգուշացման պայմանաժամը կարող է 155-րդ հոդվածում մատնանշվածից ավելի կարճ լինել:

173. Բնակելի շենքերում սահմանված չափից ավելի բնակելի տարածության բնող վարձակալների խտացման և ինքնախտացման կարգը վորոշվում է առանձին կանոններով:

174. Պայմանագրի պայմանաժամը լրանալուց հետո վարձակալը պարտավոր է գույքն իր բոլոր պարագաներով հանձնելու վարձատուին բարեկարգ վիճակի մեջ:

175. Յեթե վարձակալը օգտագործելու համար գույքը ստացել է նրան պատկանող ինվենտարի հետ միասին, նա պարտավոր է վարձակալության պայմանաժամը լրանալուց հետո ինվենտարը վերադարձնելու ցուցակով, յեթե ցուցակ կա, միևնույն բարեկարգ վիճակի մեջ, լրացնելով պակասը և փոխարինելով անպետքացածը:

176. Յեթե վարձակալը վատթարացրել է կամ անարժեք է դարձրել վարձված գույքը կամ թույլ է տվել, վոր գույքն այդ

վիճակին հասնի, նա պարտավոր է վարձատուին հատուցանելու դրանից առաջացած վնասները:

177. Վարձակալը պատասխանատու յե այն վնասի համար, վոր իր ընտանիքի անդամները, ծառայողները կամ բանվորները պատճառել են գույքին:

178. Յեթե վարձակալը վարձատուի թույլտվությամբ բարելավել է գույքը, նա իրավունք ունի համապատասխան հատուցում ստանալու վարձատուից:

179. Առանց վարձատուի համաձայնության կատարված բարելավումները, յեթե կարելի յե առանց գույքին վնասելու զատել, և յեթե վարձատուն չկամենա դրա արժեքը հատուցել, վարձակալը կարող է վերցնել:

Ծանոթություն 1.—Ազգայնացված կամ քաղաքայնացված ձեռնարկության կամ շենքի վարձակալի կատարած բարեկարգությունը վարձակալության պայմանաժամը լրանալուց հետո առանց հատուցման անցնում է պետության կամ տեղական խորհրդին ըստ պատկանելույն:

Այս ծանոթությունն ուժ չի տարածվում այն դեպքերի վրա, յերբ պետական կամ կոմունալ ձեռնարկությունները և շենքերը վարձվում են արհեստագործական կոոպերատիվ կազմակերպությունների կողմից:

Ծանոթություն 2.—Յեթե վարձակալ հանդիսացող արհեստագործական կոոպերատիվ կազմակերպությունը վարձատուի թույլտվությամբ կամ առանց նրա թույլտվության նոր սարք կամ գույք ավելացնի, կամ բարելավի նրան հանձնված սարքը կամ գույքը, ապա վարձակալության պայմանագրի ժամանակամիջոցը լրանալուց հետո նա կարող է վերցնել նոր սարքը կամ գույքը, յեթե այդ կարելի յե զատել՝ առանց գույքին վնասելու, կամ կարող է ստանալ դրա փոխարեն նոր սարք կամ գույք և կատարած բարելավումների համար վարձատրություն վարձակալության պայմանագրի ներգործության ընթացքում ամորտիզացիայի չենթարկված մասի համեմատ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խըմբագրությամբ).

IV. ԱՌՈՒԾԱԽ

180. Առուծախի պայմանագրով մի կողմը (ծախողը) պարտավորվում է վորևե գույք հանձնելու մյուս կողմին (գնորդին) ի սեփականություն, իսկ գնորդը պարտավորվում է ընդունելու այդ գույքը և վճարելու պայմանավորված գինը:

181. Առուծախի առարկա կարող է լինել ամեն մի գույք, վոր չի հանված քաղաքացիական շրջանառությունից:

Ծանոթություն.—Վոսկի և արծաթի դրամ և ոտարերկրյա վալյուտա գնելու իրավունքը կարգավորվում է առանձին կանոններով:

182. Քաղաքայնացման չենթարկված բնակելի շենքերը կարող են առուծախի առարկա լինել այն պայմանով, վոր 1) դրա հետևանքով գնորդի, նրա ամուսնու և անչափահաս զավակների ձեռքը յերկու և ավելի տիրապետություն չընկնի, 2) ծախողի, նրա ամուսնու և նրա անչափահաս զավակների անունից մեկից ավելի տիրապետության ոտարում տեղի չունենա յերեք տարվա ընթացքում:

Ծանոթություն.—Տիրապետություն համարվում է տունը և նրա բակում գտնվող բնակելի և ոժանդակ հարակից շինությունները:

182-ա. Նախավաճառագիրը (այսինքն հետագայում շենքի առուծախի գործարք կնքելու նախնական պայմանագիրը) պետք կազմվի նոտարական կարգով: Նախավաճառագիր կնքելուց վեց ամսից վոչ ուշ պետք է կնքվի շենքի առուծախի պայմանագիրը, կամ մի կողմը հայց պետք ներկայացնի մյուսին առուծախի գործարք կնքելու վերաբերմամբ. հակառակ դեպքում նախավաճառագրի ներգործությունը դադարում է:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

182-բ. Յեթե նախավաճառագիր կնքելուն մասնակցող կողմը խուսափում է շենքի առուծախի պայմանագիր կնքելուց, դատարանը՝ նկատի ունենալով նախավաճառագրի հատուկ պայմանները, կարող է կամ շենքի առուծախի պայմանագիրը կնքված համարել Քաղաքացիական Որենսգրքի 189 կամ 190 հոդ. նախատեսված հետևանքներով կամ նախավաճառագիրը լուծված համարել Քաղաքացիական Որենսգրքի 117 և 123 հոդվ. նախատեսված հետևանքներով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

182-գ. Նախավաճառագիր կնքելը, նաև նախավաճառագրի ներգործության դադարումը շահագրգռված կողմերի պահանջմամբ պետք է ամրագրվեն համապատասխան կոմունալ բաժնում:

(ՀՍԽՀ ԿԳԿ 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

183. Գույքը ծախելու իրավունքը, բացի աճուրդով վաճառելու դեպքերից, պատկանում է սեփականատիրոջը: Յեթե գույքը ծախել է վոչ սեփականատերը, գնողը սեփականության իրավունք ձեռք է բերում այն դեպքում միայն, յերբ 59 և 60-րդ հոդվածների համաձայն սեփականատերն իրավունք չունի նրանից գույքը յետ պահանջելու:

184. Կանխիկ դրամով առուծախը կարող է տեղի ունենալ բերանացի, առանց գումարի սահմանափակման:

185. Շենքերի և շենքի կառուցման իրավունքի առուծախը տեղի պետք է ունենա նոտարական կարգով և պետք ամրագրվի համապատասխան կոմունալ բաժնում. հակառակ դեպքում անվավեր է:

186. Այլ համաձայնություն չեղած դեպքում ծախված գույքի պատահական կորստի վտանգը փոխանցվում է գնորդին սեփականության իրավունքի հետ միասին (հոդ. 66). բայց յեթե ծախողը ուշացրել է ծախված իրերի հանձնումը գնորդին, կամ գնորդն ուշացրել է ընդունումը, այդ դեպքում պատահական կորստի վտանգն ընկնում է ուշացնող կողմի վրա:

187. Յերբ սեփականության իրավունքը փոխանցվում է գնորդին գույքը նրան հանձնելուց առաջ, ծախողը պարտավոր է մինչև հանձնելու վայրկյանը պահպանել գույքը, թույլ չտալով նրա վատթարացումը:

Գնորդը պարտավոր է հատուցանելու այս բանի համար անհրաժեշտ յեղած այն ծախքերը, վոր կատարած կլինի ծախողը՝ սեփականության իրավունքը գնորդին փոխանցելուց հետո:

188. Ծախողը պարտավոր է վաճառված գույքը հանձնել գնորդին պայմանագրի համաձայն, իսկ գնորդը պարտավոր է ընդունել և վճարել պայմանավորված գինը: Յերկու կողմի այս գործողությունները պետք է տեղի ունենան միաժամանակ, յեթե պայմանագրից այլ բան չի բխում:

189. Յեթե ծախողը, պայմանագիրը խախտելով, գնորդին չհանձնի վաճառված գույքը, կամ առաջարկի այնպիսի գույք, վորը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, գնորդը կարող է կամ պահանջել, վոր կատարվի պայմանագիրը, և ծախված գույքը իրեն հանձնվի, հատուցանելով ծախողի անճշտապահությունից առաջացած վնասները, կամ ինքը ևս հրաժարվելով պայմանագիրը կատարելուց, պահանջել այն բոլոր վնասների հատուցումը, վոր ծախողը հասցրել է նրան՝ պայմանագիրը խախտելով (հոդ. 117):

190. Յեթե գնորդը՝ պայմանագիրը խախտելով հրաժարվի գնած գույքն ընդունելուց կամ չվճարի նրա պայմանավորված

գինը, ծախողը կարող է կամ պահանջել, որ կատարվի պայմանագիրը, վճարելով իրեն պայմանավորված գինը և հատուցանելով գնորդի անճշտապահությունից առաջացած վնասները, կամ ինքը ևս հրաժարվելով պայմանագիրը կատարելուց, պահանջել այն վնասների հատուցումը, որ գնորդը հասցրել է նրան՝ պայմանագիրը խախտելով (հոդ. 117)։

191. Յեթե հատկապես որոշված մի իր ծախվել է մի քանի անձի, սեփականության իրավունքը (հոդ. 66) առաջ է գալիս հանձին այն գնորդի, որի հետ ավելի վաղ է կնքված պայմանագիրը (ավագություն)։

Յեթե անհնարին է որոշել ավագությունը, սեփականատեր դառնում է այն գնորդը, որին իրը հանձնված է, իսկ յեթե իրը հանձնելու համար հայց է սկսել գնորդներից մեկն ու մեկը նախքան այն իրը նրանցից մեկին ու մեկին հանձնվելը, սեփականատեր ճանաչվում է մյուսներից վաղ հայց հարուցած գնորդը։

192. Յեթե մի յերրորդ անձ նախքան վաճառումը ծագած հիմունքով հայց սկսի գնորդի դեմ—այդ գույքը նրանից վերցնելու համար, այդ դեպքում ծախողը գնորդի պահանջով պարտավոր է միջամտելու դատական գործին և վիճելի գույքը դատարանի միջոցով գնորդից հետո վերցնելու առաջն առնել։

193. Ծախված գույքը դատարանի միջոցով գնորդից յետ առնելու դեպքում ծախողը պարտավոր է գնորդին հատուցանելու բոլոր վնասները (հոդ. 117)։

194. Յեթե ծախողը չհրավիրվի գործին միջամտելու, այդ դեպքում նա ազատվում է պատասխանատվությունից գնորդի առաջ, յեթե ծախողն ապացուցի, որ ինքը, մասնակցելով դատավարությանը, ծախված գույքը դատարանի միջոցով գնորդից յետ առնելու առաջը կառներ։ Յեթե գնորդը ծախողին հրավիրել դատավարությանը միջամտելու, բայց վերջինը հրաժարվի, այդ դեպքում նա զրկվում է իրավունքից ապացուցելու, որ գնորդն անկանոն է վարել գործը։

195. Ծախողը գնորդի առաջ պատասխանատու յե ծախված գույքի պայմանագրով որոշված հատկությունների բացակայության, այլև այն պակասությունների համար, որոնք զգալի չափով նվազեցնում են նրա գինը կամ պիտանիությունը՝ սովորական կամ պայմանագրով նախատեսված գործածության համար։

Ծախողը պատասխանատու չէ ծախված գույքի պակասությունների համար, յեթե այդ պակասությունները հայտնի յեն յեղել գնորդին պայմանագիրը կնքելիս, կամ գնորդը կարող եր նկատել, յեթե անհրաժեշտ ուշադրությունը դարձրած լիներ։

վերջին դեպքում ծախողը պատասխանատու յե, յեթե միայն նա ժխտել է տվյալ պակասությունների գոյությունը։

Ծանոթություն.—Հողագործության և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատների առանձին հրահանգի մեջ թված որոշ ցեղի անասունների առուծախի ժամանակ ծախողը պատասխանատու յե միայն հիշյալ հրահանգում մատնանշված հիմնական պակասությունների համար։

196. Գնորդը պարտավոր է անհապաղ զննելու ստացած գույքը և յերևան հանած պակասությունների մասին հայտնելու ծախողին։

Յեթե գնորդը ծախված գույքն ընդունի առանց առարկության, նա զրկվում է պակասություններ մատնացույց անելու իրավունքից, բացի այն պակասություններից, որոնք չեյին կարող նկատվել սովորական ձևով իրերը ընդունելիս, կամ որոնք դիտավորյալ կերպով թաքցրած է յեղել ծախողը։ Այդ պակասությունները գնորդը կարող է մատնացույց անել այն դեպքում, յերբ այդ պակասությունները յերևան հանելուց հետո նրանց մասին անհապաղ հայտնել է ծախողին։

197. Գնորդը պակասությունների առթիվ պահանջ կարող է ներկայացնել (հոդ. 198) մի տարվա ընթացքում—շենքերի, և վեց ամսվա ընթացքում—մնացած գույքի վերաբերմամբ, հաշված գույքը հանձնելու օրից, յեթե պայմանագրով ավելի յերկար ժամանակամիջոց չի սահմանված։ Ծախողի կողմից խաբերության յեղած դեպքում գնորդը յերևան հանած պակասությունների առթիվ իր պահանջները կարող է ներկայացնել յերեք տարվա ընթացքում, իսկ յեթե պահանջ ներկայացնելու համար պայմանագրով ավելի յերկար ժամանակամիջոց է սահմանված,—այդ ժամանակի ընթացքում։

Ծանոթություն.—Անասունների առուծախի ժամանակ բարեխիղճ ծախողը պատասխանատու յե միայն այն դեպքում, յերբ գնորդը տեղեկացրել է նրան պակասությունների մասին, և կամ զննելու մասին քաղաքացիական հայց կամ խնդիր է ներկայացրել դատարանին նախքան Հողագործության կամ Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատների հրահանգով որոշված պայմանաժամերը լրանալը (195-րդ հոդվածի ծանոթ.)։

198. Յեթե գնորդը յերևան է հանել ծախված գույքի պակասությունները և ժամանակին հայտնել է նրանց մասին, իրավունք ունի պահանջելու, որ 1) կամ իրեն հանձնվեն համապատասխան

հատկություն ունեցող իրեր, յեթե ծախված իրերը տեսակային են, 2) կամ համապատասխան չափով նվազեցնի նրանց գինը, 3) կամ լուծվի պայմանագիրը, և հատուցվեն իր բոլոր վնասները (հոդ. 117):

199. Ծախված գույքի պակասությունների պատճառով պայմանագիրը լուծելու դեպքում գնորդը պարտավոր է ծախողին վերադարձնելու գույքն իր ստացած բոլոր յեկամուտներով հանդերձ, այլև հատուցում տալու ծախողին գույքի վատթարացման համար, բացի այնպիսի վատթարացումից, որի առաջն ինքը (գնորդը) չէր կարող առնել: Ծախողն իր կողմից՝ պարտավոր է հատուցանելու գնորդին՝ գույքի վրա նրա կատարած անհրաժեշտ և օգտակար ծախքերը, և բացի դրանից հատուցելու նրա կրած վնասները (հոդ. 117):

200. Ծախողը պարտավոր է տեղեկություն տալու գնորդին այն մասին, որ ոտարվող գույքը գրավ է դրված, կամ կան վարձակալության պայմանագրեր, որոնց առարկան է տվյալ գույքը:

Այս պարտականությունը չկատարելը գնորդին իրավունք է տալիս պահանջելու, որ կամ պայմանագիրը լուծվի, և ծախողից գանձվեն իր կրած վնասները, և կամ համապատասխան չափով նվազեցվի գինը:

201. Նմուշներով առուծախս կատարելու դեպքում ծախողը պատասխանատու յե, յեթե հանձնված ապրանքը չունի նմուշի հատկությունները:

202. Պարտքի պահանջ կամ այլ իրավունք ծախողը պատասխանատու յե միայն պահանջի իրական լինելու և իրավունքի իրապես գոյություն ունենալու համար, յեթե պայմանագրով այլ բան չի սահմանված:

203. Գույքը դատարանի միջոցով գնորդից հօգուտ յերրորդ անձի վերցնելու կամ գույքի պակասությունների համար ծախողի պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին առաջուց յեղած համաձայնությունն անվավեր է, յեթե ծախողը, գիտենալով յերրորդ անձի իրավունքի գոյությունը կամ գույքի պակասությունները, դիտավորյալ կերպով գնորդից թաքցրել է այդ հանգամանքները:

204. Ծախված գույքը դատարանի միջոցով յետ վերցնելու կամ նրա պակասությունների համար ծախողի կրած պատասխանատվության վերաբերյալ կանոնները չեն տարածվում այն դեպքերի վրա, յերբ գույքը օրենքով սահմանված կարգով պարտադիր կերպով ծախվում է աճուրդով:

205. Յեթե պայմանագրով որոշված է, որ ծախված ապրանքը հետզհետե և մաս-մաս հանձնվի գնորդին, և նրանից գինը

ստացվի նույն ձևով, այդ դեպքում՝ ծախողի կամ գնորդի կողմից մի մասի վերաբերմամբ պայմանաժամը բաց թողնելը կամ պակասություններ յերևան հանելը կարող է հիմք ծառայել ամբողջ պայմանագիրը լուծելու, յեթե այդ մասնակի խախտումը հակասում է ամբողջ գործարքի էությանը ու նպատակին: Հակառակ դեպքում ժամանակը բաց թողնելու կամ պակասությունների համար պատասխանատու կողմը պետք է մյուս կողմին հատուցանի պայմանագրի մասնակի խախտումից առաջացած վնասները, իսկ պայմանագիրն իր ուժը պահում է ապրանքի մնացած մասերի վերաբերմամբ:

205-ա. Տնային գործածության, արհեստի, գործիքների, գյուղատնտեսական սարքի, անատիրության, կոոպերատիվ և մանր արդյունաբերական ձեռնարկությունների առարկաների մաս-մաս վճարով մանրածախը, յերբ վաճառքի առարկան գնորդի անձնական գործածության համար է (և վոչ այլ բանի—որինակ՝ սպառելու կամ ուրիշներին վաճառելու համար), պիտի կատարվի առուծախսի ընդհանուր կանոնների հիման վրա (հոդ. 180–205), սույն բերված հոդվածներով սահմանված կանոնների համաձայն, հակառակ դեպքում անվավեր է:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

205-բ. Մաս-մաս վճարով մանրածախի վերաբերյալ համաձայնությունը, վաճառքի առարկայի արժեքից անկախ, պիտի կնքվի գրավոր ձևով և պարունակի վաճառվող գույքի ճիշտ վորոշումը, առքի գինը, գործածության յեղանակը, հանձնելու պայմանաժամը այլ և վճարաժամերն ու վճարների չափերը: Համաձայնագիրը կազմվում է յերկու որինակ, վորոնցից մեկը տրվում է գնորդին:

Ծանոթություն.—Մաս-մաս վճարով մանրածախի վերաբերյալ համաձայնագրի մեջ կարելի չե մտցնել գնորդի հանձնառությունը մաս-մաս վճարով ձեռք բերած գույքն ապահովագրել տալու մասին:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

205-գ. Մինչև մաս-մաս վճարով վաճառված գույքի գինը վաճառողին լրիվ վճարելը գնորդն իրավունք չունի այդ գույքն ուրիշներին վաճառելու, գրավ դնելու կամ վորևե այլ յեղանակով յերրորդ անձանց փոխանցելու, այլ և գույքն այնպիսի յեղանակներով օգտագործելու, վորոնք պարզապես հատուկ չեն գույքի բնույթին, և վորոնց հետևանքը կարող է լինել գույքի անտնտեսաբար վոչնչացումը կամ փչանալը: Այս արգելքը չհարգա-

կան նպատակով խախտելու համար կիրառվում է Քրեական Որենսգրքի 199 հոդվածը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

205-դ. Ամեն անգամ, յերբ յերրորդ անձինք իրենց գանձումը դարձնում են մաս-մաս վճարով վաճառված գույքի վրա, գնորդն անհապաղ և համենայն դեպս կատարման մասին ծանուցագիր ստանալուց և հիշյալ գույքը ցուցակագրելուց յերեք որից վոչ ուշ պարտավոր է տեղեկացնել վաճառողին: Այս պարտականությունը չկատարելու դեպքում, յեթե նրա հետևանքով գույքը ծախվել է գնորդի համար նյութական ոգուտով, որինակի համար՝ յեթե գնորդն ամբողջովին կամ մասամբ վճարել է յերրորդ անձին տալիք իր պարտքը, կիրառվում է Քրեական Որենսգրքի 199 հոդվածը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

205-ե. Յեթե գնորդը չվճարի յերեք հաջորդական նվազի վճարները, վաճառողը, յեթե չի ցանկանում բավականանալ այդ վճարներն իրենց որինաահման տոկոսներով գանձելով (Քաղաք. Որեն. հոդվ. 110). իրավունք ունի պահանջելու, վոր վոչնչացվի առուծախի պայմանագիրը, և վերադարձվի վաճառված գույքը, նմանապես իրավունք ունի առանձին վճար պահանջելու գույքից ոգտվելու համար՝ գնորդին հանձնելու որից մինչև վաճառողին վերադարձնելու որը այն չափով և այն կանոնների համաձայն, վորոնք սահմանվում են տվյալ վայրում նույնպիսի գույքի վարձակալության պայմանագրերով: Այս առանձին վճարին պետք է հաշվակցել այն վճարումները, վոր գնորդը առաջ կատարել է մաս-մաս վճարով առուծախի վոչնչացած պայմանագրի համաձայն, իսկ յեթե առաջ կատարած վճարների գումարն ավելի է հիշյալ առանձին վճարի գումարից, ավելին պետք է վերադարձվի գնորդին նույն ժամանակ, յերբ նա վերադարձնելու լինի գույքը:

Ծանոթություն.—Յեթե գնորդի կողմից պայմանաժամերին չմուծված վճարների, պայմանաժամը դեռ չլրացած վճարների, այլ և հաշիվը փակելու համար նրա կատարելիք վճարումների միացյալ գումարը վաճառված գույքի ընդհանուր արժեքի քառասուն տոկոսից պակաս լինի, այդ դեպքում վաճառողն իրավունք ունի գնորդից պահանջելու միայն չվճարած ամբողջ գումարի միանվագ հատուցումը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

205-զ. Այն դեպքերում, յերբ վաճառված գույքը վոչնչացվում է, կորչում, կամ գույքին եական վնաս է հասցվում այնպիսի պայմաններում, վորոնք չեն համապատասխանում 205-գ հոդվածին (չահադիտական նպատակի բացակայություն և այլն), վաճառողն իրավունք ունի գնորդից պահանջելու այդ գույքի համար չվճարած ամբողջ մնացած գումարի հատուցումը, յեթե միայն գնորդը չապացուցի, վոր մաս-մաս վճարով վաճառված գույքը վոչնչացել, կորել կամ վնասվել է այնպիսի հանգամանքների հետևանքով, վորոնց համար ինքը պատասխանատու չէ: Վերջին դեպքում գնորդն ազատվում է այդ գույքի համար չվճարած ամբողջ գումարի հատուցումից, իսկ արդեն կատարած վճարումները մնում են վաճառողի ոգտին:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

205-ը. Թե վոր դատարանի իրավասությանն են յենթակա մաս-մաս վճարով առուծախի պայմանագրից բխող հայցերը, վոր վաճառողը ներկայացնում է գնորդին, վորոշվում է բացառապես հայց ներկայացնելու պահին, ըստ գնորդի բնակավայրի:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

205-թ. Վերոհիշյալ կանոնները պետք է կիրառվեն նաև մաս-մաս վճարով առուծախի այնպիսի հարաբերությունների նկատմամբ, վորոնց այլ պայմանագրի ձև է տրված (Քաղաք. Որ. 35 հոդ.): Այն բոլոր համաձայնությունները, վորոնց նպատակն է այս կանոնները վերացնել, փոփոխել կամ նրանցից խուսափել, անվավեր են, և յեթե ակնհայտնի կերպով ավելի յեն տվյալ վայրի համար սովորական վարձատրության չափից և կապված են գնորդի նեղ վիճակից ոգտվելու հետ, այդպիսի համաձայնությունների համար վաճառողների նկատմամբ կիրառվում է Քրեական Որենսգրքի 204 հոդվածը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

V. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ.

206. Փոխանակության պայմանագրով կողմերը մի գույք փոխում են մի այլ գույքի հետ:

Փոխանակության մասնակցողներից յուրաքանչյուրը համարվում է այն բանի վաճառողը, վորը փոխում է, և այն բանի գնորդը, վորի հետ փոխում է:

207. Փոխանակության պայմանագրի վերաբերմամբ կիրարկվում են առուծախի համապատասխան կանոնները:

VI. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ.

208. Փոխառության պայմանագրով մի կողմը (փոխատուն) հանձնում է մյուսին (փոխառուին) ի սեփականություն՝ դրամ կամ տեսականիշներով վորոշված իրեր, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել փոխատուին իր առացած գումարը կամ փոխ առած իրերի քանակությունը հավասար նույն տեսակի և վորակի իրեր տոկոսով կամ առանց տոկոսի:

209. Կողմերը կարող են փոխառության պարտավորություն ձևացնել ամեն մի պարտքի, վոր առաջ է գալիս առուծախից, գույքի վարձակալությունից կամ այլ հիման վրա: Այդպիսի դեպքերում կիրարկվում են փոխառության կանոնները:

210. Փոխառության գումարը պիտի վորոշվի ռուբլիներով:

Ծանոթություն.—Պետական բանկին իրավունք է վերապահվում ավանդ և ընթացիկ հաշվով ընդունելու վոսկի և արծաթի դրամ և ձուլյալ վոսկի ու արծաթ և ոտարերկրյա վալյուտա՝ նույն մետաղը կամ վալյուտան վերադարձնելու պայմանով: Ավանդ և ընթացիկ հաշվով ընդունված դրամի և ձուլյալ վոսկու ու արծաթի տոկոսները վճարվում են Խ.Ս.Հ. Միության վալյուտայով:

Պետական Բանկն ու այլ վարկային հաստատությունները, վորոնք ոտարերկրյա վալյուտան ընթացիկ հաշվով կամ ավանդ են ընդունում նույն վալյուտայով վերադարձնելու պայմանով, իրավունք ունեն նրանց տոկոսները վճարելու հաշվի վալյուտայով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

211. 50 ռուբլուց ավելի գումարի փոխառության պայմանագիրը պիտի կնքվի գրավոր ձևով, հակառակ դեպքում առաջ կըգան 136-րդ հոդվածի ծանոթության մեջ նախատեսված հետևանքները:

212. Փոխատուն կարող է փոխառության համար տոկոս պահանջել միայն այն դեպքում, յեթե տոկոսը նշանակված է պայմանագրի մեջ:

213. Տոկոս կարելի յե առնել միայն պարտքի մայր գումարից: Տոկոսի տոկոս (բարդ տոկոս) առնելն արգելվում է: Այս սահմանափակումը չի տարածվում այն գործարքների վրա, վոր կատարում են օրենքի հիման վրա գոյություն ունեցող վարկային հաստատությունները:

214 Տոկոսը վճարվում է ամեն ամիս, յեթե այլ համաձայնություն չկա:

215. Յեթե փոխառությունն առանց տոկոսի յե, փոխառուն իրավունք ունի իր պարտքը վճարելու, իսկ փոխատուն պարտավոր է այն ընդունելու նաև պայմանաժամից առաջ:

216. Յեթե փոխառությունը տոկոսով է, փոխառուն իրավունք ունի՝ յերեք ամիս առաջ տեղեկացնելով փոխատուին կամ մի ամիս առաջ տոկոսները վճարելով, վճարաժամից առաջ ազատվելու իր հանձնառությունից, վերադարձնելով առացած գումարը, յեթե փոխառության տոկոսը տարեկան 6%-ից ավելի յե սահմանված:

Փոխառուի՝ այս հոդվածով իրեն վերապահված իրավունքից հրաժարվելը անվավեր է:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

217. Փոխառուն իրավունք ունի առարկելու փոխառության պայմանագրի ամբողջության կամ նրա մի մասի վավերականության դեմ անփողության տեսակետից, ապացուցելով, վոր պայմանագիրն անարժեք է, այսինքն՝ վոր ինքը փոխատուից իսկապես կամ չի ստացել դրամը, իրերը կամ նրանց նյութական համարժեքը (հոդ. 209), կամ ստացել է պայմանագրի մեջ ցույց տվածից պակաս քանակությամբ:

Այն դեպքում, յերբ փոխառության պայմանագիրը պետք է կնքված լինի գրավոր ձևով, թույլ չի տրվում նրա դեմ առարկություն անել վկաների ցուցմունքների հիման վրա, բացի այն դեպքերից, յերբ քրեական պատժելի արարքներ կան:

218. Ապագայում փոխառության պայմանագիր կնքելու վերաբերյալ նախնական պայմանագիրը, անկախ փոխառության գումարից, պետք է կնքվի գրավոր ձևով:

219. Նախնական պայմանագրով ուրիշին փոխառություն տալու պարտավորություն հանձն առնողը կարող է պահանջել, վոր լուծվի նախնական պայմանագիրը, յեթե հետագայում պայմանագրի կողմի նյութական վիճակը զգալի չափով վատթարանա, մանավորապես՝ յեթե նա սնանկ ճանաչվի կամ դադարեցնի իր վճարումները:

VII. ԿԱՊԱԼ.

220. Կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է իր ռիսկով վորոշ աշխատանք կատարելու մյուս կողմի (կապալատուի) պատվերով, վորը պարտավոր է վարձատրել նրան պատվերը կատարելու համար:

221. Կապալառուն պարտավոր ե աշխատանքը կատարելու իր ծախսով, յեթե այլ համաձայնություն չկա:

222. Կապալառուն պարտավոր ե ձեռք առնելու ամեն միջոց իրեն հանձնված գույքի անվթար պահպանության համար, և նույնպես պատասխանատու յե ամեն մի զանցառության համար, վորի հետևանքով հիշյալ գույքը կարող ե վոչնչանալ, կորչել կամ վնասվել:

223. Յեթե կապալատուի հայթայթած նյութերը վատ հատկություն ունի, կամ յեթե կան կապալառուից անկախ այլ հանգամանքներ, վորոնք սպառնում են կատարած գործի դիմացկունությանը կամ պիտանիությանը, կապալառուն պարտավոր ե ժամանակին տեղեկացնել այդ մասին կապալատուին, հակառակ դեպքում պատասխանատու յե այն վնասների համար, վոր կապալատուն կարող ե կրել հիշյալ հանգամանքների հետևանքով:

224. Իր նյութերով գործ անող կապալառուն պատասխանատու յե այդ նյութերի լավ հատկության համար:

225. Յեթե կապալառուն ժամանակին չի ձեռնարկում պայմանագիրը կատարելու, կամ աշխատանքն այնքան դանդաղ ե կատարում, վոր ակնհայտնի յե դառնում, վոր չպիտի կարողանա ժամանակին վերջացնել, կապալատուն իրավունք ունի, առանց սպասելու պայմանագրով վորոշված պայմանաժամի լրանալուն, պահանջելու պայմանագրի լուծումը և վնասների հատուցումը (հոդ. 117):

226. Յեթե գործը կատարելու ընթացքում ակնհայտնի դառնա, վոր այդ գործը չպիտի կատարվի՝ ինչպես հարկն ե, կապալատուն իրավունք ունի բավականաչափ ժամանակ տալու կապալառուին թերությունները վերացնելու համար, և յեթե այդ պահանջը նշանակված ժամանակին չկատարվի,—կամ լուծելու պայմանագիրը կամ գործի շարունակությունը և ուղղումը հանձնելու մի յերրորդ անձի, կապալառուի հաշվով:

227. Կապալառուն պարտավոր ե կատարած գործը հանձնել պայմանագրի համեմատ և առանց այնպիսի թերությունների, վորոնք անպետք են դարձնում կատարած գործը պայմանագրով նախատեսված կամ սովորական նպատակի համար: Յեթե կան հիշյալ թերությունները կամ բացակայում են պայմանավորված հատկությունները, այդ հանգամանքը իրավունք ե տալիս կապալատուին պահանջելու, վոր 1) կամ առանց վարձի ուղղվեն թերությունները համապատասխան ժամանակի ընթացքում, յեթե այդ ուղղումը հնարավոր ե առանց անհամաչափ ծախքերի, 2) կամ համապատասխան չափով նվազեցվի կապալի գինը, 3)

կամ լուծվի պայմանագիրը և հատուցվեն իր կրած վնասները (հոդ. 117):

Յեթե թերությունները պակաս էական են, դատարանը կարող ե կապալատուի պահանջմամբ մերժել պայմանագրի լուծումը, պարտավորեցնելով կապալառուին թերություններն ուղղելու, կամ նվազեցնելով կապալի գինը:

Ծանոթություն.—Կապալատուն չի կարող ոգտվել այս հոդվածում մատնանշված իրավունքից, յեթե թերությունները պայմանավորված են 223-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներով, և յեթե կապալառուն կատարել ե հիշյալ հոդվածով իր վրա դրված պարտականությունը:

228. Կապալատուն պարտավոր ե կատարած գործն ընդունել պայմանագրի համեմատ և անհապաղ հայտնել կապալառուին իր նկատած թերությունների մասին. հակառակ դեպքում նա զրկվում ե թերությունները մատնանշելու իրավունքից: Յեթե կապալատուն յերևան հանի այնպիսի թերություններ, վորոնք չեյին կարող նկատվել գործը սովորական ձևով ընդունելիս, կամ վորը դիտավորյալ կերպով թաքցրած լինի կապալառուն, ապա պարտավոր ե անհապաղ հայտնելու այդ մասին կապալառուին:

229. Կապալատուն թերությունների առթիվ պահանջ կարող ե ներկայացնել վեց ամսվա ընթացքում, իսկ շենքերի և կառուցվածքների վերաբերմամբ՝ գործը հանձնելուց հետո յերեք տարվա ընթացքում, յեթե պայմանագրով ավելի յերկարատև պայմանաժամ չի վորոշված: Յեթե կապալառուի կողմից խաբեբայություն տեղի ունեցած լինի, թերությունների առթիվ պահանջ կարելի յե ներկայացնել յերեք տարվա ընթացքում, իսկ յեթե պահանջ ներկայացնելու համար պայմանագրով ավելի յերկարատև պայմանաժամ ե սահմանված,—այդ ժամանակի ընթացքում:

230. Կապալատուն պարտավոր ե պայմանավորյալ վարձը վճարելու կապալառուին՝ ամբողջ գործը հանձնելուց հետո, յեթե պայմանագրով չի վորոշված, վոր վարձը վճարվի մաս-մաս, կատարած գործը մաս-մաս հանձնելիս:

231. Յեթե ոբյեկտիվ պայմանների փոփոխության շնորհիվ անհրաժեշտ լինի չափազանց ավելացնել այն մոտավոր նախահաշիվը, վոր կազմել ե կապալառուն, վորին համաձայնություն ե տվել կապալատուն, և վորը պայմանագրի հիմքն ե ծառայել, կապալատուն իրավունք ունի պահանջելու պայմանագրի լուծումը թե գործը կատարելու ընթացքում և թե ավարտելուց հետո, հատուցանելով կապալառուին նրա կրած իրական նյութական վնասը:

Յեթե կապալառուն ժամանակին չի նախազգուշացրել կապալատուին նախահաշվից ավելի ծախքեր անելու անհրաժեշտության

մասին, նա պարտավոր է գործը կատարել առանց կապալառուից նախահաշվից դուրս ծախքեր պահանջելու:

232. Յեթե կապալի առարկան նախքան հանձնումը պատահաբար փչանա, կամ գործի ավարտումն անհնարին դառնա, կապալառուն իրավունք չունի վարձ պահանջելու իր աշխատանքի համար (հոդ. 144): Բայց յեթե հիշյալ հանգամանքներն առաջացել են կապալատուի հայթայթած նյութի պակասությունների շնորհիվ կամ կապալը կատարելու յեղանակի մասին նրա արած կարգադրությունների հետևանքով, և կամ յեթե այդ հանգամանքներն առաջ են յեկել կապալն ընդունելու պայմանաժամը նրա կողմից բաց թողնելուց հետո (հոդ. 122), նա պարտավոր է վարձատրելու կապալառուին 146-րդ հոդվածի համաձայն:

233. Նախքան կատարած գործի հանձնումը նյութերի պատահաբար փչանալու ռիսկը պատկանում է նյութերը հայթայթող կողմին: Յեթե նյութերը փչանան մյուս կողմի չար դիտավորության կամ զանցառության հետևանքով, ապա այդ կողմն է պատասխանատու վնասի համար:

234. Յեթե կան հարգելի պատճառներ, կապալատուն գործը ավարտելուց առաջ իրավունք ունի ամեն ժամանակ հրաժարվելու պայմանագրից, վարձատրելով կապալառուին գործի կատարած մասի համար և հատուցանելով նրան՝ պայմանագրի լուծումից առաջացած վնասները, զեղչելով այն չափը, վոր կապալառուն անտեսում է կամ ձեռք է բերում պայմանագիրը լուծելու շնորհիվ:

235. Այն կապալի նկատմամբ, վորի կապալառուն պետական վարչական մարմին է, կիրարկվում են պետական կապալների և մատակարարումների վերաբերյալ օրենքները (հավելված 5 և 5-ա):
(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի և 1929 թ. փետրվարի 27-ի վորոշումների խմբագրությամբ):

VIII. ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.

236. Յերաշխավորության պայմանագրով յերաշխավորը մի յերրորդ անձի պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է հանձն առնում այդ անձի պարտավորության ամբողջովին կամ մասամբ կատարելու համար:

Ծանոթություն.—Յերաշխավորություն չի համարվում, յեթե մեկը հանձնարարական կամ ակցեպտություն է տալիս պարտապանի վճարունակության մասին, առանց վորոշակի մտադրություն հայտնելու նրա հետ միասին պարտավորության հանձն առնելու մասին:

237. Միայն իրական պահանջը կարելի յե ապահովել յերաշխավորությամբ:

238. Յերաշխավորություն հանձն առնել կարելի յե միայն գրավոր ձևով. հակառակ դեպքում առաջ կը գան 136-րդ հոդվածի ծանոթության մեջ մատնանշված հետևանքները:

239. Յեթե յերաշխավորության պայմանագրով այլ բան չի սահմանված, յերաշխավորը պատասխանատու յե նույն չափով, ինչ չափով պատասխանատու յե գլխավոր պարտապանը. մասնավորապես նա պատասխանատու յե տոկոսներ վճարելու, պայմանաժամը բաց թողնելուց առաջացած վնասները հատուցանելու, հարկ յեղած դեպքում՝ տուժանք այլ և գանձման ծախքեր վճարելու համար:

240. Միաժամանակ և միասին յերաշխավորություն հանձն առած անձերը պատասխանատու յեն՝ վորպես համապարտներ:

241. Յեթե պարտապանը չկատարի իր պարտավորությունը, պարտատերն իրավունք ունի պահանջ ներկայացնելու գլխավոր պարտապանին և յերաշխավորին, վորպես համապարտների, յեթե հակառակը չի սահմանված յերաշխավորության պայմանագրով:

242. Յեթե յերաշխավորի դեմ հայց է հարուցված, ապա նա պարտավոր է պարտապանին կանչել գործին մասնակցելու: Յեթե յերաշխավորն այս պարտականությունը չկատարի, պարտապանն իրավունք ունի յերաշխավորի՝ իրեն ներկայացրած պահանջին հակադրել (հոդ. 246) այն բոլոր առարկությունները, վոր նա կարող էր անել պարտատիրոջ դեմ:

243. Յերաշխավորը պարտավոր է տեղեկացնելու գլխավոր պարտապանին, թե ինքը մտադիր է նրա փոխարեն վճարելու պարտքը: Այս պարտավորությունը չկատարող յերաշխավորն իրավունք չունի հակադարձ պահանջ ներկայացնելու պարտապանին, յեթե վերջինն իր հերթին կատարել իր պարտավորությունը:

244. Գլխավոր պարտավորությունը կատարող պարտապանը պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնելու յերաշխավորին, հակառակ դեպքում յերաշխավորը չի զրկվում գլխավոր պարտապանից կրկին անգամ պարտքը պահանջելու իրավունքից (հոդ. 246), յեթե իր հերթին վճարած լինի պահանջատիրոջը. պարտապանը միայն կարող է պարտատիրոջից պահանջել նրա անհիմն կերպով ստացածը:

245. Յերաշխավորն իրավունք ունի պաշտպանվելու պարտատիրոջ պահանջի դեմ այն բոլոր առարկություններով, վոր կարող էր անել ինքը՝ պարտապանը: Յերաշխավորն այդ առարկություններն անելու իրավունքից չի զրկվում, նույնիսկ յեթե ինքը՝ պար-

ւստանը հրաժարվի նրանից կամ ընդունի իր պարտավորությունը:

246. Պարտապանի փոխարեն պարտավորությունը կատարող յերաշխավորը գլխավոր պարտավորության վերաբերմամբ պահանջատիրոջ տեղն է բռնում:

247. Յերաշխավորից բավարարություն ստանալուց հետո պարտատերը պարտավոր է յերաշխավորին փոխանցելու այն բոլոր իրավունքները, վորոնք ապահովում են պարտապանից արվող պահանջը և այն փաստաթղթերը, վորոնք ապացուցում են այդ պահանջը:

248. Յեթե պարտատերը հրաժարվի բավարարություն ստանալու՝ իրեն պատկանող նախապատվության իրավունքից կամ գրավքի նրա օգտին սահմանված ապահովությունից, յերաշխավորն ազատվում է իր պարտավորությունից այն չափով, վոր չափով պարտատերը կարող էր իր պահանջը ապահովել, օգտվելով հիշյալ իրավունքներից:

249. Յերաշխավորությունը վերջանում է գլխավոր պարտավորության վերջանալով:

250. Յերաշխավորությունը վերջանում է, յեթե պահանջատերը գլխավոր պարտավորության պայմանաժամը լրանալու օրից յերեք ամսվա ընթացքում քաղաքացիական դատ չսկսի յերաշխավորի դեմ: Իսկ յեթե գլխավոր պարտավորությունը կատարելու համար պայմանաժամ չէ վորոշված, և յեթե այլ համաձայնություն չկա, յերաշխավորի պատասխանատվությունը վերջանում է յերաշխավորության պայմանագիրը կնքելու օրից մի տարի անցնելուց հետո:

IX.

Ա. ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

251. Հանձնարարության պայմանագրով մի կողմը (փոխանորդը) պարտավորվում է մյուս կողմի (փոխանորդչայի) հաշվով և նրա անունից կատարել փոխանորդչայի կողմից նրան հանձնարարված գործողությունները:

Փոխանորդչայը պարտավոր է վարձատրելու փոխանորդին միայն այն դեպքում, յեթե այդ վորոշված է պայմանագրով կամ օրենական կարգով հաստատված սակագներով:

Ծանոթություն.—Հանձնարարության պայմանագրերով փոխանորդ կարող են լինել թե ֆիզիկական և թե իրավական անձինք. վերջինները կարող են հանձնարարություն ստանալ միայն այնպիսի գործողություններ կատարելու համար, վորոնք չեն դուրս գալիս նրանց գործունեյության համապատասխան կանոնադրություններով կամ ընկերության պայմանագրերով վորոշված սահմաններից:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

252. Փոխանորդը պարտավոր է իրեն հանձնարարված գործողությունները կատարելու փոխանորդչայի ցուցումների համաձայն. Նա իրավունք ունի շեղվելու այդ ցուցումներից միայն այն դեպքում, յեթե գործի հանգամանքներն այդ անհրաժեշտ են դարձնում փոխանորդչայի շահերի տեսակետից, և յեթե նա չի կարող նախապես հարաբերության մեջ մտնել փոխանորդչայի հետ:

253. Փոխանորդը պարտավոր է՝ ա) հաղորդելու փոխանորդչային նրա պահանջմամբ հանձնարարությունը կատարելու ընթացքի վերաբերյալ բոլոր տեղեկությունները, բ) հանձնարարությունը կատարելուց հետո ներկայացնելու տեղեկագիր, արդարացուցիչ փաստաթղթերի հետ միասին, գ) ժամանակին վերադարձնելու փոխանորդչային այն ամենը, վոր ինքը ստացել է իրեն արված հանձնարարության հետևանքով, և դ) հատուցանելու փոխանորդչային այն վնասները, վոր նա կարող է կրած լինել փոխանորդի չար դիտավորության կամ անզգուշության հետևանքով:

254. Փոխանորդը պարտավոր է իրեն հանձնարարված գործողությունները կատարել անձամբ: Նա իրավունք ունի այդ գործողությունների կատարումը հանձնելու այլ անձի (անձնափոխանորդի), յեթե այդ մասին լիազորված է պայմանագրով կամ ստիպված է հանգամանքների շնորհիվ՝ իր փոխանորդչայի շահերը պաշտպանելու համար: Այս դեպքում փոխանորդը պատասխանատու յէ միայն անձնափոխանորդի ընտրության համար. փոխանորդչայն իրավունք ունի մերժելու իր փոխանորդի ընտրած անձնափոխանորդին:

255. Յեթե փոխանորդը հանձնարարության կատարումը հանձնում է այլ անձի (հոդ. 254), նա պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել փոխանորդչային, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով անձնափոխանորդի անձնավորության և բնակավայրի մասին:

Յեթե փոխանորդն այս պարտականությունը չկատարի, նա պատասխանատու յէ իր անձնափոխանորդի բոլոր գործողությունների համար՝ վորպես իր սեփական գործողությունների:

256. Փոխանորդչայը պարտավոր է՝ ա) ընդունելու այն բոլորը, ինչ վոր փոխանորդը բստ օրենքի արել է հանձնարարությունը կատարելու համար, բ) հատուցելու փոխանորդին հանձնարարությունը կատարելու համար արած անհրաժեշտ ծախքերը,

դ) Հանձնարարությունը կատարելուց հետո վարձատրելու փոխանորդին, յեթե նրան վարձատրություն հասնելու յե (հոդ. 251):

Հանձնարարությունը կատարելու հետ կապված անհրաժեշտ ծախքերը հոգալու համար փոխանորդյալը պարտավոր է համապատասխան կանխավճար տալու փոխանորդին:

257. Փոխանորդյալը կարող է ամեն ժամանակ հետ առնել իր տված հանձնարարությունը, իսկ փոխանորդը կարող է ամեն ժամանակ հրաժարվել նրանից: Այս իրավունքից հրաժարվելու մասին յեղած համաձայնությունները անվավեր են:

258. Յեթե փոխանորդը պայմանագիրը լուծի այնպիսի պայմաններում, յերբ փոխանորդյալը հնարավորություն չունի նրան փոխարինելու կամ այլ կերպ ապահովելու գործի վարումը, փոխանորդը պատասխանատու յե իր պատճառած վնասների համար:

259. Յեթե փոխանորդյալը լուծի պայմանագիրը նախքան հանձնարարության կատարումը, նա պարտավոր է վարձատրելու փոխանորդին նրա կատարած աշխատանքի համեմատ և հատուցանելու նրան հասցրած վնասները:

260. Հանձնարարությունը վերջանում է՝

ա) յերբ փոխանորդյալը յետ է առնում այն,

բ) յերբ փոխանորդյալը մեռնում է, հայտարարվում է անգործունակ, անհայտ բացակա կամ սնանկ, այլ և յերբ գոյություն ունենալուց դադարում է այն իրավական անձը, վորի անունից տրված է փոխանորդագիրը,

գ) յերբ հրաժարվում է փոխանորդը,

դ) յերբ փոխանորդը մեռնում է կամ կորցնում է իր գործունակությունը, կամ յերբ դադարում է այն իրավական անձը, վորի անունով տրված է փոխանորդագիրը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

261. Առևտրական և արդյունաբերական ձեռնարկության վարելու հանձնարարությունը իր ուժը պահում է նաև փոխանորդյալի մահից հետո մինչև նրա իրավահաջորդի կողմից հետ առնվելը:

262. Յեթե հանձնարարությունը դադարում է 260-րդ հոդվածի «ա» և «բ» կետերում մատնանշված պատճառներով, հանձնարարությունը իր ուժը պահած է համարվում, յեթե այդ անհրաժեշտ է փոխանորդի շահերի պաշտպանության համար, մինչև վոր փոխանորդը իմանա, կամ նրան տեղեկացվի, թե հանձնարարությունը դադարել է:

263. Փոխանորդի մահվան դեպքում նրա ժառանգները պարտավոր են այդ մասին տեղեկություն տալ փոխանորդյալին և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու նրա շահերի պաշտպանության համար:

Բ. ՓՈԽԱՆՈՐԴԱԳԻՐ.

264. Փոխանորդը պետք է ունենա փոխանորդագիր կամ լիազորագիր փոխանորդյալի անունից այնպիսի գործողություններ կատարելու համար, վորոնցով անմիջապես պիտի սահմանվեն փոխանորդյալի իրավունքներն ու պարտականությունները:

265. Այն դեպքերում, յերբ գործողությունը պիտի կատարվի կառավարական մարմնի կամ պաշտոնյայի վերաբերմամբ, փոխանորդագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, հակառակ դեպքում անվավեր է. բացառություն են կազմում այն դեպքերը, յերբ առանձին կանոններով թույլ է տրվում փոխանորդագրի այլ ձեվ:

Ծանոթություն 1.—Փոստից դրամ կամ ծանրոց և այլ թղթակցություն ստանալու համար փոխանորդագրերը բացի նոտարներից կարող են վավերացնել նաև ժողովրդական դատավորները, Միլիցիան, գավառական գործադիր կոմիտեները, գյուղական խորհուրդները, այլ և այն հասարակական ու պետական ձեռնարկություններն ու հիմնարկությունները և գործարանները, վորտեղ փոստային թղթակցության ստացողները ծառայում են:

Ծանոթություն 2.—Պետական աշխատավորական խնայողական դրամարկղի ավանդատուն կարող է հայտնել դրամարկղին, վոր դրամը տրվի իր խնայողական գրքույկը ներկայացնող ամեն մեկին: Դրամը տալու պատասխանատվությունն այս դեպքում ընկնում է բացառապես իր, ավանդատուի վրա:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

266. Գույք կառավարելու համար տրվող փոխանորդագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, հակառակ դեպքում անվավեր է:

267. Պետական հիմնարկության կամ ձեռնարկության անունից փոխանորդագիրը պետք է տրվի պատասխանատու ղեկավարի ստորագրությամբ և հիմնարկության կամ ձեռնարկության կնիքով կնքած:

268. Փոխանորդագիրը կարող է տրվել վոչ ավելի քան 3 տարվա ժամանակով: Յեթե փոխանորդագրի մեջ պայմանաժամ չի նշանակված, փոխանորդագիրը իր ուժը պահում է տրվելուց մեկ տարվա ընթացքում:

Ծանոթություն.—Արտասահմանում տրված փոխանորդագիրը, վորի մեջ պայմանաժամ չի նշանակված, իր ուժը պահում է տրվելու օրից յերեք տարվա ընթացքում:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. հոկտեմբերի 27-ի վորոշման խմբագրությամբ).

269. Փոխանորդի գործողությունները փոխանորդյալի համար ստեղծում են անմիջական իրավունքներ ու պարտականություններ, յեթե հիշյալ գործողությունները կատարված են փոխանորդագրի համաձայն, կամ յեթե հետագայում փոխանորդյալը իր հավանությունը ավել է նրանց:

270. Փոխանորդյալը ամեն ժամանակ կարող է լուծել փոխանորդագիրը, իսկ փոխանորդը՝ հրաժարվել նրանից: Այս իրավունքը ժխտող համաձայնությունն անվավեր է:

271. Փոխանորդագիրը դադարելու մասին փոխանորդյալը կամ նրա ժառանգները պարտավոր են տեղեկացնելու թե փոխանորդին և թե այն անձանց ու հիմնարկություններին, վորոնց հետ փոխանորդը պետք է հարաբերության մեջ մտներ, յեթե նրանք հայտնի յեն փոխանորդյալին (ժառանգներին):

272. Փոխանորդյալի պահանջմամբ փոխանորդը պարտավոր է անհապաղ վերադարձնելու նրան փոխանորդագիրը և հանձնարարությանը վերաբերող բոլոր այլ փաստաթղթերը:

273. Փոխանորդը փոխանորդագրով իրեն տրված լիազորությունները կարող է փոխանցել 254-րդ հոդվածում մատնանշված դեպքերում, մակագրելով իսկական փոխանորդագրի վրա:

274. Թե փոխանորդյալը և թե փոխանցումը կատարող փոխանորդը ամեն ժամանակ կարող են վոչնչացնել լիազորությունների փոխանցումը:

275. Յերբ 260-րդ հոդվածի «բ» կետում մատնանշված պատճառներով փոխանորդագիրը դադարում է, դադարում է նաև փոխանցումը:

IX-ա. ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ԿՈՄԻՍԻԱՅԻ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

275-ա. Հանձնակատարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (կոմիտենտի) հանձնարարությամբ կատարել վարձատրությամբ մի կամ մի քանի գործարք իր անունից, բայց կոմիտենտի հաշվին:

Հանձնակատար և կոմիտենտ կարող են լինել թե ֆիզիկական և թե իրավական անձինք:

Հանձնակատարության պայմանագրի առարկան կարող է լինել օրենքով չարգելված ամեն մի գործարք, ինչպես օրինակ՝ ապրանքների, արժեթղթերի և այլ իրերի առուծախը, ապրանքներ

և բեռներ ուղարկելն ու ապահովագրելը, վճարումներ ստանալն ու կատարելը և այլն:

275-բ. Հանձնակատարության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր ձևով. պայմանագիրը նոտարական կարգով վավերացնելը պարտադիր չէ:

Այն դեպքում, յերբ պայմանը գրավոր չէ, վեճ ծագելու դեպքում կողմերը զրկվում են կնքած պայմանի հաստատության համար վկաների ցուցմունքների վրա հիմնվելու իրավունքից, բայց չեն զրկվում գրավոր ապացույցներ առաջ բերելու իրավունքից:

275-գ. Հանձնակատարի կողմից յերրորդ անձի հետ կնքած պայմանագրով իրավունքներ է ձեռք բերում և պարտավորվում է հանձնակատարը, բայց վոչ կոմիտենտը, նույնիսկ յեթե կոմիտենտը հիշված լինի պայմանագրի մեջ կամ յեթե պայմանագրի կատարման նկատմամբ անմիջական հարաբերության մեջ մտած լինի յերրորդ անձի հետ, վորը պայմանագիր է կնքել հանձնակատարի հետ:

275-դ. Հանձնակատարի տնօրինության տակ գտնվող թե կոմիտենտի ուղարկած և թե նրա հաշվին գնած ապրանքները համարվում են կոմիտենտի սեփականություն:

Այս վորոշումը կիրառվում է և այն դեպքում, յերբ սնանկ են հայտարարված հանձնակատարը կամ կոմիտենտը:

275-ե. Հանձնակատարը, յեթե համաձայնությամբ հակառակը չի սահմանված, պատասխանատու չէ կոմիտենտի առաջ վճարն ստանալու կամ վերջինի հաշվին կնքած պայմանագիրը յերրորդ անձի կողմից վորևէ այլ կերպ կատարելու համար:

Այն դեպքում, յերբ յերրորդ անձը խախտում է պայմանագիրը, հանձնակատարը պարտավոր է այդ մասին անհապաղ հաղորդելու կոմիտենտին և հավաքելու ու սահմանված կարգով ապահովելու համապատասխան ապացույցները:

Յեթե հանձնակատարը յերաշխավորել է յերրորդ անձի համար, վորի հետ կոմիտենտի հաշվին պայման է կնքված, նա պարտավոր է տալու կոմիտենտին այն բոլորը, ինչ հասնում է նրան յերրորդ անձի կողմից չկատարած պայմանագրով: Այս յերաշխավորության համար (դել-կրեդերե) հանձնակատարը ստանում է կոմիտենտից առանձին վարձատրություն—յերաշխավորական վարձատրություն:

275-զ. Հանձնակատարը պարտավոր է՝

ա) կատարելու ստանձնած հանձնարարությունը կոմիտենտի տված ցուցումների համաձայն, իսկ այն դեպքում, յերբ կոմիտենտը հանձնարարությունը կատարելու մասին ցուցումներ չի

ավել, կամ նրա ցուցումները բավականաչափ վորոշ չեն, հանձնակատարը պարտավոր է վարվելու իր հայեցողությամբ, ղեկավարվելով 275–ը հոդվածով.

բ) յերրորդ անձի նկատմամբ կոմիտենտի հաշվին կատարելու գործարքի պայմանները.

գ) ընդունելու և պահանջելու յերրորդ անձից գործարքի կատարումը.

դ) անհապաղ հաղորդելու կոմիտենտին յերրորդ անձի հետ կնքած գործարքի և նրա կատարման մասին.

ե) անհապաղ, յեթե պայմանագրով ժամանակամիջոց չի սահմանված, յերրորդ անձի հետ գործարքը ավարտելուց հետո ներկայացնելու կոմիտենտին հաշիվ և նրան հանձնելու այն ամենը, վոր հասնում է հանձնարարությունը կատարելու հետևանքով:

275–ը. Իր ստանձնած հանձնարարությունը հանձնակատարը պարտավոր է կատարելու կոմիտենտի համար ամենաշահավետ պայմաններով, չխախտելով սակայն կոմիտենտի ուղղակի ցուցումները:

275–թ. Յեթե հանձնակատարը յերրորդ անձի հետ պայմանագիր է կնքում ավելի շահավետ պայմաններով, քան այդ մասնանշել է կոմիտենտը, ամբողջ օգուտը հասնում է կոմիտենտին:

275–ժ. Յեթե վաճառելու կամ ուրիշ տեղ ուղարկելու համար կոմիտենտի ուղարկած ապրանքը ընդունելիս յերևան գա այնպիսի վնաս կամ պակասորդ, վոր կարելի յե նկատել արտաքին զննությունից, հանձնակատարը վնասը հատուցանելու պատասխանատվությամբ պարտավոր է միջոցներ ձեռք առնելու պահպանելու կոմիտենտի իրավունքները, վնասի կամ պակասորդի վերաբերյալ ապացույցներ հավաքելու և այս բոլորի մասին անհապաղ հաղորդելու կոմիտենտին:

275–ի. Հանձնակատարը իր մոտ գտնվող՝ կոմիտենտի ապրանքները պահելու ընթացքում պատասխանատու յե կոմիտենտի առաջ նրանց կորստի և վնասի համար, յեթե չապացուցի, վոր կորուստը և վնասը առաջ են յեկել այնպիսի հանգամանքներից, վոր չեր կարելի կանխել՝ կիրառելով հոգատար տնտեսի հատուկ կանխատեսություն:

Չապահովագրած ապրանքի համար հանձնակատարը պատասխանատու յե միայն այն դեպքում, յերբ կոմիտենտը կարգադրել է ապահովագրել ապրանքը:

275–լ. Յեթե հանձնակատարի տնօրինության տակ գտնվող ապրանքը շուտ փչացող ապրանք է, և ժամանակը չի ներում ստանալ կոմիտենտի ցուցումները, կամ կոմիտենտը տեղեկություն

ստանալով ապրանքը ծախելու անհրաժեշտության մասին՝ ուշացնում է պատասխանը, հանձնակատարը իրավունք ունի, իսկ յեթե կոմիտենտի շահերը պահանջում են՝ նույնիսկ պարտավոր է, վաճառելու ապրանքը շուկայի կամ բորսայի գնով, իսկ այդպիսի գներ չլինելու դեպքում—ազատ գնով:

275–խ. Յեթե հանձնակատարը ապրանքը գնում է կոմիտենտի նշանակած գնից ավելի բարձր գնով, կոմիտենտը, յերբ նա չի ցանկանում իր հաշվին ընդունել այդ գնումը, յերրորդ անձի հետ կնքած պայմանագրի մասին տեղեկություն ստանալուց հետո պարտավոր է անհապաղ այդ մասին հաղորդելու հանձնակատարին, հակառակ դեպքում գնումը համարվում է կոմիտենտի կողմից ընդունված:

Յեթե հանձնակատարը կատարած գնումի մասին տեղեկություն տալիս հաղորդում է, վոր գնի տարբերությունը ընդունում է իր հաշվին, կոմիտենտը իրավունք չունի հրաժարվելու իր հաշվին կատարած գործարքից:

275–ծ. Յերբ հանձնակատարը ապրանքը վաճառում է կոմիտենտի նշանակած գնից ավելի ցածր գնով, պարտավոր է հատուցանելու վերջինին գնի տարբերությունը, յեթե չապացուցի, վոր հնարավոր չեր ապրանքը նշանակած գնով վաճառել, և ապրանքը ցածր գնով վաճառելով նա կանխել է ավելի մեծ վնասներ, և վոր միաժամանակ նա հնարավորություն չի ունեցել կոմիտենտից նոր կարգադրություն խնդրելու:

275–կ. Հանձնակատարը առանց կոմիտենտի թույլտվության իրավունք չունի նրա հաշվին կանխորեն վճարումներ անելու կամ վարկ տալու յերրորդ անձանց: Հակառակ դեպքում հանձնակատարը 1) պատասխանատու յե կոմիտենտի առաջ կանխորեն արած վճարումների և վարկի ամբողջ գումարի համար, 2) պարտավոր է, կոմիտենտի պահանջմամբ, անհապաղ վերադարձնելու նրան յերրորդ անձանց կանխորեն տված վճարները և մուծելու վաճառված ու վարկով տված ապրանքի ամբողջ արժեքը:

Այս հոդվածի 2–րդ կետով հանձնակատարի և կոմիտենտի միջև տեղի ունեցող հաշվետվության ժամանակ, նույնպես և այն դեպքում, յերբ կոմիտենտը պահանջում է հատուցանել իր վնասները, նկատի յեն առնվում այն գները, վորոնցով յերրորդ անձի հետ գործարքը կարող եր կատարվել առանց վարկ տալու:

275–հ. Հանձնակատարը, յեթե պայմանագրով հակառակը չի սահմանված, կարող է հրաժարվել ընդունած հանձնարարությունը կատարելուց, սակայն վնասը հատուցանելու պատասխանատվությամբ պարտավոր է նախօրոք տեղեկացնելու կոմիտենտին հանձնարարությունն ընդունելու որից յերկու շաբաթվա ընթաց–

քում: Հանձնակատարը այս դեպքում չի կորցնում կատարած ծախքերի հատուցումը պահանջելու իր իրավունքը, բայց զրկվում է հանձնակատարական վարձատրություն ստանալու իրավունքից:

Յեթե հանձնակատարը հրաժարվում է պայմանագրից այն պատճառով, վոր կոմիտենտը խախտել է պայմանագիրը, այն ժամանակ նա իրավունք ունի ստանալու թե կատարած ծախքերի հատուցումը և թե հանձնակատարական վարձատրությունը:

Յեթե հանձնակատարը հրաժարվում է պայմանագրից նրա կատարման անկարելիության պատճառով, ապա բացի կատարած ծախքերի հատուցումից նա իրավունք ունի հանձնակատարական վարձատրության ստանալու հանձնարարության կատարած մասի համեմատ:

275–ձ. Կոմիտենտը, տեղեկություն ստանալով հանձնակատարի հրաժարվելու մասին, պարտավոր է հրաժարման մասին տեղեկություն ստանալուց հետո յերկու շաբաթվա ընթացքում կարգադրություն անելու հանձնակատարի մոտ գտնվող ապրանքի մասին. հակառակ դեպքում հանձնակատարը իրավունք ունի կոմիտենտի ռիսկով և նրա հաշվին ապրանքը պահելու համար հանձնել ապրանքային պահեստ կամ տեղավորել պատշաճ այլ յեղանակով, նույնպես իրավունք ունի կոմիտենտից ունեցած իր պահանջները ծածկելու համար վաճառելու ապրանքը 275–լ հոդվածով մատնանշած կարգով: Նույն իրավունքը վերապահվում է հանձնակատարին և այն դեպքում, յերբ կոմիտենտը, վերացնելով տված հանձնարարությունը, անհապաղ կարգադրություն չի անում ապրանքի մասին:

275–ղ. Յերբ հանձնարարվում է վաճառել կամ գնել այնպիսի ապրանք կամ արժեթղթեր, վորոնք ունեն պաշտոնապես հրապարակվող շուկայի կամ բորսայի գներ, հանձնակատարը, յեթե հակառակը չի սահմանված պայմանագրով, իրավունք ունի ինքը ձեռք բերելու կոմիտենտից կամ վաճառելու նրան իր ապրանքներն ու արժեթղթերը այն գնով, վոր գոյություն ունի ձեռք բերելու կամ վաճառելու մասին կոմիտենտին տեղեկություն ուղարկելու օրը:

Ծանոթություն.—Այն դեպքում, յերբ հանձնակատարը գնում է կամ վաճառում է ապրանքը իր հաշվին և իր անունից, նա զրկվում է կոմիսիոն վարձատրության կամ հանձնակատարության հետ կապված ծախքերը պահանջելու իրավունքից:

275–ճ. Հանձնակատարը իրեն տված բոլոր հանձնարարությունների կատարման հետևանքով կոմիտենտից հասանելիք գումարները, նույնպես և հանձնարարության կատարման հե-

տևանքով իր կողմից տված կանխավճարները (275–յ. հոդ.) փոխատվությունները և մուրհակները, ինչպես և յերրորդ անձանց առաջ ընդունած պարտավորությունները ապահովելու համար գրավի իրավունք ունի հանձնակատարության պայմանագրի համաձայն իր փաստական տիրապետության կամ տնորինության տակ գտնվող՝ կոմիտենտին պատկանող ապրանքների, արժեթղթերի և այլ գույքի նկատմամբ, մասնավորապես կոնոսամենտի, բեռնագրի, պահեստի վկայականի, նույնպես և կոմիտենտի պահեստներում գտնվող ապրանքները հանձնակատարի կողմից ընդունելու վերաբերյալ ակտերի և ցուցակների հիման վրա, յեթե ակտերի և ցուցակների մեջ մատնանշված ապրանքները կնքված են հանձնակատարի կնիքով կամ դրոշմով կամ պահվում են հանձնակատարի կնիքով կնքված շինություններում, կամ տեղում պահվում են հանձնակատարի ծառայողների կողմից:

275–մ. Հանձնակատարը իրավունք ունի կոմիտենտի հաշվին ստացած բոլոր գումարներից պահելու հանձնակատարության պայմանագրից բխող՝ կոմիտենտից հասանելիք իր դրամական պահանջները:

275–յ. Կոմիտենտը պարտավոր է՝

ա) վերադարձնելու հանձնակատարին հանձնարարությունը կատարելու համար նրա արած ծախքերը, նույնպես հանձնակատարից ստացած կանխավճարները և փոխատվությունները, հաշվելով յուրաքանչյուր գումարի համար տոկոսներ ծախսելու կամ տալու օրից, յեթե հակառակը չի սահմանված պայմանագրով.

բ) վարձատրելու հանձնակատարին նրա պահեստներից և փոխադրական միջոցներից օգտվելու և հանձնարարությունը կատարելու նպատակով վարձած բանվորների աշխատանքի համար.

գ) ազատելու հանձնակատարին այն բոլոր պարտականություններից, վոր հանձնարարությունը կատարելու համար նա հանձն է առել յերրորդ անձանց առաջ.

դ) վճարելու հանձնակատարին նրան հասանելիք հանձնակատարության վարձատրությունը:

275–ն. Յեթե կոմիտենտը, այլ համաձայնություն չլինելու դեպքում, ներկայացրած հաշվի դեմ (275–գ հոդ. «ե» կետ) ստանալու օրից մի ամսվա ընթացքում առարկություն չի ուղարկում, հանձնակատարի հաշիվը համարվում է ընդունված:

275–շ. Յեթե մինչև յերրորդ անձանց հետ համապատասխան գործարքներ կատարելը հանձնակատարը կոմիտենտից կարգադրություն ստանա, վորով հանձնարարությունը վերացվում է ամբողջապես կամ մասամբ, հանձնակատարության պայմանագիրը

ամբողջապես կամ մասամբ համարվում է լուծված: Այս դեպքում կոմիտենտը պարտավոր է հանձնակատարին կոմիսիոն վարձատրություն տալու այն գործարքների համար, վոր նա կատարել է մինչև հանձնարարության վերացումը, նույնպես և հատուցանելու նրան հանձնարարության հիման վրա մինչև վերացումը կատարած ծախքերը:

275-ո. Հանձնակատարական, նույնպես և յերաշխավորական վարձատրության (հոդ. 275-ե) չափը վորոշվում է կողմերի համաձայնությամբ, համաձայնություն չլինելու դեպքում—դատարանի հայեցողությամբ:

Հանձնակատարության վարձատրությունը կարելի յե պայմանավորել գործարքի գումարի վորոշ տոկոսի ձևով կամ այն տարբերության կամ տարբերության մի մասի ձևով, վոր կստացվի կոմիտենտի նշանակած գնի և այն առավել շահավետ գնի միջև, վորով հանձնակատարը կկատարի գործարքը, նույնպես և որենքով չարգելված այլ ձևով:

275-չ. Կոմիտենտի մահվան կամ նրան անհայտ բացակա կամ անգործունակ հայտարարելու դեպքում հանձնակատարը պարտավոր է տված հանձնարարության հիման վրա շարունակելու իր գործողությունները մինչև կոմիտենտի իրավահաջորդներից կամ ներկայացուցիչներից պատշաճ ցուցումներ ստանալը:

Այն դեպքում, յերբ սահմանափակվում է կոմիտենտի իրավունակությունը մասնակցելու այլ տեսակի հանձնակատարական գործարքներին, հանձնակատարության պայմանագիրը լուծվում է, վորի մասին կոմիտենտը պարտավոր է անհապաղ տեղեկացնելու հանձնակատարին: Սակայն, յեթե այդ անհրաժեշտ է հանձնակատարի շահերը պաշտպանելու համար, հանձնակատարության պայմանագիրը պահում է իր ուժը, մինչև հանձնակատարը իմանա կամ թե պետք է իմանար կոմիտենտի իրավունակությունը սահմանափակելու մասին:

275-պ. Հանձնակատարի մահվան կամ անհայտ բացակա, անգործունակ կամ անիրավունակ հայտարարվելու դեպքում հանձնակատարության պայմանագիրը լուծվում է:

Այս հոդվածը չի կիրառվում այն դեպքում, յերբ հանձնակատարի իրավահաջորդները կամ ներկայացուցիչները շարունակում են վարել նրա առևտրական ձեռնարկությունը. այս դեպքում հանձնակատարի իրավահաջորդները կամ ներկայացուցիչները պարտավոր են շարունակելու հանձնարարությունը կատարելու վերաբերյալ գործողությունները մինչև կոմիտենտից պատշաճ ցուցումներ ստանալը:

275-ջ. Հանձնակատարը պարտավոր է փոխանցելու կոմիտենտին այն յերրորդ անձանց վերաբերյալ բոլոր պահանջները, վորոնք վնաս են հասցրել կոմիտենտի այն գույքին, վոր հանձնակատարության պայմանագրի համաձայն գտնվում է հանձնակատարի փաստական տիրապետության կամ տնորինության տակ:

Կոմիտենտը իրավունք ունի պահանջելու, վորպեսզի փոխանցվեն իրեն յերրորդ անձի հետ կոմիտենտի հաշվին կնքված պայմանագրից բխող պահանջները միայն այն դեպքում, յերբ յերրորդ անձը խախտել է պայմանագիրը (275-ե հոդ.), կամ յերբ հանձնակատարը սնանկ է հայտարարված:

Վերջին դեպքում կոմիտենտին բացի դրանից, ընդհանուր բաշխումից դուրս, փոխանցվում են սնանկ հայտարարելուց հետո հիշյալ պայմանագրերով յերրորդ անձերից ստացվող վճարները, պահելով կոմիտենտից հանձնակատարին հասանելի գումարները:

275-ռ. Անվավեր են համարվում կողմերի այնպիսի համաձայնությունները, վորոնք նվազեցնում են այն պատասխանատվությունը կամ ազատում են այն պարտավորություններից, վորոնք դրված են հանձնակատարի վրա այս Որենսգրքի 275-գ և 275-դ հոդվածներով և 275-զ հոդվածի «ե» կետով, և կոմիտենտի վրա՝ 275-յ հոդվածի «ա» և «գ» կետերով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

X. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

I. ՊԱՐԶ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.

276. Ընկերության պայմանագրով յերկու կամ մի քանի անձեր փոխադարձաբար պայմանավորվում են միացնել իրենց դրամագլուխները և միասին գործ անել մի ընդհանուր տնտեսական նպատակով:

277. Դրամագլուխ համարվում է ամեն ինչ, վոր յուրաքանչյուր ընկերակից մտցնում է ընդհանուր գործի մեջ, լինի այդ փող, այլ գույք կամ ծառայություն:

278. Ընկերակիցների դրամագլուխները կարող են տարբեր լինել ըստ տեսակի և արժեքի: Յեթե պայմանագրով հակառակը չի սահմանված, բոլոր ընկերակիցների դրամագլուխները հավասարժեք են համարվում:

279. Դրամագլուխը կազմող փողը, սպառելի և փոխարինելի իրերը համարվում են ընկերակիցների ընդհանուր սեփականու-

թյուն, իսկ ամեն մի այլ գույք համարվում է ընդհանուր օգտագործության առարկա, յեթե պայմանագրով հակառակը չի սահմանված:

Ծանոթություն.—*Յեթե գործի մեջ վորպես դրամագլուխ մուծվում է քաղաքայնացման չենթարկված շենք, ապա այդ շենքի վերաբերյալ իրավունքը կարող է սահմանվել միայն շենքերի օտարման համար սահմանված կարգով և պայմաններով:*

280. *Ընկերակիցների դրամագլուխները և այն ամենը, ինչ վոր ընկերությունը ձեռք է բերում իր հաշվով, կազմում են ընկերության ընկերովի գույքը: Ընկերովի գույքի կազմի մեջ մտնում է ամեն ինչ, վոր ձեռք է բերված նրա մեջ մտնող առանձին իրավունքների հիման վրա:*

281. *Ընկերության գործերի վարումը տեղի յե ունենում բոլոր ընկերակիցների ընդհանուր համաձայնությամբ: Յեթե ընկերության պայմանագրով սահմանված է, վոր ընկերության գործերի վերաբերյալ վորոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ, այդ դեպքում այդ մեծամասնությունը վորոշվում է վոչ թե դրամագլուխների չափերի, այլ ընկերակիցների թվի համեմատ, յեթե պայմանագրով հակառակը չի սահմանված: Ընկերության գործերը վարելու լիազորությունը կարող է տրվել ընկերակիցներից մեկին կամ մի քանիսին, վորոնց իրավունքներն ու պարտականությունները այս դեպքում վորոշվում են կամ հենց ընկերության պայմանագրով կամ բոլոր ընկերակիցների ստորագրած առանձին փոխանորդագրով: Այդպիսի լիազորներ նշանակելուց հետո մնացած ընկերակիցները ընկերության գործերը վարելուց հեռանում են:*

282. *Յեթե ընկերության գործերը վարելու լիազորությունը տրված է ընկերության պայմանագրով, այդ լիազորությունն իր ուժը պահում է ամբողջովին մինչև ընկերության դադարումը և կարող է վոչնչացվել միայն այն դեպքում, յեթե կան հարգելի պատճառներ: Այդպիսի լիազորն իր հերթին կարող է ընկերության գործերը վարելուց հրաժարվել, յեթե միայն հարգելի պատճառ կա:*

283. *Այն ընկերակիցը, վոր ընդհանուր շահերի համար վարել է գործողություն և կատարել առանց հարկ յեղած լիազորությունը ստացած լինելու, իրավունք ունի հետ ստանալու իր միջոցներից գործի համար արած ծախքերը, յեթե նա հիմք է ունեցել այդ գործողություններն ընկերության շահերի տեսակետից անհրաժեշտ համարելու:*

Իր աշխատանքի համար ընկերակիցը վարձատրություն ստանալու իրավունք ունի միայն այն դեպքում, յերբ այդպիսի պայման կա պայմանագրի մեջ:

284. *Ընկերակիցը պատասխանատու յե ընկերության առաջ ընկերության պայմանագրով և իր լիազորության վերաբերյալ պարտականությունները չկատարելու համար, պայմանագրերից բղխող պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոնների համաձայն:*

285. *Յուրաքանչյուր ընկերակից իրավունք ունի անձամբ ծանոթանալու ընկերության գործերի վիճակին, զննելով մատյաններն ու թղթերը: Այս իրավունքը վոչնչացնող կամ սահմանափակող համաձայնությունն անվավեր է:*

286. *Ընկերությանը մասնակցելու իրավունքը չի կարող փոխանցվել առանց մնացած ընկերակիցների համաձայնության: Քանի ընկերությունը գոյություն ունի, ընկերակիցն իրավունք չունի տնորինելու ընկերովի գույքի մեջ իր ունեցած բաժինը:*

287. *Յուրաքանչյուր ընկերակից ընդհանուր պարտքերի հանդեպ պատասխանատու յե ընկերության մեջ իր ունեցած բաժնի համեմատական չափով, յեթե այլ բան չի նախատեսված ընկերության պայմանագրով: Ընդունվում է, վոր ընկերակիցները համապարտ պատասխանատվություն չունեն ընդհանուր պարտքի հանդեպ:*

288. *Յեթե օգտի ու վնասի բաշխման մեջ ընկերակիցների մասնակցությունը չի վորոշված պայմանագրով, այդ դեպքում յուրաքանչյուրի դրամագլխի համար տոկոս է տրվում այն չափով, վորչափ պետական բանկն առնում է մուրհակները զեղչելիս, իսկ տոկոսները վճարելուց հետո մնացած օգտին ու վնասին ընկերակիցները մասնակցում են հավասար չափով: Յեթե հատուկ համաձայնություն գոյություն չունի, ապա ընկերության օգտի ու վնասի հաշվետվությունը ընկերակիցների միջև տեղի յե ունենում յուրաքանչյուր գործառնական տարվա վերջին, իսկ մի տարուց պակաս ժամանակով կազմված ընկերությունների մեջ— ընկերությունը դադարելուց հետո:*

289. *Ընկերությունը դադարում է, բացի 290 և 292 հոդվածներում մատնանշված դեպքերից, ա) ընկերակիցներից մեկի մահվան, բ) ընկերակիցներից մեկի անգործունակ կամ սնանկ հայտարարվելու պատճառով, գ) յեթե ընկերակիցներից մեկը պահանջ դնի, վոր լուծվի անորոշ ժամանակով կազմված ընկերությունը, դ) յեթե ընկերակիցներից մեկը ժամանակից առաջ հրաժարվի վորոշ ժամանակով կազմված ընկերությանը մասնակցելուց, ե) յերբ լրանա վորոշ ժամանակով կազմված ընկերության*

պայմանաժամը, գ) յերբ իրագործված է ընկերության նպատակը, կամ պարզվել է, թե անիրագործելի յե այդ նպատակը, դ) յեթե վորևէ պարտատիրոջ ներկայացրած պահանջը պետք գանձվի ընկերովի գույքի մեջ ընկերակիցներից մեկի ունեցած բաժնից, ե) յերբ ընկերակիցները համաձայնության են կայացնում ընկերությունը լուծելու մասին:

290. Ընկերակիցներից մեկի մահվան դեպքում ընկերությունը շարունակվում է, յեթե ընկերության պայմանագրի մեջ պայման կա, վոր մեռածի բաժինը հանվի, կամ վոր նրան փոխարինեն որենքով կամ կտակով նրա ժառանգ հանդիսացողները կամ այն հիմնարկությունը, վորին փոխանցվում է մեռնողի գույքը որենքի համաձայն:

291. Միայն հարգելի պատճառով թույլ է տրվում հայտարարություն տալ վորոշ ժամանակով հիմնված ընկերության մասնակցությունից պայմանաժամից առաջ հրաժարվելու մասին: Անորոշ ժամանակով հիմնված ընկերության մասնակցությունից հրաժարվելու մասին հայտարարություն պիտի տրվի ժամանակին:

Անվավեր է այն համաձայնությունը, վորով վերացվում կամ սահմանափակվում է ընկերության մասնակցությունից հրաժարվելու մասին հայտարարելու իրավունքը:

292. 289-րդ հոդվածի «բ», «գ», «դ» և «ե» կետերով նախատեսված դեպքերում, այլ և ընկերակիցներից մեկի մահվան դեպքում, յեթե մեռնողին փոխարինողը հրաժարվի ընկերության մեջ մնալուց (հոդ. 290), ընկերությունը շարունակվում է, յեթե նրա հարատևումը այս դեպքում նախատեսված է պայմանագրով, կամ յեթե այդ մասին մնացած ընկերակիցները համաձայնության են գալիս: Այս դեպքում՝ դուրս յեկող ընկերակցի բաժինը զատվում է կանխիկ դրամով դուրս գալու որվա հաշվեկշռի համաձայն:

293. Յեթե ընկերակիցներից մեկի պարտատերն իր պահանջի գանձման առարկա յե դարձրել ընկերովի գույքի մեջ նրա ունեցած բաժինը և սակայն չի պահանջել, վոր լիկվիդացիայի յենթարկվեն ընկերության գործերը (հոդ. 289 կետ «դ»), այդ դեպքում նա իրավունք ունի մասնակից դառնալու ընկերության ոգտին, բայց վոչ ընկերակցի վորևէ իրավունք կամ պարտականություն յուրացնելու:

294. Ընկերությունը լուծվելուց հետո ընկերակիցները գործերի լիկվիդացիան կատարում են հետևյալ պայմաններով. ա) միայն ընդհանուր ոգտագործության համար ընկերության մեջ մտցրած առարկաները վերադարձվում են այդ առարկաները մտցնող ընկերակիցներին, առանց նրանց ոգտագործության համար վարձ վճարելու, յեթե այլ պայման չկա. բ) ընդհանուր գույքի բաժանումը տեղի յե ունենում ընկերակիցների ընդհանուր գործի վերաբերյալ անվիճելի պարտքերը վճարելուց կամ վիճելի պարտքերն ապահովելուց հետո միայն: Նյութեղեն դրամագլուխները վերադարձվում են դրամով, ընկերության պայմանագրով սահմանված գնահատությամբ, իսկ յեթե այդպիսի գնահատություն չկա—համաձայն այն արժեքի, վոր նրանք ունեցել են ընկերության մեջ մտցնելիս: Յեթե ընկերակիցների ընդհանուր գույքը բավական չլինի պարտքերը հատուցելու կամ ապահովելու համար, պակասորդ գումարը ընկերակիցները պետք է լրացնեն իրենցից յուրաքանչյուրին բաժին ընկնող վնասի չափով: Ընկերակիցներից մեկի անանկության դեպքում վնասի՝ նրան բաժին ընկնող մասը բաժանվում է մնացած ընկերակիցների միջև նույն հիմունքով:

Ծանոթություն.—Ընկերության լիկվիդացիայի ժամանակ ընկերակիցների փոխադարձ հաշվետվության կարգը կարող է սահմանվել նաև ընկերակիցների համաձայնությամբ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

2 ԼԻԱԿԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.

295. Լիակատար համարվում է այն ընկերությունը, վորի բոլոր մասնակիցները (ընկերակիցները) զբաղվում են առևտրով կամ արհեստով ընդհանուր ֆիրմայի անվան տակ և ընկերության պարտավորությունների համար պատասխանատու յեն իրենց ամբողջ գույքով, վորպես համապարտ պարտապաններ:

Ծանոթություն.—Լիակատար ընկերությունների պատկանող ձեռնարկության ֆիրման ոգտագործելու կարգը սահմանվում է ֆիրմայի վերաբերյալ կանոնադրությամբ (19-ա հոդվածի 1 հավելվածը):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հունիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

296. Լիակատար ընկերության հիմնելու մասին ընկերակիցները իրենց բոլորի ստորագրությամբ հայտարարություն պետք է տան ընկերության գտնված տեղի այն հիմնարկությանը, վոր առևտրական մատյաններ է պահում, ամրագրելու և հրապարակելու համար: Ստորագրությունները պետք է վավերացված լինեն պատշաճ կարգով:

Ծանոթություն 1.—Լիկվիդատոր ընկերությունը ստորագրելու վերաբերյալ հայտարարությունը պետք է պարունակի առևտրական ստորագրության կանոնագրությամբ պահանջվող տեղեկությունները:
(ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժող. 1927 թ. № 57, հոդ. 579).
(ՀՍԽՀ ԿԳԿ 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

Ծանոթություն 2.—Այս հոդվածում մատնանշված կարգով հայտարարվում և հրապարակվում է սկզբնական հայտարարության մեջ յեղած տվյալների ամեն մի փոփոխություն, ընկերության լիկվիդացիան, ընկերության գործերի համար լիկվիդատորներ ընտրելը կամ նշանակելը և այդ լիկվիդատորների կազմի մեջ տեղի ունեցող ամեն մի փոփոխություն, այլ և առանձին վորոշումներով նախատեսված այլ տվյալներ:

Ծանոթություն 3.—Յեթե մի ընկերակից դուրս է գալիս ընկերությունից, այդ մասին կարող է հայտարարություն տալ նաև ինքը, կցելով իր հայտարարությանը պատշաճ փաստաթղթերը: Դատարանով սնանկ ճանաչված ընկերության լիկվիդացիայի մասին արձանագրվում է առևտրական մատյանի մեջ ընկերությունը սնանկ հայտարարող դատարանի կարգադրությամբ:
(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

297. Լիկվիդատոր ընկերության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր ձևով և վավերացվի նոտարական կարգով, հակառակ դեպքում անվավեր է:

298. Լիկվիդատոր ընկերությունը առևտրական մատյանի մեջ մտցնելու օրից համարվում է իրավական անձ և իր ֆիրմայի տակ կարող է օրենքի սահմաններում ձեռք բերել գույքի վերաբերյալ ամեն իրավունք, հանձն առնել պարտավորություններ, դատարանում հանդես գալ վորպես հայցվոր և պատասխանող իր ներկայացուցիչների միջոցով:

299. Լիկվիդատոր ընկերության նկատմամբ կիրառվում են այս Օրենսգրքի 277, 278, 283, 284, 285, 289, 290, 292 և 294 հոդվածների կանոնները:

300. Յեթե ընկերակիցների գործի մեջ մտցրած բաժինները նվազել են ընկերության կրած վնասների հետևանքով, ընկերակիցներն իրավունք չունեն ընկերության ոգտից իրենց բաժին ընկնող մասը պահանջելու, մինչև վոր ընկերովի դրամագլուխը այդ ոգուտներից լրացվի և հավասարեցվի առևտրական մատյանում արձանագրված չափերին:

301. Վորևէ ընկերակից իրավունք չունի առանց մնացած ընկերակիցների համաձայնության՝ վոչ իր կամ յերրորդ անձի հաշվին կատարելու այնպիսի գործարքներ, վորոնք համանման են ընկերության առևտրական կամ արդյունաբերական գործունեության առարկան կազմող գործարքներին, և վոչ մասնակցելու համանման այլ ընկերության, վորպես անսահմանափակ պատասխանատվություն կրող ընկերակից:

Այս կանոնը խախտող ընկերակիցը պարտավոր է իր ընկերակիցների ընտրությամբ կամ հատուցանելու ընկերությանը պատճառած վնասները կամ ընկերությանը հանձնելու հիշյալ գործողություններով ձեռք բերած ոգուտը:

302. Յուրաքանչյուր ընկերակից իրավունք ունի ընկերության անունից միանձնաբար գործելու, յեթե պայմանագրով այլ բան չի սահմանված: Ընկերակիցներից մեկի առարկությունը մյուս ընկերակցի միանձնյա կարգադրության կամ գործողության դեմ բավական է նրա գործողությունը կասեցնելու համար:

303. Ընկերության գործերը վարելու համար տված փոխանորդագիրը կարող է վերացնել ամեն մի ընկերակից, վոր մասնակցել է կամ իրավունք ունի մասնակցելու այդ փոխանորդագրի տալուն: Ընկերության գործերը վարելու պայմանագրի հիման վրա լիազորություն ունեցող ընկերակցին իրեն հանձնված ընկերության գործերը վարելուց հրաժարեցնելը վավերական է համարվում միայն այն դեպքում, յերբ այդ վճռել է դատարանը մնացած ընկերակիցների կամ նրանց մեծամասնության հարգելի պատճառների վրա հիմնված պահանջով (նայելով թե այս մասին ինչ վորոշումներ կան ընկերության պայմանագրի մեջ):

304. Ընկերակիցները համապարտությամբ պատասխանատու յեն իրենց բոլոր գույքով ընկերության բոլոր պարտավորությունների կամ այն գործարքների համար, վորոնք ինչպես այդ պարզվում է կողմերի մտադրությունից, կնքված են ընկերության համար: Ընկերության մեջ վորպես նոր անդամ մտնող անձը մնացած ընկերակիցների հետ հավասար չափով պատասխանատու յե և այն պարտավորությունների համար, վորոնք առաջ են յեկել նախքան նրա ընկերության մեջ մտնելը: Ընկերության պարտքեր վճարող ընկերակիցն իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնելու մնացած ընկերակիցներին՝ ընկերության վնասներից նրանցից յուրաքանչյուրին բաժին ընկնող մասի չափով:

305. Ընկերության պարտատերերը կարող են իրենց պահանջը գանձել առանձին ընկերակիցներին պատկանող գույքից միայն այն դեպքում, յերբ փաստորեն կամ դատարանով հաստատված լինի ընկերության անանկությունը, կամ—ընկերության գործերի լիկվիդացիայից հետո: Յեթե պարտատերը կամենա իր պահանջը գանձել իր պարտապանի՝ ընկերության գույքի մեջ ունեցած բաժնից, նա պարտավոր է լիակատար ընկերության լիկվիդացիան պահանջելու մասին հայտնելու ընկերության գործառնական տարվա վերջից վեց ամիս առաջ, անկախ այն հանգամանքից, թե ընկերությունը հիմնված է վորոշ, թե անորոշ ժամանակով:

306. Ընկերության պայմանագրի մեջ արված փոփոխությունները ուժ են ստանում յերրորդ անձերի համար, վորոնց տեղեկություն չէ արված այդ փոփոխությունների մասին, միայն առևտրական մատյանի մեջ մուծելու և հրապարակելու դեպքում: Յերրորդ անձերի նկատմամբ անվավեր է ընկերակիցների այն համաձայնությունը, վոր հակառակ է այս Որենսգրքի 304-րդ հոդվածով սահմանված նրանց պատասխանատվության վերաբերյալ կանոններին: Յեթե յերրորդ անձինք հենվում են ընկերության պայմանագրի մեջ տեղի ունեցած փոփոխության վրա, ընկերակիցները չեն կարող նրանց դեմ առարկություն անելիս առաջ բերել այդ փոփոխությունը առևտրական մատյանի մեջ մուծված և հրապարակված չլինելը:

307. Լիակատար ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց, բացի 289-րդ հոդվածով նախատեսված դեպքերից, նաև այն դեպքում, յերբ ընկերությունը անանկ է հայտարարվում դատարանի վճռով:

Ծանոթություն.—Անորոշ ժամանակով հիմնված ընկերության մասնակցելուց հրաժարվելու մասին ընկերակիցը պարտավոր է հայտնելու ընկերությունից փաստորեն դուրս գալուց վոչ ուշ քան վեց ամիս առաջ: Վորոշ ժամանակով կազմված ընկերությունից պայմանաժամից առաջ հրաժարվելը թույլ է տրվում միայն հարգելի պատճառով:

308. Դատարանի վճռով անանկ չճանաչված ընկերության գործերի լիկվիդացիայի համար ընկերակիցները կարող են ընտրել հատուկ լիկվիդատորներ թե իրենց միջից և թե կողմնակի անձերից: Յեթե լիկվիդատորների ընտրության մասին ընկերակիցները համաձայնության չգան, նրանք նշանակվում են դատարանի կողմից, ընկերակիցներից մեկի խնդրքի հիման վրա: Դատարանի վճռով անանկ ճանաչված ընկերության գործերի լիկվիդացիայի համար լիկվիդատորներ նշանակում է դատարանը, անպայման ընկերության համար կողմնակի անձերից և անկախ ընկերակիցներից վորևէ մեկի խնդրքից:

309. Լիկվիդատորները ավարտում են ընթացիկ գործերը և իրավունք ունեն նոր գործարքներ կատարելու, յեթե այդ անհրաժեշտ է ընթացիկ գործերը վերջացնելու համար: Լիկվիդատորները դատարանի վճռով անանկ ճանաչված ընկերության պատկանող շենքերն ու կառուցման իրավունքները կարող են ոտարել միայն աճուրդով. նույն այս կարգը կիրարկվում է վորևէ այլ պատճառով դադարող ընկերության շենքի և կառուցման իրավունքների նկատմամբ, յեթե ոտարումը տեղի չի ունենում առանց ընկերակիցների համաձայնության: Լիկվիդացիան ավարտելուց հետո լիկվիդատորները տեղեկագիր են ներկայացնում ընկերակիցներին, իսկ դատարանի վճռով անանկ ճանաչված ընկերության լիկվիդացիայի առթիվ—այն դատարանին, վորը քննում է անանկության գործերը: Յեթե լիկվիդացիան մի տարուց ավելի տևի, տեղեկագիր ներկայացվում է յուրաքանչյուր տասներկու ամիսը լրանալուց հետո:

Ծանոթություն.—Միասին գործելու համար ընտրված կամ նշանակված լիկվիդատորները իրենց պարտականությունները խախտելու դեպքում համապարտ պատասխանատվություն են կրում թե՛ ընկերության մասնակիցների և թե՛ նրա պարտատերերի առաջ:

310. Յեթե լիկվիդատորները միաժամանակ և ընկերակիցներ չեն, իրավունք ունեն վարձատրություն պահանջելու լիկվիդացիայի աշխատանքների համար. վարձատրության չափը վորոշվում է ընկերակիցների հետ համաձայնության գալով, իսկ անհամաձայնության դեպքում դատարանի հայեցողությամբ: Դատարանի վճռով անանկ հայտարարված ընկերության լիկվիդացիան կատարող լիկվիդատորների համար վարձատրություն նշանակում է այն դատարանը, վոր քննում է ընկերության անանկության գործը:

311. Ընկերությունից դուրս յեկած ընկերակիցը ընկերության պարտքերի համար պատասխանատու չէ ընկերությունից դուրս գալու տարվա տեղեկագիրը հաստատվելուց որից հետո յերկու տարվա ընթացքում:

3. ԿՈՄԱՆԴԻՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.

312. Կոմանդիտ ընկերություն համարվում է այն ընկերությունը, վոր հիմնված է ընդհանուր ֆիրմայի տակ առևտուր անելու կամ վորևէ գործով զբաղվելու համար և բաղկացած է մեկ

կամ մի քանի մասնակիցներից, վորոնք ընկերության պարտատերերի առաջ պատասխանատու յեն իրենց ամբողջ գույքով (անսահմանափակ պատասխանատվությամբ ընկերներ), և մեկ կամ մի քանի մասնակիցներից, վորոնց պատասխանատվությունը սահմանափակվում ե ընկերության մեջ իրենց դրած դրամագլխով (գլխադիրներ)։

Ծանոթություն 1.—Կոմանդիտ ընկերության պատկանող ֆիրման օգտագործելու կարգը վորոշվում ե ֆիրմայի վերաբերյալ կանոնադրությամբ (19-ա հոդ. 1 հավելված).

Ծանոթություն 2.—Յեթե գլխադրի համաձայնությամբ նրա անունը մտցվում ե կոմանդիտ ընկերության ֆիրմայի մեջ, ապա այդ գլխադիրը բացի առևտրի կանոնների խախտման համար սահմանված պատասխանատվությունից՝ ընկերության պարտավորությունների հանդեպ պատասխանատու յե սահմանափակ պատասխանատվություն կրող ընկերների հետ հավասարապես։

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

313. Կոմանդիտ ընկերության նկատամբ կիրառվում են լիակատար ընկերության վերաբերյալ բոլոր վորոշումները, բացի հետագա հոդվածներում մատնանշվածներից։

314. Կոմանդիտ ընկերության տոմարագրության վերաբերյալ հայտարարությունը պետք ե պարունակի առևտրական տոմարագրության կանոնադրությամբ պահանջվող տեղեկությունները (ԽՍՀՄ Օր. և Կարգ. ժող. 1927 թ. № 57, հոդ. 579)։

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

315. Կոմանդիտ ընկերության մեջ յեղած ընկերակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են հետևյալ պարտադիր կանոններով. ա) միայն գույքային դրամագլուխն ե գլխադրի համար իրավունքներ և պարտականություններ ստեղծում. բ) գլխադիրը կոմանդիտ ընկերության գործերը կարող ե կառավարել միայն վորպես նրա լիազոր և յեթե այդպիսի լիազորություն չունի, իրավունք չունի առարկելու անսահմանափակ պատասխանատվություն կրող ընկերակիցների գործողությունների դեմ. գ) ընկերությունը սնանկանալու դեպքում գլխադիրները անսահմանափակ պատասխանատվություն կրող ընկերակիցների հանդեպ նախապատվության իրավունք ունեն ստանալու իրենց դրամագլուխները ընկերության պարտատերերին բավարարելուց հետո մնացած գույքից։

Յեթե պայմանագրով այլ բան սահմանված չե, կիրառվում են նաև հետևյալ կանոնները. ա) գլխադիրը կաշկանդված չի այս Օրենսգրքի 301—րդ հոդվածի սահմանափակումներով. բ) գլխադիրն իրավունք ունի պահանջելու, վոր իրեն հաղորդվի տարեկան հաշվեկշիռը, և ստուգելու նրա ճշտությունը ընկերության մատյաններով և թղթերով։

Հարգելի պատճառներով դատարանը ամեն ժամանակ կարող ե գլխադրին իրավունք տալ ընկերության մատյաններն ու թղթերը նայելու։

316. Գլխադիրը յերրորդ անձերի առաջ պատասխանատու յե. ա) իր դրամագլխով կամ գույքով, պայմանավորյալ դրամագլխի չափով, յեթե այդ դրամագլուխը մուծված չի ընկերության մեջ կամ մուծված ե վոչ ամբողջովին, բ) անկանոն կերպով ստացած վաստակով։

Ծանոթություն.—Դրամագլուխը նվազեցնելու մասին յեղած համաձայնությունը ուժ չունի ընկերության պարտատերերի համար, քանի դեռ մուծված չի առևտրական մատյանի մեջ և հրապարակված չի պատշաճ կարգով. նախքան այդ հրապարակումն առաջ յեկած պարտավորությունների համար գլխադիրը պատասխանատու յե իր սկզբնական դրամագլխի գումարով։

317. Հանվում ե.

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

4. ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.

218. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համարվում ե այն ընկերությունը, վորի բոլոր մասնակիցները (ընկերակիցները) զբաղվում են առևտրով կամ վորևե արհեստով ընդհանուր ֆիրմայի անվան տակ և պատասխանատու յեն ընկերության պարտավորությունների համար վոչ միայն ընկերության մեջ իրենց ունեցած դրամագլուխներով, այլ և իրենց անձնական գույքով, յուրաքանչյուր ընկերակցի դրամագլխի բազմապատիկ չափով (օր. յեռապատիկ, հնգապատիկ, տասնապատիկ), վորը հավասար պետք ե լինի բոլոր ընկերակիցների համար։

Ծանոթություն.—Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պատկանող ֆիրման օգտագործելու կարգը վորոշվում ե ֆիրմայի վերաբերյալ կանոնադրությամբ (19-ա հոդ. 1 հավելված)։

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

319. Ընկերակիցներից մեկի սնանկության դեպքում ընկերության պարտքերի դիմաց նրա կրած պատասխանատվությունը բաշխվում է ընկերության. մնացած մասնակիցների միջև նրանց դրամագլուխների համեմատական չափով: Սակայն ընկերակիցներից վոչ վոք յերրորդ անձերի և ընկերության մյուս մասնակիցների առաջ վորևե դուլքային պատասխանատվություն չի կրում, բացի իր դրամագլխից և դրամագլխի սահմանված բազմապատիկ չափից:

320. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ հիմնելը թույլ է տրվում ժողովրդական տնտեսության այն ճյուղերում միայն, վորանց որենքն ուղղակի այդ թույլ է տալիս (որին. ելեկտրաֆիկացիայի ընկերություններ, պատասխանատու աշխատանքի ընկերություններ և այլն), կամ բանվորա-գյուղացիական կառավարության իրավասու մարմինների հատուկ թույլտվությամբ՝ յուրաքանչյուր առանձին դեպքի համար:

321. Մնացած հարցերի նկատմամբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության կարգը վորոշվում է սահմանված կարգով հաստատված նրա կանոնադրությամբ:

Ծանոթություն.—Ելեկտրականության մատակարարող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության կարգը վորոշվում է որենքով սահմանված հատուկ կանոններով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

5. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ (ՓԱՅԱՏԻՐԱԿԱՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.

322. Բաժնետիրական (փայատիրական) ընկերություններ հիմնելու կարգը, նրանց գումարներ կազմելը, վարչական մարմիններ ստեղծելը, բաժնետերերի իրավունքը, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների գործունեության և դադարման կարգը, վորոշվում են բաժնետիրական ընկերությունների կանոնադրությամբ՝ հաստատված ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1927 թ. օգոստոսի 17-ի վորոշմամբ (հավելված 6), այս Որենսգրքի 323–326 հոդվածներով նախատեսված լրացումներով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

323. Բաժնետիրական (փայատիրական) այն ընկերությունների հիմնական դրամագլուխը, վորոնց գործունեության առարկան ժողովրդական սնունդն է կամ գրավաճառությունը, յեթե այդ ընկերությունների կանոնադրությունների մեջ վորոշակի մատնանշված է ընկերության գործունեության շրջանը, ինչպես նաև այն, թե բաժնետիրական ընկերության գոյության ամբողջ ժամանակ նրա բաժնետոմսերի առնվազն 51 %-ը պետք է պատկանի պետական մարմիններին, կոոպերատիվ և հասարակական կազմակերպություններին,—չի կարող 25,000 ռուբլուց պակաս լինել, իսկ այդ ընկերությունների բաժնետոմսերի անվանական գինը չի կարող 25 ռուբլուց պակաս լինել:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

324. Այն բաժնետիրական ընկերությունների հիմնական դրամագլուխը, վորոնց բաժնետերերը նրանց կանոնադրության համաձայն պետք է լինեն բացառապես գյուղատնտեսական կոոպերատիվ կազմակերպությունները, չի կարող 50,000 ռուբլուց պակաս սահմանվել, իսկ այդ ընկերությունների բաժնետոմսերի անվանական գինը չի կարող 25 ռուբլուց պակաս սահմանվել:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

325. Բաժնետիրական ընկերությունների ձևով հիմնված գրավատների (լոմբարդների) հիմնական դրամագլուխը չի կարող 25,000 ռուբլուց պակաս սահմանվել:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

326. Բաժնետիրական ընկերության հիմնելու թույլտվության տալու, այդ ընկերության կանոնադրությունը հաստատելու և փոփոխելու կարգը, բաժնետիրական ընկերութ. կանոնադր. 12 և 13 հոդվածներով սահմանված բացառություններով, ինչպես նաև բաժնետիրական ընկերության կանոնադրությունը հաստատելու կամ փոփոխելու մասին հայտարարելու կարգը, սահմանվում է ԱՍՖԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. հունվարի 16-ի վորոշմամբ (հավելված 7):

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

327–366 հանված են.

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

XI. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

367. Ապահովագրության պայմանագրով մի կողմը (ապահովադիրը) պարտավորվում է հատուցանելու պայմանավորյալ վճարը (ապահովագինը), իսկ մյուս կողմը (ապահովագրողը) պարտավորվում է պայմանագրով նախատեսված պատահարի դեպքում վճարելու պայմանադրին կամ յերրորդ անձին (օգտատուին) նրանց կրած վնասները պայմանագրով վորոշված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում, յեթե գույք է ապահովագրված, և վճարելու ապահովագրական գումարը, յեթե անձ է ապահովագրված:

368. Գույքը ապահովագրելու դեպքում ապահովագրական գումարը չի կարող ավելի լինել այն ուղղակի վնասներից, վոր ապահովադիրը կամ օգտատուն կարող են կրել պատահարի հետևանքով (ապահովագրական շահ): Կողմնակի վնասները կարող են ապահովագրվել միայն այն չափով, վորչափ այդ թույլ է տրվում ապահովագրության կանոններով:

Անձը ի դեպ բնական մահվան և դժբախտ դեպքերից ապահովագրելիս ապահովագրական գումարը սահմանվում է փոխադարձ համաձայնությամբ, պայմանագիրը կնքելիս:

369. Յեթե գույքը ապահովագրելիս պայմանագրում մատնանշված ապահովագրական գումարն ավելի լինի քան ապահովագրական շահը, պայմանագիրը վավերական է համարվում ապահովագրական շահի սահմաններում միայն, և ապահովագինը համապատասխան չափով նվազեցվում է, սկսած այս հանգամանքը պարզվելուց հետո յեկող ապահովագրական ժամանակաշրջանից: Յեթե ապահովագրական գումարի ավելի լինելը հետևանք է յեղել ապահովադրի խաբեբայության, ապահովագրողը կարող է դատարանի միջոցով պահանջել, վոր պայմանագիրն անվավեր համարվի, այլ և հատուցվեն իր վնասները, յեթե այդ վնասներն ավելի յեն ստացված ապահովագներից. այս դեպքում նա պարտավոր չէ ապահովադրին վերադարձնելու ապահովագները:

370. Յեթե գույքը ապահովագրելիս կողմերը պայմանագրի մեջ ապահովագրական գումարը սահմանել են ապահովագրական շահից պակաս, տարբերության ռիսկն ընկնում է իր, ապահովադրի վրա, իսկ ապահովագրողը պարտավոր է հատուցանելու պատահարի հետևանքով առաջացած վնասների այն մասը միայն, վոր համաչափ է ապահովագրական գումարի և ապահովագրական ամբողջ շահի միջև յեղած հարաբերությանը:

371. Գույքը ապահովագրելիս՝ արդեն ապահովագրված շահի համապատասխան մասը մի այլ ապահովագրողի հետ կնքված

պայմանագրով լրացուցիչ կերպով ապահովագրել թույլ է տրվում միայն այն ապահովագրողի գրավոր համաձայնությամբ, վորն արդեն ապահովագրել է այդ շահի մի մասը: Անվավեր են այն պայմանագրերը, վորոնք կնքված են այս կանոնը խախտելով, իսկ ապահովադրի այդպիսի պայմանագրերի հիման վրա վճարած ապահովագները չեն վերադարձվում, յեթե հաջորդ ապահովագրողը տեղեկություն չի ունեցել դրանից առաջ կնքված ապահովագրության մասին:

372. Յեթե միևնույն ապահովագրական շահի վերաբերմամբ կնքված՝ գույքի ապահովագրության մի քանի պայմանագրերի ապահովագրական գումարների ընդհանուր քանակն ավելի յե այդ շահից (կրկնակի ապահովագրություն), անվավեր է հաջորդ պայմանագրերի այն մասը, վոր վերաբերում է ապահովագրական շահից ավելի գումարին, իսկ վճարված ապահովագները չեն վերադարձվում: Իսկ յեթե ապահովադիրը հետամուտ է յեղել անիրավ և անիրավաստահման շահ ստանալու պատահարի դեպքում, ապա բոլոր կնքված պայմանագրերն անվավեր են, իսկ ապահովագրողները բացի դրանից կարող են պահանջել ապահովադրի նրանց պատճառած վնասների հատուցումը:

373. Գույքի ապահովագրության պայմանագիր կարող է կնքել ամեն մեկը, վոր շահագրգռված է գույքի ամբողջությամբ, այն է՝ գույքի սեփականատերը, գույքի նկատմամբ ընչական կամ վարձակալական իրավունք ունեցողը կամ պայմանագրով գույքի վատթարանալու կամ վոչնչանալու համար պատասխանատու անձը: Պայմանագիր կնքելիս ապահովադիրը պետք է ցույց տա իր և օգտատուի շահի բնույթը:

374. Անձի ապահովագրության պայմանագիրը կարելի յե կնքել ի դեպ ապահովադրի իրեն կամ յերրորդ անձի (ապահովագրված անձի) կյանքի հետ կապ ունեցող պատահարների: Յեթե ի դեպ մահվան ապահովագրված անձն ինքը ապահովադիրը չէ, ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել, այլև օգտատուն կարող է նշանակվել և փոփոխվել (հոդ. 375) միայն ապահովագրված անձի գրավոր համաձայնությամբ:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

375. Յեթե պատահարի դեպքում ապահովագրական գումարը օրենքով կամ պայմանագրով պետք է վճարվի վոչ թե ապահովադրին, այլ մի յերրորդ անձի (օգտատուին), այդ պետք է հիշատակված լինի ապահովագրական անդորրագրի կամ ապահովագրի մեջ:

Անձի ապահովագրության դեպքում օգտառու յեն համարվում.—

ա) այն անձինք, վորոնց մատնանշում է ապահովադիրը ապահովագրության պայմանագիրը կնքելիս, և վորոնց անունը կա ապահովագրի (կամ ապահովագրական անդորրագրի) մեջ՝ վորպես օգտառուներ (անվանական ապահովագիր).

բ) ապահովագիր կամ ապահովագրական անդորրագիր ներկայացնողը, յեթե ապահովագրի ցուցումով ապահովագիրը գրված է վորպես կրելի ապահովագիր (на пред`явителя).

գ) ապահովադրի բառ օրենքի կամ բառ կտակի ժառանգները, յեթե ապահովագրի մեջ հիշատակված է, թե օգտառու յեն հանդիսանում բառ օրենքի կամ բառ կտակի ժառանգները.

դ) պետությունը, յեթե ապահովագրի մեջ օգտառու առհասարակ չի մատնանշված:

Ծանոթություն.—Ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո ապահովադրին է վերապահվում ապահովագրի վրա մակագրություն անելով կամ ապահովագրողին հասցեի հայտարարություն տալով անվանական ապահովագրերը կրելի ապահովագիր դարձնելը և հակառակը, այլ և առաջ նշանակված օգտառուների փոխարեն ուրիշներին նշանակելը: Յեթե օգտառուն նշանակված է անունը ապահովագրի մեջ հիշատակելով կամ ապահովագրի վրա մակագրություն անելով, այդ դեպքում նշանակված օգտառուի փոխարեն ուրիշին նշանակելը թույլ է տրվում միայն նույն ապահովագրի վրա մակագրություն անելով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

375-ա. Անձի ապահովագրության դեպքում օգտառու նշանակելու վրա չեն տարածվում կտակավանդության և նվիրելու համար սահմանված սահմանափակումները: Օգտառու կարող է նշանակվել ամեն մի ֆիզիքական կամ իրավական անձ, և ապահովագրական գումարը տրվում նրան ապահովագրության պայմանագրով վորոշված չափով: Օգտառուին տրվելիք ապահովագրական գումարն ապահովադրի մահից և ապահովագրված անձի մահից հետո ժառանգական գույքի մեջ չի մտնում:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

375-բ. Օգտառուին տրվելիք ապահովագրական գումարի վրա չի կարելի դարձնել ապահովադրի կամ ապահովագրվածի պարտքերի գանձումը, յեթե վերջինը ինքը չէ օգտառուն: Ապահովագրական գումարից ապահովագրողը կարող է հանել ապահովադրից ապահովագրության նույն պայմանագրի համաձայն իրեն հասանելի գումարները:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

375-գ. Անձի ապահովագրության հիման վրա տրվելիք ապահովագրական գումարները և սոցիալական ապահովության ու սոցիալական ապահովագրության կարգով տրվելիք գումարները վորոշվում և վճարվում են միմյանցից անկախ և փոխադարձաբար հաշվակցելի չեն:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

376. Օգտառուի վրա բառ պայմանագրի պարտավորություններ են ընկնում միայն ապահովագրական անդորրագիրը կամ ապահովագիրը նրան հանձնվելուց հետո, յեթե այլ բան չի բխում օրենքի վորոշումներից կամ պայմանագրից:

377. Ապահովագրողը կարող է օգտառուի դեմ անել այն բոլոր առարկությունները, վոր նա ունի ապահովադրի դեմ:

378. Ապահովագրի մեջ պետք է սահմանված լինի, թե վո՞ր ժամանակով է կնքվում պայմանագիրը, կամ՝ այն ժամանակաշրջանները, վորոնց համեմատ պետք է կատարվի ապահովագրի հաշվարկությունը (ապահովագրական ժամանակաշրջան):

379 Ապահովագրության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, հակառակ դեպքում անվավեր է:

380. Պայմանագիր կնքելիս ապահովագրողը ապահովադրին պետք է տա անդորրագիր կամ ապահովագիր, վորոնց մեջ պետք է ցույց տրված լինեն՝

1) ապահովագրողի և ապահովադրի անունը.

2) ապահովագրված (ապահովագրված գույքի կամ անձի) չափը.

3) այն ռիսկը, վորի հանդեպ կնքվում է ապահովագրությունը, կամ այն պատահարը, վորը տեղի ունենալու դեպքում ապահովագրողը պարտավոր է վճարելու ապահովագրական գումարը.

4) ապահովագրության ներգործության սկիզբն ու վախճանը.

5) ապահովագրական գումարը.

6) ապահովավճարը (վճարները), նրանց վճարման պայմանաժամը և տեղը:

Ապահովագրության առանձին տեսակների համար կարող են սահմանվել նաև այլ պարտադիր պայմաններ, վորոնք պետք է մտցվեն անդորրագրի կամ ապահովագրի մեջ:

381. Ապահովագրական անդորրագիրը կամ ապահովագիրը կարող են փոխանցվել ուրիշի՝ միայն առանձին կանոնների հիման վրա, վորոնք սահմանվում են ապահովագրության յուրաքանչյուր առանձին տեսակի համար, բայց համենայն դեպս ապահովագրողը կարող է ապահովագիր կամ ապահովագրական անդորրագիր ունեցող ամեն մարդու դեմ անել այն բոլոր առարկությունները, վոր նա ունի ապահովադրի դեմ:

382. Պայմանագիր կնքելիս ապահովադիրը պարտավոր է ապահովագրողին հայտնել այն բոլոր հանգամանքները, վորոնք էական նշանակություն ունեն պատահարի վտանգը վորոշելու կամ այդ պատահարը տեղի ունենալու հավանականության և կամ նրա տեղի ունենալու հետևանքով (ապահովագրական ռիսկ) առաջանալիք վնասների չափը վորոշելու համար, յեթե այդ հանգամանքները հայտնի յեն յեղել կամ հայտնի պիտի լինեյին ապահովադրին ապահովագրության պայմանագիրը կնքելիս:

Այս տեսակետից էական են համարվում համենայն դեպս այն բոլոր հանգամանքները, վոր ապահովագրողը վորոշակի հիշատակել է ապահովադրին ներկայացրած ապահովագրական կանոնների մեջ, կամ վորոնց մասին ապահովագրողը գրավոր հարցրել է ապահովադրից պարզ և վորոշակի խոսքերով: Յեթե ապահովագրության պայմանագիրը կնքված է առանց ապահովագրողի կողմից գրավոր ձևով առաջադրված հարցերի պատասխանների ստանալու, այդ հանգամանքը չի կարող հետագայում հիմք ծառայել ապահովագրության պայմանագիրը լուծելու:

383. Յեթե ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո հայտնվի, վոր ապահովագրական վտանգը (ռիսկ) վորոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքները իրապես չեն համապատասխանում ապահովադրի հայտարարությանը, այդ դեպքում ապահովագրողը կարող է դատարանի միջոցով պահանջել—թե՛ պատահարից առաջ և թե՛ նրանից հետո—վոր պայմանագիրն անվավեր ճանաչվի: Յեթե այս հանգամանքի մասին ապահովագրողը տեղեկանա պատահարը տեղի ունենալուց առաջ, նա կարող է պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին պահանջ ներկայացնել վոչ ուշ քան յերկու շաբաթվա ընթացքում. հակառակ դեպքում զրկվում է այդ հիման վրա պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջ անելու իրավունքից:

384. Ապահովագրության պայմանագիրն անվավեր է, յեթե կնքվելու ժամանակ ապահովագրված գույքն այլևս գոյություն չունի, կամ արդեն վերացել է ապահովադրի ապահովագրական շահը, և կամ գույքն այլևս յենթակա չէ այն վտանգին, վորից ապահովագրված է, իսկ անձի ապահովագրության դեպքում—նաև՝ յեթե այլևս կենդանի չէ այն անձը, վորի կյանքի հետ կապ ունի պատահարը, կամ յեթե նա այլևս յենթակա չէ պայմանագրով նախատեսված վտանգին:

385. Գույք ապահովագրելիս ապահովադիրը, այլև ոգտառուն—պայմանագրով նախատեսված պարտականությունները նրան փոխանցվելուց հետո—պարտավոր են անհապաղ տեղեկացնելու ապահովագրողին իրենց հայտնի դարձած այն բոլոր զգալի փոփոխությունների մասին, վորոնք տեղի յեն ունեցել պայմանագիրը կնքելիս ապահովագրողին հայտնված հանգամանքների մեջ և վորոնք կարող են էական ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկը մեծանալու վրա: Այս տեսակետից էական են համարվում համենայն դեպս այն բոլոր փոփոխությունները,, վորոնք հիշատակված են ապահովադրին ներկայացված ապահովագրական կանոնների մեջ: Այս պարտականությունը խախտելու դեպքում ապահովագրողը կարող է պահանջել, վոր պայմանագիրը լուծվի, կամ համապատասխան չափով փոփոխվեն նրա պայմանները, ռիսկը մեծանալու պահից սկսած:

386. Յեթե գույք ապահովագրելու դեպքում պայմանագրի ներգործության ժամանակ պայմանագրով չնախատեսված պատճառներով մեծանա ապահովագրական պատահարի վտանգը կամ նրա տեղի ունենալու հավանականությունը (ապահովագրական ռիսկը), այդ դեպքում ապահովագրողը կարող է առաջարկել ապահովադրին, այլ և ոգտառուին—պայմանագրով նախատեսված պարտականությունները նրան փոխանցվելուց հետո—վճարել համապատասխան չափով ավելացրած ապահովագին. իսկ յեթե ապահովադիրը այդ մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո 7 որվա ընթացքում հրաժարվի վճարելուց, ապահովագրողը կարող է պայմանագրի լուծումը պահանջել:

387. Ապահովագրած գույքը ուրիշի փոխանցվելու դեպքում ապահովադիրը կամ գույք ձեռք բերողը պարտական են անհապաղ այդ մասին տեղեկացնելու ապահովագրողին և հայտնելու նրան ձեռք բերողի անունն ու հասցեն:

388. Ապահովագրած գույքը նոր տիրոջ փոխանցվելու մասին ծանուցում ստանալուց հետո ապահովագրողը 7 որվա ընթացքում կարող է լուծել պայմանագիրը, յեթե ինքն ուղղակի կամ անուղղակի կերպով (որ. նոր տիրոջից ապահովագին ընդունելով և այլն) համաձայնություն չի հայտնել ապահովագրության պայմանագրով նախատեսված իրավունքները նոր տիրոջը

փոխանցվելու մասին: Յեթե ապահովագրողը չի ազատվել այս իրավունքից, պայմանագիրը պահում է իր ուժը, և գույք ձեռք բերողն ստանձնում է ապահովադրի բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Յեթե ապահովագրողն ազատվել է հիշյալ իրավունքից, նա պարտավոր է գույք ձեռք բերողին վերադարձնել ստացված ապահովավճարի այն մասը, վոր համապատասխանում է գույքը փոխանցվելու պահից մինչև հաջորդ վճարի ժամկետն ընկնող ժամանակին:

389. Ապահովադիրը պարտավոր է ապահովավճարն ապահովագրողին վճարելու սահմանված պայմանաժամերում և պայմանավորված տեղում:

Մինչև ապահովավճարը վճարելը կամ մինչև նրա առաջին մասի վճարումը, ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ չի մտնում, յեթե այլ բան չի նախատեսված պայմանագրով:

Ապահովադրի հետագա վճարներն ուշացնելու դեպքում ապահովագրողը,—յեթե այլ բան չի բխում պայմանագրից,—ազատվում է ապահովագրական գումարը վճարելու պարտականությունից, յեթե պատահարը տեղի ունենա ժամանակը բաց թողած ապահովավճարը վճարելուց առաջ:

Յեթե տոկոսների չափի մասին համաձայնություն չի յեղել, ապահովագրողը կարող է օրինական տոկոս պահանջել վճարումը ուշացրած ապահովադրի համար:

390. Գույքի ապահովագրության պայմանագրով ապահովադիրը կամ օգտառուն պատահարը տեղի ունենալու դեպքում պարտավոր են անհապաղ կամ համենայն դեպս վորոշյալ պայմանաժամերում և ապահովագրության կանոններում մատնանշված յեղանակով այդ մասին տեղեկացնելու ապահովագրողին: Այս պարտականությունը խախտելու դեպքում ապահովագրողն ազատվում է ապահովագրական գումարը վճարելուց:

391. Նախորդ հոդվածում մատնանշված անձինք նույնպես պարտավոր են—հնարավոր յեղած չափով՝ ապահովագրողի ցուցումների համաձայն—ձեռք առնել իրենց մատչելի բոլոր միջոցները պատահարից առաջացող վնասները նվազեցնելու համար:

Յեթե այդ միջոցները ձեռք են առնված ապահովագրողի ցուցումով, դրա համար կատարված ծախքերը պիտի հատուցանի ապահովագրողը:

392. Ապահովադիրն ու օգտառուն իրավունք չունեն միջոցներ ձեռք առնելու կամ այնպիսի գործողություններ կատարելու, վորոնք կարող են դժվարացնել վնասների իսկական չափի ճշտումը:

393. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական գումարը վճարելուց, յեթե պատահարը տեղի յե ունեցել ապահովադրի կամ օգտառուի չար դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով:

Ապահովագրողն անձի ապահովագրության պայմանագրի համաձայն ապահովագրական գումար վճարելուց ազատվում է հետևյալ դեպքերում.

ա) յեթե պատահարը տեղի ունենա ապահովադրի և կամ միժամանակ ապահովագրված անձը չհանդիսացող օգտառուի չար դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով.

բ) յեթե պատահարը պայմանագիրը կնքելուց հետո առաջին յերկու տարվա ընթացքում տեղի ունենա ապահովագրված անձի չար դիտավորության հետևանքով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

394. Ապահովագրողը պատասխանատու չէ արտաքին կամ քաղաքացիական պատերազմի հետևանքով առաջացած վնասների համար, յեթե այլ բան չի սահմանված պայմանագրով:

395. Ապահովագրական գումարը վճարած ապահովագրողին են փոխանցվում այդ գումարի սահմաններում այն պահանջներն ու իրավունքները, վոր ունի ապահովադիրը կամ օգտառուն յերրորդ անձանց նկատմամբ՝ նրանց կողմից այն վնասները հատուցանելու մասին, վորը ծածկելու համար տրված է ապահովագրական գումարը:

Յեթե ապահովադիրը կամ օգտառուն հրաժարվեն յերրորդ անձանց նկատմամբ ունեցած այդ պահանջից կամ իրավունքից, այդ դեպքում ապահովագրողը համապատասխան չափով ազատվում է ապահովագրական գումարը վճարելու պատասխանատվությունից:

396. Ապահովագրության պայմանագրից բխող բոլոր պահանջների վաղեմության ժամկետը յերկու տարի է:

397. Գույքի ապահովագրության առանձին տեսակների, այն է՝ հրդեհի, անասունների համաճարակի, կարկտահարության դեմ և փոխադրական ապահովագրության, այլ և անձի ի դեպ մահվան, վորոշ ժամանակ ապրելու համար և դժբախտ դեպքերից ապահովագրելու պայմանները վորոշվում են Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հաստատած առանձին կանոնադրություններով և կանոններով:

398. Այս գլխի վորոշումները չեն տարածվում պարտադիր ապահովագրության բոլոր տեսակների վրա, վորչափ նրանց

վերաբերյալ կանոնների մեջ ցուցում չկա այս վորոշումների մասին:

XII. ԱՆՀԻՄՆ ՇԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ).

399. *Առանց օրենքով կամ պայմանագրով սահմանված բավարար հիմքի ուրիշի հաշվին շահվողը պարտավոր է վերադարձնելու անհիմն կերպով ստացածը: Վերադարձնելու պարտավորությունը առաջ է գալիս նաև այն ժամանակ, յերբ անհիմն շահառության հիմքը վերանում է հետագայում:*

400. *Անհիմն շահառուն պարտավոր է վերադարձնելու կամ հատուցանելու այն յեկամուտները, վոր նա ունեցել է կամ պիտի ունենար անհիմն կերպով ստացած գույքից, սկսած այն ժամանակից, յերբ նա իմացել է կամ պիտի իմանար, վոր անհիմն է իր շահառությունը: Նույն այդ ժամանակից նա պատասխանատու յե գույքը վատթարացնելու կամ նրա վատթարացումը թույլ տալու համար: Մինչև այդ ժամանակը նա պատասխանատու յե միայն չար դիտավորության և կոպիտ անփութության համար: Մյուս կողմից շահառուն իրավունք ունի պահանջելու, վոր հատուցվեն գույքի վրա իր արած անհրաժեշտ ծախքերն այն օրվանից, յերբ նա պարտավոր է վերադարձնելու յեկամուտները:*

401. *Հանձնառության կատարողը իրավունք չունի պահանջելու հատուցածը վերադարձնել, յեթե նույնիսկ այդ հանձնառությունը զուրկ լինի հայցի ուժից, բայց անվավեր չլինի օրենքի զորությամբ:*

402. *Ուրիշի հաշվին՝ այդ անձի ապորինի կամ ի վնաս պետության ուղղված գործողության հետևանքով շահվողը պարտավոր է անհիմն կերպով ստացածը վճարելու հօգուտ պետության:*

XIII. ՈՒՐԻՇԻՆ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

403. *Ուրիշի անձին կամ գույքին վնաս հասցնողը պարտավոր է հատուցանելու պատճառած վնասը: Նա ազատվում է այդ պարտականությունից, յեթե ապացուցի, վոր ինքը չէր կարող այդ վնասի առաջը առնել, կամ վոր ինքը իրավազորված է յեղել այդ վնասը հասցնելու, և կամ վոր այդ վնասը առաջացել է տուժողի չար դիտավորությունից կամ կոպիտ անզգուշությունից:*

404. *Այն անձինք ու ձեռնարկությունները, վորոնց գործունեությունը կարող է մեծ չափով վտանգավոր լինել շրջապատողների համար, օր., յերկաթուղիները, տրամվայը, գործարանային ձեռնարկությունները, դյուրավառ նյութեր վաճառողները, վայրի կենդանիներ պահողները, շինություններ կառուցողները և այլն, պատասխանատու յեն այն վնասի համար, վոր առաջացել է մեծ վտանգի աղբյուրից, յեթե չապացուցեն, վոր վնասը հետևանք է յեղել անհաղթահարելի ուժի կամ տուժողի չար դիտավորության կամ կոպիտ անփութության:*

Ծանոթություն.—*Այս հոդվածի վրա հիմնված՝ պետական մարմինների դեմ ուղղված պահանջների դատական վաղեմությունը սահմանափակվում է յերկու տարով և հաշվվում է վնասը հասցնելու օրից: Վաղեմության հիշյալ ժամանակամիջոցի ընթացքը, բացի վաղեմության ժամանակամիջոցի կասեցման ու յերկարացման ընդհանուր հիմունքներից (48 և 49 հոդվածներ) կասեցվում է նաև տուժողի կամ (նրա մահվան դեպքում) նրա խնամքով ապրող անձանց կողմից սոցիալական ապահովագրության համապատասխան մարմնին դիմելու օրից մինչև վերջինի կողմից կենսաթոշակ նշանակելու կամ մերժելու օրը:*

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ).

405. *Անգործունակ անձը, բացի 9-րդ հոդվածով նախատեսված դեպքերից, պատասխանատու չէ իր պատճառած վնասի համար; Նրա փոխարեն պատասխանատու յե նրա վրա հսկելու պարտականություն ունեցող անձը:*

406. *Այն դեպքում, յերբ համաձայն 403–405 հոդվածների վնաս հասցնողը պարտավոր չէ հատուցելու այդ վնասը, դատարանը, այնուամենայնիվ, կարող է նրան պարտավորեցնել վնասը հատուցելու, նայելով նրա և տուժողի անտեսական վիճակին:*

407. *Հիմնարկությունը պատասխանատու յե պաշտոնական անձի պաշտոնեական անկանոն գործողությունների հետևանքով առաջացած վնասների համար, օրենքով հատկապես մատնանշված դեպքերում միայն, այն էլ՝ յեթե պաշտոնյայի գործողությունների անկանոնությունը ճանաչված է դատական կամ վարչական պատշաճ մարմնի կողմից: Հիմնարկությունն ազատվում է պատասխանատվությունից, յեթե տուժողը ժամանակին չի բողոքել անկանոն գործողության դեմ: Մյուս կողմից՝ հիմնարկությունն իրավունք ունի տուժողին արած հատուցումը դնելու պաշտոնյայի վրա:*

408. Միասին վնաս պատճառող անձինք համապարտությամբ պատասխանատու յեն տուժողի առաջ:

409. Մահ պատճառելու դեպքում հատուցումն ստանալու իրավունքը պատկանում է այն անձանց, վորոնք ապրել են մեռնողի ծախքով և ապրուստի այլ միջոցներ չունեն: Թաղման ծախքը պիտի վճարվի այդ ծախքն անողներին:

410. Վնասի հատուցումը պիտի լինի—նախկին վիճակի վերականգնումը, իսկ յեթե այդ վերականգնումն անհնարին է, պիտի հատուցվեն պատճառած վնասները:

411. Վնասի չափը վորոշելիս դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է ուշադրության առնելու տուժողի և վնաս պատճառողի տնտեսական վիճակը:

412. Սոցիալական ապահովագրության կարգով ապահովագրված անձը պատահարը տեղի ունենալու դեպքում բավարարություն է ստանում սոցիալական ապահովագրության մարմնից:

413. Այն անձը կամ ձեռնարկությունը, վորը սոցիալական ապահովագրության կարգով ապահովագրական տուրքեր է վճարում տուժողի համար, պարտավոր չէ հատուցելու պատահարը տեղի ունենալու հետևանքով առաջացած վնասը:

Բայց յեթե վնասը հետևանք է ձեռնարկության հանցավոր գործողության կամ անգործության, տուժողին բավարարող սոցիալական ապահովագրական մարմինն իրավունք ունի ձեռնարկությունից պահանջ ներկայացնելու՝ տուժողին տված նպաստի չափով (հետադարձ պահանջ):

Մատնանշված դեպքում տուժողն իրավունք ունի լրացուցիչ պահանջ ներկայացնելու ձեռնարկությանը, յեթե նա սոցիալական ապահովագրության կարգով վնասի լիակատար հատուցում չի ստանում:

414. Յերբ վնաս պատճառողը տուժողի ապահովադիրը չէ, այդ դեպքում տուժողն իրավունք ունի լրացուցիչ պահանջ ներկայացնելու վնաս պատճառողին, յեթե նա սոցիալական ապահովագրության կարգով վնասի լիակատար հատուցում չի ստանում: Սոցիալական ապահովագրության մարմինը իրավունք ունի վնաս պատճառողին պահանջ ներկայացնելու տուժողին տված նպաստի չափով (հետադարձ պահանջ):

415. Չապահովագրված անձը վնաս պատճառողից չի կարող ավելի հատուցում պահանջել, քան այն, ինչ վոր կարող էր ստանալ ապահովագրվածը սոցիալական ապահովագրության մարմնից և վնաս պատճառողից 414-րդ հոդվածի կարգով:

Այս դեպքում տուժող անձը հավասարեցվում է բանվորների և ծառայողների համապատասխան կատեգորիային, նայելով նրա տնտեսական վիճակին և սոցիալական ոգտակարության աստիճանին, վորը վորոշվում է դատարանի հայեցողությամբ:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

416. Թույլատրվում է ժառանգել ըստ որենքի և ըստ կտակի:
(ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1926 թ. հունվարի 29-ի վորոշումը. Որ. Հավ. 1926 թ. № 6, հոդ. 37):

Ծանոթություն.—Հանված է:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

417. Հանված է.

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

418. 416-րդ հոդվածում մատնանշված հիմունքներով ժառանգելու յեն կոչվում միայն ուղիղ գծով իջնող ժառանգները (զավակներ, թոռներ և ծոռներ) և մեռնողից հետո կենդանի մնացած ամուսինը, այլ և այն աշխատունակ և չքավոր անձինք, վորոնց մեռնողը իր ծախքով պահել է իր մահից առաջ առնվազն մի տարի:

Ծանոթ.—Ժառանգ կարող են լինել ժառանգատուի մահվան պահին կենդանի յեղողները, այլ և նրա կենդանության ժամանակ հղացված և նրա մահվանից հետո ծնված զավակները:

419. Ըստ որենքի ժառանգելը տեղի յէ ունենում բոլոր դեպքերում, յերբ և վոր չափով այդ չի փոփոխված կտակով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

420. Ըստ որենքի ժառանգելու դեպքում ժառանգական գույքը հավասար չափաբաժիններով բաշխվում է 418-րդ հոդվածում մատնանշված բոլոր անձանց միջև:

421. 418-րդ հոդվածում թված անձերից նրանք, ովքեր ապրել են մեռածի հետ միասին, տնային կահավորման և գործածության վերաբերյալ գույք են ստանում, բացի շքեղության առարկաներից, չհաշվելով մեռածի գույքից 420-րդ հոդվածի համաձայն նրանց հասնելիք բաժինը:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

422. Կտակ համարվում է վորևէ անձի կողմից ի դեպ մահվան գրավոր կերպով արած այն կարգադրությունը, վորով գույ-

քը պետք է հանձնվի 418–րդ հոդվածում մատնանշվածներից մեկ կամ մի քանի անձերի, կամ պետք է բաշխվի այդ անձանց մի քանիսի կամ բոլորի միջև այլ կարգով, քան նախատեսված է 420–րդ հոդվածի մեջ:

Ծանոթություն.—Կտակարարը կարող է զրկել ըստ օրենքի ժառանգելու իրավունքից 418–րդ հոդվածում մատնանշված անձերից մեկին, մի քանիսին կամ բոլորին: Այս դեպքում ժառանգական գույքն ամբողջությամբ կամ մասամբ անցնում է պետության՝ 433–րդ հոդվածի կարգով:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20–ի վորոշման խմբագրությամբ).

423. Կտակարարը կարող է կտակով ժառանգական գույքը ստացողի վրա պարտավորություն դնել կատարելու վորևէ հանձնառություն հօգուտ օրինական ժառանգներից մեկի, մի քանիսի կամ բոլորի (հոդ. 418), վորոնք այդ կարգադրության զորությամբ իրավունք են ստանում ըստ օրենքի ժառանգ հանդիսացողից պահանջելու համապատասխան պարտավորության կատարումը:

424. Թույլատրվում են կտակներ, վորոնցով կտակարարը ժառանգելու յե կոչում օրինական ժառանգներից վորևէ այլ մեկին (հոդ. 418), այն դեպքում, յերբ կտակի մեջ նշանակված ժառանգը մեռել է նախքան ժառանգության բացվելը, կամ չի ընդունել ժառանգությունը:

425. Կտակը պետք է ստորագրված լինի կտակարարի կողմից և ներկայացված նոտարիատին՝ նոտարական մատյանի մեջ մուծելու համար:

Կտակարարի ստորագրության փոխարեն՝ անգրագետների կտակները նրանց փոխարեն ստորագրում է յերրորդ անձը:

Նոտարական մատյանի քաղվածքը փոխարինում է իսկական կտակը:

426. Հետո կազմված կտակը վերացնում է նախորդը, վորչափ նախորդի մեջ չեն մնում այնպիսի կարգադրություններ, վորոնք չեն նախատեսված հետագա կտակում: Կտակարարը կարող է վոչնչացնել կտակը առանց նոր կտակ կազմելու, այս մասին անելով նոտարական կամ դատական հայտարարություն, վորը պետք է մուծվի նոտարական մատյանի կամ դատական արձանագրության մեջ:

427. Կտակի գործադրությունը դրվում է նրա մեջ նշանակված ժառանգների վրա, յեթե կտակարարն իր կտակում վորոշ անձի—կտակակատարի չի հանձնել իր կամքի կատարումը: Այս

դեպքում պահանջվում է կտակակատարի համաձայնությունը բուն կտակի վրա, կամ—նրան կցված առանձին հայտարարությամբ:

428. Մասնավոր անձերի կամ մասնավոր անձերի ու պետական հիմնարկությունների միջև՝ ժառանգելի գույքի գնահատության, բաժանման և հաշվետվության կարգի վերաբերյալ անհամաձայնություններն ու վեճերը լուծում է դատարանը:

429. Յեթե ժառանգության բացված վայրում գտնվող ժառանգը ժառանգական գույքի պահպանության համար միջոցներ ձեռք առնելու օրից հետո 3 ամսվա ընթացքում պաշտոնապես չհայտնի, վոր ինքը հրաժարվում է ժառանգությունից, նա համարվում է ժառանգությունն ընդունած:

Հրաժարվածի բաժինն անցնում է պետության:

Ներկա չեղող ժառանգները կարող են ստանձնել ժառանգական գույքի կառավարումը, առանց սպասելու մյուս ժառանգների գալուն, վորոնք ժամանակին գալով՝ կարող են պահանջել իրենց բաժինը ժառանգական գույքից:

430. Ժառանգության բացման վայրից բացակայող ժառանգները կարող են ժառանգական գույքն ընդունել կամ անձամբ կամ փոխանորդների միջոցով՝ ժառանգական գույքի պահպանության համար միջոցներ ձեռք առնելու օրից վեց ամսվա ընթացքում:

Ծանոթություն.—Ժառանգության բացման պահին դեռ չծնված ժառանգի բաժինը նրա ծնվելուց հետո յերեք ամսվա ընթացքում կարող է պահանջել նրա օրինական ներկայացուցիչը:

431. Ժառանգները հայտարարությամբ կամ այլ յեղանակներով չեն կանչվում, բայց ժառանգության բացված վայրի ժողովրդական դատարանը ժառանգության պահպանության համար միջոցներ է ձեռք առնում ժառանգատուի մահվան մասին տեղեկություն ստանալուց հետո անհապաղ: Ժառանգության պահպանությունը տևում է մինչև ժառանգների ներկայանալը, բայց վեց ամսից վոչ ավելի:

Ծանոթ. 1.—Ժառանգատուի վերջին բնակավայրի քաղաքացիական կացության ակտերի արձանագրության մարմինը ժառանգատուի մահվան մասին տեղեկություն ստանալուն պես պարտավոր է անհապաղ հաղորդել այդ մասին համապատասխան ժողովրդական դատարանին:

Ծանոթություն 2.—Ժառանգության բացման տեղը համարվում է ժառանգատուի վերջին բնակավայրը:

432. Գործող ձեռնարկության (առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ և արհեստանոցներ) ժառանգների

բացակայության դեպքում դատարանը նշանակում է հատուկ պատասխանատու հոգաբարձու պետական այն մարմնի առաջարկությամբ, վորի տեսչության տակ են գտնվում համապատասխան ձեռնարկություններն ու արհեստանոցները:

433. Յեթե ժառանգները ժառանգական գույքի պահպանության համար միջոցներ ձեռք առնելու պահից մինչև վեց ամիս չներկայանան, այլև յեթե ժառանգները հրաժարվեն ժառանգությունից (բացի 424-րդ հոդվածով նախատեսված դեպքից), ժառանգությունը համարվում է անժառանգ և անցնում է պետության համապատասխան մարմինների տնօրինության տակ:

434. Ժառանգությունն ընդունած ժառանգը, այլ և պետությունը, վորին անցել է անժառանգ գույքը, պատասխանատու յեն ժառանգության վրա ընկնող պարտքերի համար, բայց միայն ժառանգության գույքի իսկական արժեքի սահմաններում:

Ծանոթություն.—Ժառանգատուի պարտատերերը իրենց պահանջները պարտավոր են հայտնելու պահպանության համար միջոցներ ձեռք առնելու օրից 6 ամսվա ընթացքում, հակառակ դեպքում կորցնում են իրենց պահանջի իրավունքը:

435. Ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգելու կոչված անձինք կարող են տեղական նոտարական գրասենյակից խնդրել իրենց ժառանգական իրավունքը հաստատող վկայական:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1928 թ. հոկտեմբերի 3-ի վորոշման խմբագրությամբ).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1 (12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ)

ՄԵԿԻՆ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՒՅՔԻՑ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՆԵՐԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՎՈՐՈՇՄԱՄԲ ՄԵՌԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Մեկին դատական վորոշմամբ բացակա ճանաչելը, բացի անհայտ բացակայության դեպքից, տեղի յե ունենում նաև այն դեպքերում, յերբ մեկը կորչում է պատերազմի ժամանակ կամ այնպիսի հանգամանքներում, վորոնք յենթադրել են տալիս, թե նա մահացել է վորոշ պատահարից:

2. Մեկին բացակա ճանաչողը պետք է լինի կորածի վերջին բնակավայրի (Քաղաքաց. Օրենսգրքի 11 հոդված) ժողովրդական դատավորը:

3. Մեկին դատական կարգով բացակա ճանաչելու մասին, բացի բացակայի գույքից ապրուստ պահանջելու իրավունք ունեցողներից, կարող են միջնորդել անհայտացածի պարտատերերը և պետական իշխանության ներկայացուցիչները:

4. Դատարանը, յեթե խնդրատուի հայտարարությունն արժանահավատ է համարում, հարցնում է բացակայի մերձավորներից, վորոնք կարող են տեղեկություն ունենալ նրա վորտեղ լինելու մասին, և նրա բնակատեղի պաշտոնյաներից և ապա իր շենքում հայտարարություն է կախ տալիս բացակայի դատարան հրավիրելու մասին. Նույնպիսի հայտարարություն և նույն նպատակով դատարանն ուղարկում է իր գտնված վայրում, բացակայի վերջին բնակավայրում, նրա ծննդավայրում և նախկին արձանագրված վայրում գտնվող քաղաքացիական կացության ակտերի արձանագրությունների և ոստիկանական ապահովության բաժիններին:

Ծանոթություն.—Ծանուցագրված անձանց իրավունք է տրվում հիշյալ հայտարարությունն անմիջականորեն զետեղելու պարբերական մամուլի պաշտոնական օրգաններում իրենց հաշվին:

5. Հայտարարությունը պետք է պարունակի—1) այն անձի անունը, ազգանունը, մականունը, հասակը և զբաղմունքը, վորին բացակա հայտարարելու մասին միջնորդություն է հարուցված, 2) առաջարկություն բացակայողին՝ ներկայանալու դատարանին կամ տեղեկություն տալու իր գտնված վայրի մասին և 3) հրավեր բացակայի գտնված տեղի կամ մահվան մասին տեղեկություն ունեցող բոլոր անձանց՝ այդ մասին դատարանին հայտնելու:

6. Յեթե դատարանում հայտարարություն կախ տալու օրից մի ամսվա ընթացքում ստույգ տեղեկություն չստացվի այն անձի գտնված տեղի կամ մահվան մասին, վորին բացակա հայտարարելու մասին միջնորդություն է

հարուցված, դատարանը քննության համար դռնբաց նիստ է նշանակում, դատարան կանչելով մեղադրողին, մեղադրության մեջ մասնանշված վկաներին, այլև այն անձանց, վորոնց դատարանը հարկավոր է համարում հարցաքննել, և վորոշում է անում:

Ծանոթություն.—Այս կանոնադրությամբ նախատեսված գործերը քննում են ժողովրդական դատարանները Քաղ. Դատավար. Օրենսգրքի 192 հոդ. կարգով:

7. Դատարանը մեկին անհայտ բացակա ճանաչելու մասին վորոշում անելուց հետո հայտարարում է այդ մասին այս կանոնադրության 4 հոդ. կարգով:

8. Դատարանը իր արած վորոշման մասին անհապաղ տեղեկություն է տալիս Քաղաքացիական կացության ակտերի արձանագրությունների այն մարմնին, վորտեղ կենտրոնացած են բացակա հայտարարված անձի վերաբերյալ տեղեկությունները:

Ծանոթություն.—Յեթե դատարանին հայտնի չէ, թե վոր մարմնում՝ է ամրագրված բացակա ճանաչված անձը, այլև յեթե այդ անձը ամրագրված է յեղել այնպիսի վայրի վորևէ հիմնարկության մեջ, վոր հիմա ԽՍՀ Միության կազմի մեջ չի մտնում, դատարանը իր արած վորոշման մասին տեղեկություն է տալիս բացակա հայտարարվածի վերջին բնակատեղի քաղաքացիական կացության ակտերի արձանագրությունների մարմնին:

9. Ամուսնությունների և ծնունդների արձանագրության մարմինները այս կանոնադրության հրատարակելուց հետո անհապաղ մատյաններ են պատրաստում զատական կարգով բացակա ճանաչվածներին արձանագրելու համար:

10. Արձանագրությունները մատյանի մեջ պետք է մուծվեն մեկին անհայտ բացակա կամ կորած ճանաչելու վորոշման մասին դատարանից տեղեկություն ստանալուց հետո անհապաղ:

11. Քաղաքացիական կացության ակտերի մատյանները բաց են բոլոր շահագրգռված անձանց համար, վորոնք իրավունք ունեն այդ մատյաններից վավերացված քաղվածքներ ստանալու:

12. Քաղաքացիական կացության ակտերի արձանագրության մարմինը մեկին բացակա ճանաչելու յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ ու համենայն դեպս արձանագրելուց վոչ ուշ քան յերկու որ հետո տեղեկություն է տալիս բացակա հայտարարվածի վերջին բնակավայրի գավառային կամ գավառական գործադիր կոմիտեյին կամ բանվորական ու գյուղացիական պատգամավորների քաղաքային խորհրդին:

13. Ժողովրդական դատավորը մեկին անհայտ բացակա ճանաչելու վորոշում անելուց հետո բացակա ճանաչվածի գույքի պահպանության մի-

ջոցներ ձեռք առնելու կարգադրություն է անում և անհրաժեշտ յեղած դեպքում՝ այդ գույքի խնամակալ է նշանակում:

14. Մեկին անհայտ բացակա ճանաչելու վորոշում անելուց և այդ մասին այս կանոնադրության 7 հոդվածի կարգով հայտարարելուց հետո՝ այս կանոնադրության 3-րդ հոդվածում մասնանշված անձանց իրավունք է վերապահվում հայց ներկայացնելու բացակա ճանաչվածի գույքից, գոյություն ունեցող օրենքների ընդհանուր հիմունքներով:

15. Յեթե մեկին անհայտ բացակա ճանաչելու մասին դատարանում հայտարարության կախ տալու որից հինգ տարի անցնելուց հետո անհայտացածը չվերադառնա և իր գտնված տեղի մասին տեղեկություն չտա, շահագրգռված անձինք ու հիմնարկությունները իրավունք ունեն բացակայողին մեռած ճանաչելու հայց հարուցանելու դատարանի առաջ:

Ծանոթություն.—Յեթե դատարանի՝ մեկին բացակա ճանաչելու վորոշումը տեղի յե ունեցել նրա մահը անկասկած վորոշ պատահարից առաջացած լինելու հանգամանքների յենթադրությամբ, այս հոդվածում մասնանշված ժամանակը կրճատվում է մինչև վեց ամիս, հաշված մեկին անհայտ բացակա ճանաչելու մասին դատարանում հայտարարության կախ տալու որից:

16. Մեկին մեռած ճանաչելու վորոշում անելու համար դատարանը վերստին հարցնում է այն բոլոր տեղերից ու անձերից, վորոնք կարող են տեղեկություն տալ անհայտացածի գտնված տեղի մասին, և կրկին հայտարարություն է կախ տալիս և ուղարկում է կախ տալու համար 4 հոդ. կարգով:

17. Յեթե դատարանում հայտարարությունը կախ տալու որից հետո մի ամսվա ընթացքում ստույգ տեղեկություններ չստացվեն այն անձի գտնված տեղի կամ մահվան մասին, վորին մեռած հայտարարելու մեղադրությունն է հարուցված, դատարանը դռնբաց նիստ է նշանակում գործը քննելու համար, դատարան կանչելով մեղադրողին, մեղադրության մեջ նշանակված վկաներին, այլև այն անձանց, վորոնց դատարանը հարկավոր է համարում հարցաքննել, և վորոշում է անում:

18. Դատարանը մեկին մեռած ճանաչելու վորոշում անելուց հետո նորից միևնույն կարգով հայտարարություններ է կախ տալիս այդ մասին:

19. Դատարանի՝ մեկին մեռած ճանաչելու վորոշումը անհապաղ հաղորդվում է քաղաքացիական կացության ակտերի 8 հոդվածում մասնանշված մարմնին մահերի արձանագրության մատյանի մեջ մուծելու համար, հիշատակելով, թե հիշյալ տեղեկությունները մուծվում են մատյանի մեջ, ի նկատի ունենալով դատարանի վորոշումը մեռած ճանաչելու մասին և մասնանշելով դատարանի անունը, վորոշման թվականն ու համարը:

20. Դատարանի կողմից մեռած հայտարարված անձի մահվան որն է համարվում դատարանի վորոշման օրինական ուժ ստանալու օրը:

21. Մեռած հայտարարված և դատական կարգով մեռած ճանաչվելուց հետո ներկայացած անձն իրավունք ունի ստանալու մնացած ամբողջ գույքը, անկախ իր ներկայանալու ժամանակից, բացի այն դեպքերից, յերբ դատարանը հարգելի չի համարել չներկայանալը:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

1924 թ. ապրիլի 24-ին. Յերևան.

(ՀՍԽՀ Օր. և Կարգ. Ժող., 1924 թ., № 9. հոդ. 31).

ՀԱՎԵԼՎԱԾ 2 (19-ա ՀՈԴՎԱԾԻ)

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Ֆիրմայի վերաբերյալ կանոնադրությունը կիրարկության դնելու մասին.

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշում են.

1. Ֆիրմայի մասին այս թվին հաստատված կանոնադրությունը կիրարկության մեջ դնել այն հրապարակելու օրից մի ամիս անցնելուց հետո:

2. Հանձնարարել դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին 1 հոդ. մեջ մատնանշված ժամանակամիջոցում հանրապետությունների օրենսդրությունը համապատասխանեցնել ֆիրմայի մասին հաստատված կանոնադրության հետ և հրապարակել հիշյալ կանոնադրությունը կիրարկության դնելու հետևանքով իրենց ուժը կորցրած օրենքների ցանկը:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ
ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղարի Տեղակալ՝ Ն. ՊԱԽՈՄՈՎ

Մոսկվա—Կրեմլ.

1927 թ. հունիսի 22-ին (ԽՍՀՄ Օր. Ժող., 1927 թ. № 40. հոդ. 394):

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ

1. Պետական ձեռնարկության ֆիրման պետք է պարունակի ցուցմունք նրա գործունեության առարկայի մասին, պետական այն մարմնի մասին, որի անմիջական տնօրինության տակ նա գտնվում է, և ձեռնարկության տեսակի մասին (տրեստ, սինդիկատ, պետառ և այլն):

2. Կոոպերատիվ կազմակերպության պատկանող ձեռնարկության ֆիրման պետք է ցուցմունք պարունակի իր գործունեության առարկայի և կոոպ. կազմակերպության տեսակի (սպառողական, արհեստագործական, գյուղատնտեսական և այլն) մասին, իսկ յեթե կոոպերատիվ կազմակերպությունը կոոպերատիվների միությունն է հանդիսանում, ապա՝ բացի դրանից, նույնպես և ցուցում այդ միացման աստիճանի մասին (նահանգական, մարզային, շրջանային և այլն):

3. Բաժնետիրական (փայատիրական) ընկերության կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիրման պետք է ցուցմունք պարունակի ձեռնարկության գործունեության և ընկերության տեսակի մասին («բաժնետիրական ընկերություն», «փայատիրական ընկերություն», «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» կամ կրճատված՝ «բաժն. ընկ.», «սպ. ընկ.» և այլն):

4. Լիակատար ընկերության կամ կոմանդիտ ընկերության պատկանող ֆիրման պետք է ցուցումներ պարունակի ձեռնարկության գործունեության առարկայի, ընկերության տեսակի («լիակատար ընկերություն», «կոմանդիտ ընկերություն» կամ կրճատված՝ «լ. ընկ.», «կոմ. ընկ.»), ինչպես և ընկերության անսահմանափակ պատասխանատվությամբ մասնակիցների ազգանունները և լրիվ կամ սկզբնատառերով գրված անուններն ու հայրանունները:

Լիակատար ընկերության մեջ ընկերության յերկուսից ավելի մասնակից, իսկ կոմանդիտ ընկերության մեջ ընկերության յերկուսից ավելի անսահմանափակ պատասխանատվությամբ մասնակից լինելու դեպքում՝ թույլատրվում է ֆիրմայի մեջ ցույց տալ ընկերության անսահմանափակ պատասխանատվությամբ մասնակիցներից յերկուսին միայն, հետևյալ բառերն ավելացնելով. «և ընկերություն», կամ կրճատված՝ «և ընկ.»:

5. Միանձնյա տիրոջ կամ իրավական անձի իրավունք վայելող ընկերության ձևով չմիացած մի քանի անձանց պատկանող ձեռնարկության ֆիրման պետք է պարունակի ձեռնարկության գործունեության առարկան, ինչպես և տերերի ազգանունները և լրիվ կամ սկզբնատառերով գրված նրանց անուններն ու հայրանունները:

Յեթե համատերերը յերկուսից ավելի յեն, ապա ֆիրմայի մեջ կարող են ցույց տրվել յերկու համատերերի ազգանունները, ավելացնելով հետևյալ բառերը «և համատերեր»:

6. 1—5 հոդվածների մեջ մատնանշված ձեռնարկությունների ֆիրման, բացի այդ հոդվածների մեջ հիշված ցուցումներից, պետք է այնպիսի ցուցումներ պարունակի, վորոնք անհրաժեշտ են այդ ձեռնարկությունը ուրիշ միատեսակ ձեռնարկություններից զանազանելու համար (հատուկ անուն, համար և այլն):

7. Բացի 1—6 հոդվածների մեջ թված նշումներից՝ ֆիրմայի մեջ կարող են մտցվել և այլ նշումներ, վորոնց թվում նաև ֆիրմայի կրճատված անունը:

Չի թույլատրվում ֆիրմայի մեջ այնպիսի նշումներ մտցնել, վորոնք կարող են մոլորության մեջ գցել:

Այն բնակելի վայրերի անունները փոփոխելու դեպքում, վորոնց անունները մտցված են ֆիրմայի մեջ, վերջինս ինքնաբերաբար փոփոխվում է:

8. Ֆիրմայի վերաբերյալ իրավունքը գործարքներ կնքելիս այն ցուցանակների, հայտարարությունների, ռեկլամների, բլանկների, հաշիվների, ձեռնարկության ապրանքների, նրանց ծրարումների վրա և այլ դեպքերում ֆիրմայի անունից բացառապես օգտվելու իրավունքն է:

Բացառապես օգտվելու հիշյալ իրավունքը տարածվում է ֆիրմայի կրճատված անվան վրա այն պայմանով միայն, վոր այդ մտցվի ֆիրմայի լրիվ անվան մեջ (7 հոդ.):

9. Ձեռնարկության՝ հասարակության համար բացված յուրաքանչյուր հաստատություն (խանութ, գրասենյակ և այլն) աչքի ընկնող տեղում պետք է մակագրություն ունենա ֆիրմայի լրիվ անվան նշումով: Մնացած դեպքերում թույլատրվում է օգտվել ֆիրմայի ինչպես լրիվ, նույնպես և կրճատված անունից:

10. Ֆիրմայի իրավունքը ծագում է այն պահից, յերբ փաստորեն սկսվել է ֆիրմայից օգտվելը, այն պայմանով, վոր նա համապատասխանի այս վորոշման պահանջներին: Ֆիրմայի անունը յենթակա չէ հատուկ ամրագրության, անկախ ձեռնարկության ամրագրությունից:

11. Յուրաքանչյուր անձ, ով այս վորոշման հիման վրա ֆիրմայի իրավունք ունի, դատական կարգով կարող է պահանջել, վոր այլ անձանց կողմից դադարեցվի նման կամ համանման ֆիրմայից օգտվելը, ինչպես և հատուցվեն այդ ձևով օգտվելուց առաջացած վնասները, յեթե նրա՝ ֆիրմայի իրավունքը ուրիշներից շուտ է առաջացել, և յեթե ֆիրմաների նմանության կամ համանմանության պատճառով նրանց շփոթման հնարավորություն է առաջանում:

12. Ֆիրմայի իրավունքը չի կարող տարվել ձեռնարկությունից առանձին:

Ձեռնարկությունը նոր տիրոջ փոխանցվելու դեպքում՝ վերջինս կարող է ձեռնարկության նախկին ֆիրմայից օգտվել նախկին տիրոջ կամ նրա իրավահաջորդների համաձայնությամբ միայն, և այն պայմանով միայն, վոր ֆիրմայի անվան մեջ ցույց տրվի հաջորդական կապի մասին:

13. Ֆիրմայի իրավունքը դադարում է իր իսկ՝ ձեռնարկության դադարումով, կամ՝ ձեռնարկությունը նոր տիրոջ փոխանցվելուց հետո, բացառությամբ 12 հոդ. յերկրորդ մասում նախատեսված դեպքերի:

14. Այս կանոնադրության կանոնները խախտողները պատասխանատվության են յենթարկվում համաձայն դաշնակից հանրապետությունների օրենսդրության:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ
ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղարի Տեղակալ՝ Ն. ՊԱԽՈՄՈՎ

Մոսկվա—Կրեմլ.

1927 թ. հունիսի 22-ին (ԽՍՀՄ Օր. ժող., 1927 թ. № 40, հոդ. 395):

ՀԱՎԵԼՎԱԾ 3 (22 ՀՈԴՎԱԾԻ ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ)

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

Պետական գույքի ստարման պայմանների և կարգի մասին

1927 թ. ապրիլի 20-ին.

1. Զգործող պետական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների ստարումը թույլ է տրվում ամբողջ կազմով կամ մի մասով այն դեպքում, յերբ անկարելի է նրանց նպատակահարմար օգտագործումը. և կամ յերբ անհրաժեշտ է անհամաչափ խոշոր ծախսեր անել նրանց պահպանության և նորոգության համար:

2. Այս որոշման 1 հոդ. հիշված պետական-արդյունաբերական ձեռնարկությունները կարող են ստարվել հօգուտ կոոպերատիվ կազմակերպությունների անկախ այդ ձեռնարկություններում զբաղված բանվորների թվից, իսկ հօգուտ մասնավոր ֆիզիքական և իրավական անձանց կարող են ստարվել միայն այնպիսի ձեռնարկությունները, որոնց շահագործման համար պահանջվում է վարձու բանվորների այնպիսի քանակություն, որը չի գերազանցում սեփականության իրավունքով մասնավոր անձանց պատկանող ձեռնարկությունների համար հատուկ օրենքներով թույլ տրվող քանակությունից:

Ծանոթություն.—Խառն բաժնետիրական ընկերությունները ստարվող պետական արդյունաբերական ձեռնարկություններ ձեռք բերելու դեպքում օգտվում են մասնավոր անձանց իրավունքներից, որչափ կանոնադրություններով նրանց իրավունքներին ավելի մեծ ծավալ չի տրված:

3. Զգործող պետական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների (1 հոդ.), ինչպես և ամեն տեսակ պետական կառուցվածքների, շենքերի, սավառնակների և գետնամասերի ստարումը, բացառությամբ 5 հոդ. նախատեսվածների, թույլ է տրվում ոչ այլ կերպ, քան՝

ա) տեղական խորհուրդներին պատկանող գույքերի վերաբերմամբ— համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի թույլտվությամբ:

բ) ՀՍԽՀ համապատասխան մարմինների տնօրինության տակ գտնվող համահանրապետական նշանակություն ունեցող գույքի վերաբերմամբ՝ Տնտեսական Խորհրդակցության թույլտվությամբ՝ համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի առաջարկությամբ.

գ) ԱՍՖԽՀ մարմինների տնօրինության տակ գտնվող գույքի վերաբերմամբ—Գերագույն Տնտեսական Խորհրդի թույլտվությամբ՝ ԱՍՖԽՀ համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի առաջարկությամբ.

դ) Համամիութենական մարմինների տնօրինության տակ գտնվող գույքի վերաբերմամբ—Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի թույլտվությամբ՝ ԽՍՀ Միության համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի առաջարկությամբ:

4. Արդյունաբերական ձեռնարկությունների սարք ու կարգի ստարումը, յերկաթուղիների շարժական կազմի, ծովային և գետային նավերի և սավառնակների (Տես. Որ. 22 հոդ. «գ» և «դ» կետեր) ստարումը թույլ է տրվում այն դեպքում, յեթե հիշյալ գույքերը հնացած և անպետք վիճակում են, կամ չեն կարող բավարար չափով օգտագործվել իրենց նպատակի համար և կամ կառուցվածքի հնացած պատճառով փոխարինվում են ավելի կատարելագործվածներով:

Ծանոթություն.—Սարք ու կարգ չեն համարվում կենդանի ինվենտարը, ուժանդակ իրերը և գործիքները:

5. Ամեն տեսակ կառուցվածքների և շենքերի ստարումը (Տես. Որ. 22 հոդ. «ե» «զ» և «ը» կետեր) թույլ է տրվում այն դեպքում, յեթե նրանք հնացած և անպետք վիճակում են.

6. Այս կանոնների 4 և 5 հոդ. հիշված գույքի ստարումը թույլ է տրվում.

ա) տեղական խորհուրդների գույքի վերաբերմամբ—գավառական գործադիր կոմիտեի կողմից.

բ) ՀՍԽՀ մարմինների տնօրինության տակ գտնվող համահանրապետական նշանակություն ունեցող պետական գույքի վերաբերմամբ—ՀՍԽՀ համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի կողմից.

գ) ԱՍՖԽՀ մարմինների տնօրինության տակ գտնվող գույքի վերաբերմամբ—ԱՍՖԽՀ համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի կողմից.

դ) Համամիութենական մարմինների տնօրինության տակ գտնվող գույքի վերաբերմամբ—ԽՍՀ Միության համապատասխան Ժողովրդական կոմիսարիատի կողմից:

7. Քանդված և վերանորոգության կարոտ պետական, ինչպես նաև օրենքով սահմանված չափից ավելի տարածություն չունեցող շենքերի ստարման պայմաններն ու կարգը որոշվում է առանձին օրենքներով: Առանձին օրենքներով են որոշվում նաև պետական հողային գույքերի կազմի մեջ մտնող գույքի ստարման պայմաններն ու կարգը:

8. Գործող արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես և 4 հոդ. հիշված պայմանների բացակայության դեպքում՝ ծովային նավերը կարող են ստարվել ի սեփականություն հասարակական և կոոպերատիվ կազմակերպությունների և մասնավոր անձանց ոչ այլ կերպ, քան այն կարգով և այն պայմաններով, որոնք սահմանվում են յուրաքանչյուր առանձին դեպքում ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշումներով ըստ պատկանելույն:

9. Այն ձեռնարկությունը կամ հիմնարկությունը, որի տնօրինության տակ է գտնվում օտարման յենթարկվող գույքը, կազմում է այդ գույքի ցուցակը և գնահատում է այն: Այդ ցուցակն ու գնահատությունը ներկայացվում են այն համապատասխան մարմնին, որից այս կանոնների համաձայն կախված է տվյալ տեսակի գույքի օտարման թույլտվությունը, և միաժամանակ խնդրվում է պատշաճ թույլտվություն:

Օտարումը թույլ տվող մարմինը սահմանում է այն գինը, որից ցած չի կարող վաճառվել ցուցակում նշանակված գույքը:

10. Այս կանոնների 3, 4 և 5 հոդվածներում հիշված պետական գույքի վաճառքը կատարվում է հրապարակական աճուրդով, ի բաց առյալ.

ա) այս կանոնների 9 հոդ. կարգով հազար ռուբլուց պակաս գնահատված գույքը.

բ) այն բոլոր գույքերը, որոնց վաճառքի ուշացման հետևանքը կարող է լինել նրանց քայքայումը:

11. Պետական գույքը վաճառելու համար հրապարակական աճուրդ կատարելու կանոնները, որքան նախատեսնում են նաև չկայացած աճուրդի հետևանքները, սահմանվում են՝ համամիութենական նշանակություն ունեցող գույքի համար—ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, ԱՍՖԽՀ գույքի համար—ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, իսկ հանրապետական և տեղական նշանակություն ունեցող գույքի համար—ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Յերևան.

(ՀՍԽՀ Օրենք. և Կարգ. Ժող., 1927 թ. № 6, հոդ. 45):

ՀԱՎԵԼՎԱԾ 4 (69 ՅԵՎ 70 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ)

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՅԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳՐԱՎՄԱՆ ՅԵՎ ԿՈՆՖԻՍԿԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

11 մայիսի 1924 թ.

Ի զարգացումն ՀՍԽՀ Քաղաքացիական Օրենսգրքի 69 և 70 հոդվածների:

1. Որևէ գույք կարելի յե բռնագրավել կամ կոնֆիսկացիայի յենթարկել միայն այս հրահանգով նախատեսված կարգով:

2. Բռնագրավումը—մասնավոր անձանց և ընկերությունների գույքի վճարովի հարկադիր օտարումն է կամ վճարով ժամանակավորապես նրանց ձեռքից առնելը, որ կատարում է պետությունը պետական անհրաժեշտության դեպքում:

3. Գույքի բռնագրավումը տեղի յե ունենում բացառիկ դեպքերում և միայն ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշումներով, որ ի կատար են ածում պատշաճ քաղգավգործկոմները կամ գավգործկոմները:

4. Այս հրահանգի 3-րդ կետի համաձայն բռնագրավվող գույքի համար հատուցվող վարձատրության չափը որոշում են քաղգավգործկոմների կամ գավգործկոմների, Անդրֆինժողկոմատի լիազորի և Բանկյուղաեսչության ներկայացուցիչներից կազմված գնահատու հանձնաժողովները՝ գույքը տիրոջից առնելու պահին յեղած շուկայի միջին գներով:

Ծանոթություն 1.—Վարձատրությունը հատուցում են այն քաղգավգործկոմները կամ գործկոմները կամ այն գերատեսչությունները, որոնց տնօրինության է հանձնվում օտարված կամ ժամանակավորապես բռնագրաված գույքը, վերջինը փաստորեն առնելուց հետո ոչ ուշ քան մի ամսվա ընթացքում:

Ծանոթություն 2.—Բռնագրավվող գույքի տիրոջ համաձայնությամբ դրամական հատուցումը կարելի յե փոխարինել այլ առարկաներով:

5. Կոնֆիսկացիան—գույքի անվճար հարկադիր օտարումն է, որ պետությունը կիրառում է որպես պատիժ համաձայն դատարանների վճիռների, այլ և Արտակարգ Հանձնաժողովի վճիռների՝ այն գործերի համար, որոնց վերաբերմամբ Հանձնաժողովին դատավճիռներ կայացնելու իրավունք է վերապահված, նմանապես և վարչական այն է՝ մաքսային, ակցիզային, մենաշնորհության և փոստային մարմինների կարգադրությամբ:

Ծանոթություն.—Կոնֆիսկացիա անող իշխանության մարմինները կոնֆիսկացիան որպես պատիժ կիրառելու դեպքում՝ պարտա-

վոր են թողնել գրավվող գույքի տիրոջը կամ նրա ընտանիքի անդամներին մանր տնայնագործության կամ գյուղատնտեսական արտադրության ինվենտարը, վորը ծառայում է վորպես ապրուստի միջոց նրանց համար, կամ վոր անհրաժեշտ է դատապարտյալի պրոֆեսիոնալ աշխատանքի համար, յեթե նա դատավճռով զրկված չէ իր արհեստով պարապելու իրավունքից, այլ և դատապարտյալի ու նրա ընտանիքի գործածության համար անհրաժեշտ առարկաները վոչ պակաս քան վեց ամսի հաշվով:

6. Ստորև մատնանշված առարկաները, յեթե նրանց պահելու թույլտվություն չկա, անպայման պիտի հանձնվեն պետությանը ձրիաբար և յերևան հանելու դեպքում յենթարկվում են կոնֆիսկացիայի, իսկ պահողները յենթարկվում են քրեական պատասխանատվության.

ա) ամեն տեսակ ռազմական հրացանները.

բ) պայթուցիկ նյութերը.

գ) զինվորական սպառազինությունն ու հանդերձանքը.

դ) ոդագնացության ապարատները.

ե) հեռագրական և ռադիո-հեռագրական գույքը.

Ծանոթություն.—Այն անձինք, վորոնք պատշաճ մարմինների կողմից սահմանված ժամանակին կամովին հանձնում են այս հոդվածում մատնանշված առարկաները, ազատվում են քրեական պատասխանատվությունից:

7. Մաքսային, ակցիզային, մենաշնորհության և փոստային հիմնարկությունները կոնֆիսկացիայի յեն յենթարկում այն առարկաները, վորոնք մատնանշված են հիշյալ հիմնարկությունների կանոնադրություններում և այդ կանոնադրություններով նախատեսված դեպքերում ու կարգով:

8. Կոնցեսիոն ձեռնարկությունների գույքը կարող է բռնագրավվել կամ կոնֆիսկացիայի յենթարկվել բացառապես կոնցեսիոն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

9. Բռնագրավման ու կոնֆիսկացիայի ամեն մի դեպքում գույքը տիրոջ ձեռքից առնելիս կազմվում է հատուկ արձանագրություն, վոր պիտի պարունակի՝

ա) արձանագրության կազմելու ժամանակն ու տեղը.

բ) բռնագրավող կամ կոնֆիսկացիայի յենթարկող անձի պաշտոնը, անունն ու ազգանունը և նրա լիազորությունը.

գ) մատնանշում այն օրինական հիմքի, վորով կատարվում է բռնագրավումը կամ կոնֆիսկացիան.

դ) գույքի տիրոջ անունը, ազգանունը, բնակարանը և գույքի գտնված տեղը.

ե) գույքի մանրամասն ու ճիշտ ցուցակը, նրա կշիռը, չափը և ինչպես ծրարված լինելը.

զ) ո՞ւմ է գույքը պահ տված, կամ ո՞ւմ է հանձնված գույքի տնորինությունը:

Արձանագրությունն ստորագրում են պաշտոնյան, գույքի տերը, պահողը և յերկու կողմնակի վկա, և պատճենը տրվում է գույքի տիրոջը:

10. Այս հրահանգի հիման վրա բռնագրավումից թաքցրած կամ կոնֆիսկացիայի յենթակա գույքը յերևան հանելու դեպքում մեղսակցի մարմինների ձեռքով արգելք է դրվում այդ գույքի վրա: Արգելադրության մասին միլիցիան արձանագրություն է կազմում այս հրահանգի 3-րդ կետի կարգով և անհապաղ ուղարկում է պատշաճ դատական կամ վարչական հիմնարկությանը:

11. Կոնֆիսկացիայի յենթարկված առարկաները հանձնվում են տվյալ կարգի առարկաների ոգտագործումը տնորինող պետական մարմիններին:

12. Այս հրահանգի կանոնները խախտող պաշտոնյաները յենթարկվում են պատասխանատվության դատական կարգով: Սրանից անկախ՝ ապորինի բռնագրավումից կամ կոնֆիսկացիայից նյութական վնաս կրողն իրավունք ունի պահանջելու, վոր իրեն վերադարձվի ապորինաբար տարած գույքը, կամ հատուցվեն իր վնասները, հայց ներկայացնելով ժողովրդական դատարանին պետական իշխանության այն մարմնի դեմ, վորի ներկայացուցիչները ապորինի կոնֆիսկացիա կամ բռնագրավում են կատարել:

Ժամ. պաշտ. Արդարադատության Ժողովրդական
Կոմիսարի՝ Լ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Որենսդրական յենթադրությունների բաժնի
Վարիչ՝ Ա. ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

Յերևան.

(ՀՍԽՀ Օր. և Կարգ. Ժող. 1924 թ., № 9, հոդ. 34):

ՀԱՎԵԼՎԱԾ 5 (235 հոդվածի)

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Պետական կապալների և մատակարարումների կանոնադրությունը կիրարկության դնելու մասին.

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.

1. Հաստատել պետական կապալների և մատակարարումների կանոնադրությունը:

2. 1-ին հոդ. հիշված կանոնադրությունը կիրարկության դնելուց հետո վերացնել.—

ա) պետական կապալների և մատակարարումների՝ 1923 թ. հուլիսի 27-ին հաստատված կանոնադրությունը (ԽՍՀ Միության ԿԳԿ, ԺԿԽ և ԱՊԽ Համբավաբեր 1923 թ. № 3, 54 հոդ.) այս վորոշման 3-րդ հոդ. մեջ մատնանշված բացառությունով.

բ) ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1924 թ. սեպտեմբերի 12-ի վորոշումը՝ պետական կապալների և մատակարարումների վերաբերյալ կանոնադրության 1-ին հոդ. 3 ծանոթությունը և 2 հոդվածը փոփոխելու մասին (ԽՍՀ Միության Օրենք. Ժող. 1924 թ. № 11, հոդ. 105).

գ) ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1924 թ. նոյեմբերի 21-ի վորոշումը՝ պետական կապալների և մատակարարումների կանոնադրությունը փոփոխելու մասին (ԽՍՀ Միության Օրենք. Ժող. 1924 թ. № 26, հոդ. 221).

դ) ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926 թ. ապրիլի 2-ի վորոշումը՝ պետական կապալների և մատակարարումների կանոնադրությունը լրացնելու մասին (ԽՍՀ Միության Օրենք. Ժող. 1926 թ. № 27, հոդ. 165).

ե) ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1923 թ. օգոստոսի 7-ի հրահանգը՝ պետական կապալների և մատակարարումների հրապարակային աճուրդի կարգի մասին (ԽՍՀ Միության ԿԳԿ, ԺԿԽ և ԱՊԽ Համբավաբեր—1923 թ. № 13, հոդ. 354).

զ) ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1927 թ. ապրիլի 22-ի վորոշումը՝ պետական հիմնարկությունների միջև կնքված կապա-

լի (մատակարարման) պայմանագրերի մեջ տուժանք մտցնելու մասին (ԽՍՀ Միության Օրենք. Ժող. 1927 թ. № 22, հոդ. 249):

3. Մինչև պատշաճ մարմինների կողմից այն հրահանգները հրատարակելը, վորոնք նախատեսված են պետական կապալների և մատակարարումների այս թվով հրատարակված կանոնադրության 7 հոդվածով, պահպանել կապալի և մատակարարման պայմանագրերի հաստատման այն կարգը, վոր նախատեսված է պետական կապալների և մատակարարումների 1923 թ. հուլիսի 27-ին հաստատված կանոնադրության 2 հոդվածով—1924 թ. սեպտեմբերի 12 խմբագրությամբ (ԽՍՀ Միության Օրենք. Ժող. 1924 թ. № 11, հոդ. 105):

4. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին մտցնել այդ հանրապետությունների օրենսդրության մեջ այն փոփոխությունները, վորոնք բղխում են 1 հոդ. հիշված կանոնադրությունից:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ.
ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղար՝ ~~Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ~~.
ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ.

Մոսկվա-Կրեմլ,
1927 թ. մայիսի 11-ին, (ԽՍՀՄ Օր. Ժող. 1927 թ. № 28, հոդ. 291).

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԱԼՆԵՐԻ ՑԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ.

ՀԱՏՎԱԾ I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ.

1. Պետական կապալի պայմանագրի համաձայն կապալառուն պարտավորվում է իր ռիսկով վորոշ աշխատանք կատարելու պետական հիմնարկության կամ ձեռնարկության (պատվեր տվողի) պատվերով, իսկ պատվեր տվողը պարտավորվում է պատվերը կատարելու համար վճարելու պայմանավորյալ վարձատրությունը:

2. Պետական մատակարարման պայմանագրի համաձայն մատակարարը (վաճառողը) պարտավորվում է պետական հիմնարկությանը կամ ձեռնարկությանը (գնորդին) նշանակված ժամկետին հանձնելու տեսակային հատկանիշներով վորոշված իրերի (ապրանքների) պայմանավորյալ քանա-

կությունը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունելու գրանք և վճարելու պայմանավորյալ գինը:

3. Այս կանոնագրությունը չի տարածվում՝

ա) այն կապալի (մատակարարման) պայմանագրերի վրա, վորոնց կապալառուն (մատակարարը) հանդիսանում է պետական մարմինը.

բ) այն մատակարարման պայմանագրերի վրա, վորոնց ապրանքը մատակարարելու պայմանավորյալ ժամանակամիջոցը յերկու շաբաթից չի գերազանցում՝ հաշված պայմանագիրը կնքելու օրից.

գ) 5000 ռուբլուց վոչ ավելի գումարի կապալի և մատակարարման պայմանագրերի վրա:

Ծանոթություն.—Պետական կապալների և մատակարարումների հրապարակային աճուրդներ կատարելու վերաբերյալ կանոնները, վորոնք կցված են այս կանոնագրությանը, տարածվում են այն պետական մարմինների վրա, վորոնք աճուրդներին մասնակցում են իբրև մրցակիցներ:

4. Պետական կապալների ու մատակարարումների վերաբերյալ կողմերի հարաբերությունները այն բոլոր հարցերում, վորոնք չեն նախատեսված այս կանոնագրությամբ, կարգավորվում են դաշնակից հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի այն վորոշումներով, վորոնք վերաբերում են կապալին և առուծախին:

ՀԱՏՎԱԾ II.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԱԼՆԵՐ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

5. Պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունները 10,000 ռուբլուց ավելի գումարի կապալներն ու մատակարարումները 6 հոդ. սահմանված բացառություններով հանձնում են հրապարակային աճուրդների միջոցով, հակառակ դեպքում պայմանագիրն անվավեր է: Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին իրավունք է վերապահվում՝ նայած տեղական պայմաններին, կապալների ու մատակարարումների վերոհիշյալ առավելագույն գումարը ավելացնելու, բայց 25,000 ռուբլուց վոչ ավելի:

Հրապարակային աճուրդի կարգը վորոշվում է այս կանոնագրությանը կցված կանոններով (հավելված 1):

6. Ի բացառություն 5 հոդվածի կապալներն ու մատակարարումները կարելի յե հանձնել առանց հրապարակային աճուրդի հետևյալ դեպքերում.—

ա) յեթե հիշյալ պայմանագրերը կնքվում են պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների կողմից ամեն տեսակի և աստիճանի կոոպերատիվ կազմակերպությունների կամ պետական կամ կոոպերատիվ կա-

պիտալի գերակշիռ մասնակցությամբ գործող բաժնետիրական (փայատիրական) ընկերությունների հետ.

բ) առևտրական (տնտեսավարական) հիմունքներով գործող պետական հիմնարկությունների համար այն դեպքերում, 1) յերբ կապալի կամ մատակարարման պայմանագրի առարկան մտնում է նրանց ընթացիկ արտադրական կամ առևտրական գործունեյության շրջանի մեջ, կամ 2) յերբ նրանք ազատվում են հրապարակային աճուրդ կազմակերպելուց՝ յուրաքանչյուր անգամ այն հիմնարկության հատուկ թույլտվությամբ, վորի անմիջական տեսչության տակ են գտնվում այդ ձեռնարկությունները.

գ) տարերային աղետների դեպքում, իսկ հաղորդակցության ճանապարհների վրա՝ նաև ճանապարհները հանկարծակի փչանալու դեպքում, յերբ կապալների ու մատակարարումների նպատակն է՝ պայքարել հիշյալ աղետների դեմ կամ ճանապարհները վերականգնել.

դ) յերբ հայտարարված աճուրդը չի կայացել:

7. Առևտրական (տնտեսավարական) հիմունքներով գործող պետական ձեռնարկությունների, նույնպես և յերկաթուղիների վարչությունների կնքած կապալի և մատակարարման պայմանագրերը վերադաս մարմինների կողմից հաստատելու կարգը վորոշվում է նրանց կանոնադրություններով կամ ԽՍՀ Միության կամ դաշնակից հանրապետության համապատասխան դերատեսչության հրահանգներով, ըստ պատկանելույն:

Համապետական բյուջեյի միջոցներով պահվող պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից կնքված կապալի և մատակարարման պայմանագրերը հաստատելու կարգը վորոշվում է ԽՍՀ Միության կամ դաշնակից հանրապետության համապատասխան դերատեսչության հրահանգներով, ըստ պատկանելույն, համաձայնության գալով համապատասխան ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի հետ:

Տեղական բյուջեյի միջոցներով պահվող մարմինների կողմից կնքված կապալի և մատակարարման պայմանագրերը հաստատելու կարգը սահմանվում է ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների, յերկրային, մարզային, նահանգական և շրջանային (окр. (գործադիր կոմիտեների հրահանգներով, ըստ պատկանելույն:

Հրահանգների մեջ պետք է նախատեսված լինեն պայմանագրերը հաստատելու ժամանակամիջոցներ, վորոնք 150,000 ռուբլուց ավելի արժեք ունեցող պայմանագրերի համար չպետք է գերազանցեն մեկ ամսից, իսկ 150,000 ռուբլուց վոչ ավելի արժեք ունեցող պայմանագրերի համար՝ յերկու շաբաթից:

Յեթե պատվեր տվողը (գնորդը) պայմանագրի մասնանշված ժամանակամիջոցում հաստատվելու կամ չհաստատվելու մասին տեղեկություն չտա, պայմանագիրը համարվում է ուժի մեջ մտած:

8. Այն դեպքերում, յերբ 7 հոդ. համաձայն կապալի կամ մատակարար-

ման պայմանագիրը չենթակա յե հաստատման վերադաս մարմինների կողմից, կապալառուն (մատակարարը) իրավունք չունի պայմանագրի հաստատման համար սահմանված ժամանակամիջոցի ընթացքում (7 հոդ. 4-րդ մաս) հրաժարվելու պայմանագրի իր ընդունած պայմաններից և պահանջելու, վորպեսզի նրանք փոփոխվեն:

9. Պայմանագրի հաստատումը մերժվելու դեպքում անուրդին մասնակցելու համար կապալառուի (մատակարարի) մուծած ապահովությունը վերադարձվում է նրան անուրդ կատարող պետական մարմնի կողմից պայմանագիրը չհաստատվելու մասին ծանուցում ստանալու պահից յերկու որվա ընթացքում:

ՀԱՏՎԱԾ III.

ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԱԼԻ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ.

10. Արգելվում է կապալառուին հասանելիք վարձատրությունը վորոշել՝ աշխատանքը կատարելու ընթացքում կապալառուի կատարած ծախքերի վրա վորոշ տոկոս ավելացնելու ձևով, հակառակ դեպքում պայմանագիրն անվավեր է:

11. Պետական կապալը (մատակարարումը) կատարվելու ընթացքում կապալառուի մոտ աշխատանքներ կատարող անձանց աշխատավարձը վորոշած ժամկետին չվճարելու դեպքում պատվեր տվողը (գնորդը) իրավունք ունի հիշյալ անձանց, նրանց պահանջը անվիճելի լինելու դեպքում, բավարարելու կապալառուին (մատակարարին) հասանելիք գումարներից:

Բացի դրանից, մասնավոր կապալառուների և մատակարարների վերաբերմամբ համապատասխան դեպքերում կիրառվում է ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926 թ. դեկտեմբերի 17-ի «Պետական կապալներ և մատակարարումներ կատարող մասնավոր անձանց և ձեռնարկությունների մոտ աշխատող բանվորների, ծառայողների և գյուղացիների աշխատավարձի և նրանց սոցիալական ապահովագրության տուրքի կանոնավոր վճարումը ապահովելու միջոցների մասին վորոշումը» (ԽՍՀ Միության Օրենք. Ժող., 1926 թ., № 77, հոդ. 426):

12. Պատվեր տվողի կողմից մատակարարված նյութերը վատորակ լինելու դեպքում կամ աշխատանքի դիմացկունությունը կամ պիտանիությունն սպառնացող՝ կապալառուից չկախված այլ պարագաներ յեղած դեպքում կապալառուն պարտավոր է ժամանակին գրավոր ձևով նախազգուշացնել այդ մասին պատվեր տվողին, այլապես նա պատասխանատու յե այն վնասների համար, վոր պատվեր տվողը կարող է կրել հիշյալ պարագաների հետևանքով, իսկ պատվեր տվողը պարտավոր է իր կողմից նշանակված հանձ-

նաժողովի միջոցով ստուգել այդ հայտարարության մեջ պարունակված տվյալների իսկությունը:

13. Պատվեր տվողը (գնորդը) կարող է կապալառուին (մատակարարին) կանխավճար տալ այն կազմակերպչական նախապատրաստական ծախքերի համեմատ, վորոնք իրոք պահանջվում են կապալի (մատակարարման) պայմանագիրը իրագործելու համար, սակայն պայմանագրի գնի 25 տոկոսից վոչ ավելի չափով: Յերբ կապալառու (մատակարար) յեն հանդիսանում պետական կամ կոոպերատիվ կապիտալի մասնակցությամբ գործող բաժնետիրական (փայատիրական) ընկերությունները, նմանապես և ամեն տեսակի ու աստիճանների կոոպերատիվ կազմակերպությունները, պատվեր տվողը (գնորդը) իրավունք ունի ավելացնելու տրվող կանխավճարի գումարը պայմանագրի գնի 25 տոկոսից ավելի չափով, այն պայմանով, վոր պայմանագրի գնի 25 տոկոսից գերազանցող կանխավճարի գումարը լրիվին ապահովված լինի գրավականով:

Այն դեպքում, յերբ անհրաժեշտ է հում նյութերի մթերումները կատարել հիմնական (և՛ ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի կամ դաշնակից հանրապետությունների առևտրի ժողովրդական կոմիսարիատների վորոշմամբ նրանց հավասարեցված) մթերողների միջոցով՝ մատակարարման պայմանագրեր կնքելով սկզբնական կոոպերատիվների և մանր մատակարարների հետ, գնորդը կարող է 10,000 ռուբլուց վոչ ավելի արժեք ունեցող մատակարարումների դեպքում կանխավճար տալ պայմանագրի գնի 25 տոկոսից ավելի չափով, առանց կանխավճարի գումարը գրավականով ապահովելու:

ՀԱՏՎԱԾ IV.

ԿԱՊԱԼԱՌՈՒԻ (ՄԱՏԱԿԱՐԱՐԻ) ԿՈՂՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԸ

14. Կապալառուի (մատակարարի) կողմից կապալի (մատակարարման) պայմանագրի իրագործումը ապահովելու համար պետք է գրավական մուծվի պայմանագրի գնի առնվազն 10%-ի չափով: Գրավատու կարող է լինել ինչպես կապալառուն (մատակարարը), նույնպես և այլ անձինք:

Պետական կապալների ու մատակարարումների պայմանագրերի իրագործումը գրավականով ապահովելու կարգի վերաբերյալ կանոնները կցվում են այս կանոնագրությանը (Հավելված 2):

15. 14 հոդ. նախատեսված գրավականը ներկայացնելուց կարող են ազատվել պատվեր տվողի (գնորդի) հայեցողությամբ պետական կամ կոոպերատիվ կապիտալի գերակշիռ մասնակցությամբ գործող բաժնետիրական (փայատիրական) ընկերությունները, նույնպես և կոոպերատիվ կազմակերպությունները՝ շրջանացման չենթարկված վայրերում ռայոնական, նահանգական կամ նրան համապատասխանող ծավալից վոչ ցած, և շրջանացման յենթարկված վայրերում—շրջանային (ОКРУЖН.) ծավալից վոչ ցած:

15. Հոդ. 3-րդ մասով նախատեսված դեպքերում գրավական ներկայացնելուց կարող են ազատվել սկզբնական կոոպերատիվները, նույնպես և այն մանր մատակարարները, որոնք հանդիսանում են մատակարարվող հում նյութի անմիջական արտադրողներ:

Ծանոթություն.—Դաշնակից հանրապետությունների օրենսդրության կարգով պարտադիր գրավականից կարող են ազատվել բացի այս հոդվածում հիշվածներից՝ նաև ուրիշ կոոպերատիվ կազմակերպություններ:

16. Կապալի պայմանագիրը լրիվ կամ մասնակի կերպով չիրագործելու համար կապալառուից տուժանք է գանձվում պայմանագրի գնի 10%-ի չափով: Մատակարարի կողմից պայմանագիրը չիրագործելու դեպքում նրանից տուժանք է գանձվում մատակարարության չիրագործված մասի գնի 10%-ի չափով: Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի և նրա մարմինների կողմից կնքված մատակարարման պայմանագրերը չիրագործելու համար մատակարարից տուժանք է գանձվում պայմանագրի գնի 10%-ի չափով, պայմանագիրը ինչպես ամբողջությամբ, նույնպես և մասամբ չիրագործելու դեպքում:

Այս հոդվածի առաջին մասով սահմանված տուժանքի չափը կարող է ավելացվել կողմերի համաձայնությամբ. պայմանագրի մեջ տուժանքի ավելի փոքր չափ սահմանելը համարվում է անվավեր, և այդպիսի դեպքերում կիրառվում է այս հոդվածի առաջին մասը:

Կապալառուի (մատակարարի) կողմից պայմանագրի իրագործման պայմանաժամն անցկացնելու դեպքում ուշացման ամեն մի օրվա համար նրանից տուժանք է գանձվում պայմանագրի իրագործված մասի գնի $^{1}/_{15}$%-ի չափով, յեթե պայմանագրի մեջ տուժանքի այլ չափ չի սահմանված:

Կապալի պայմանագրի կատարումը 30 օրից, իսկ մատակարարման պայմանագրի կատարումը 15 օրից ավելի ուշացնելը համարվում է պայմանագրի չիրագործում, նրանից բղխող բոլոր հետևանքներով: Կողմերին իրավունք է վերապահվում սահմանելու կատարման ուշացումը պայմանագրի չիրագործում համարելու նաև այլ ժամանակամիջոցներ:

17. Անճշտապահ կապալառուից (մատակարարից) պատվեր տվողը (գընորդը) գանձում է միաժամանակ վնասները և տուժանքը:

18. Տուժանքը կարող է զիջվել բավարար հիմքեր յեղած դեպքում:

Այն պայմանագրերի վերաբերմամբ, որոնք յենթակա չեն վերադաս մարմինների կողմից հաստատվելու (7 հոդ.), տուժանքը կարող է զիջվել ամբողջովին կամ մասամբ՝ անմիջապես պատվեր տվողի (գնորդի) կողմից: Մնացած դեպքերում տուժանքը կարող է զիջվել ոչ այլ կերպ, քան այն մարմնի թույլտվությամբ, որի կողմից հաստատված է պայմանագիրը:

Ծանոթություն.—Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի մարմինների կողմից կնքված կապալի և մատակարարման պայմանագրերի վերաբերյալ տուժանքները զիջելու կարգը սահմանում է Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը:

ՀԱՏՎԱԾ V.

ԻՐԱԳՈՐԾՎԱԾԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ.

19. Կապալի և մատակարարման պայմանագրերի համաձայն իրագործվածը ընդունելու ժամանակ (ինչպես մասամբ, նույնպես և վերջնականապես) պատվեր տվողը (գնորդը) պարտավոր է կազմելու ընդունման մանրամասն ակտ կամ պայմանագրի իրագործումը հաստատող այլ փաստաթուղթ, որի վրա նշանակվում է ընդունման վերջին օրը, և որի պատճենը անհապաղ հանձնվում է կապալառուին (մատակարարին):

Պայմանագրին իրագործելու ընթացքում հետզհետե կապալառուին (մատակարարին) հասնելիք, նմանապես և վերջնական հաշվարկության հետևանքով հասանելի վճարումները չեն կարող տեղի ունենալ մինչև այն հաշիվները ներկայացնելը, որոնք հաստատված պիտի լինեն ընդունման ակտերով կամ պայմանագրի իրագործումը վկայող այլ փաստաթղթերով:

20. Կապալառուն (մատակարարը) պարտավոր է կապալը (մատակարարումը) վերջանալու կամ իրեն պայմանագրի իրագործումից հեռացնելու օրից սկսած ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնել վերջնական հաշիվ արդարացուցիչ փաստաթղթերով, իսկ շինարարական կապալի վերաբերմամբ—նաև կատարողական նախահաշիվ:

Պատվեր տվողը (գնորդը) պարտավոր է վերջնական հաշիվը, արդարացուցիչ փաստաթղթերը, իսկ համապատասխան դեպքերում նաև կատարողական նախահաշիվը ստանալու օրից սկսած ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ստուգել այդ ամենը, կազմել վերջնական հաշիվ և վերջինի պատճենը հանձնել կապալառուին (մատակարարին):

Յեթե վերջնական հաշիվն ստանալու օրից սկսած մի ամսվա ընթացքում կապալառուն (մատակարարը) առարկություն չի ներկայացնում, այն ժամանակ վերջնական հաշիվը համարվում է ընդունված:

Վերոհիշյալ բոլոր ժամանակամիջոցները կողմերի համաձայնությամբ կարող են յերկարացվել կամ կրճատվել:

21. Վերջնական հաշվի պատճենը (20 հոդ.) կապալառուին (մատակարարին) հանձնելուց հետո և կապալառուի կողմից պատվեր տվողին (գնորդին) այն մասին ապացույց ներկայացնելուց հետո, որ կապալի (մատա-

կարգադրման) իրագործման ընթացքում նրա մոտ աշխատած բանվորների ծառայողների և գյուղացիների հաշիվը լրիվին փակված է, 14 հոդ. համաձայն մացված գրավականը պատվեր տվողը (գնորդը) վերադարձնում է ամբողջապես կամ նրա վերջնական հաշվարկության մեջ սահմանված մասը անհապաղ, յեթե պայմանագրի մեջ այլ ժամանակամիջոց չի նախատեսված:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ.

ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղար՝ ~~Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ~~

Մոսկվա—Կրեմլ.

1927 թ. մայիսի 11-ին.

(ԽՍՀՄ Որ. ժող. 1927 թ. № 28, հոդ. 292).

Հավելված 1—Պետական կապալների և մատակարարումների կանոնադրության.

ԿԱՆՈՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Կապալ (մատակարարում) հանձնող պետական մարմինը պարտավոր է՝

ա) մշակել առաջարկվող կնքվելիք պայմանագրի նախագիծը.

բ) մշակել աշխատանքներ կատարելու տեխնիկական պայմանները, իսկ անհրաժեշտության դեպքում—պատրաստելու նմուշներ և մշակելու արտադրելիք նյութերի, շինվածքների (издел) և աշխատանքների մանրամասն նկարագրությունը. շինարարական աշխատանքները կապալով տալու դեպքում պետք է կազմել նաև նախնական նախահաշիվներ աշխատաչափերի կանոնադրության (урочн. пол.) նորմաների և այլ համապատասխան նորմաների հիման վրա.

գ) նախօրոք ծանուցում անելու (հոդ. 2) առաջիկա աճուրդների մասին հայտարարությունների միջոցով, թույլ տալով աճուրդներին մասնակցել բոլոր ցանկացողներին կամ միայն վորոշ պայմանների բավարարող անձանց (4 հոդ.):

2. Այն դեպքում, յերբ կապալի (մատակարարման) յենթադրական գինը 100.000 ռուբլուց չի գերազանցում, աճուրդի մասին հայտարարվում է բանավոր մրցությունը սկսվելուց առնվազն 7 որ առաջ մեկ անգամ մամուլի այն պաշտոնական օրգանի մեջ, վորը վորոշվում է համապատասխան դաշնակից հանրապետության կառավարության կողմից, իսկ Մոսկ-

վայում տեղի ունենալիք աճուրդների մասին—մեկ անգամ ԽՍՀՄ ԿԳԿ և ՀԿԳԿ օրգան «Իզվեստիայի» մեջ:

Յերբ կապալի (մատակարարման) յենթադրական գինը գերազանցում է 100.000 ռուբլուց, հայտարարությունը տպվում է բանավոր մրցությունը սկսվելուց առնվազն 14 որ առաջ մեկ անգամ մամուլի այն պաշտոնական օրգանի մեջ, վորը վորոշվում է համապատասխան հանրապետության կառավարության կողմից, և մեկ անգամ ԽՍՀ Միության ԿԳԿ և ՀԿԳԿ օրգան «Իզվեստիայի» մեջ, իսկ Մոսկվայում տեղի ունենալիք աճուրդների մասին հայտարարվում է մեկ անգամ ԽՍՀ Միության ԿԳԿ և ՀԿԳԿ օրգան «Իզվեստիայի» մեջ:

Ծանոթություն.—Այս կանոնների 2 հոդ. մատնանշված ժամանակամիջոցները կարող են յերկարացվել դաշնակից հանրապետությունների օրենսդրության կարգով:

3. Հայտարարության մեջ պետք է ցույց տրված լինի՝

ա) աճուրդը հայտարարող պետական մարմնի անունը.

բ) աճուրդի առարկան (կապալի կամ մատակարարման առարկաների տեսակը, քանակն ու վորակը).

գ) կապալի (մատակարարման) նախնական գինը.

դ) կնքած ծրարները, հեռագրերը և գրավոր բաց հայտարարությունները հանձնելու տեղը.

ե) բանավոր մրցության տեղն ու ժամանակը (ճիշտ վորոշված ժամը).

զ) հիմնարկության կամ ձեռնարկության մեջ պայմանագրի նախագիծը, ծրագրերը, նախահաշիվները և նմուշները, նմանապես և արտադրելիք նյութերը և աշխատանքների մանրամասն նկարագիրը և նրանց կատարման տեխնիկական պայմանները (1 հոդ.) դիտելու ժամանակը.

ը) աճուրդին մասնակցելու համար պահանջվող ապահովության չափը.

թ) հատուկ պայմանները՝ համաձայն այս կանոնների 4 հոդվածի:

4. Կապալը (մատակարարումը) աճուրդով հանձնող պետական հիմնարկությունը իրավունք ունի մրցության մասնակցել թույլ տալ բոլոր ցանկացողներին, կամ սահմանել պայմաններ, վորոնց պետք է բավարարեն մրցակիցները, ինչպես օրինակ՝ այն կատեգորիան, վորին պետք է պատկանի մրցակիցը (պետական մարմին, կոոպերատիվ կազմակերպություն և այլն), նրա վարկունակության և վորձառության հատկանիշներն ու աստիճանը, դրանից առաջ բարեխիղճ կերպով կատարած աշխատանքների մասին պետական մարմինների հանձնարարականները և այլն:

5. Հրապարակային աճուրդ է համարվում՝

ա) բանավոր մրցությունից առաջ գնի առաջարկությամբ կնքված ծրարներ, հեռագրեր կամ գրավոր բաց հայտարարություններ տալը.

բ) հայտարարության մեջ վորոշված ժամկետին բանավոր մրցության կազմակերպելը:

Կնքված ծրարներ, հեռագրեր կամ գրավոր բաց հայտարարություններ

թվով անձանց համար բանավոր մրցությանը ներկա լինելը պարտադիր չէ: Բանավոր մրցությունից առաջ կնքված ծրարներ, հեռագրեր կամ գրավոր բաց հայտարարություններ տվող անձինք չեն կարող բանավոր մրցությանը ներկա լինել:

6. Սակարկել ցանկացող ամեն մեկը պետք է անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով մինչև բանավոր մրցությունը սկսվելը ներկայացնի կամ փոստով ուղարկի ձեռնարկությանը, վորտեղ պետք է տեղի ունենա աճուրդը՝

ա) անձնագիրը կամ նրա վավերացված պատճենը բացառությամբ այն դեպքերի, յերբ սակարկողը անձամբ հայտնի յե աճուրդային հանձնաժողովին, իսկ պատշաճ դեպքերում նաև սակարկողի կամ ներկայացուցչի փոխանորդագիրը և գտնված տեղի (բնակավայրի) մասնանշումը.

բ) այն փաստաթղթերը, վորոնք հաստատում են, վոր համապատասխան հիմնարկություններին ներկայացված է ապահովություն դրամական գումարի ձևով՝ հայտարարության մեջ մասնանշված չափով (3 հոդ. «բ» կետ), կամ այլ հավասարարժեք գույքի ձևով, կապալը (մատակարարումը) հանձնող մարմնի համաձայնությամբ:

7. Պետական մարմինները, պետական կամ կոոպերատիվ կապիտալի բացառիկ կամ գերակշիռ մասնակցությամբ գործող բաժնետիրական (փայատիրական) ընկերությունները, նմանապես և պետական կապալների և մատակարարումների կանոնադրության 15 հոդ. մեջ մասնանշված կոոպերատիվ կազմակերպությունները կարող են աճուրդին մասնակցել առանց ապահովության ներկայացնելու:

8. Աճուրդները կատարվում են նրանց մասին հայտարարած պետական մարմնին առընթեր, հատուկ աճրդային հանձնաժողովի կողմից, վորին նշանակում է աճուրդի մասին հայտարարած մարմինը՝ նախագահի և առնվազն յերկու անդամի կազմով:

Հանձնաժողովը կազմում է աճուրդի կատարման արձանագրություն և աճրդաթերթ, վորը աճուրդը վերջանալուց հետո ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները և մրցակիցներից ցանկացողները:

Ծանոթություն.—Աճուրդին մասնակցողներից ամեն մեկին իրավունք է վերապահվում առանձին գրավոր հայտարարություն տալ աճուրդի ընթացքում թույլ տրված անկանոնությունների մասին, վորը կցվում է արձանագրությանը:

9. Բանավոր մրցության յեկած մրցակիցները մրցությունը սկսվելուց առաջ պետք է ստորագրեն աճուրդի թերթը, վորը կցվում է աճուրդի կատարման արձանագրությանը: Աճուրդային հանձնաժողովի կողմից նիստը բանալուց հետո աճուրդային հանձնաժողովի նախագահը բաց է անում ծրարներն ու հեռագրերը և կարդում է նրանց մեջ, նմանապես և գրավոր բաց հայտարարությունների մեջ յեղած առաջարկությունները, վորոնք մտցվում են աճուրդային թերթի մեջ: Դրանից հետո սկսվում է բանավոր

մրցությունը՝ կնքած ծրարների, հեռագրերի կամ հայտարարությունների մեջ առաջարկված ամենացածր գնից:

10. Բանավոր մրցության ժամանակ ամեն մի մրցակից կարող է անսահմանափակ անգամ հայտարարել կապալի (մատակարարման) գինը իջեցնելու մասին: Բանավոր մրցությունը համարվում է վերջացած, յերբ մրցակիցներից վոչ վոք այլևս չի առաջարկում գներն իջեցնել:

11. Յեթե աճուրդը վերջանալուց հետո աճրդային հանձնաժողովի զեկուցման համաձայն աճուրդ կատարող հիմնարկության կողմից կհամարվի պետության համար անձեռնտու, այն ժամանակ բանավոր մրցությունից 7 որից վոչ ուշ տեղի յե ունենում բանավոր կրկնաճուրդ նույն քաղաքում, վորտեղ տեղի յե ունեցել աճուրդը, վորի մասին հայտարարություն է փակցվում աճուրդը կատարող հիմնարկության շենքում:

12. Կրկնաճուրդին մասնակցելու թույլատրվում են ինչպես աճուրդին մասնակցած, նույնպես և չմասնակցած մրցակիցները: Կրկնաճուրդը համարվում է կայացած՝ թեկուզ և մեկ առաջարկություն յեղած դեպքում:

Այն դեպքում, յերբ կրկնաճուրդի ժամանակ առաջարկված պայմանները պակաս ձեռնտու լինեն, քան աճուրդի ժամանակ առաջարկածները, աճուրդը կատարող մարմնի կողմից կարող է ուժի մեջ թողնվել սկզբնական աճուրդը:

13. Աճուրդը համարվում է չկայացած, յեթե հայտարարության մեջ մասնանշված բանավոր մրցության մոմենտին յերկու առաջարկությունից պակաս լինի:

14. Աճուրդը կամ կրկնաճուրդը վերջանալուց հետո, ինչպես աճուրդին կամ կրկնաճուրդին մասնակցած անձանց, նույնպես և չմասնակցած անձանց կողմից նոր գների կամ պայմանների վոչ մի առաջարկություն չի ընդունվում:

Աճուրդի կամ կրկնաճուրդի վերաբերյալ ամբողջ գործը հետևյալ օրը աճրդային հանձնաժողովի յեզրակացությամբ ներկայացվում է կապալը (մատակարարումը) հանձնող պետական մարմնի ղեկավարին ի հաստատություն:

Աճուրդի կամ կրկնաճուրդի հաստատումը կամ չհաստատումը տեղի յե ունենում աճուրդը կատարելուց հետո յերեք որվա ընթացքում:

15. Պետական մարմնի ղեկավարի կողմից աճուրդը կամ կրկնաճուրդը հաստատվելուց հետո կապալի (մատակարարման) պայմանագիրը կնքվում է աճուրդի կամ կրկնաճուրդի ժամանակ պատվեր տվողի (գնորդի) համար ամենաձեռնտու պայմաններն առաջարկողի հետ, իսկ պայմանների հավասարության դեպքում գերադասությունը տրվում է իբրև մրցակից հանդես յեկող պետական մարմիններին և պետական կամ կոոպերատիվ կապիտալի բացառիկ կամ գերակշիռ մասնակցությամբ գործող բաժնետիրական (փայատիրական) ընկերություններին, իսկ նրանց բացակայության դեպքում—կոոպերատիվ կազմակերպություններին:

Ծանոթություն.—Պայմանների ձեռնտու լինելը վորոշելու ժամանակ պատվեր տվողը (գնորդը) պարտավոր չէ կապալը (մատակարարումը) թողնել ամենացածր գինն առաջարկող մրցակցի վրա, այլ իրավունք ունի առաջնորդվելու բացի մրցակիցների առաջարկած գնից՝ նույնպես և նրանց վարկունակությամբ, փորձառությամբ և նման տվյալներով, վորոնք բոլորը միասին կարող են ապահովել պատվեր տվողի (գնորդի) առավելագույն օգուտը:

16. Յեթե աճուրդը հաստատվելուց հետո մրցակիցը հրաժարվի սահմանված ժամանակամիջոցում պայմանագիրը ստորագրելուց աճուրդի կամ կրկնաճուրդի ժամանակ իր առաջարկած պայմաններով, կապալը (մատակարարումը) հանձնող մարմինը իրավունք ունի պահելու տվյալ մրցակցի ներկայացրած ապահովությունը (6 հոդ. «բ» կետ):

Յեթե կապալը (մատակարարումը) ապահովություն ներկայացնելուց ազատված (7 հոդ.) մրցակցի վրա թողնելուց հետո վերջինս հրաժարվի պայմանագիրը՝ աճուրդի կամ կրկնաճուրդի ժամանակ իր առաջարկած պայմաններով ստորագրելուց, կապալը (մատակարարումը) հանձնող մարմինն իրավունք ունի բռնագանձելու նրանից մի գումար՝ մյուս մրցակիցների համար սահմանված ապահովության չափով:

17. Կապալը (մատակարարումը) չստացած բոլոր մրցակիցներին վերադարձվում է նրանց ներկայացրած ապահովությունը՝ աճուրդը կամ կրկնաճուրդը հաստատվելու կամ չհաստատվելու որից սկսած յերկու օրվա ընթացքում:

18. Աճուրդը կամ կրկնաճուրդը հաստատվելու որից սկսած հինգ օրվա ընթացքում աճուրդը կազմակերպող մարմինը պետք է պայմանագիր կնքի աճուրդի կամ կրկնաճուրդի ժամանակ ընդունված պայմաններով, պահպանելով պետական կապալների և մատակարարումների կանոնադրության 7 հոդվածը:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ

ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

Մոսկվա—Կրեմլ.

1927 թ. մայիսի 11-ին.

Հավելված 2—պետական կապալների և մատակարարումների կանոնադրության

ԿԱՆՈՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳՐԱՎԱԿԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

1. Պետական կապալների և մատակարարումների գծով վորպես գրավական ներկայացվող գույքը պետք է ընդունվի պայմանագիրը ստորագրելու պահին հատուկ հայտարարություններով, վորոնց մեջ ճիշտ մատնանշված պետք է լինի գրավականի առարկան և նրա արժեքը:

2. Գրավականի առարկան կարող է լինել՝ փող, վոսկի, արծաթ և պլատինը—ձույլ և շինվածք, թանկարժեք քարեր, վոսկե և արծաթե դրամ, ԽՍՀ Միության պետական փոխառության պարտատոմսեր, արտերկրյա արժույթ, վարրանտային և պահեստային վկայականներ, կառուցման իրավունք, շենքեր, վորոնք պատկանում են գրավատուին սեփականության իրավունքով, իսկ պատվեր տվողի (գնորդի) համաձայնությամբ—նաև շրջանառությունից չհանված այլ գույք:

3. Վորպես գրավական ներկայացվող գույքի գնահատությունը կատարում է պատվեր տվողի (գնորդի) կողմից նշանակվող հանձնաժողովը՝ մեկ կամ մեկ քանի փորձագետների պարտադիր մասնակցությամբ: Փորձագետ հրավիրելու ծախքերը դրվում են գրավատուի վրա:

4. Հանձնաժողովի կատարած գնահատությունը պարտադիր է գրավատուի համար. յեթե կատարած գնահատությունը պարզի, վոր իբրև գրավական ներկայացվող գույքը բավական չէ, կապալառուն (մատակարարը) պարտավոր է լրացուցիչ կերպով իբրև գրավական ներկայացնելու համապատասխան արժեք ունեցող գույք:

5. Վոսկին, արծաթն ու պլատինը—ձույլ և շինվածք, նմանապես և թանկարժեք քարերը թույլ է տրվում ընդունել, իբրև գրավական միայն այն դեպքերում, յերբ պայմանագիրը կնքելու վայրում նրանց գնահատության համար Պետական Բանկի կամ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի գրամարկղային հիմնարկություններին առընթեր գտնվում են համապատասխան գնահատիչներ և մասնագետներ:

6. Վոչ խորհրդային վոսկե և արծաթե դրամը և արտերկրյա արժույթը իբրև գրավական ընդունվում է փորձագետ-մասնագետի կողմից նրա իսկությունը ստուգելուց հետո:

7. Ձույլ վոսկու, վոսկե և արծաթե դրամի, արտերկրյա արժույթի գնահատության ժամանակ ընդունվում է այդ արժեքների ընդունման որը Ֆոնդային բորսաների կամ ապրանքային բորսաների առընթեր Ֆոնդային բաժանմունքների կողմից հրապարակված արժեքները: Վոսկու, արծաթի և պլատինե շինվածքները գնահատվում են նրանց մեջ պարունակվող զուտ մետաղի քանակության համեմատ:

8. ԽՍՀ Միության պետական փոխառությունների պարտատոմսերը իբրև գրավական ընդունվում են ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի կողմից սահմանված արժեքով:

9. Կառուցման իրավունքը իբրև գրավական ընդունելու դեպքում գրավատուն պարտավոր է ներկայացնելու ա) նոտարական կարգով վավերացված՝ կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագիրը և բ) կառուցման իրավունքի վրա ընկնող պարտքերի ու կալանքների վերաբերյալ տեղեկանք, որը տրվում է տեղական կոմունալ բաժինների, իսկ պատշաճ դեպքերում հողային կամ՝ համապատասխան դաշնակից հանրապետության օրենսդրությամբ որոշված տեղական այլ մարմինների կողմից:

Շենքերը իբրև գրավական ընդունելու դեպքում գրավատուն պարտավոր է ներկայացնելու՝

ա) քաղաքային շենքերի վերաբերմամբ տեղական կոմունալ բաժնից, իսկ գյուղական վայրերում գտնվող շենքերի վերաբերմամբ—(համապատասխան հանրապետության օրենսդրության համաձայն) տեղական պատշաճ մարմնի կողմից տրված տեղեկանք՝ շենքը գրավատուին պատկանելու և շենքի վրա ընկնող պարտքերի ու կալանքների մասին.

բ) գրավ դրվող շենքերի մանրամասն ցուցակը.

գ) վկայական այն մասին, որ ապահոված է 4 հոդ. կարգով սահմանված գնահատության գումարից ոչ պակաս գումարի չափով:

10. Կառուցման իրավունքը և շենքերը գրավ են դրվում՝ պահպանելով համապատասխան դաշնակից հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերով սահմանված կանոնները՝ կառուցման համար տրվող հողամասերի և իբրև գրավական ներկայացվող շենքերի գտնված վայրում:

11. Գրավ ընդունելու ժամանակ կազմվում է ընդունվող իրերի մանրամասն ցուցակը յերկու օրինակ, որից մեկը հանձնվում է գրավատուին, իսկ մյուսը կցվում է կապալի (մատակարարման) պայմանագրին:

12. Իբրև գրավական մտցվող փողերն ու արժեքները (ոսկին, արծաթն ու լուսնակին—ձույլ և շինվածք, թանգարժեք քարերը, ոչ խորհրդային ոսկե և արծաթե դրամը, օտարերկրյա արժույթը և ԽՍՀ Միության պետական փոխառության պարտատոմսերը) պետք է հանձնվեն պատվեր տվողի (գնորդի) անունով Պետական Բանկի կամ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի դրամարկղային հիմնարկություններին ի պահ, համաձայն ավանդների և գրավականների մասին գոյություն ունեցող կանոնների:

Այդ դեպքում թանգարժեք քարերը պետք է ցուցակագրման յենթարկվեն որակի, կշռի, ձևի և գնահատության ժամանակ յերևան բերած այլ հատկանիշների տեսակետից, դարսվեն հատուկ փաթեթների մեջ և կնքվեն պատվեր տվողի (գնորդի) և գրավատուի կնիքներով):

13. Գրավ դրված գույքը, բացառությամբ կառուցման իրավունքի և շենքերի, նմանապես և 12 հոդ. հիշված գույքը, անմիջապես հանձնվում է գրավառուին: Գրավ դրված գույքը կարող է պահվել գրավատուի պատասխանատվությամբ այն դեպքերում, յերբ գրավառուն հանդիսանում է պետական կամ կոոպերատիվ կապիտալի գերակշիռ մասնակցությամբ բաժնետիրական (փայատիրական) ընկերությունը կամ կոոպերատիվ կազմակերպությունը, նմանապես և ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ հատկապես նախատեսված այլ դեպքերում:

Իբրև գրավական հանձնված գույքը պետք է ապահովագրվի գրավատուի կողմից գույքը գրավ դրվելու ամբողջ ժամանակի ընթացքում:

Գրավատուի կողմից ապահովագինը չվճարելու դեպքում, այդ գումարը մուծում է գրավառուն: Գույքը կորստյան մատնվելու կամ վնասվելու դեպքում ապահովագրական վարձատրությունը ստանում է գրավառուն: Գրավ ընդունած գույքի պահպանությունը և նրա ապահովագրության ծախսերը, նմանապես և գրավ դնելու ծախսերը, կատարվում են ի հաշիվ կապալառուի (մատակարարի):

14. Կապալի և մատակարարման ապահովության համար գրավի փոխարեն կարող են ընդունվել առևտրական (տնտեսավարական) հիմունքներով գործող վարկային հիմնարկությունների և պետական ձեռնարկությունների յերաշխավորական նամակները, յեթե հիշյալ հիմնարկություններին և ձեռնարկություններին կանոնադրությամբ թույլ է տրված այդպիսի նամակներ տալ: Թույլ չի տրվում կապալի և մատակարարման ապահովության համար իբրև գրավ ընդունել կապալառուի (մատակարարի) մուրհակները, նմանապես և համապետական և տեղական բյուջեի միջոցներով պահվող հիմնարկությունների և ձեռնարկությունների յերաշխավորությունները: (Այս հոդվածը փոփոխված է.—հավելված 5-ա.):

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ

ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղար՝ ~~Ա. ԵՆՈՒԿԻՁԵ~~

Մոսկվա—Կրեմլ.

1927 թ. մայիսի 11-ին.

Հավելված 5-ա—Պետական կապալների և մատակարարումների պայմանագրերի կատարումը գրավականով ապահովելու կանոնների.

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ 5-ա ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1929 թ. փետրվարի 27-ին.

Համաձայն Անդրկենտգործկոմի նախագահության 1929 թ. հունվարի 2-ի որոշման (արձ. № 1, կետ 4) և ՀՍԽՀ Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանի 1923 թ. սեպտեմբերի 22-ի «Կենտգործկոմի հաստատած օրենսգրքերը փոփոխելու մասին» որոշման (Օր. Ժող. 1923 թ. № 7. հոդ. 54) 2-րդ հոդվածի հիման վրա Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունը ՎՈՐՈՇՈՒՄ Է.

Քաղաքացիական Օրենսգիրքը (1928 թ. խմբագրությամբ) լրացնել «Պետական կապալների և մատակարարումների պայմանագրերի կատարումը գրավականով ապահովելու կարգի վերաբերյալ կանոնների 14-րդ հոդվածը փոփոխելու մասին» 5-ա հավելվածով:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ՝

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Քարտուղար՝

Երևան.

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳՐԱՎԱԿԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

Պետական կապալների և մատակարարումների պայմանագրերի կատարումը գրավականով ապահովելու կարգի վերաբերյալ կանոնների 14-րդ հոդվածը (ԽՍՀՄ Օր. Ժող. 1928 թ. № 28. հոդ. 292. հավելված 2-րդ) շարադրել հետևյալ խմբագրությամբ.—

14. Կապալի և մատակարարման ապահովության համար գրավի փոխարեն կարող են ընդունվել ա) առևտրական (տնտեսհաշվարկային) հիմունքներով գործող վարկային հիմնարկությունների և պետական ձեռնարկությունների յերաշխավորական նամակները, յեթե հիշյալ հիմնարկությունների և ձեռնարկությունների կանոնադրությամբ թույլատրված է նման նամակներ տալը, բ) պետական կապալների և մատակարարումների վերաբերյալ կանոնադրության 15-րդ հոդվածի առաջին մասում մատնանշված կոոպերատիվ կազմակերպությունների յերաշխավորական նամակները, յեթե այդ կազմակերպությունները յերաշխավորություններ տալիս են իրենց կազմի մեջ մտնող ստորին աստիճանի կոոպերատիվ կազմակերպությունների համար:

Թույլ չի տրվում կապալի և մատակարարման ապահովության համար իբրև գրավ ընդունել կապալառուի (մատակարարի) մուրհակները, նմանապես և համապետական և տեղական բյուջեի միջոցներով պահվող հիմնարկությունների և ձեռնարկությունների յերաշխավորությունները:

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Նախագահ՝ Ա. ՉԵՐՎՅԱԿՈՎ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի

Նախագահի Տեղակալ՝ ՅԱ. ՌՈՒԴԶՈՒՏԱԿ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Քարտուղար՝ ~~Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ~~

Մոսկվա—Կրեմլ.

1928 թ. օգոստոսի 29.

(ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժող. 1928 թ. № 57. հոդ. 499).

(Հրապարակված է «Խորհրդ. Հայաստան» 1929 թ. մարտի 20-ին, № 64).

Հավելված 6 (322 հոդվածի)

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Հաստատել բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունը:

2. Պարտավորեցնել ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժո-
ղովրդական Կոմիսարիատին մի ամիս ժամանակամիջոցում մացնել ԽՍՀ
Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ ի հաստատություն այն
օրենքների ցուցակը, վորոնք բաժնետիրական ընկերությունների կանոնա-
դրությունը կիրարկության դնելուց հետո կորցնում են իրենց ուժը, այլև
սրանից բխող այն փոփոխությունները, վորոնք առաջանում են
ԽՍՀ Միության գործող օրենսդրության մեջ:

3. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կենտրոնական գոր-
ծադիր կոմիտեներին յերկու ամիս ժամանակամիջոցում հանրապետու-
թյունների օրենսդրությունը համապատասխանեցնել բաժնետիրական ընկե-
րությունների կանոնադրությանը:

4. Այս վորոշումը հրապարակելուց առաջ դաշնակից հանրապետու-
թյունների կողմից հրատարակված այն օրենքները, վորոնք բաժնետիրական
ընկերությունների առանձին կատեգորիաների համար 100,000 ռուբլուց պա-
կաս կանոնադիր դրամագլխի նվազագույն չափ են սահմանում, պահպանում
են իրենց ուժը:

5. 1925 թ. հունիսի 22-ի՝ ֆիրմայի վերաբերյալ կանոնադրության
(ԽՍՀ Միության Օրենք. Ժող., 1927 թ. № 40, հոդ. 395) 3 հոդ. լրացնել
2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.—

«Պետական կամ խառը բաժնետիրական (փայատիրական) ընկերությա-
նը պատկանող ձեռնարկության ֆիրման պետք է մատնանշում պարունակի
այն մասին, վոր ընկերությունը պետական է կամ խառը: Վորոշ պետական
հիմնարկության տնօրինության տակ գտնվող պետական բաժնետիրական (փա-
յատիրական) ընկերությանը պատկանող ձեռնարկության ֆիրման պետք է
պարունակի նաև այդ հիմնարկության մատնանշումը»:

6. Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների մեջ յե-
ղած վորոշումները, վորոնք հակասում են բաժնետիրական ընկերություննե-
րի կանոնադրությանը, իրենց ուժը կորցրած են համարվում, և նրանց փո-
խարեն կիրարկվում են կանոնադրության համապատասխան նորմաները:

Գործող բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները
1928 թ. ապրիլի 1-ից վոչ ուշ պետք է փոփոխվեն հիշյալ կանոնադրու-
թյամբ նախատեսված կարգով, նրանց կանոնադրությունը համապատաս-
խանեցնելու նպատակով:

7. Բաժնետիրական ընկերությունները կրելի (на пред'явит.) բաժնե-
տոմսերի (բաժնետիրական վկայականների) տերերին իրավունք է տրվում
1928 թ. ապրիլի 1-ից վոչ ուշ այդ բաժնետոմսերը ներկայացնել ընկերու-
թյունների վարչություններին՝ ընկերությունների հաշվին անվանականների
վերածելու համար: Մատնանշված ժամանակամիջոցում անվանականների
վերածելու համար չներկայացրած կրելի բաժնետոմսերը (բաժնետիրական
վկայականները) վոչնչացված են համարվում, այդ բաժնետոմսերի վերա-
բերյալ իրավունքների չիջուցմամբ: Այս հոդվածը կիրարկելու կարգը սահ-
մանում է ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կո-
միսարիատը, համաձայնության գալով ԽՍՀ Միության Ժողովրդական Տըն-
տեսության Գերագույն Խորհրդի և ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովր-
դական Կոմիսարիատի հետ:

Ծանոթություն.—Գյուղատնտեսական վարկի ընկերություններում
յեղած գյուղացիական փայերի լուծարքի կարգը վորոշվում է ԽՍՀ
Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կո-
միսարների Խորհրդի 1927 թ. փետրվարի 4-ի վորոշումով (ԽՍՀՄ Օր.
Ժող., 1927 թ., № 31, հոդ. 309):

8. Պարտավորեցնել ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողո-
վրդական Կոմիսարիատին՝ ա) այս վորոշումը հրապարակելու օրից մի ամիս
ժամանակամիջոցում ճշտորեն պարզել բաժնետոմսերի բաշխումն այն բաժ-
նետիրական ընկերություններում, վորոնք մտցված են ԽՍՀ Միության առև-
տրական մատյանի առաջին հատվածի մեջ, և միջոցներ ձեռք առնել առևտրա-
կան մատյանի 2-րդ հատվածը տեղափոխելու այն բաժնետիրական ընկերու-
թյունները, վորոնք նախատեսված են բաժնետիրական ընկերությունների կա-
նոնադրության 16 հոդվածով. բ) հանձնարարել դաշնակից հանրապետու-
թյունների առևտրի ժողովրդական կոմիսարիատներին այս վորոշումը հրա-
պարակելու օրից մի ամիս ժամանակամիջոցում ճշտորեն պարզել բաժնետոմ-
սերի բաշխումն այն բաժնետիրական ընկերություններում, վորոնք մտցված
են առևտրական մատյանի 2-րդ հատվածի մեջ՝ առաջին հատվածը տեղափո-
խելու համար այն բաժնետիրական ընկերությունները, վորոնք համաձայն
բաժնետիրական ընկերությունների կանոնադրության պետք է մտնեն այդ
հատվածի մեջ:

Ծանոթություն.—Առևտրական մատյանի առաջին հատվածից
2-րդ և ընդհակառակը չեն տեղափոխվում այն բաժնետիրական ընկե-
րությունները, վորոնք լուծարքի յեն յենթարկված:

9. Համաձայնաբար ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատին ԽՍՀ Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի և ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հետ միասին այս վորոշումը հրապարակելու օրից յերկու ամիս ժամանակամիջոցում բաժնետիրական ընկերությունների կանոնադրության 13 հոդվածի համաձայն վորոշել, թե հիշյալ հոդվածում մատնանշված ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարիատներից վո՞ր իրավասությունն է վերաբերում առևտրական մատյանի առաջին հատվածի մեջ ամրագրելու յենթակա՝ ներկայումս գոյություն ունեցող բաժնետիրական ընկերություններից յուրաքանչյուրի կանոնադրության մեջ մտցված փոփոխությունների հաստատությունը:

10. Համաձայնաբար ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատին ԽՍՀ Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի, ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի և ԽՍՀ Միության Բանվորագյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարիատի հետ միասին յերեք ամիս ժամանակամիջոցում վորոշել, թե առևտրական մատյանի առաջին հատվածի մեջ ամրագրելու յենթակա (հոդ. 8) պետական կապիտալի մասնակցությամբ գործող բաժնետիրական ընկերություններից վորոնք պետք է անցնեն պետական և խառը բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների կիրարկմանը:

Առաջարկել դաշնակից հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդներին նույն ժամանակամիջոցում համապատասխան միջոցներ ձեռք առնել այն բաժնետիրական ընկերությունների նկատմամբ, վորոնք յենթակա յեն առևտրական մատյանի 2-րդ հատվածի մեջ ամրագրվելու (հոդ. 8):

11. Այն բաժնետիրական ընկերությունների վրա, վորոնց կանոնադրությունները հաստատված են կոնցեսիայի կարգով, և այլ ընկերությունների վրա, վորոնց կանոնադրությունները հաստատված են ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կամ ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից, տարածվում են բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ՝ այս թվով հաստատված կանոնադրությունը և այս վորոշման այն մասերը, վորոնք չեն հակասում մատնանշված ընկերությունների կանոնադրություններին:

ԽՍՀՄ Կենտգործկոմի Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի Նախագահ՝ Ա. ~~ՌԻԿՈՎ~~

ԽՍՀՄ Կենտգործկոմի Քարտուղար՝ ~~ՅԵՆՈՒԿԻՁԵ~~

Մոսկվա-Կրեմլ. 1927 թ. օգոստ. 17-ին.

(ԽՍՀՄ Օր. Ժող., 1927 թ., № 49, հոդ. 499)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Բաժնետիրական (փայատիրական) ընկերությունը իրավական անձ է, վոր գործում է հատուկ կանոնադրության հիման վրա, ունի կանոնադիր (հիմնական) դրամագլուխ, վոր վորոշ թվով հավասար մասերի (բաժնետոմսերի, փայերի) է բաժանված: Բաժնետերերը (փայատերերը) բաժնետիրական ընկերության պարտավորությունների դիմաց պատասխանատվություն չեն կրում: Բաժնետիրական ընկերությունը բաժնետերերի պարտավորությունների դիմաց պատասխանատվություն չի կրում:

Ծանոթություն.—«Բաժնետիրական ընկերություն» և «փայատիրական ընկերություն», «բաժնետոմս» և «փայ», «բաժնետեր» և «փայատեր», «կանոնադիր դրամագլուխ» և «հիմնական դրամագլուխ» այս օրենքում և բաժնետիրական ընկերություններին վերաբերյալ ամբողջ օրենսդրության մեջ հավասար նշանակություն ունեն:

2. Բաժնետիրական ընկերությունը կարող է հիմնվել միայն վորոշ տնտեսական գործ կատարելու համար, վորը ճշտորեն մատնանշված է նրա կանոնադրության մեջ:

3. Բաժնետիրական ընկերությունը պետական է համարվում, յեթե նրա կանոնադրությամբ նախատեսված է, վոր ընկերության բոլոր բաժնետոմսերը պետք է պատկանեն բացառապես պետական հիմնարկություններին կամ ձեռնարկություններին:

Բաժնետիրական ընկերությունը խառն է համարվում, յեթե նրա կանոնադրությամբ նախատեսված է, վոր պետական հիմնարկություններին և ձեռնարկություններին պետք է պատկանեն՝ կամ ընկերության բաժնետոմսերի մի մասը, վոր կազմում է նրա կանոնադիր դրամագլխի առնվազն կես մասը, կամ ընկերության ընդհանուր ժողովներում ձայների կեսից վոչ պակաս գրավելու իրավունքը, կամ ընկերության գործառնություններից ստացվող շահաբաժնի կեսից վոչ պակաս ստանալու իրավունքը:

4. Բաժնետիրական ընկերությունը իրավական անձի իրավունք է ձեռք բերում ամրագրվելու պահից և այդ ժամանակից կարող է գործառնություններ կատարել (2 հոդ.), ԽՍՀ Միության ամբողջ տերիտորիայի վրա բաժանմունքներ (գրասենյակներ, բաժիններ, գործակալություններ, ներկայացուցչություններ և այլն) բաց անել, յեթե կանոնադրության մեջ չի մատնանշված այն սայրը, վորի սահմաններում ընկերությունը կարող է բաժանմունքներ բաց անել կամ վորոշ տեսակի գործառնություններ կատարել (գործունեության շրջան):

Ծանոթություն.—Բաժնետիրական վարկային հիմնարկության կանոնադրության մեջ պարտադիր է սահմանել այն սայրը, վորի սահմաններում նա իրավունք ունի բաժանմունքներ բանալու:

Շինարարական բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ պարտադիր է սահմանել այն ռայոնը, վորի սահմաններում նա իրավունք ունի շինարարական աշխատանքներ կատարելու, բաժանմունքներ և ոժանդակ ձեռնարկություններ բանալու:

5. Բաժնետիրական ընկերությունը ունի կնիք իր ֆիրմայի անունով:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՆ ՈՒ ՓՈԽԵԼԸ.

6. Բաժնետիրական ընկերության հիմնադիրների թիվը պետք է լինի 3-ից վոչ պակաս:

7. Պետական հիմնարկություններից և ձեռնարկություններից բաժնետիրական ընկերությունների հիմնադիրներ կարող են լինել.

ա) ԽՍՀ Միության դաշնակից և ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարիատները.

բ) տեղական խորհուրդները գավառակայիններից և գավառականներից վոչ ցածր՝ հանձինս նրանց բաժինների.

գ) առևտրական (տնտեսավարական) հիմունքներով գործող պետական ձեռնարկությունները, նույնպես և յերկաթուղային ճանապարհների վարչությունները այն պետական հիմնարկությունների համաձայնությամբ, վորոնց տեսչության տակ են գտնվում նրանք.

դ) այլ հիմնարկություններ, վորոնք ԽՍՀ Միության կամ դաշնակից հանրապետությունների որենսդրության հիման վրա այդ իրավունքը ունեն:

8. Համապետական կամ տեղական բյուջեի մեջ մտնող պետական հիմնարկությունները բաժնետիրական ընկերության հիմնադիրներ կամ բաժնետերեր կարող են լինել այն պայմանով, յեթե ընկերության նպատակը համապատասխանում է հիմնարկության խնդիրներին, և յեթե ընկերությանը մասնակցելու համար անհրաժեշտ միջոցները բյուջեյում ուղղակի ձևով են նախատեսված, կամ բաց են թողնված հատուկ դրամ հատկացնելու միջոցով: Յեթե ընկերությանը մասնակցելու համար անհրաժեշտ միջոցները բյուջեյում ուղղակի չեն նախատեսված, բայց կարող են հատկացվել վարկերը նախահաշվի սահմաններում տեղափոխելու միջոցով, այդ դեպքում ընկերությանը մասնակցելու համար անհրաժեշտ միջոցներ հատկացնելը թույլ է տրվում միայն ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի, դաշնակից հանրապետության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի կամ տեղական ֆինանսական մարմնի հետ ըստ պատկանելույն համաձայնության գալով, թեկուզ և վարկերի տեղափոխությունը կատարվեր յելքի նախահաշվի նույն գլխի մի պարագրաֆից մյուսը: Նմանապես և համապատասխան ֆինանսական մարմինների համաձայնությամբ բաժնետոմսեր ձեռք են բերում համապետական և տեղական բյուջեյի միջոցներով պահվող հիմնարկները ի հաշիվ նրանց տրամադրության տակ յեղած նյութական արժեքների:

9. Առևտրական (տնտեսավարական) հիմունքներով գործող պետական ձեռնարկությունները կարող են բաժնետիրական ընկերության հիմնադիրներ կամ բաժնետերեր լինել այն դեպքում, յեթե կան բոլոր ներքոհիշյալ պայմանները.—

ա) յեթե ընկերության նպատակը համապատասխանում է ձեռնարկության խնդիրներին.

բ) յեթե այն հիմնարկությունը, վորի տեսչության տակ է գտնվում ձեռնարկությունը, թույլ է տվել մասնակցել տվյալ բաժնետիրական ընկերությանը.

գ) յեթե բաժնետիրական ընկերությանը մասնակցելու համար անհրաժեշտ միջոցները նախատեսված են սահմանված կարգով հաստատված ձեռնարկության ֆինանս-գործառնական ծրագրով:

10. Բոլոր հիմնադիրների կողմից ստորագրված բաժնետիրական ընկերության կանոնադրության նախագիծը նրանց կողմից ներկայացվում է այն հիմնարկությանը, վորի իրավասությանն է վերաբերում կանոնադրությունը հաստատելը (13 և 16 հոդվածներ) կամ Գլխավոր Կոնցեսիոն Կոմիտեյին (12 հոդ.)՝ ըստ պատկանելույն:

11. Բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ պետք է հիշատակվեն.

ա) ընկերության ֆիրմայի անունը.

բ) ընկերության գործունեության առարկան.

գ) հիմնադիրների անունները և նրանց քաղաքացիությունը.

դ) ընկերության գործունեության շրջանը (4 հոդ.), յեթե այդ սահմանվում է.

ե) վարչության գտնված վայրը.

զ) ընկերության գոյության ունենալու ժամանակամիջոցը, յեթե այդ նշանակվում է.

է) կանոնադիր դրամագլխի չափը, բաժնետոմսերի թիվը և նրանց անվանական գինը.

թ) ընկերության բաժնետոմսերը բաշխելու և կանոնադիր դրամագլուխը ծածկելու կարգը.

ժ) բաժնետոմսերի կատեգորիաները, յեթե նրանք սահմանված են, նրանց հետ կապված արտոնությունները և նրանց կիրարկության կարգը.

ի) ընկերության հիմնելու առթիվ հիմնադիրների արած կազմակերպչական ծախքերը ծածկելու համար բաժնետոմսերի վրա արվող վերադիրների առավելագույն չափը, և նրանց վճարելու ժամանակամիջոցները, յեթե այդ վերադիրները գանձվելու յեն բաժնետոմսերի բաժանորդներից.

լ) ընկերության պահեստի և հատուկ դրամագլուխների չափը, ինչպես և նրանց կազմելու կարգը.

խ) բաժնետերերի իրավունքները.

ծ) ընկերության վարչական և վերստուգիչ մարմինները, նրանց իրավասության առարկաները և նրանց գործունեության կարգը, մասնավորապես, մամուլի այն օրգանի մասնանշումը, որի մեջ հրապարակվում է ընդհանուր ժողովներ հրավիրելու մասին.

կ) հաշվետվության կարգը․

հ) վաստակը բաժանելու կարգը․

ձ) ընկերությունը լուծարքի ենթարկելու հիմքերն ու կարգը:

Բացի դրանից, կանոնադրության մեջ կարող են պարունակվել օրենքին չհակասող նաև այլ դրույթներ:

12․ Բաժնետիրական ընկերության հիմնելու հարցը Գլխավոր Կոնցեսիոն Կոմիտեի առաջարկության համաձայն լուծում և նրա կանոնադրությունը հաստատում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հետևյալ դեպքերում․

ա) եթե ընկերության հիմնելուն մասնակցում են օտարերկրյա քաղաքացիներ, կամ օտարերկրյա իրավական անձինք, կամ եթե բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ նախատեսված է օտարերկրյա քաղաքացիների կամ օտարերկրյա իրավական անձանց կողմից բաժնետոմսեր ձեռք բերելու հնարավորությունը․

բ) եթե ընկերության կանոնադրությունը՝ նույնիսկ ընկերությունը առանց օտարերկրյա դրամագլխի մասնակցության հիմնվելու դեպքում կոնցեսիոն բնույթ ունի:

13․ Այն բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները, բացի 12 հոդ․ մասնանշվածներից, որոնց բաժնետոմսերի առնվազն 50%-ը կառավարության փոխանցմամբ կամ հիմնադիրների համաձայնությամբ պետք է պատկանի ԽՍՀ Միության պետական հիմնարկություններին կամ այն ձեռնարկություններին ու կազմակերպություններին, որոնց կանոնադրությունները պետք է հաստատվեն ԽՍՀ Միության մարմինների կողմից, հաստատվում են հետևյալ կարգով․

ա) արդյունաբերական բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—ԽՍՀ Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի կողմից․

բ) վարկային բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի կողմից․

գ) այս հոդվածում մասնանշված այլ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից:

Այն վարկային և շինարարական բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները, որոնց գործունեության շրջանը մի դաշնակից հանրապետության սահմաններից դուրս է գալիս, հաստատվում են ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի և ԽՍՀ Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի կողմից՝ ըստ պատկանելույն:

Ծանոթություն․—Կանոնադրության այն մասն է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի համաձայնությամբ հաստատվում ԽՍՀ Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի և ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից, որը վերաբերում է ընկերության դրամագլուխներին:

14․ 13-րդ հոդ․ մեջ մասնանշված բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները հաստատելուց առաջ նախապես ստացվում է Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի թույլտվությունը ընկերության հիմնելու մասին:

Ընկերության հիմնելու թույլտվություն ստանալու նպատակով նրա հիմնադիրները համապատասխան ժողովրդական կոմիսարիատի առաջ (հոդ․ 13) միջնորդություն հարուցելիս ներկայացնում են կանոնադրության նախագիծը, որը մասնանշված ժողովրդական կոմիսարիատը իր եզրակացության հետ միասին ներկայացնում է Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին:

Հիշյալ միջնորդության մեջ պարտավոր են մասնանշել—

ա) հիմնվող ընկերության ֆիրմայի անունը․

բ) նրա գործունեության առարկան․

գ) կանոնադիր կապիտալի չափը և այն ծածկելու ժամանակամիջոցները․

դ) բաժնետոմսերի անվանական գինը և նրանց ենթադրելիք բաշխումը․

ե) ընկերության վարչության վայրը․

զ) հիմնադիրների անունները, համապատասխան դեպքերում մասնանշելով նրանց քաղաքացիությունը․

է) գործող օրենսդրությունից կատարվող բացառությունները, եթե նրանք նախատեսվում են ընկերության կանոնադրությամբ:

Ծանոթություն․—Եթե հիմնվող բաժնետիրական ընկերության գործունեության առարկան վերաբերում է 13 հոդ․ մասնանշված ժողովրդական կոմիսարիատներից մի քանիսի իրավասությանը, այդ դեպքում Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը ընկերության հիմնելը թույլատրելու վերաբերյալ իր որոշման մեջ մասնանշում է, թե նրանցից որի վրա է ընկնում կանոնադրության հաստատությունը:

15․ Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները, որոնք պետք է հաստատվեն ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարիատների կողմից (13 հոդ․), մինչև հաստատվելը համաձայնեցվում են շահագրգռված գերատեսչությունների հետ:

16․ Բաժնետիրական ընկերություններ հիմնելու վերաբերյալ հարցը լուծելու կարգը և, բացի 12 և 13 հոդվածներում մասնանշվածներից, այլ

բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները հաստատելու կարգը վորոշվում է այն դաշնակից հանրապետության օրենսդրությամբ, վորի տերրիտորիայի վրա յե գտնվելու կազմակերպվող ընկերության վարչությունը, համաձայն կանոնադրության:

17. ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարիատների կողմից հաստատվող կանոնադրությունների հոդվածները (հոդ. 13), վորոնք ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կամ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, նմանապես և համապատասխան դաշնակից հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեյի կամ ժողովրդական կոմիսարների խորհրդի գործող վորոշումներից շեղումներ են պարունակում, հաստատվում են ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, իսկ այն կանոնադրությունների հոդվածները, վորոնք Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կամ համապատասխան դաշնակից հանրապետության տնտեսական խորհրդակցության գործող վորոշումներից շեղումներ են պարունակում, հաստատվում են Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կողմից:

Դաշնակից հանրապետությունների մարմինների կողմից հաստատվող կանոնադրությունների (16 հոդ.) այն հոդվածները, վորոնք ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կամ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներից շեղումներ են պարունակում, յենթակա յեն ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաստատությանը, իսկ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշումներից շեղումներ պարունակող նույն կանոնադրությունների հոդվածները յենթակա յեն Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի հաստատությանը:

18. Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատվում են այն մարմինների կողմից, վորոնց հաստատությանը, համաձայն այս կանոնադրության, յենթակա կլինի ընկերության կանոնադրությունը՝ յենթադրվող փոփոխությունները մտցնելուց հետո:

Ընկերության կանոնադրությունը 12 հոդ. մատնանշված հատկանիշներից զրկող փոփոխությունները յենթակա յեն ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաստատությանը:

19. Յեթե բաժնետիրական ընկերության կանոնադրությունը 13 հոդ. կարգով հաստատվելուց հետո՝ նույն հոդվածում հիշված մարմիններին պատկանող բաժնետոմսերի տոկոսը 50-ից իջնի, կամ յեթե ընկերության կանոնադրությունը 16 հոդ. կարգով հաստատվելուց հետո վերոհիշյալ մարմիններին պատկանող բաժնետոմսերի տոկոսը 50-ի հասնի կամ դրանից անցնի, այդ դեպքում ընկերությունը առևտրական մատյանի առաջին հատվածից համապատասխան ձևով պետք է տեղափոխվի յերկրորդը, և ընդհակառակը: Հավասարապես՝ մատնանշված դեպքերում համապատասխան ձևով փոխվում է ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու կարգը (18 հոդ.):

Այս հոդվածի կիրարկության կարգը սահմանում է ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատը:

20. Կանոնադրությունը հաստատվելու մասին 10 հոդ. մատնանշված մարմինները ըստ պատկանելույն հայտնում են հիմնադիրներին, նրանց տալիս են կանոնադրության վավերացված պատճենը և նրանց հաշվին կանոնադրությունը հաստատելու մասին հրապարակում են «Экономич. Жизнь» թերթում, իսկ այն ընկերությունների վերաբերմամբ, վորոնց կանոնադրությունները հաստատվում են դաշնակից հանրապետությունների մարմինների կողմից, բացի դրանից—նաև դաշնակից հանրապետության օրենսդրությամբ մատնանշվող մամուլի օրգաններում:

21. ԽՍՀ Միության մարմինների կողմից հաստատված բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները (12 և 13 հոդվածներ) այդ ընկերությունները առևտրագրվելուց հետո հրապարակվում են ԽՍՀ Միության Բանվորա-գյուղացիական Կառավարության Օրենքների և Կարգադրությունների Ժողովածուի մեջ:

Դաշնակից հանրապետությունների մարմինների կողմից հաստատվող կանոնադրությունները հրապարակելու կարգը (16 հոդ.) սահմանվում է դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ:

22. Կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ վորոշումը (20 հոդ.) հրապարակելուց հետո բաժնետիրական ընկերության հիմնադիրները ձեռնարկում են բաժնետոմսերը բաշխելուն և կանոնադիր դրամագլուխը ժողովելուն և կատարում են այն բոլոր գործողություններն ու գործարքները, վորոնք կապված են բաժնետիրական ընկերության կազմակերպության հետ:

23. Հիմնադիրների կողմից ընկերության համար՝ նրա առևտրագրությունից առաջ կատարած գործարքները հիմնադիրները կնքում են իրենց անունից համապարտ պատասխանատվությամբ:

Այդ գործարքների վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները բաժնետիրական ընկերությանն են անցնում այն դեպքում միայն, յեթե այդ գործարքներին հավանություն է տվել հիմնադիրների ժողովը կամ կառարելուց հետո—բաժնետերերի մոտագա ընդհանուր ժողովը:

24. Ընկերության կազմակերպության հարցերում հիմնադիրների գործած զանցառություններից և նրանց սխալ գործողություններից առաջացած վնասների համար հիմնադիրները ընկերության և առանձին բաժնետերերի առաջ ընկերությունը առևտրագրելուց հետո մի տարվա ընթացքում համապարտ պատասխանատվություն են կրում:

25. Բաժնետիրական ընկերության հիմնադիրները պարտավոր են բոլորը միասին ձեռք բերելու կանոնադիր դրամագլխի մեկ հինգերորդից վոչ պակաս գումարի բաժնետոմսեր և իրենց վերապահելու կանոնադիր դրամագլխի մեկ հինգերորդին հավասար գումարի բաժնետոմսեր, մինչև ըն-

կերության 2-րդ գործառնական տարվա հաշիվը հաստատելը։ Նույն ժամանակի ընթացքում հիմնադիրները և բաժնետերերը չեն կարող ստանալ այն բաժնետոմսերը, վորոնք վճարված են այլ գույքով՝ բացի դրամից և պետական արժեքավոր թղթերից։

26. Ընկերության բաժնետոմսերը հիմնադիրներն իրար մեջ բաշխում են կամ լրիվին կամ բաժնետիրական ընկերությանը մասնակցելու համար նոր անձինք (բաժանորդներ) գրավելու միջոցով։ Ներգրավումը կատարվում է բաժնետոմսերի մասնավոր կամ հրապարակական բաժանորդագրության ձևով։

27. Բաժնետոմսերին բաժանորդագրվելը կատարվում է՝ բաժանորդի կողմից բաժանորդագրության թերթի վրա բաժնետոմսի արժեքը վճարելու գրավոր պարտավորություն տալու միջոցով, մատնանշելով վճարման ժամկետները։

Բաժանորդին տրվում է անվանական ստացական, մատնանշելով բաժանորդի վրա հաշվվող բաժնետոմսերի քանակը և նրանց համարները ըստ կարգի։

Մատնանշված ստացականի մեջ ընկերության կանոնադրությամբ նախատեսված կարգով նշանակվում է բաժնետոմսերի արժեքի գծով մուծված գումարների մասին։

28. Բաժնետոմսերի բաժանորդագրության թերթերում և հրապարակական բաժանորդագրության վերաբերյալ հայտարարություններում (պրոսպեկտներում) այլ տեղեկությունների թվում պետք է անպայման մատնանշվեն.

ա) կանոնադրության հաստատման մասին հրապարակելու թվականը և այն օրգանը, վորում հայտարարությունը զետեղված է.

բ) հիմնադիրների ցուցակը, մատնանշելով նրանց հասցեները.

գ) ընկերության ֆիրմայի անունը.

դ) ընկերության գործունեության առարկան.

ե) կանոնադիր դրամագլխի չափը.

զ) բաժնետոմսերի անվանական գինը և նրանց վճարման կարգն ու ժամանակամիջոցը.

ը) հիմնադիրների անունով պահված բաժնետոմսերի քանակը.

թ) ընկերության հիմնելու առթիվ հիմնադիրների արած կազմակերպչական ծախքերը ծածկելու համար բաժնետոմսերի վրա ավելացվող վերադիրների չափը, յեթե այդ վերադիրները նախատեսված են կանոնադրությամբ.

ժ) բաժնետոմսերի արժեքի գծով հիմնադիրների կողմից մուծվող գույքի գնահատությունը։

Ծանոթություն 1.—Այն դեպքերում, յերբ այս կամ այն հիմնարկությունների կամ անձանց բաժնետիրական ընկերության հիմնելու կամ այն լուծարքի յենթարկելու վերաբերմամբ կվերապահվեն հա-

տուկ առավելություններ կամ բաժնետոմսերի վերաբերյալ հատուկ արտոնություններ, այդ առավելություններն ու արտոնությունները պետք է առանձին կերպով հիշատակվեն բաժնետոմսերի բաժանորդագրության թերթերի մեջ։

Ծանոթություն 2.—Պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից բաժնետոմսերին բաժանորդագրվելը նրանց համար պարտադիր է այն դեպքում միայն, յերբ պահպանվում են 8 և 9 հոդվածների պահանջները։

29. Կանոնադրությունը հաստատվելու մասին հայտարարելուց հետո 3 ամսից վոչ ուշ պետք է ժողովվի կանոնադիր դրամագլխի մեկ քառորդից վոչ պակաս, և ամեն մի հիմնադիր և բաժնետոմսերի բաժանորդ բաժնետոմսերի արժեքի գծով պետք է մատնանշված ժամանակամիջոցում մուծի հասանելի գումարի առնվազն մեկ քառորդը։ Իսկ կանոնադիր դրամագլուխը լրիվին պետք է ժողովվի 12 ամսից վոչ ուշ, իսկ յեթե բաժնետոմսերը հիմնադիրների կողմից լրիվին բաշխված են իրար մեջ, այդ դեպքում —ընկերության կանոնադրությունը հաստատելու մասին հայտարարելուց հետո 6 ամսից վոչ ուշ։

Ծանոթություն.—Այն բաժնետիրական ընկերությունների կանոնադրություններում, վորոնք նպատակ ունեն վոսկի և սրան զուգակից մետաղներ և հանքեր վորոնել, հետախուզել և արդյունահանել, կանոնադիր դրամագլուխը լրիվին ծածկելու ժամանակամիջոցը կարող է յերկարացվել մինչև 18 ամիս, հաշված կանոնադրությունը հաստատելու մասին հայտարարելու պահից։

30. Բաժնետոմսերի արժեքը մուծելու ժամկետները, համաձայն այս կանոնադրության 29 հոդվածի, սահմանվում են կանոնադրությամբ կամ հիմնադիր ժողովի կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից։

31. Յեթե կանոնադիր դրամագլխի առաջին քառորդը ծածկելու համար սահմանված ժամանակամիջոցը չպահպանվի, այդ դեպքում ընկերությունը համարվում է գլուխ չեկած։ Կանոնադիր դրամագլուխը լրիվին ծածկելու համար սահմանված ժամանակամիջոցը չպահպանելու դեպքում ընկերությունը լուծարքի չի յենթարկվում, յեթե ընկերության կանոնադրությունը փոփոխելու կարգով կանոնադիր դրամագլուխը համապատասխան չափով նվազեցվի կամ կանոնադիր դրամագլուխը լրիվին ծածկելու ժամանակամիջոցը յերկարացվի։

32. Ընկերության հիմնադիրները, իսկ ընկերության տոմարագրությունից հետո—նրա վարչությունը, իրավունք ունեն բաժանորդներից գանձելու բաժնետոմսերի արժեքի գծով ժամանակին չմուծված գումարները կամ բաժանորդագրությունը վոչնչացնելով՝ վաճառքի հանել այն բաժնետոմսը, վորի վճարման ժամանակը անցել է։ Վերջին դեպքում վաճառքից ստացված գումարից առաջին բաժանորդին վերադարձվում են նրա մուծած գումար-

ները՝ հանելով այն ծախքերը, վորոնք կապված են նախկին բաժանորդագրությունը փոչնչացնելու և բաժնետոմսերը վաճառելու հետ:

Յեթե ընկերությունը գլուխ չեկած համարվի, բաժանորդը ազատվում է մուծումներ անելու պարտականությունից:

33. Բաժնետոմսերի արժեքը վճարվում է ըստ նրանց անվանական գնի՝ դրամով, պետական արժեթղթերով կամ այլ գույքով, վորը բաղկանում է այն տեսակ նյութական արժեքներից կամ իրավունքներից, վորոնց ոգտագործությունը անհրաժեշտ է ընկերության կազմակերպման համար կամ մըտնում է նրա գործունեության առարկայի մեջ:

Բաժնետոմսերի արժեքը բացի դրանից այլ գույքով վճարելը թույլ է տրվում միայն այն պայմանով, յեթե այդ նախատեսված է ընկերության կանոնադրությամբ. այս դեպքում կանոնադրության մեջ պետք է մատնանշվի, թե ընկերության կանոնադրիր դրամագլխի վո՛ր մասը համենայն դեպս պետք է ծածկվի դրամով:

Բաժնետիրական վարկային հիմնարկություններում դրամով պետք է ծածկվի կանոնադրիր դրամագլխի առնվազն յերեք քառորդը:

Ծանոթություն.—Կանոնադրությամբ նախատեսված սահմաններում բաժնետոմսերի արժեքը կարող է վճարվել գույքից ոգտվելու իրավունքները փոխանցելու միջոցով՝ այն պայմանով, սակայն, վոր բաժնետոմսերի արժեքի դիմաց կարող են ընդունվել վոչ ավելի քան մի տարվա ընթացքում հասանելի վճարները, իսկ յեթե ընկերության կանոնադրիր դրամագլուխը լրիվին ծածկելու համար ավելի յերկար ժամանակամիջոց է սահմանված,—այն վճարումները, վորոնք կատարվելու յեն այդ ժամանակամիջոցից վոչ ավելի ժամանակամիջոցում:

34. Բաժանորդները բաժնետոմսերի արժեքի դիմաց դրամները ընկերության տոմարագրությունից առաջ հիմնադիրների անունով մուծում են կանոնադրության մեջ մատնանշված վարկային հիմնարկությունները, իսկ կանոնադրության մեջ մատնանշումներ չեղած դեպքում—ԽՍՀ Միության Պետական Բանկ, և այդ դրամները ընկերությանը տրվում են միայն առևտրական մատյաններում տոմարագրելուց հետո, իսկ յեթե ընկերությունը գլուխ յեկած չի համարվում, այդ դեպքում գումարները վերադարձվում են բաժանորդներին ըստ պատկանելույն, բարդված տոկոսների հետ միասին:

35. Ընկերության տոմարագրությունից առաջ բաժնետոմսերի արժեքի դիմաց նյութական արժեքներից բաղկացած գույքով կատարված վճարները հանձնվում են հիմնադիրներին: Հիմնադիրները պարտավոր են ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները այդ գույքի արժեքը պահպանելու համար:

36. Բաժնետոմսերի արժեքի դիմաց մուծվող իրավունքների հանձնումը (33 հոդ.) կատարվում է վոչ այլ կերպ, քան ընկերությունը տոմարագրելուց հետո:

37. Բաժնետոմսերի արժեքի դիմաց մուծվող նյութական արժեքների սկզբնական գնահատությունը կատարվում է այդ արժեքները մուծող բաժանորդի և հիմնադիրների փոխադարձ համաձայնությամբ, յեթե վճարումը տեղի յե ունենում ընկերության տոմարագրությունից առաջ, և բաժանորդի ու վարչության փոխադարձ համաձայնությամբ,—յեթե վճարումը կատարվում է ընկերության տոմարագրությունից հետո:

Մատնանշված գույքի վերջնական գնահատությունը կատարվում է գույքը հանձնողի և հիմնադիր ժողովի փոխադարձ համաձայնությամբ (41 և 42 հոդվածներ) կամ գույք հանձնողի և բաժնետերերի ընդհանուր ժողովի փոխադարձ համաձայնությամբ կամ ընկերության խորհրդի հետ կայացած համաձայնությամբ, յեթե այդ նախատեսված է կանոնադրությամբ. սակայն գնահատությունը չի կարող բարձր լինել հանձնվող գույքի բորսայի կամ շուկայի միջին գներից, վորոնք գոյություն ունեն գույքի վայրում և այն հանձնելու օրը: Յեթե գույքը հանձնվում է ընկերությունը գլուխ յեկած համարելուց առաջ, այդ դեպքում գույքը հանձնելու օրը, յեթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի սահմանված, համարվում է ընկերությունը գլուխ յեկած համարելու օրը: Յեթե անհնար է սահմանել բորսայի կամ շուկայի միջին գները, այդ դեպքում գնահատությունը կատարվում է տեղյակ անձանց մասնակցությամբ:

38. Բաժնետոմսերի արժեքի դիմաց մուծվող իրավունքների գնահատությունը կատարվում է 37 հոդ. մատնանշված կարգով:

39. ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատին և դաշնակից հանրապետությունների առևտրի ժողովրդական կոմիսարիատներին ըստ պատկանելույն իրավունք է վերապահվում բաժնետիրական ընկերությունների հիմնական տոմարագրություն կատարելիս, նույնպես և կանոնադրիր դրամագլխի ժողոված մասի փոփոխման վերաբերյալ տեղեկությունները ընթացիկ տոմարագրության կարգով ներկայացնելիս՝ ստուգել բաժնետոմսերի արժեքի դիմաց հանձնված գույքի իսկական առկայությունը և նրա գնահատության ճշտությունը:

Ֆինանսների համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին իրավունք է վերապահվում ստուգելու այն գույքի գնահատության ճշտությունը, վորը պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից հանձնվում է բաժնետոմսերի արժեքի դիմաց:

40. Բոլոր բաժնետոմսերը բաշխելուց հետո և կանոնադրիր դրամագլխի մեկ քառորդը ծածկելուց հետո, մի ամսից վոչ ուշ հիմնադիրները հրավիրում են հիմնադիրների և բաժնետոմսերի բաժանորդների նախնական ժողով, վորտեղ հիմնադիրները գրավոր զեկուցում են ներկայացնում ընկերության բաժնետոմսերի բաշխման, բաժնետոմսերի արժեքի դիմաց մուծված դրամական գումարների և այլ գույքի, ընկերությունը կազմակերպելու համար հիմնադիրների արած ծախքերի և ձեռնարկումների, նրանց կողմից կատարված և

ընկերությունը ընդունելու համար առաջարկված բոլոր գործողությունների և գործարքների և առհասարակ այն բոլոր հանգամանքների մասին, վորոնք անհրաժեշտ են հիմնվող ընկերության գործի դրության մասին դատելու համար, այլ և ներկայացնում են նրա գույքի կահացուցակը և սկզբնական հաշվեկշռի (ВСТУП.) նախագիծը:

Հիմնադիրների զեկուցումը, կահացուցակը և սկզբնական հաշվեկշռի նախագիծը ստուգելու համար ժողովը իր միջից ընտրում է ստուգիչ հանձնաժողով: Ընկերության հիմնադիրները չեն կարող մտնել ստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ:

41. Հիմնադիրների և բաժնետոմսերի բաժանորդների նախնական ժողովից հետո յերեք օրից վոչ առաջ և մի ամսից վոչ ուշ՝ հիմնադիրները հրավիրում են իրենց հիմնադիր ժողովը, վորը լսում է ստուգիչ հանձնաժողովի զեկուցումը և լուծում է ընկերությունը գլուխ յեկած համարելու, հիմնադիրների գործողություններին և գործարքներին հավանություն տալու, բաժնետոմսերի արժեքի դիմաց հանձնվող գույքի գնահատության, ընկերության կահացուցակը և սկզբնական հաշվեկշիռը հաստատելու, ընկերության վարչության անդամների և ուրիշ ընտրովի անձանց ընտրության, ինչպես և հիմնադիրների զեկուցման (40 հոդ.) և ընկերության ընթացիկ գործերի վերաբերյալ բոլոր հարցերը:

42. Յեթե հիմնադիրները ընկերության բաժնետոմսերը լիովին բաշխել են իրար մեջ, և ծածկված է կանոնադիր դրամագլխի առնվազն մեկ քառորդը, այդ դեպքում 40 և 41 հոդվածներում մատնանշված ժողովների փոխարեն հիմնադիրները հրավիրում են հիմնադիր ժողով, վորը լուծում է 41 հոդ. մատնանշված հարցերը:

43. 40—42 հոդվածներում մատնանշված ժողովների գումարման կարգը սահմանվում է ընկերության կանոնադրությամբ: Բաժնետիրական ընկերության հիմնադիրները պարտավոր են գումարվող նախնական կամ հիմնադիր ժողովի մասին 7 օր առաջ հայտնելու առևտրական տոմարագրություն կատարող մարմնին, վորտեղ պետք է արձանագրվի տվյալ ընկերությունը:

44. 40—42 հոդվածներում մատնանշված ժողովները համարվում են օրինական, յեթե նրանց մասնակցում են այնպիսի թվով անձինք, վորոնք ներկայացնում են բաժնետոմսերի ընդհանուր թվի առնվազն կեսը:

Ընկերությունը գլուխ յեկած համարելու մասին վորոշումը կարող է կայանալ ժողովին մասնակցողների ձայների ընդհանուր թվի յերեք քառորդի մեծամասնությամբ:

Մնացած բոլոր հարցերը այդ ժողովներում լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

45. Յեթե հիմնադիր ժողովը (41 և 42 հոդվածներ) բաժնետիրական ընկերությունը գլուխ յեկած է համարել, այդ դեպքում ժողովի կողմից ընտրված

վարչությունը պարտավոր է անմիջապես հայտարարություն տալու ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատին կամ դաշնակից հանրապետության առևտրի ժողովրդական կոմիսարիատին ըստ պատկանելույն՝ ընկերությունը տոմարագրելու մասին:

Վարչությունը ձեռնարկում է բաժնետիրական ընկերության անունից գործողություններ և գործարքներ կատարելու՝ միայն ընկերությունը առևտրական մատյանում տոմարագրելուց հետո:

III. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ.

46. Բաժնետոմսի անվանական գինը 100 ռուբլուց պակաս չի կարող լինել:

Ծանոթություն 1.—Դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին իրավունք է վերապահվում բաժնետիրական այն ընկերությունների առանձին կատեգորիաների համար, վորոնց հիմնումը թույլ է տրվում դաշնակից հանրապետությունների մարմինների կողմից (16 հոդ.), բաժնետոմսերի նվազագույն անվանական գին սահմանել 100 ռուբլուց պակաս:

Ծանոթություն 2.—Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին և դաշնակից հանրապետությունների տնտեսական խորհրդակցություններին ըստ պատկանելույն իրավունք է վերապահվում բացառիկ դեպքերում, ի բացառություն գործող օրենսդրության, բաժնետիրական ընկերությունների առանձին կատեգորիաների համար թույլ տալ բաժնետոմսերի անվանական գին սահմանել 100 ռուբլուց պակաս:

Ծանոթություն 3.—Այն ընկերությունների բաժնետոմսերի անվանական գինը, վորոնք նպատակ ունեն վոսկի և նրան գոյակից մետաղներ և հանքեր վորոնել, հետախուզել և արդյունահանել, 25 ռուբլուց պակաս չպետք է լինի:

47. Բաժնետոմսերը կարող են լինել միայն անվանական:

48. Յուրաքանչյուր բաժնետոմս, յեթե ընկերության կանոնադրության մեջ այլ բան չի նախատեսված, բաժնետիրոջը յուրաքանչյուր ուրիշ բաժնետոմսի տիրոջ հետ հավասար իրավունք է տալիս բաժնետոմսի բաժանորդագրության օրից մասնակցելու ընկերության գործերի լուծմանը, նրա մեջ ընտրովի պաշտոններ վարելուն, ընկերության գործառնությունների զուտ վաստակից շահաբաժին, նույնպես և ընկերության լուծարքի դեպքում համապատասխան մաս ստանալուն:

Այս հոդվածում մատնաշված իրավունքների իրականացման պայմաններն ու ձևը վորոշվում են այս և ընկերության կանոնադրությամբ:

49. Բաժնետոմսերը չի կարելի մասնատել:

Յեթե բաժնետոմսերը մի քանի անձի յեն պատկանում, այդ դեպքում ընկերության նկատմամբ ունեցած իրավունքները կարող են իրականացվել միայն

այն անձի միջոցով, որը դրա համար լիազորված է բաժնետոմսերի տիրակիցների կողմից։

Իրավական անձանց պատկանող բաժնետոմսերի բաժանորդների անձնական իրավունքները իրականացվում են դրա համար լիազորված ներկայացուցիչների միջոցով։

Այս հոդվածում մատնանշված լիազորությունը կարող է տրվել՝ ընկերության վարչության անունով հայտարարություն ներկայացնելու ձևով։

Ծանոթություն.—Եթե ներկայացուցիչը կորցնում է իրավական անձի կողմից իրեն տրված լիազորությունը, այդ դեպքում նա դուրս է գալիս ընկերության համապատասխան ընտրովի մարմնի կազմից։

50. Բաժնետերը իրավունք ունի զուտ վաստակի այն մնացորդից շահաբաժին ստանալու, որը գոյանում է օրենքով կամ կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված հատկացումները վաստակից հանելուց հետո։

Պետական հիմնարկություններին և ձեռնարկություններին պատկանող բաժնետոմսերի շահաբաժինը տրվում է հատուկ օրենքով սահմանված կարգով։

Ծանոթություն.—Ընկերությունը լուծարքի ենթարկելու դեպքում բաժնետերը պարտավոր է լուծարքի մասսայի մեջ վերադարձնելու այն շահաբաժինը, որ նա ստացել է կանոնավոր կերպով կազմված և պատշաճ կարգով հաստատված հաշվեկշռի հիման վրա։

51. Բաժնետիրական ընկերությունը պարտավոր է բաժնետոմսերի մատյան պահելու։

Բաժնետոմսերի մատյանը վարելու ձևն ու կանոնները սահմանում է ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատը։

52. Բաժնետոմսերը մի անձից անցնում են մյուսին բաժնետոմսի (բաժնետիրական վկայականի) վրա իր՝ բաժնետիրոջ կամ սրա հայտարարության համաձայն՝ ընկերության վարչության կողմից արված մակագրության միջոցով։ Բաժնետոմսը ուրիշին հանձնելու մասին վարչությունը բաժնետոմսերի մատյանում հիշատակություն է անում։ Եթե ընկերության կանոնադրության մեջ այլ բան չի սահմանված, բաժնետոմսի փոխանցման մոմենտ է համարվում բաժնետոմսը փոխանցելու մասին մատյանում հիշատակություն անելու մոմենտը։

52 հոդ. նախատեսված դեպքում բաժնետոմսերը ուրիշին հանձնելը կատարվում է բաժնետոմսերի մատյանում բաժնետիրոջ գրավոր հայտարարության համաձայն հիշատակություն անելու միջոցով։

Բաժնետոմսերը ուրիշին հանձնելու համար վարչության կամ ընկերության այլ մարմնի համաձայնությունը պահանջվում է այն դեպքում միայն, եթե այդ նախատեսված է ընկերության կանոնադրությամբ։

Բաժնետոմսերը, բացի հանձնելուց, այլ հիմունքներով փոխանցելը ձևակերպվում է բաժնետոմսերի մատյանում այդ փոխանցումը հաստատող փաստաթղթերի հիման վրա հիշատակություն անելու միջոցով։ Փոխանցման մոմենտ է համարվում այն մոմենտը, որ մատնանշված է հիշյալ փաստաթղթերում։ Այսպիսի դեպքերում վարչությունը բաժնետոմսի (բաժնետիրական վկայականի) վրա համապատասխան մակագրություն է անում։

53. Բաժնետիրական ընկերությունը իրավունք չունի իր հաշվին իր բաժնետոմսերը կամ ժամանակավոր վկայականները գնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բաժնետոմսեր է ձեռք բերում պարտապաններից գանձումներ կատարելիս կորուստները կանխելու նպատակով կամ բաժնետոմսերը ոչնչացնելու համար։ Այս կանոնը համապատասխանորեն կիրարկվում է նաև այն դեպքում, երբ ընկերությունը իր բաժնետոմսերը գրավ է ընդունում։

54. Հանրապետական և տեղական բյուջեի հաշվով պահվող մարմինները կարող են իրենց պատկանող բաժնետոմսերը օտարման ենթարկել կամ գրավ դնել համապատասխան Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի կամ տեղական ֆինանսական մարմինների հետ համաձայնության գալով։

55. Յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնետիրական վկայականի), եթե կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված, կցվում է կտրոնների թերթ՝ կանոնադրության մեջ մատնանշված ժամանակի, բայց ոչ ավելի քան 10 տարվա ընթացքում շահաբաժին ստանալու համար։ Մատնանշված ժամանակամիջոցը լրանալուց հետո յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնետիրական վկայականի) կցվում է կտրոնների նոր թերթ։

56. Բաժնետոմսերը (բաժնետիրական վկայականները) և կտրոնի թերթերը պատրաստում է պետական նշաններ պատրաստող վարչությունը—«Գոզնակ»։

Բաժնետոմսերի (բաժնետիրական վկայականների) և կտրոնի թերթերի ձևերը հաստատում է ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատը՝ համաձայնության գալով ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հետ։

Ծանոթություն.—Ընկերության կանոնադրությամբ կարող է թույլ տրվել պատրաստել տասը կամ տասի բազմապատիկ թվով բաժնետոմսերի կուպյուրներ։

57. Եթե ընկերության կանոնադրությամբ թույլ է տրվում միացնել վարոչ իրավունքների և պարտականությունների տեսակետից տարբեր բաժնետոմսեր (տարբեր կատեգորիաների բաժնետոմսեր), այդ դեպքում այդ կատեգորիաների յուրաքանչյուր բաժնետոմս (բաժնետիրական վկայական) պետք է ունենա համապատասխան ցուցումներ։

58. Բաժնետիրական ընկերության համար բաժնետոմսեր (բաժնետիրական վկայականներ), նմանապես և կտրոնի թերթեր պատրաստելը պարտադիր չէ, եթե այդ նախատեսված է կանոնադրությամբ։

59. Մինչև բաժնետոմսեր (բաժնետիրական վկայականներ) պատրաստելը բաժնետիրական ընկերությունը բաժնետոմսերի փոխարեն ժամանակավոր անվանական վկայականներ կարող է տալ: Ժամանակավոր վկայականները փոխանցվում են այն կանոնների համաձայն, վորոնք սահմանված են բաժնետոմսերի փոխանցման համար:

60. Բաժնետոմսերը (բաժնետիրական վկայականները) և ժամանակավոր վկայականներ (59 հոդ.) բաժնետիրական ընկերության տոմարագրությունից առաջ չեն կարող տրվել:

61. Բաժնետոմսը (բաժնետիրական վկայականը) կորցնելու դեպքում բաժնետերը կամ նրա օրինական իրավահաջորդը իրավունք ունի ընկերության վարչությանը հայտնելու բաժնետոմսը (բաժնետիրական վկայականը) կորցնելու մասին: Բաժնետոմսը կորցնելու մասին վարչությունը հրապարակում է, և հրապարակման օրից վեց ամիս անցնելուց հետո կորցրած բաժնետոմսը (բաժնետիրական վկայականը) փոխարինվում է նույն համարը կրող կրկնակով, յեթե վոչ վոքի կողմից դատական կարգով վեճ չի հարուցված:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ.

62. Բաժնետիրական ընկերությունը կազմում է կանոնագիր, պահեստի, չիջուցման դրամագլուխներ, նույնպես և այլ հատուկ դրամագլուխներ, յեթե վերջինները նախատեսված են օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ:

63. Բաժնետիրական ընկերության կանոնագիր դրամագլուխը 100.000 ռուբլուց պակաս չի կարող լինել:

Ծանոթություն.—Այն բաժնետիրական ընկերությունների կանոնագիր դրամագլուխը, վորոնք նպատակ ունեն վոսկի և նրան զուգակից մետաղներ և հանքեր վորոնել, հետախուզել և արդյունահանել, կարող է 100.000 ռուբլուց պակաս լինել, սակայն 50.000 ռուբլուց վոչ պակաս:

64. Բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ սկզբում մատնանշված կանոնագիր դրամագլուխը կարող է ընկերության ընդհանուր ժողովի վորոշումով ավելացվել կամ պակասեցվել՝ կանոնադրությունը փոփոխելու կարգով, մատնանշելով լրացուցիչ կերպով բաց թողած բաժնետոմսերի արժեքը լրիվին վճարելու ժամանակամիջոցը, վորը մի տարուց ավելի չի կարող լինել:

Ընկերության կանոնագիր դրամագլխի ավելացումը տեղի յե ունենում սկզբում բաց թողած բաժնետոմսերի անվանական գնով լրացուցիչ բաժնետոմսեր բաց թողնելու միջոցով:

Մինչև նախորդ նվագում բաց թողած բաժնետոմսերը լրիվին չծածկվեն՝ լրացուցիչ բաժնետոմսեր բաց թողնել չի թույլատրվում:

65. Լրացուցիչ կերպով բաց թողած բաժնետոմսերի արժեքը մուծվում է անվանական գնով, պահպանելով 33,37 և 38 հոդվածները, ամեն մի բաժնե-

տոմսի վրա ավելացնելով ընկերության պահեստի և հատուկ դրամագլուխների այն մասին համապատասխանող գումարը, վորը ընկնում է նախորդ նվագում բաց թողած ամեն մի բաժնետոմսի վրա:

Լրացուցիչ բաժնետոմսերի արժեքը վճարելիս մատնանշված վերադիրներից կազմվող գումարները պետք է համապատասխանորեն մտնեն պահեստի և հատուկ դրամագլուխների մեջ:

66. Յեթե սահմանված ժամանակամիջոցում (64 հոդ.) լրացուցիչ կերպով բաց թողած բաժնետոմսերը լրիվին չծածկվեն, ապա նրանք կհամարվեն չեղյալ, և լրացուցիչ բաժնետոմսերի մասին կանոնադրության մեջ մտցրած մատնանշումը իր ուժը կորցնում է, բացի այն դեպքերից, յերբ կանոնադրության փոփոխության կարգով համապատասխանորեն կպակասեցվի լրացուցիչ բաժնետոմսերի չափը, կամ կերկարացվի բաժնետոմսերը ծածկելու ժամանակամիջոցը: Յեթե լրացուցիչ բաժնետոմսերը չեղյալ համարվեն, այդ դեպքում նրանց արժեքի դիմաց մուծված գումարները մի ամսվա ժամանակամիջոցում վերադարձվում են բաժնորդներին, ավելացնելով տոկոսներ՝ մուծելու օրից մինչև վերադարձնելու օրը, ԽՍՀՄ Պետբանկի զեղչման տոկոսի չափով:

67. Ընկերության պահեստի դրամագլուխը կազմվում է յուրաքանչյուր տարի զուտ վաստակի առնվազն 10 տոկոսի չափով կատարվող հատկացումների միջոցով, մինչև վոր այն հասնի կանոնագիր դրամագլխի կես չափին. Պահեստի դրամագլուխը հատկացվում է ընկերության գործառնությունների այն վնասները ծածկելու համար, վորոնք պարզվել են նրա տարեկան հաշվեկշռից: Պահեստի դրամագլուխը պահվում է հատուկ օրենքով սահմանված կարգով:

Յեթե պահեստի դրամագլուխը կանոնագիր դրամագլխի կեսին հասնելուց հետո լրիվին կամ մասամբ ծախսվի վնասները ծածկելու համար, այդ դեպքում նրա համար կատարվող հատկացումները վերսկսվում են՝ մինչև այն իր նախկին լրիվ չափին հասնի:

Պահեստի դրամագլխի և այն կազմելու համար կատարվող հատկացումների չափը, ինչպես և այն ծախսելու կարգը, վորոշվում են կանոնադրությամբ:

68. Բաժնետիրական ընկերության մեջ ամեն տարի կատարվում է այն գույքի չիջուցումը, վորը բաղկացած է շենքերից, սարքավորումից, գործիքներից, ինվենտարից, կառուցվածքներից, առուղիներից, նավերից և այլն, մատնանշված գույքի արժեքից՝ ինվենտարի մեջ մտցնելու ժամանակին կատարված գնահատության համաձայն չիջուցման դրամագլխի օգտին վորոշ տոկոսային հատկացում անելու միջոցով:

Չիջուցման դրամագլուխը կազմելու և ծախսելու կարգը սահմանվում է կանոնադրությամբ և բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ գործող օրենքների համաձայն:

69. Ընկերության մնացած հատուկ գրամագլուխները կազմվում են բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ նախատեսված կարգով:

70. Ընկերության գործառնությունների վերաբերյալ տարեկան հաշիվը և հաշվեկշիռը կազմում է վարչությունը գործառնական տարին լրանալուց հետո յերեք ամսից վոչ ուշ և վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությամբ ներկայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովին ի հաստատություն, վոր պետք է գումարվի հաշվետվությունը կազմելու համար սահմանված ժամանակամիջոցը լրանալուց հետո մի ամսից վոչ ուշ:

Հաշիվ և հաշվեկշիռ կազմելը կարելի յե հետաձգել հրապարակային հաշվետվության կանոններով նախատեսված կարգով: Ընդհանուր ժողովի կողմից հաստատված վաստակի ու վնասների հաշվեկշիռն ու հաշիվը հրապարակվում են հրապարակային հաշվետվության կանոնների համաձայն:

71. Բաժնետիրական ընկերության գործառնական տարին սահմանվում է հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը, յեթե կանոնադրությամբ այլ գործառնական շրջան չի նախատեսված:

Ծանոթություն.—Յեթե ընկերությունը կազմակերպվել է մարտի 3-ից առաջ ներառյալ, այդ դեպքում առաջին գործառնական շրջանը համարվում է մինչև նույն տարվա սեպտեմբերի 30-ը ներառյալ ընկած շրջանը: Յեթե ընկերությունը կազմակերպվել է մարտի 31-ից հետո, այդ դեպքում առաջին գործառնական շրջանը համարվում է մինչև հետևյալ տարվա սեպտեմբերի 30-ը ներառյալ ընկած շրջանը:

V. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.

72. Բաժնետիրական ընկերության վարչության մարմիններն են՝

ա) բաժնետերերի ընդհանուր ժողովը.

բ) ընկերության վարչությունը կամ ընկերության միանձնյա տեսուչը (դիրեկտորը).

գ) խորհուրդը, յեթե այդ նախատեսված է ընկերության կանոնադրությամբ:

Վերստուգման մարմինն է վերստուգիչ հանձնաժողովը:

73. Բաժնետիրական ընկերության ընտրովի մարմինների մեջ մտնող անձինք պարտավոր են ձեռք առնելու բոլոր միջոցները ընկերության կանոնադրությամբ մատնանշված նպատակները իրագործելու համար, հանդես բերելով անհրաժեշտ հոգացողություն և նախազգուշություն:

Ընկերության ընտրովի անձինք իրենց վրա դրված պարտականությունները կատարելու ժամանակ զանցառությունների և սխալ գործողությունների հետևանքով պատճառած վնասների համար պատասխանատու յեն ընկերության՝ և առանձին բաժնետերերի առաջ, իսկ ընկերությունը սնանկանալու դեպքում՝ նաև նրա պարտատերերի առաջ. միասին պատճառած վնասների համար մատնանշված ընտրովի անձինք համապարտ պատասխանատվություն են կրում:

74. Ընկերության ընտրովի մարմինների անդամների վարձատրության հարցը վորոշում է բաժնետերերի ընդհանուր ժողովը ընկերության կանոնադրության համաձայն:

Ա. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

75. Բաժնետիրական ընկերության բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է:

Ընդհանուր ժողովի իրավունքները վորոշվում են ընկերության կանոնադրությամբ, բայց համենայն դեպս նրա տնորինությանը վերաբերում են.— ա) վարչության նախագահի և անդամների (իսկ համապատասխան դեպքերում՝ նաև միանձնյա տեսուչի), նույնպես և խորհրդի նախագահների ու անդամների ընտրությունը, յերբ խորհուրդ կազմակերպելը նախատեսված է կանոնադրությամբ, այլ և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը և նրանց վարձատրության նշանակելը. բ) կանոնադրությունը փոփոխելու և լրացնելու վերաբերյալ հարցերի քննությունը. գ) վարչության, խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովին տրվող հրահանգների քննությունը և հաստատումը. դ) տարեկան հաշվի և հաշվեկշռի, ծախսերի նախահաշվի և առաջիկա տարվա ֆինանսական-գործառնական պլանի հաստատումը, վաստակի բաշխումը և վնասները ծածկելու ձևերի վորոշումը. ե) ընկերության գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ հարցի լուծումը:

76. Ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտակարգ:

Սովորական ընդհանուր ժողովները վարչության կողմից գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ անցած գործառնական շրջանի հաշիվն ու հաշվեկշիռը քննելու և հաստատելու, առաջիկա տարվա ծախսերի նախահաշիվը և ֆինանս-գործառնական պլանը քննելու և հաստատելու, վաստակը բաշխելու և վնասները ծածկելու ձևերը վորոշելու, ինչպես նաև համապատասխան դեպքերում վարչության մարմինների ընտրություն կատարելու և ընկերութ. վերստուգելու համար: Սովորական ընդհանուր ժողովը կարող է քննել և այլ հարցեր, վորոնք վերաբերում են ընդհանուր ժողովի ձեռնհասությանը օրենքի կամ կանոնադրության հիման վրա: Սովորական ընդհանուր ժողովներ գումարելու ժամանակամիջոցները սահմանվում են կանոնադրությամբ, համաձայն գործող օրենքների:

77. Արտակարգ ընդհանուր ժողովները գումարվում են վարչության կողմից սեփական հայեցողությամբ կամ խորհրդի, կամ վերստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ կամ ընդհանուր առմամբ կանոնադիր գրամագլխի առնվազն մեկ քառորդ մասը ներկայացնող բաժնետերերի դիմումի համաձայն՝ ընկերության գործունեության ընթացքում ծագող շտապողական հարցերը լուծելու համար:

Յեթե վարչությունը արտակարգ ընդհանուր ժողով գումարելու վերաբերյալ խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջը ստանալու որից յեր-

կու շաբաթվա ընթացքում չկատարի այդ պահանջը, հիշյալ ժողովը կարող է գումարվել խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի կողմից անմիջապես:

Յեթե նույն ժամանակի ընթացքում վարչությունը չկատարի բաժնետերերի մեկ քառերորդ մասի պահանջը, այդ դեպքում արտակարգ ժողով գումարելու թույլտվություն կարող է տալ առևտրական տոմարագրություն կատարող այն մարմինը, վորի մատյանի մեջ է մտցված բաժնետիրական ընկերությունը, կամ՝ յեթե բաժնետիրական ընկերության վարչությունը գտնվում է հիշյալ մարմնի վայրից դուրս,—ընկերության վարչության վայրի առևտրական տոմարագրություն կատարող մարմինը: Այս դեպքում արտակարգ ընդհանուր ժողովը գումարվում է այդ մասին թույլտվություն ստացած բաժնետերերի կողմից:

78. Ընդհանուր ժողովները գումարվում են հայտարարությունների միջոցով, վորոնք ի գիտություն ընդհանուրի տպվում են մամուլի այն օրգանում, վորը նախատեսված է կանոնադրությամբ, ընդհանուր ժողովից առնվազն յերկու շաբաթ առաջ:

Հայտարարությունների մեջ մատնանշվում է ընդհանուր ժողովի ժամանակը, վայրը և զբաղմունքների առարկան: Յեթե բաժնետերերի արտակարգ ժողովը բաժնետերերի կողմից գումարվում է 77 հոդ. մեջ հիշված մարմինների թույլտվությամբ, ապա այդ թույլտվության մատնանշումը պարտադիր կերպով զետեղվում է ժողովի վերաբերյալ հայտարարության մեջ:

79. Ընդհանուր ժողովում վորոշումներ չեն կարող կայացվել այն հարցերի վերաբերմամբ, վորոնք չեն հիշատակվել ժողովի վերաբերյալ հայտարարության մեջ, յեթե նրանք չեն վերաբերում ընթացիկ գործերին: Վորևէ հարց ընթացիկ գործերի թվի մեջ մտցնելը կատարվում է ընդհանուր ժողովի կողմից, և նրանց թվին չեն կարող պատկանել այն հարցերը, վորոնք հիշատակված են 75 հոդ. մեջ:

80. Ընդհանուր ժողովը օրինական համարելու համար պահանջվում է, վորպեսզի այնտեղ քննվող ամեն մի հարց լուծելիս ժողովին մասնակցեյին այն թվով բաժնետերեր, վորոնք ընդհանուր առմամբ ներկայացնում են կանոնադիր դրամագլխի առնվազն մեկ յերրորդը, յեթե կանոնադրությամբ չի նախատեսված ավելի բարձր նորմա:

81. Ընդհանուր ժողովում ընդունված են համարվում այն վորոշումները, վորոնց օգտին ձայն է տվել ժողովականների պարզ մեծամասնությունը:

Քվեարկության ձևը վորոշվում է կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի կողմից:

82. Ընկերության կանոնադրությունը փոփոխելու և գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը կարող են լուծվել այն ժամանակ, յերբ դրա օգտին ձայն է տալիս ժողովի յերկու յերրորդը կազմող մեծամասնությունը այն դեպքում, յեթե ընդհանուր ժողովին ներկա յեն գտնվում կանոնադիր դրամագլխի առնվազն կես մասը ներկայացնող բաժնետերերը:

83. Ընդհանուր ժողով գումարելու վերաբերյալ հայտարարության մեջ կարող է նախատեսվել յերկրորդ անգամ ժողով գումարելու դեպքը, յեթե ժողովում ներկա յեղող բաժնետերերը չեն ներկայացնի հիմնական դրամագլխի օրենքով պահանջվող մասը: Այդ դեպքում յերկրորդ անգամ գումարվող ընդհանուր ժողովը կարող է կայանալ չկայացած առաջին ժողովից հետո 24 ժամից վոչ շուտ: Յեթե հայտարարության մեջ այդպիսի մատնանշում չի յեղել, այդ դեպքում յերկրորդ ընդհանուր ժողովը գումարվում է 78 հոդվածում մատնանշված կարգով:

Յերկրորդ ընդհանուր ժողովը կայացած է համարվում անկախ այն հանգամանքից, թե ընկերության կանոնադիր դրամագլխի վոր մասն է ներկայացված յեղել ժողովում: Յերկրորդ ընդհանուր ժողովում վորոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 82 հոդ. մատնանշված հարցերից, վորոնց լուծման համար համենայն դեպս պահանջվում է տրված ձայների յերկու յերրորդի մեծամասնությունը:

Յերկրորդ անգամ գումարվող ժողովը կարող է լուծել այն հարցերը միայն, վորոնք դրված են յեղել առաջին չկայացած ժողովի օրակարգի մեջ:

84. Ընդհանուր ժողովի այն վորոշումները, վորոնք խախտում են բաժնետերերի իրավունքները, կարող են վորոշումները ընդունելու օրից մի ամսվա ընթացքում գանգատարկվել բաժնետերերի կողմից՝ հիշյալ վորոշումները վերացնելու մասին ընկերության դեմ հայց հարուցելու միջոցով:

Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

85. Ընկերության վարչությունը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից կանոնադրությամբ սահմանված ժամանակով, վորը յերեք տարուց ավելի չպիտի լինի: Վարչության անդամների թիվը վորոշվում է կանոնադրությամբ և չի կարող 3-ից պակաս լինել: Նույն ժամանակով ընտրվում են վարչության փոխանդամները՝ թվով մեկից մինչև յերեք:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է վարչության անդամներին և փոխանդամներին փոխարինել ուրիշներով, մինչև անգամ ընտրության ժամանակամիջոցը լրանալուց առաջ:

86. Վարչության անդամներ և փոխանդամներ կարող են լինել ինչպես բաժնետերերը, այնպես և այլ անձինք:

Վարչության անդամները իրենց անունից կամ իրենց հաշվին կարող են զբաղվել ընկերության գործունեության հետ միանման առևտրա-արդյունաբերական գործունեությամբ՝ միայն ընդհանուր ժողովի թույլտվությամբ:

87. Վարչությունը վարում է ընկերության բոլոր գործերն ու գույքը, նրա անունից կատարելով այն բոլոր գործարքներն ու գործառնությունները, վորոնք մտնում են նրա տնօրինության շրջանի մեջ, ընդհանրապես հանդիսանում է ընկերության ներկայացուցիչը, ինչպես դատարանում, այնպես և ուրիշ բոլոր հիմնարկությունների և անձանց հետ հարաբերություններ

ունենալիս: Վարչության պարտականությունները և լիազորությունները ճշտորեն սահմանվում են ընկերության կանոնադրությամբ:

88. Վարչության վորոշումները օրինական լինելու համար նիստին պետք է մասնակցի անդամների մեծամասնությունը, հաշվելով նախագահին կամ նրա տեղակալին:

Վարչության վորոշումները կայացվում են ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահողի ձայնը գերակշռություն է տալիս, յեթե կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված:

89. Վարչության նիստերի համար կազմվում են արձանագրություններ, վորը ստորագրում են նախագահողը և վարչության ներկա գտնվող բոլոր անդամները:

90. Վարչության անդամների միջև պարտականությունները բաշխվում են վարչության վորոշումով:

91. Ընկերության գործերը անմիջաբար վարելու համար կանոնադրությամբ նախատեսված կարգով կարող են նշանակվել տեսուչ–անորեն, վորը գործում է վարչության փոխանորդագրի հիման վրա: Տեսուչ–անորենը կարող է վարչության անդամ չլինել:

92. Վարչության փոխարեն կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության միանձնյա անորենի պաշտոն (72 հոդ. «բ» կետ):

Միանձնյա անորենը օժտվում է վարչությանը վերապահված իրավունքներից:

Գ. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

93. Վերստուգիչ հանձնաժողովին ընտրում է ընդհանուր ժողովը ինչպես բաժնետերերի կազմից, այնպես էլ կողմնակի անձերից, նույն ժամանակով, ինչ ժամանակով ընտրվում է վարչությունը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը վորոշվում է կանոնադրությամբ և յերեք հոգուց պակաս չի կարող լինել: Ընդհանուր ժողովը նույն ժամանակով ընտրում է նաև վերստուգիչ հանձնաժողովի փոխանդամներ—մեկից մինչև յերեք հոգի:

Բաժնետերերի փոքրամասնությունը, վոր վորոշվում է ընկերության կանոնադրությամբ, կարող է պահանջել իր միջից ընտրել վերստուգիչ հանձնաժողովի մի անդամ: Այս դեպքում հիշյալ փոքրամասնության կազմի մեջ մտնող բաժնետերերը վերստուգիչ հանձնաժողովի մնացած անդամների ընտրությանը չեն մասնակցում:

94. Վերստուգիչ հանձնաժողովի վրա պարտականություն է դրվում քննելու վարչության ամեն տարվա հաշիվը, ընկերության դրամարկղը և գույքը, նույնպես նախապես քննելու ընկերության ամեն տեսակ նախահաշիվներն ու պլանները և առհասարակ վերստուգելու ընկերության ամբողջ գործունեությունը, հաշվապահությունը և հաշվետվությունը:

Դ. ԽՈՐՀՈՒՐԴ

95. Ընկերության գործերի ընդհանուր ղեկավարության և վարչության գործունեության վրա հսկելու համար ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել խորհրդի ընտրություն: Խորհրդի անդամների թիվը, նրա վրա դրվող պարտականությունները և նրա գործունեության կարգը վորոշվում են կանոնադրությամբ:

Խորհրդի անդամները կարող են ընտրվել միայն բաժնետերերի թվից, յեթե կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ.

96. Բաժնետիրական ընկերությունների գործունեությունը դադարում է

ա) նրանց գործերն ու գույքը լուծարքի յենթարկելով,

բ) առանց լուծարքի յենթարկելու:

97. Բաժնետիրական ընկերության գործունեությունը դադարում է, նրա գործերն ու գույքը լուծարքի յենթարկելով՝

ա) այն ժամանակամիջոցը լրանալու հետևանքով, վորով հիմնվել է ընկերությունը.

բ) կանոնադիր դրամագլխի $^2/_5$-ից ավելին կորստյան յենթարկվելու դեպքում, յեթե այդ դրամագլուխը սահմանված կարգով չի փոփոխվի, համաձայն 63-րդ հոդվածի. այդ փոփոխության վերաբերյալ միջնորդությունը պետք է հարուցվի այն հաշվեկշիռը հաստատելու օրից մի ամսվա ընթացքում, վորի համաձայն յերևան է հանվել մատնանշված կորուստը.

գ) դատարանի կողմից ընկերությունը սնանկ հայտարարվելու հետևանքով.

դ) ԽՍՀՄ կամ դաշնակից հանրապետության կառավարության վորոշմամբ ըստ պատկանելույն, ընկերությունը կանոնադրությամբ մատնանշված նպատակից շեղվելու կամ պետության շահերին հակառակ ընթացք ընդունելու դեպքում.

ե) բաժնետերերի ընդհանուր ժողովի հայեցողությամբ:

98. Բաժնետիրական ընկերության գործունեությունը դադարում է առանց նրա գործերի և գույքի լուծարքի՝

ա) յեթե նա, միանալով ուրիշ բաժնետիրական ընկերության հետ, կազմում է նոր ընկերություն, կամ յեթե նա միանում է ուրիշ ընկերությունների հետ.

բ) յեթե նա բաժանվում է յերկու կամ մի քանի ինքնուրույն ընկերությունների.

գ) յեթե նրա գույքը և պարտքը անցնում են այլ տեսակ իրավական անձի:

99. Յեթե առաջանում են 97 հոդ. «ա» և «բ» կետերում նախատեսված պայմանները, այդ դեպքում լուծարքի ակտը ծագելուց հետո մի ամսից վոչ

ուշ վարչությունը գումարում է ընդհանուր ժողով, վորը սահմանում է ընկերության գործերի և գույքի լուծարքի կարգն ու ժամանակամիջոցը:

100. Դատարանի կողմից ընկերությունը սնանկ ճանաչվելու դեպքում (97 հոդված «գ» կ.) նրա գործերի և գույքի լուծարքը կատարվում է հատուկ որենքներով սահմանված կարգով:

101. Յեթե 97 հոդ. «գ» կետով և նույն հոդվածի «ա» և «բ» կետերով նախատեսված դեպքերում իր ժամանակին (99 հոդ.) ընդհանուր ժողով չգումարվի կամ ընդհանուր ժողովի կողմից լուծարքի համար անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնվեն, այդ դեպքում լուծարքը, նրա կարգն ու ժամանակամիջոցը նշանակում է այն մարմինը, վորի հաստատությանը յենթակա յե ընկերության կանոնադրությունը:

102. 97 հոդ. «ե» կետով նախատեսված դեպքում ընդհանուր ժողովը ընկերության լուծարքի վերաբերյալ վորոշում կայացնելիս սահմանում է նաև լուծարքի կարգն ու ժամանակամիջոցը:

103. Գործերի և գույքի լուծարքը կատարվում է լուծարքի հանձնաժողովի կողմից, վոր բաղկացած է առնվազն յերեք հոգուց, վորոնք ընտրըվում են ընդհանուր ժողովի կողմից կամ նույն թվով նշանակվում են այն մարմնի վորոշումով, վորն ընկերությունը լուծարքի յե յենթարկում (101 հոդ.):

Յեթե լուծարքի յենթարկվող ընկերության պարտատերերի թվում գտնըվում են պետական կամ կոոպերատիվ կազմակերպություններ, այդ դեպքում լուծարքի հանձնաժողովի մեջ կարող է նշանակվել ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի կամ համապատասխան դաշնակից հանրապետության Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցիչը ըստ պատկանելույն:

104. Գործերը և գույքը լուծարքի յենթարկելու համար ընդհանուր ժողովի կամ ընկերությունը լուծարքի յենթարկող (101 հոդ.) մարմնի կողմից սահմանվող ժամանակամիջոցը՝ ընկերությունը լուծարքի յենթարկելու վերաբերյալ վորոշում հանելու որից սկսած մի տարուց ավելի չի կարող լինել:

105. Լուծարքի հանձնաժողովը ընտրվելուց կամ նշանակվելուց անմիջապես հետո առևտրական տոմարագրության համապատասխան մարմնին ընկերությունը լուծարքի յենթարկելու մասին հայտարարություն է տալիս և առևտրական մամուլում տոմարագրելուց հետո հրապարակում է, մատնանշելով լուծարքային հանձնաժողովի կազմը, նրա գտնված վայրը, նույնպես և պահանջները հայտնելու ժամանակամիջոցը: Հայտարարությունը տպագրվում է «Экономич. жизнь» թերթում, իսկ այն ընկերությունների վերաբերմամբ, վորոնց կանոնադրությունները հաստատում են դաշնակից հանրապետությունների մարմինները, բացի դրանից նա՛և մամուլի այն որգաններում, վորոնք մատնանշված են դաշնակից հանրապետությունների որենսդրության մեջ:

106. Լուծարքի հանձնաժողովի պարտականությունների մեջ է մտնում՝ ընկերության գույքը և պարտքի սահմանումը և վարչության մասնակցությամբ լուծարքի սկզբնական հաշվեկշռի կազմելը, գույքի հայտնաբերումը, գնահատությունը ու իրացումը, պարտքերի գանձումը, գույքի լուծարքի և պարտատերերին բավարարելու ծրագրի մշակելը, այդ ծրագրի իրագործումը—մասնավորապես՝ հաշտարար համաձայնությունների միջոցով, և լուծարքի հաշիվ ու լուծարքի փակման հաշվեկշռի կազմելը:

107. Լուծարքի հանձնաժողովը իր պարտականությունները կատարելու համար վայելում է ընկերության վարչության վերապահված իրավունքները, համաձայն նրա կանոնադրության և կարող է կատարել այն բոլոր գործարքները, վորոնք անհրաժեշտ են լուծարքի համար, հանդես գալ դատարանում՝ վորպես հայցվոր և դատակից և լուծարքի յենթարկվող ընկերության ներկայացուցիչ հանդիսանալ այլ դեպքերում:

108. Ընդհանուր ժողովի կողմից ընտրված լուծարքի հանձնաժողովը մինչև լուծարքի վերջանալը յենթակա յե վերստուգիչ հանձնաժողովի վերահսկողության: Լուծարքի յենթարկվող ընկերության վարչությունը լուծարքի հանձնաժողով ընտրելու պահից իր գործունեությունը դադարեցնում է և ընկերության բոլոր գործերն ու գույքը հանձնում է լուծարքի հանձնաժողովին: Լուծարքի վերաբերյալ՝ ընդհանուր ժողովի կողմից չնախատեսված հարցերը լուծելու համար, նույնպես և կատարված լուծարքի հաշվետվությունը և լուծարքի փակման հաշվեկշիռը հաստատելու համար լուծարքի հանձնաժողովը ընդհանուր ժողով է գումարում:

109. Նշանակման կարգով կազմված լուծարքային հանձնաժողովը (101 հոդ.) գործում է իրեն նշանակող այն մարմնի հսկողության ներքո, վորին պատկանում է նաև լուծարքի հաշիվը և լուծարքի փակման հաշվեկշիռը վերջնականապես հաստատելու իրավունքը: Լուծարքի հանձնաժողով նշանակելու պահից լուծարքի յենթարկվող ընկերության կանոնադրությամբ նախատեսված վարչության ու վերստուգման մարմինները դադարեցնում են իրենց գործունեությունը, և ընկերության վարչությունը իր բոլոր գործերն ու գույքը հանձնում է լուծարքի հանձնաժողովին: Լուծարքի հանձնաժողովը անդամների ընդհանուր ժողով է հրավիրում միայն լուծարքի հաշիվները ու լուծարքի յեզրափակման հաշվեկշիռը նախապես քննելու համար:

110. Լուծարքի հանձնաժողովի անդամները իրենց սխալ գործողությունների և զանցառությունների հետևանքով պատճառած վնասների համար համապարտ պատասխանատվություն են կրում լուծարքի յենթարկվող ընկերության բաժնետերերի և պարտատերերի առաջ:

111. Պարտատերերի բոլոր պահանջները, անկախ նրանց հիմունքներից և ապահովելու ձևից, նույնպես և անկախ նրանից, թե արդյոք նրանց հատուցման ժամկետը հասել է թե չէ, պետք է ներկայացվեն լուծարքի հանձնաժողովին 105 հոդ. նախատեսված հայտարարության որից յերկու ամսից վոչ ուշ: Լուծարքի հանձնաժողովը մինչև պահանջները ներկայացնելու հա-

մար նշանակված ժամանակամիջոցը լրանալու որը իր կողմից պարզում է
ընկերության բոլոր պարտքերը, անկախ նրանից, թե պարտատերերից այդ
մասին հայտարարություններ ստացվել են, թե ոչ:

112. 111. հոդ. մատնանշված ժամանակամիջոցում պարտատերերի կող-
մից չներկայացված և լուծարքի հանձնաժողովի կողմից նույն ժամանակա-
միջոցում չպարզված պահանջները պարտատերերի կողմից կարող են ներկա-
յացվել լուծարքի հանձնաժողովին լուծարքի մնացած ժամանակի ընթաց-
քում, և պահանջները՝ լուծարքի հանձնաժողովի կողմից ճանաչվելու դեպ-
քում 115 հոդ. մատնանշված հերթականության կարգով բավարար-
վում են միայն այն միջոցներից, որոնք հայտարարության ստանա-
լու պահին լուծարքի հանձնաժողովի որոշումով բաշխված չեն լինի ուրիշ
պարտատերերի միջև:

113. Եթե ընկերությունը լուծարքի ենթարկվելուց հետո պարզվի,
որ նրա գույքը բավական չէ պարտատերերի հաշիվները փակելու համար,
և նրանց հետ նրանց բավարարելու եղանակի վերաբերմամբ համաձայնու-
թյուն չի կայանա, այդ դեպքում լուծարքի հանձնաժողովը այդ հանգամանք-
ները պարզելուց հետո մի շաբաթվա ընթացքում պարտավոր է այդ մասին
հայտնելու համապատասխան դատարանին՝ ընկերության սնանկության մա-
սին գործ հարուցելու նպատակով: Լուծարքի ենթարկվող ընկերության
սնանկության մասին գործ հարուցելու իրավունքը պատկանում է նաև պար-
տատերերին և սնանկության վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված
մարմիններին:

114. Լուծարքի հանձնաժողովը պարտատերերի հայտարարությունները
ստանալու օրից մի շաբաթից, իսկ իր կողմից ելևան հանված պահանջների
վերաբերմամբ ընկերությունը լուծարքի ենթարկելու մասին հրապարակե-
լուց հետո (105 հոդ.) երկու ամսից ոչ ուշ հայտնում է պարտատերերին
նրանց պահանջներն ընդունելու կամ չընդունելու մասին, մատնանշելով ըն-
դունված գումարը և այն կատեգորիան, որին վերաբերում է պահանջը
(115 հոդ.):

Կատարողական թերթերի և դատական հրամանների վրա հիմնված պա-
հանջները, նույնպես և այն պահանջները, որոնք անվիճելի կարգով գան-
ձելու ուժ ունեն, մտցվում են ընդունված պահանջների մեջ և նրանց դեմ
լուծարքի հանձնաժողովը կարող է գանգատ տալ միայն օրենքով սահման-
ված ընդհանուր կարգով:

Պահանջները լրիվին կամ մասամբ չընդունվածների ցուցակի մեջ մըտց-
նելու մասին տեղեկություն ստանալու օրից երկու շաբաթվա ընթացքում
պարտատերերը իրավունք ունեն լուծարքի հանձնաժողովի դեմ այդ պահանջ-
ներն ընդունելու մասին ընդհանուր դատապահանջ ներկայացնելու:

115. Բոլոր ընդունված պահանջները, անկախ նրանց ժամկետից, պետք
է չիջուցվեն լուծարքի ժամանակամիջոցի ընթացքում: Պարտատերերին բա-
վարարելիս լուծարքի հանձնաժողովը պահպանում է պահանջների հերթա-

կանությունը, որը սահմանված է ի դեպ սնանկության: Հիշյալ հերթա-
կանությունը խախտելու անհրաժեշտության սահմաններում լուծարքի
հանձնաժողովին իրավունք է տրվում լուծարքի ընդհանուր ժամանակամի-
ջոցի սահմաններում փոխելու լուծարքի ենթարկվող ընկերության պար-
տավորությունների դիմաց հատուցվող վճարումների ժամկետները (104
հոդ.) առանց տուժանք վճարելու, սակայն ժամանակը բաց թողնելու համար
վճարելով ԽՍՀ Միության Պետական Բանկի զեղչի տոկոսի չափով տոկոս-
ներ: Ժամկետները երկարացնել թույլ չի տրվում—

ա) բանվորների և ծառայողների պահանջների վերաբերմամբ, որոնք
հիմնված են աշխատանքի վերաբերյալ օրենսդրության, նույնպես և աշխա-
տավորական և հավաքական պայմանագրերի վրա.

բ) խեղումների և մահվան առթիվ տրվող վճարումների վերաբերմամբ,
նույնպես և սոցիալական ապահովագրության վճարումների ու հասանելիք
տուգանքի վերաբերմամբ:

116. Եթե լուծարքի ենթարկվող ընկերության անունից լուծարքի հանձ-
նաժողով հիմնելուց առաջ կնքված երկկողմ պայմանագրերը, որոնց կա-
տարման ժամկետը դուրս է գալիս լուծարքի ժամանակամիջոցի սահմանն-
երից (104 հոդ.), երկու կողմերը լրիվին կամ մասամբ կատարած չեն լինի,
ապա լուծարքի հանձնաժողովը իրավունք ունի դրանք դադարեցված համա-
րելու, պարտատերերին հատուցելով վնասները 115 հոդ. սահմանված կար-
գով:

Եթե լուծարքի հանձնաժողովը ընկերության լուծարքի վերաբերյալ
հայտարարության օրից մի ամիս ժամանակամիջոցում (105 հոդ.) պայմա-
նագիրներին չհայտարարի այս հոդվածի առաջին մասում մատնանշված պայ-
մանագրերի դադարման մասին, այդ դեպքում հիշյալ պայմանագրերը պա-
հում են իրենց ուժը:

117. Լուծարքի ենթարկվող ընկերության դեմ ուղղված բոլոր պահանջ-
ները, որոնք ծագել են լուծարքի հանձնաժողովի գործունեության ժամա-
նակ, բավարարվում են լուծարքի ենթարկվող գույքից ընդհանուր կար-
գով այնպես, ինչպես կբավարարվեյին, եթե ընկերությունը լուծարքի չեն-
թարկվեր:

118. Լուծարքի հանձնաժողովի կողմից չընդունված և դատարա-
նին հանձնված պահանջները բավարարելու համար հատկացվում են
դատապահանջի մեջ մատնանշված գումարները, որոնք պարտա-
տերերին տրվում են միայն դատավճիռը օրինական ուժի մեջ մըտ-
նելուց հետո: Եթե մինչև լուծարքային հանձնաժողովի գործունեությունը
լրանալու օրը այդպիսի դատավճիռ չկայացվի, այդ դեպքում վիճելի գումարը
մտցվում է դատարան, որպես ավանդ:

119. Այն գումարները, որոնք պետք է տրվեյին պարտատերերին, բայց
լուծարքի վերաբերյալ հաշիվը հաստատելու օրից մի շաբաթվա ընթացքում

նրանց կողմից չեն պահանջվել, լուծարքի հանձնաժողովը պարտատերերի անունով մտցնում է դատարան, որպես ավանդ:

120. Պարտատերերի պահանջները, որոնք լուծարքի հանձնաժողովի կողմից չեն բավարարված այն պատճառով, որ նրանք պարտատերերի կողմից չեն ներկայացվել և միևնույն ժամանակ լուծարքի հանձնաժողովի կողմից լուծարքի հաշիվը հաստատելուց առաջ յերևան չեն հանվել, համարվում են չիջուցված:

121. Ընկերության պարտքերը վճարելուց և համապատասխան դեպքերում (118 և 119 հոդվածներ.) նրանց վճարումը ապահովելուց հետո նրա գույքի ազատ մնացորդը բաժանվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող բաժնետոմսերի թվի համեմատ, յեթե կանոնադրությամբ չի նախատեսված մասնանշված դրամագլուխը այլ նպատակի համար գործածելը:

122. Լուծարքը վերջանալուց հետո մի ամսից ոչ ուշ լուծարքի հանձնաժողովը կազմում է լուծարքի հաշիվ ու լուծարքի փակման հաշվեկշիռ և ներկայացնում է ընդհանուր ժողովին (108 հոդ.) կամ այն մարմնին հաստատության, որը նշանակել է լուծարքի հանձնաժողով (109 հոդ.): Հաշիվը հաստատելուց հետո յերեք օրվա ընթացքում լուծարքի հանձնաժողովը լուծարքը վերջանալու մասին հայտնում է այն մարմնին, որտեղ ամարագրված է լուծարքի յենթարկվող ընկերությունը, մատյանի մեջ նշանակելու համար:

123. Լուծարքի հանձնաժողովի պահպանության ծախքերը կատարվում են լուծարքի յենթարկվող ընկերության միջոցներից այն նախահաշվի սահմաններում, որը հաստատում է ընդհանուր ժողովը կամ այն մարմինը, որը նշանակել է լուծարքի հանձնաժողովին:

124. Լուծարքը վերջացնելուց հետո մատյանները, փաստաթղթերը և այլ նյութերը հանձնվում են այն մարմնին, որտեղ ամարագրված է լուծարքի յենթարկված ընկերությունը. հիշյալ մարմինը պարտավոր է այդ բոլոր նյութերը պահպանել յերեք տարի, իսկ այդ ժամանակը լրանալուց հետո՝ վարվել համապատասխան դաշնակից հանրապետության կենտրոնական արխիվի վարչության ցուցումների համաձայն:

125. Լուծարքի հանձնաժողովի գործունեությունը դադարելու պահին չավարտված հայցերի վերաբերմամբ որպես ներկայացուցիչ հանդես գալու կարգը սահմանվում է դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ:

VII. ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

126. Այս կանոնադրության կանոնները կիրարկվում են պետական բաժնետիրական ընկերությունների նկատմամբ (3 հոդ.) այն բոլոր առանձնահատկություններով, որոնք շարադրված են հետևյալ հոդվածներում:

127. Պետական բաժնետիրական ընկերությունը պետական ձեռնարկություն է, որ գործում է առևտրական հաշվի (տնտեսավարական) հիմունքներով:

Առևտրական հաշվի (տնտեսավարական) հիմունքներով գործող պետական բոլոր ձեռնարկություններին վերաբերող ընդհանուր օրենքները, անկախ այդ ձեռնարկությունների կազմակերպության ձևից, տարածվում են նաև պետական բաժնետիրական ընկերությունների վրա, յեթե օրենքում այլ բան չի նախատեսված:

128. Պետական բաժնետիրական ընկերությունը գտնվում է պետական այն հիմնարկության տեսչության տակ, որը վորոշվում է ընկերության կազմակերպումը թույլ տվող մարմնի կողմից և հիշատակվում է ընկերության կանոնադրության մեջ:

Ծանոթություն.—Բացառիկ դեպքերում Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կամ դաշնակից հանրապետության տնտեսական խորհրդակցության թույլտվությամբ կարող է կազմակերպվել պետական բաժնետիրական ընկերություն, որ չի գտնվում վորեւէ պետական հիմնարկության անմիջական տեսչության տակ: Այս դեպքերում ընկերության կանոնադրությամբ պետք է նախատեսվի, թե վոր պետական հիմնարկությունն է ինքնուրույն կերպով կամ ուրիշ պետական հիմնարկության համաձայնությամբ կիրարկում այն ֆունկցիաները, վորոնք առևտրական հաշվի (տնտեսավարական) հիմունքներով գործող պետական բոլոր ձեռնարկություններին վերաբերող—անկախ նրանց կազմակերպության ձևից (127 հոդ.)—ընդհանուր օրենքներով դրված են այն հիմնարկության վրա, վորի տեսչության տակ է գտնվում ձեռնարկությունը:

129. Այն հիմնարկությունը, վորի տեսչության տակ է գտնվում ընկերությունը (128 հոդ.), հաստատում է բաժնետերերի ընդհանուր ժողովի հետևյալ վորոշումները՝

ա) փարչության, խորհրդի, վերստուգիչ և լուծարքային հանձնաժողովների կազմի մասին.

բ) առաջիկա տարվա ֆինանս-գործառնական պլանի մասին.

բ) առաջիկա տարվա ֆինանս-գործառնական պլանի մասին.

գ) անցած գործառնական տարվա հաշիվը հաստատելու մասին. այս դեպքում հաշվեկշիռը հաստատվում է, վաստակը բաշխվում, և վնասները ծածկվում են հատուկ օրենքով սահմանված կարգով.

դ) ընկերության կանոնադրությունը փոփոխելու և ընկերությունը լուծարքի յենթարկելու մասին:

Բացի դրանից մասնանշված հիմնարկությունը իրականացնում է նաև ուրիշ ֆունկցիաներ, վորոնք 127 հոդ. հիշված ընդհանուր օրենքների հիման վրա վերաբերում են այն հիմնարկության իրավասությանը, վորի տեսչության տակ է գտնվում ձեռնարկությունը:

130. Այն հիմնարկությանը, վորի տեսչության տակ է գտնվում բաժնետիրական ընկերությունը (128 հոդ.), իրավունք է տրվում՝

ա) բաժնետերերի ընդհանուր ժողով գումարել.

բ) իր ներկայացուցչին խորհրդակցական ձայնի իրավունքով ընկերության ընդհանուր ժողով ուղարկել.

գ) ընդհանուր ժողովի օրակարգի մեջ այս կամ այն հարցերը մտցնել:

131. ԽՍՀ Միության այն միացյալ ժողովրդական կոմիսարիատները, վորոնց տեսչության տակ են գտնվում պետական բաժնետիրական ընկերությունները, մասնանշված ընկերությունների վերաբերմամբ իրենց իրավունքների մի մասը կարող են փոխանցել դաշնակից հանրապետությունների համանուն ժողովրդական կոմիսարիատներին՝ յուրաքանչյուր անգամ հատուկ համաձայնության հիման վրա:

Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարիատները նույն իրավունքներն ունեն իրենց տեղական մարմինների նկատմամբ:

132. Պետական բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների թիվը յերկու հոգուց պակաս չի կարող լինել:

133. Պետական բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը կարելի յե վճարել նաև այնպիսի գույքով, վորը չի կարող վաճառվել մասնավոր անձանց. այդ գույքը գնահատվում ե այն կանոնների համաձայն, վորոնք հրատարակվում են ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից՝ համաձայնության գալով ԽՍՀ Միության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի և Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի հետ: Պետական բաժնետիրական ընկերություններին տրամադրվող հողերը, ջրերը, ընդերքը և անտառները չեն կարող հաշվվել բաժնետոմսերի արժեքի դիմաց. հողից, ջրերից, ընդերքից և անտառներից ոգտվելու իրավունքը կարելի յե ընկերության բաժնետոմսերի դիմաց հաշվել, պահպանելով 33 հոդ. ծանոթությունը:

134. Պետական բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը բացի պետական հիմնարկություններից և պետական ձեռնարկություններից վոչ վոքի չեն կարող վաճառվել, հակառակ դեպքում ոտարումը անվավեր կհամարվի:

135. Պետական բաժնետիրական ընկերության ապրանքները կամ նրա ծառայությունները կարող են իրացվել (занаряживание) համաձայն պետական արդյունաբերական տրեստների մթերքների իրացման կանոնների. սակայն վորոշ պետական հիմնարկության տեսչության տակ չգտնվող ընկերության նկատմամբ (128 հոդ. ծանոթություն) այդ իրացումը կատարվում ե Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կամ դաշնակից հանրապետության տնտեսական խորհրդակցության վորոշումով:

136. Պետական բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կարող ե նախատեսվել ընդհանուր ժողովների գումարում՝ առանց բաժնետերերին ծանուցագրեր ուղարկելու միջոցով այդ մասին հայտարարելու:

137. Ամեն տարի մինչև գործառնական տարին սկսվելը պետական բաժնետիրական ընկերության մեջ պետք ե գումարվի ընդհանուր ժողով առաջիկա տարվա ֆինանսա-գործառնական ծրագիրը և ծախքերի նախահաշիվը հաստատելու համար:

138. Պետական բաժնետիրական ընկերության խորհրդի անդամները վարձատրություն չեն ստանում, յեթե այլ բան չի նախատեսված կանոնադրությամբ:

139. Պետական բաժնետիրական ընկերությունը լուծարքի յենթարկվելիս՝ ընկերության այն գույքը, վոր չի կարելի մասնավոր անձանց վաճառել, նույնպես և ընկերության բոլոր պարտատերերին սահմանված կարգով բավարարելուց հետո մնացած գույքը իրացվում ե դաշնակից հանրապետության տնտեսական խորհրդակցության վորոշումով, յեթե բոլոր բաժնետերերը հանդիսանում են տվյալ հանրապետության հիմնարկություններն ու ձեռնարկությունները, և Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշումով—մնացած բոլոր դեպքերում:

140. 116 հոդ. նախատեսված դեպքում լուծարքի յենթարկվող պետական բաժնետիրական ընկերության պայմանագիրների այն վնասները, վորոնք առաջանում են պայմանագրերը ժամկետից առաջ դադարեցնելու հետևանքով, պետք ե հատուցվեն նրանց գույքում տեղի ունեցած գրական վնասի չափով միայն:

141. Պետական բաժնետիրական ընկերության լուծարքային հանձնաժողովի կազմի մեջ անպայման մտնում ե ֆինանսների համապատասխան ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցիչը:

VIII. ԽԱՌԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

142. Այս կանոնադրության կանոնները կիրարկվում են խառը բաժնետիրական ընկերությունների նկատմամբ (3 հոդ.) ներքոհիշյալ հոդվածներում շարադրված առանձնահատկություններով:

143. Խառը բաժնետիրական ընկերությունների վրա տարածվում են մասնավոր իրավական անձանց վերաբերող կանոնները, յեթե որենքով այլ բան չի նախատեսված:

144. Խառը բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, վորոնք կանոնադրության համաձայն պետք ե պատկանեն պետական հիմնարկություններին կամ պետական ձեռնարկություններին, կոչվում են պետական բաժնետոմսեր: Նրանք բացի պետական հիմնարկություններից և ձեռնարկություններից վոչ վոքի չեն կարող վաճառվել, հակառակ դեպքում ոտարումը անվավեր կհամարվի. այս մասին պետք ե հիշատակվի բաժնետոմսի (բաժնետիրական վկայականի) բնագրում:

145. Խառը բաժնետիրական ընկերությունների վրա տարածվում են 137, 138 և 140 հոդվածները:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահ՝ ~~Ա. Ի. ՌԻԿՈՎ~~

ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղար՝ ~~Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ~~

Մոսկվա—Կրեմլ. 1927 թ. ոգոստոսի 17-ին.

(ԽՍՀՄ Որ. Ժող., 1927 թ. № 49, հոդ. 500):

ՀԱՎԵԼՎԱԾ 7 (326 ՀՈԴՎԱԾԻ)

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԱՍՖԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1927 թ. օգոստոսի 17-ի՝ «Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները հաստատելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների կանոնադրություն» (ԽՍՀՄ Օր. ժող., 1927 թ. № 49, 400 և 500 հոդվածն.) վորոշումների հիման վրա Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.

I.

1. Այն բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները, վորոնց վարչությունը գտնվում է ԱՍՖԽՀ տերրիտորիայի վրա և վորոնց մեջ մասնակցում են ԱՍՖԽՀ պետական հիմնարկությունները կամ այնպիսի հիմնարկություններ և ձեռնարկություններ, վորոնց կանոնադրությունները հաստատում են ԱՍՖԽՀ մարմինները, կամ այնպիսի հիմնարկություններ ու ձեռնարկություններ, վորոնք պատկանում են ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետություններից յերկուսին կամ յերեքին, հաստատվում են հետևյալ կարգով.—

ա) արդյունաբերական բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները հաստատում է ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհուրդը.

բ) վարկային բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—ԱՍՖԽՀ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը.

գ) այս հոդվածում մատնանշված այլ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—ԱՍՖԽՀ Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատը:

2. Այն բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները, վորոնց մեջ մասնակցում են ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետություններից մեկի պետական հիմնարկությունները, ձեռնարկությունները և կազմակերպությունները, իսկ ընկերության վարչությունը գտնվում է տվյալ հանրապետության տերրիտորիայի վրա, հաստատում են՝

ա) արդյունաբերական բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—համապատասխան հանրապետության ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդը.

բ) վարկային բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—համապատասխան հանրապետության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը.

գ) այլ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները—ԱՍՖԽՀ Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի համապատասխան լիազորը:

3. Շինարարական և վարկային բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները, յերբ այս ընկերությունների գործունեյության շրջանը տարածվում է ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող մի հանրապետության սահմաններից դուրս, հաստատում են ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհուրդը և ԱՍԽՖՀ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը, ըստ պատկանելույն:

4. ԱՍՖԽՀ Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատը կամ նրա լիազորները, նույնպես և ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդները կանոնադրությունների այն մասը, վոր վերաբերում է ընկերությունների դրամագլուխներին, հաստատում են ֆինանսների համապատասխան ժողովրդական կոմիսարիատների համաձայնությամբ:

Ծանոթություն.—ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհուրդը կանոնադրությունների այն մասը, վոր վերաբերում է ընկերության դրամագլխին, հաստատում է ԱՍՖԽՀ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի յեզրակացությունը նախապես ստանալուց հետո:

5. Նախքան 1-ին հոդվածի «բ» և «գ» կետերում և 2-րդ հոդվածում մատնանշված ընկերությունների հաստատությունը՝ ընկերություն հիմնելու համար պահանջվում է ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհրդի կամ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետության նախնական թույլտվությունը, ըստ պատկանելույն:

Ընկերություն հիմնելու թույլտվության վերաբերյալ միջնորդությունը հիմնադիրները ներկայացնում են ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհրդին կամ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին (1—3 հոդվածներ), ներկայացնելով միաժամանակ և կանոնադրության նախագիծը. այս նախագիծը իրենց յեզրակացության հետ միասին համապատասխան ժողովրդական կոմիսարիատները ներկայացնում են ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհրդին կամ համապատասխան հանրապետության տնտեսական խորհրդակցությանը:

Հիշված միջնորդության մեջ անպայման պետք է մատնանշված լինի՝

ա) հիմնվող հիմնարկության ֆիրմայի անունը.

բ) նրա գործունեյության առարկան.

գ) կանոնադիր դրամագլխի չափը և նրա լուծման ժամկետները.

դ) բաժնետոմսերի անվանական գինը և նրանց յենթադրելիք բաշխումը.

ե) ընկերության վարչության վայրը.

զ) հիմնադիրների անունը և պատշաճ դեպքերում նրանց քաղաքացիությունը.

է) գործող օրենքներից կատարվող շեղումները, յեթե դրանք նախատեսված են կանոնադրությունում:

Ծանոթություն.—Այն դեպքում, յերբ հիմնվող բաժնետիրական ընկերության գործունեության առարկան միաժամանակ վերաբերում է Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի կամ այս վորոշման 2-րդ հոդվածում թված մարմինների իրավասությանը, ընկերության հիմնելու թույլտվության վերաբերյալ՝ ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհրդի կամ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների տնտեսական խորհրդակցությունների վորոշման մեջ մատնանշվում է, թե այս մարմիններից վորի վրա յե դրվում կանոնադրության հաստատությունը:

6. Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները հաստատելուց առաջ համաձայնեցվում են շահագրգռված գերատեսչությունների հետ:

7. Յեթե կանոնադրություններում կան այնպիսի հոդվածներ, վորոնք պարունակում են իրենց մեջ շեղումներ ԱՍՖԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների կամ ժողովրդական կոմիսարների խորհուրդների վորոշումներից, այդ հոդվածները հաստատում են ԱՍՖԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կամ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և համապատասխան հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեն կամ ժողովրդական կոմիսարների խորհուրդը. իսկ յեթե հոդվածները պարունակում են իրենց մեջ շեղումներ ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհրդի կամ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետության տնտեսական խորհրդակցության վորոշումներից, այդպիսի հոդվածները հաստատում են ԱՍՖԽՀ Գերագույն Տնտեսական Խորհուրդը կամ համապատասխան հանրապետության տնտեսական խորհրդակցությունը, ըստ պատկանելույն:

8. Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում են այն մարմինները, վորոնցից այս վորոշման համաձայն կախված է կանոնադրությունների հաստատությունը:

9. Կանոնադրությունը հաստատելուց հետո հաստատող մարմինները հաղորդում են հիմնադիրներին, տալիս են նրանց կանոնադրության հաստատած պատճենը և հիմնադիրների հաշվին հայտարարում են՝ Մոսկվայում «Эконом. Жизнь», Թիֆլիսում «Заря Востока» լրագրերում և պաշտոնական (հոդ. 2) ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների կառավարական օրգաններում:

10. ԱՍՖԽՀ մարմինների կողմից հաստատված բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները ընկերությունը տպագրելուց հետո հրապարակվում են ԱՍՖԽՀ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների հավաքածուի յերկրորդ մասում, իսկ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների մարմինների կողմից հաստատված կանոնադրությունները—համապատասխան հանրապետության բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների հավաքածուի յերկրորդ մասում:

11. Գոյություն ունեցող բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները 1928 թ. ապրիլի 1-ից վոչ ուշ պետք է փոփոխվեն այս վորոշմամբ սահմանված կարգով և համաձայնեցվեն ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաստատած՝ բաժնետիրական ընկերությունների կանոնադրության հետ:

12. Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների պարունակած վորոշումները, յեթե նրանք հակասում են բաժնետիրական ընկերությունների Կանոնադրությանը, համարվում են իրենց ուժը կորցրած, և նրանց փոխարեն կիրարկվում են մատնանշված Կանոնադրության համապատասխան նորմաները:

II.

Վերացնել բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները հաստատելու և տպագրելու կարգի վերաբերյալ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1925 թ. նոյեմբերի 9-ի վորոշումը (ԱՍՖԽՀ Որ. Հավ., № 11, հոդ. 545):

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի Նախագահ՝ Մ. ՑԽԱԿԱՅԱ.

ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահ՝ Շ. ԵԼԻԱՎԱ.

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի Քարտուղար՝ Ա. ԾԱՀՎԵՐԴՅԱՆ.

Թիֆլիս—պալատ. 1928 թ. հունվարի 16-ին.
(ԱՍՖԽՀ Որ. Հավ., 1928 թ. № 3, հոդ. 37).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Հոդվածներ	էջեր
Վորոշում ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսգիրքը կիրարկության դնելու մասին		3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ		
I. Հիմնական սկզբունքներ	1—3	5
II. Իրավունքի սուբյեկտներ (անձեր)	4—19-ա	5
III. Իրավունքի ոբյեկտներ (գույքեր)	20—25	8
IV. Գործարքներ	26—43	10
V. Հայցի վաղեմիությունը	44—51	12
ԸՆՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ		
I. Սեփականության իրավունք	52—70	13
II. Կառուցման իրավունք	71—84-դ	19
III. Գույքի գրավը	85—105	26
ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ		
I. Ընդհանուր սկզբունքներ	106—129	31
II. Պայմանագրերից բղխող պարտավորություններ	130—151	36
III. Գույքի վարձակալություն	152—179	42
IV. Առուծախս	180—205-բ	49
V. Փոխանակություն	206—207	57
VI. Փոխառություն	208—219	58
VII. Կապալ	220—235	59
VIII. Երաշխավորություն	236—250	63
IX. Ա. Հանձնարարություն	251—263	64
Բ. Փոխանորդագիր	264—275	68
IX-ա Հանձնակատարության (կոմիսիայի) պայմանագիր	275-ա—275-ո	68
X. Ընկերություններ	276—294	75
1. Պարզ ընկերություն	295—311	79
2. Լիակատար ընկերություն	312—317	83
3. Կոմանդիտ ընկերություն	318—321	85
4. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	322—366	86
5. Բաժնետիրական (փայատիրական) ընկերություն		

XI. Ապահովագրություն . . . . 367—398 88
XII. Անհիմն շահառության հետևանքով առաջացող պարտավորություններ (հանձնառություններ) . . . . 399—402 96
XIII. Ուրիշին վնաս հասցնելու հետևանքով առաջացած պարտավորություններ . . . 403—415 99
ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ . 416—435 99

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1 (12 հոդվածի)

Մեկին անհայտ բացակա ճանաչելու, նրա գույքից հայց ներկայացնելու և անհայտ բացականերին դատական վորոշմամբ մեռած ճանաչելու մասին 103

ՀԱՎԵԼՎԱԾ 2 (19-ա հոդվածի)

Ֆիրմայի կանոնադրություն 107

ՀԱՎԵԼՎԱԾ 3 (22 հոդվածի ծանոթության)

Պետական գույքի ռատրման պայմանների և կարգի մասին 119

ՀԱՎԵԼՎԱԾ 4 (69 և 70 հոդվածների)

Հրահանգ մասնավոր անձանց և ընկերությունների գույքի բռնագրավման և կոնֆիսկացիայի կարգի մասին . . 113

ՀԱՎԵԼՎԱԾ 5 (235 հոդվածի)

Պետական կապալների և մատակարարումների կանոնադրությունը կիրարկության դնելու մասին 116
Կանոնադրություն պետական կապալների և մատակարարումների (իր հավելվածներով) 117

ՀԱՎԵԼՎԱԾ 5-ա

Պետական կապալների և մատակարարումների պայմանագրերի կատարումը գրավականով ապահովելու կանոնների 14 հոդ. փոփոխելու մասին 132

ՀԱՎԵԼՎԱԾ 6 (322 հոդվածի)

Բաժնետիրական ընկերությունների կանոնադրություն 134

ՀԱՎԵԼՎԱԾ 7 (326 հոդվածի)

Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունը հաստատելու կարգի մասին 168

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Публичная Библиот

ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

	ՏՊՎԱԾ Ե.	ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
Հոդ. 84—ա.	$30^{0}/_{0}$-ից պակաս...կազմի	$30^{0}/_{0}$-ից պակաս չկազմի
» 169.		269.
» 197	ժամանակամիջոցում	ժամանակամիջոց
» 236.		
» Ծանոթութ.	վաճարունակություն	վճարունակություն
Յեր. 68. IX—ա.	**ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ**	**ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ**

ՀՀ Ազգային գրադարան
NL0206570

37. 560